

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆՆԵՐԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂՈՒՄԱՆ ՄԱՆՐԱՍՏԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՂՆԱԿԱԸ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆԿԱԿՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԵՐ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

©

ԳՆԱՔԱՐՍ
ԳՈՐԿԻ

ԲԱՆԱՍՏԵՂՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լ Ե Գ Ե Ն Ն Ե Ր

ԴՈՍՏԻԳԱԵՎ Լ ՈՒՏԻՆԵՐԸ

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՅԻ
ԹԱՊՅԱՆՈՒԹՅԱՄԲ

ՍՐԿԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ"
ՇՐԵՎԱԿ ՄՇՄԼXXXIV



Նկարչական ձևավորումը՝ ՀԱԿՈՐ ԿՈՋՈՅԱՆԻ
Կազմեց և ծանոթագրեց ԱՆԱՀԻՏ ՉԱՐԵՆՑԸ
Առաջարանը՝ ԼԳ. ԶՐԲԱՇՅԱՆԻ

Գորկի Ա. Մ.

Գ 831 Բանաստեղծություններ, լեզենդներ, Դոստիգաև և ուրիշները. Պիևս (Թարգմ. Ե. Չարենց: Կազմ. և ծանոթ. Ա. Չարենց: Առաջարանը՝ Էդ. Զրբաշյանի). — Եր.: Սովետ. գրող. 1984. — 268 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Մաքսիմ Գորկու բանաստեղծություններն ու լեզենդները՝ Ե. Չարենցի թարգմանությամբ, ինչպես նաև նրա հոդվածներն ու ասույթները պրոլետարական մեծ գրողի մասին

Գիրքը ընթերցողին հնարավորություն կտա ծանոթանալու նաև Մ. Գորկու «Դոստիգաև և ուրիշները» պիեսի շարենցյան նորահայտ թարգմանությանը, որը սպագրվում է առաջին անգամ:

Գ 4702010200 (35) 84 «Տ» ԳՄԴ 84 Ռ 7
705 (01) 84

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ ԵՎ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՅՐ

Ինչքան առաջ է շարժվում ժամանակը, այնքան պատմական հեռավորությունից իր նշանակությամբ ավելի է ընդգծվում սոցիալիստական գրականության մեծ հիմնադիր Մաքսիմ Գորկու վիթխարի կերպարը, նրա դերը արվեստի նոր դարաշրջանի սկզբնավորման և զարգացման գործում: Ասպարեզ իջնելով անցյալ հարյուրամյակի վերջին, Գորկին իր մեծ երկերով լուսավորեց XX դարի հեղափոխական գրականության առաջընթացի ուղիները, հիմք դրեց ստեղծագործական նոր մեթոդին՝ սոցիալիստական ռեալիզմին, որը ժամանակի ընթացքում դարձավ համաշխարհային երևվույթ, որոշելով մեր դարաշրջանի գեղարվեստական դարգացման զլխավոր ճանապարհը: Այս առումով կարելի է ասել, որ սոցիալիստական ռեալիզմի բոլոր խոշորագույն արվեստագետները, ուղղակի կամ սնուղղակի, պատկանում են «Մաքսիմ Գորկու դպրոցին», ժառանգել և շարունակել են նրա գաղափարական և ստեղծագործական մեծ ավանդույթները:

Սակայն կան գրողներ, որոնց «աղգակցությունը» Մաքսիմ Գորկու հետ շատ ավելի անմիջական է և առաջնակարգ դեր է խաղացել սովետական բազմազգ

գրականության ձևավորման և զարգացման պատմության մեջ: Այդ գրողներից է նաև Եղիշե Չարենցը՝ սոցիալիստական ռեալիզմի խոշորագույն դեմքը հայ գրականության մեջ, ամբողջ սովետական պոեզիայի հիմնադիրներից մեկը: Սխալ չի լինի, եթե ասենք, որ հայ գրողներից ո՛չ ոք այնքան խոր և բազմակողմանի կապերով չի առնչվում Մ. Գորկու ավանդույթների հետ, ինչպես Չարենցը, և ո՛չ ոք իր հեղինակությամբ ու գործով այնքան չի նպաստել հայ իրականության մեջ հեղափոխության մրրկահավի փառքի ու համբավի տարածմանը, ինչպես Չարենցը:

Ահա թե ինչու ծավալով ոչ մեծ այս գիրքը, որն ամփոփում է Մաքսիմ Գորկու շափածո, արձակ և դրամատիկական երկերից Չարենցի կատարած թարգմանությունները, ինչպես նաև նրա հոգվածներն ու ասույթները պրոլետարական մեծ գրողի մասին, բացառիկ արժեք ունի, կազմում է «Մաքսիմ Գորկին և հայ գրականությունը» թեմայի տարեգրության թերես ամենավառ ու ինքնատիպ էջը: XX դարի հայ գրականության պատմության մեջ կարևորագույն նշանակություն ունի և՛ այն, թե Չարենցի պոեզիայում ինչպես են արտահայտվել Գորկու սկզբնավորած և հաստատած գաղափարական և ստեղծագործական սկզբունքները, և՛ այն, թե Չարենցն ինչպես է թարգմանել Գորկու երկերը, ինչպես է գնահատել հանճարիղ արվեստագետի դերը մարդկության գեղարվեստական զարգացման մեջ:

1900 թ. հունվարին Ա. Պ Չեխովին հասցեագրած սամակում Մաքսիմ Գորկին ասում էր «Հիրավի, եկել է հերոսականի անհրաժեշտության ժամանակը բոլորն ուղում են գրգռիչ, վառ մի բան, այնպիսին, որ նման շիինի կյանքին, այլ լինի նրանից բարձր, ավելի լավ, ավելի գեղեցիկ»: Այս տողերում արտահայտվել է հասարակական-գեղագիտական այն կարևորագույն սկզբունքներից մեկը, որին Մ Գորկին դավանում էր սկզբից ևեթ և որի իրագործման համար նա պայքարել է իր ամբողջ ստեղծագործական կյանքի ընթացքում: Հասարակական կյանքի և մարդու վերափոխման համար կատարվող հերոսական սխրանքի թեման, նրա պատկերումն ու փառարանումը Գորկու ստեղծագործության հիմնական մոտիվներից մեկն էր՝ սկսած 1892 թ. տպագրված «Մակար Չուդրա» պատմվածքից: Հասարակական խոր պատճառներ ունեւ այդ երևույթը երիտասարդ Գորկու պատմվածքներում, լեգենդներում և բանաստեղծություններում արտացոլվեց կյանքի ընդերքում հասունացող հեղափոխական շարժումը, սկիզբ առնող պրոլետարական ազատագրական պայքարը, որը կապված էր մեծագույն հերոսականության հետ և արվեստից նոր, հերոսական խոսք էր պահանջում: Մաքսիմ Գորկին առաջինը գեղարվեստորեն իրականացրեց այդ պահանջը:

Դեռ 90-ական թվականներին, հասարակության տարբեր խավերի կյանքը պատկերող երկերի, «կյանքի տերերին» ձաղկող և նրանց զոհերի՝ «նախկին մարդկանց» ստորացված ու տրորված արժանապատ-

վությունը պաշտպանող ռեալիստական սլատմվածք-
ների ու վիպակների հետ միասին, Գորկին ստեղծեց
բուն ազատասիրությամբ ու հերոսականությամբ
տոգորված իր լեգենդար, այլաբանական կերպարնե-
րը, որոնք հսկայական դեր խաղացին հեղափոխական
տրամադրությունների տարածման գործում: Տասնյակ
սերունդների ոգեշնչեցին ազատության և կովի ծարա-
վից այրվող հպարտ Բազեն, խիզախ ու գեղեցիկ
Մարկոն («Վալախական լեգենդ»), ամենահաղթ սի-
րո ուժը մարմնավորող Աղջիկը («Աղջիկը և Մահը»):
Որպես սլայրարի ու անձնազոհության անմահ օրի-
նակ, ջահի նման վառվեց Գանկոյի մարդկայնորեն
վեհ ու պայծառ սիրտը, կայծակի պես փայլատակեց
փրկարար փոթորիկներ ազդարարող Մրրկահավը...
Գորկու այդ վառ, համարձակ ու հպարտ, վեհորեն գե-
ղեցիկ հերոսներն իրենց ակտիվությամբ, բուն կըր-
քերի ու բողոքի ուժով, ազատության ձգտմամբ, յա-
վատեսությամբ ու կենսասիրությամբ՝ արթնացնում
էին գործունեության ու սլայրարի մեծագույն կամք,
հին աշխարհի կործանման ու նորի ստեղծման անձ-
նազոհ վճռականություն:

Այդ լեգենդներն ու հեքիաթները նախապատրաս-
տեցին պրոլետարական շարժման անմիջական մաս-
նակիցների ռեալիստական կերպարների կերտումը,
որին Դորկին ձեռնամուխ եղավ նոր դարի սկզբին,
արտացոլելով բանվոր դասակարգի սլայրարի նոր
փուլը և ամբողջացնելով գեղարվեստական նոր մե-
թոդի՝ սոցիալիստական սեպիդի գծերը:

Դժվար է ամբողջ համաշխարհային գրականու-
թյան մեջ մատնանշել ուրիշ կերպարներ, որոնք

այդպիսի, հիրավի կայծակնային արագութեամբ տարածվեին և միանգամից այնպիսի միջադեպային լայն արձագանք ունենային, ինչպես Գորկու սուղ կերպարները: Ոչ միայն հեղափոխական շարժման անմիջական մասնակիցները, այլև, առհասարակ, դեմոկրատարտր տրամադրված լայն շրջանները այդ կերպարներն ընկալում էին որպես հզոր թափով բարձրացող ոռոսական հեղափոխութեան ալիքի գեղարվեստական սքանչելի արտահայտութիւն, որպես մարդկային բարձր առաքինութիւնների փառաբանում: Խոր լուսատու ունի, օրինակ, այն փաստը, որ հայ իրականութեան մեջ այդ երկերի տարածման պատմութիւնը կապված է առաջին հերթին մեր երկու ազգային մեծ բանաստեղծների՝ Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի անունների հետ: Հենց «Մրրկահավի երգի» հրատարակման տարում (1901) Իսահակյանը թարգմանել է այդ հանճարեղ բանաստեղծութիւնը, իսկ Թումանյանը 1906 թ. թարգմանել է «Վալախական լեզենդը»՝ խիզախութեան և ոռոմանտիկ սիրո այդ գեղեցիկ հիմնը:

Գորկու մյուս երկերի հետ միասին, նրա լեզենդներն ու բանաստեղծութիւնները խոշոր գեր կատարեցին պրոլետարական գրականութեան դարգացման գործում:

Հայ իրականութեան մեջ գորկիական ավանդները շարունակելու, պրոլետարիատի մեծ գրողի երկերը թարգմանելու և պրոպագանդելու գործում բացառիկ մեծ է հեղափոխութեան խոշորագույն բանաստեղծ Եղիշե Չարենցի դերը: Մաքսիմ Գորկու այն ավանդներից, որ օրգանապես յուրացրեց ու դեղարվեստա-

կան մեծագույն ուժով իր ստեղծագործութեան մեջ մարմնավորեց Ե. Չարենցը, պետք է ամենից առաջ նշվի ժողովրդի, բանվոր դասակարգի աշխատանքի ու պայքարի հերոսականութեան փառաբանումը: Չարենցի ստեղծագործությունն այն պահից, երբ նա կապվեց պրոլետարիատի և նրա կուսակցութեան հետ, շնչում է աշխատավոր ժողովրդի բարձր առաքինութեանն երի, նրա հերոսութեան և անձնազոհութեան պատկերման ու դրվատման պաթոսով: Իսկ այդ ավանդույթի հիմնադիրը գեղարվեստական գրականության մեջ Մաքսիմ Գորկին է: Ինչպես Գորկու, այնպես էլ Չարենցի երկերում այդ մոտիվը բացահայտված է մեծ կրքով, ոռոմանտիկ թափով և ջերմ քնարականությամբ:

Չարենցի՝ 1918 թ. գրած «Սոմա» և «Ամբոխները խելագարված» պոեմների նշանաբանը կարող էին լինել «Բաղևի երգի» նշանավոր խոսքերը. «Խոլ-խիզախների խենթությանը վեհ երգում ենք փառք մենք. »: Ազատութեան պայքարի մեջ նետված իր հերոսներին Գորկին «խելահեղ» էր անվանում, դրանով ցույց տալով նրանց անսահման խիզախությունն ու ողևորությունը, նվիրվածությունը հեղափոխության մեծ գործին: Ճիշտ այդ իմաստով էլ Չարենցն է օգտագործում նման բնորոշումներ, երբ ստեղծում է հեղափոխությանը մասնակցող ժողովրդական մասսաների կոլեկտիվ կերպարը: Երբ «Սոմայում» բանաստեղծը գրում է՝ «վառել ենք հիմա աշխարհը նորից, ուխտի ենք ելել խենթ ու խելագար», կամ՝ «խենթ ենք մենք էլ ու խելագար», — սույա դրանով արտահայտում է ողևորության և անձնազոհութեան այն

բարձր տրամադրութիւնը, որ միլիոնների սրտերում
սուաջացրել էին հեղափոխութեան «աշխարհասասան
:րդեհները»: Չնայած գլխավոր կերպարի դիցաբանա-
կան բնույթին և շատ պատկերների ոտմանտիկ վերա-
ցականութեանը («այդ ժամանակ ևս հեղափոխութիւնը
սպրում էի, որպէս մի ոտմանտիկական-հուզական
լոնկման պրոցէս»), — գրել է հետագայում Չարեն-
ցը), — այդ պոեմը խորապէս ներշնչում է իր թա-
փով, անկեղծութեամբ, հեղափոխական դարաշրը-
ջանի հարադատ վերարտադրութեամբ: Այս հատկու-
թիւններն առավել մեծ ուժով հանդէս եկան «Ամբոխ-
ները խելագարված» պոեմում: Այս գործի բուն վեր-
նագիրն իսկ ըստ էութեան կրում է գորկիական հիշ-
յալ մտահղացման կնիքը: «Ամբոխները խելագար-
ված» բնորոշումը, որը պոեմում հեղափոխական ժո-
ղովրդի գեղարվեստական բնութագրման հիմնական
միջոցներից մեկն է, այստեղ արտահայտում է մաս-
սաների ընդվզման թափը, նրանց կամքն ու վճռա-
կանութիւնը, նրանց լուսավոր իդեալները: Այդ բնո-
րոշումը, իհարկե, ոչ մի կապ չունի ժողովրդական
շարժման, իբրև տարերային խորտակիչ ուժերի քառ-
սային շրջաստուլտի, մասին անկումային գրակա-
նութեան պատկերացումների հետ: Չարենցի հուշա-
կավոր պոեմն իր հերոսական պաթոսով, մարտնչող
ժողովրդի նկատմամբ սիրո և հարազատութեան զգաց-
մունքներով ուղղակիորեն կապվում է Գորկու ստեղ-
ծագործութեան հետ:

«Ամբոխները խելագարված», «Սոմա» և հեղա-
փոխութեան ոտմանտիկ պաթոսով հագեցած շարենց-

յան մյուս երկերը հենց սկզբից սովետահայ գրականության մեջ հաստատում էին սոցիալիստական ռեալիզմի թեմատիկ, ժանրային, ոճական և արտահայտչական ձևերի անսպառ բազմազանության սկզբունքը: Այդ մեթոդի ստեղծագործական լայն շրջանակների մեջ օրինաչափ կերպով մտնում են նաև հերոսական ասքի ոճով գրված և ռոմանտիկ երազանքով շնչող այնպիսի գործեր, ինչպես Չարենցի հիշյալ պոեմները: Սոցիալիստական ռեալիզմի ձևերի ու տեսակների անսահմանափակ բազմազանության սկզբունքը, ինչպես ստեղծագործական, այնպես էլ տեսական առումով, հիմնադրել է Մաքսիմ Գորկին: Հայ գրականության մեջ այդ ավանդույթն առանձին ուժով շարունակեց Չարենցը, որին մատչելի էին ամենատարբեր ժանրեր ու ոճեր:

Բնորոշ է նաև, որ իր «Ռադիո-պոեմներում», ողջունելով նոր մարդկության հաղթական երթը, Չարենցը դիմում է մրրկահավի գորկիական կերպարին.

Ուրպես երկաթե մի մրրկահավ
Թռչում է կարմիր մեր կամֆը հիմա
Աշխարհի հեռուն—
Ու շաչում է հաղթ, Երկաթ քներով
Հեռու ու մոտիկ ռազմադաշտերում:

Կամ հիշենք «Երգ ժողովրդի մասին» և «Ամենապոեմ» երկերը: Ժողովրդի, նրա հերոսական աշխատանքի ու պայքարի բախտորոշ նշանակության գեղարվեստական բնութագրումն ու պատկերումը այդ պոեմներում շի կարող անջատվել այն կրթոտ պայ-

բարից, որ տարիների ընթացքում մղել է Գորկիին արվեստի մեջ ժողովրդի դերի ճշմարտացի արտացոլման շումար՝ մերկացնելով անկումային գլուխկոխման անհատապաշտական, հակաժողովրդական սկզբունքները: Վերցնենք, օրինակ, «Ամենապոեմի» գաղափարական բովանդակության բուն հիմքն ու առանցքը կազմող տողերը.

... Ամեն մի անհայտ բանվոր,
Որ ձեռքով իր երկար է կոում —
Հազար պոեմներ ունի
Իր հուժկու, երկար թոփերում:

Կամ՝ աշխատավոր մարդկանց մասին ասված այս խոսքերը.

Ուրիշ հանճարներ չկան
Աշխարհում — նրանցից բացի:

Բանաստեղծական վառ ձևով աշխատանքային աշխատանքները կարծես ուղղակի արձագանքում են Մարքսի Գորկու հայտնի խոսքերին («Անհատի կործանումը» հոդվածից). «Ժողովուրդը ոչ միայն բոլոր նյութական արժեքներն ստեղծող ուժն է, այլև հոգևոր արժեքների միակ և անսպառ աղբյուրը, ըստ ստեղծագործման ժամանակի, գեղեցկության և հանճարեղության՝ առաջին փիլիսոփան և բանաստեղծը, որը կերտել է աշխարհի բոլոր մեծ պոեմները, բոլոր ողբերգությունները և մեծագույնը նրանցից՝ համաշխարհային կուլտուրայի պատմությունը»:

Այս, ինչպես և մյուս դեպքերում, մենք գործ ունենք, իհարկե, ոչ թե ուղղակի ազդեցության կամ պարզ փոխառման, այլ գաղափարական-ստեղծագործական ավանդույթի լինելից և շարունակման բարդ երևույթի հետ:

*
* *

Չնայած այս և համանման ներքին գաղափարական և գեղարվեստական առնչություններին, 20-ական թթ. Չարենցն արտաքուստ կարծես «անտարբեր» էր Գորկու անվան և ստեղծագործության նկատմամբ: Այդ տարիներին վարած ստեղծագործական բանավեճերի ժամանակ Չարենցը կարծեք շրջանցում է Գորկու անունը, չի թարգմանում նրա գործերից որևէ մեկը: Թերևս, այս երևույթի պատճառը նաև այն հատուկ դիրքն էր, որ գրավում էր Մաքսիմ Գորկին 20-ական թթ. գրական շարժման մեջ: Բուժման նպատակով ապրելով արտասահմանում, Գորկին այդ ժամանակ անմիջականորեն չէր մասնակցում գրական խմբավորումների ընթացիկ պայքարին, իսկ երբեմն էլ ենթարկվում էր ռապսոդիկ գործիչների կոպիտ հարձակումներին:

Վիճակն էապես փոխվեց 20-ական թթ. վերջին և, մանավանդ, 30-ական թթ. սկզբին, երբ, վերադառնալով հայրենիք, Մաքսիմ Գորկին դարձավ համամիութենական գրական կյանքի կենտրոնական դեմքը: Ինչպես իր ստեղծագործությամբ, այնպես էլ հրապարակախոսական ելույթներով և հասարակական

գործունեութեամբ, նա ակտիվորեն ներգրավվեց սոցիալիստական շինարարութեան բուն ընթացքի մեջ: 1932 թ. ապրիլին գրական տարբեր խմբավորումների վերացումից և միասնական սովետական գրողների միութեան ստեղծումից հետո Մ. Գորկին կազմակերպական առումով ևս դարձավ սոցիալիստական գրականութեան ճանաչված ղեկավարը: Որպես գրողների առաջին համամիութենական համագումարի նախապատրաստման կազմկոմիտեի նախագահ, նա 1932—1934 թթ. իր ամենօրյա գործունեութեամբ և դիական-քննադատական ելույթներով հսկայական աշխատանք կատարեց գրական ուժերը համախմբելու, սոցիալիստական ուսուցիչի ստեղծագործական սկզբունքները հիմնավորելու ուղղութեամբ:

1932 թ. լայնորեն նշվեց Մ. Գորկու գրական գործունեութեան 40-ամյակը, որն օգնեց խորապես գիտակցելու և ըստ արժանվույն գնահատելու նրա վիթխարի դերը նոր հասարակութեան գեղարվեստական մշակույթի ձևավորման և զարգացման գործում: Համընդհանուր ճանաչում ստացավ մեծ գրողի նշանակութեան այն բմբուռը, որը Ա. Վ. Լոնաչարսկին ձևակերպեց այսպես. Գորկու ստեղծագործութեան մեջ պրոլետարիատն «առաջին անգամ գիտակցում է իրեն գեղարվեստորեն, ինչպես որ Մարքսի, էնգելսի և Լենինի մեջ նա գիտակցեց իրեն փիլիսոփայորեն և բաղալականապես»:

Մեծ գրողի ստեղծագործութեան և անձնավորութեան, նրա գրական-հասարակական գործունեութեան նկատմամբ այս համընդհանուր հետաքրքրութեան միևնույն րտում է, ահա՛, որ Եղիշե Չարենցը հանդես

եկավ Մաքսիմ Գորկու երկերի թարգմանչի և պրոպագանդողի դերում: 1934 թ., երբ մեր երկրի գրողները պատրաստվում էին իրենց առաջին մեծ համաժողովին, Չարենցը թարգմանեց և առանձին գրքով հրատարակեց Մաքսիմ Գորկու «Բանաստեղծություններ և լեզենդներ» ժողովածուն: Նրա մեջ մտան համաշխարհային ճանաչում նվաճած այնպիսի դասական երկեր, ինչպես «Մրրկահավի երգը», «Բազեի երգը», «Վալախական լեզենդ», «Բալլադ Կոմսուհի էլլեն դե Կուրսիի մասին» բանաստեղծությունները, «Աղջիկը և Մահը» պոեմը, «Ստախոս Սարյակի և ճշմարտության սիրահար Փայտիորիկի մասին» այլաբանական դրուցը, «Խանը և նրա որդին» լեզենդպատմվածքը և մեկ քառյակ «Արևի զավակները» դրամայից՝ «Իմ թանկագին բարեկամ Լուիջի Ցապելլին» վերնագրով: Այսպիսով, Չարենցը թարգմանել է Գորկու առաջին շրջանի մի քանի այլաբանական ու հեքիաթային բնույթ ունեցող երկեր, որոնք փառաբանում են ազատության համար սիրանրի դիմող հերոսներին, դրվառում են անձնագոհության կամքը, մարտը ու վեհ զգացմունքները, նշավակում են քաղքենիական տիղմի մեջ թաղված, պայքարից փախչող նվաստ հոգիներին:

Չարենցի այս թարգմանությունները պատկանում են հայ թարգմանական գրականության ամենափայլուն էջերի թվին և որ ներթափանցում բնագրի բովանդակության մեջ, նրա իմաստի բոլոր նրբերանգների ըմբռնում, ոչ միայն շափածո, այլև արձակ գործերի «նեբրին ութմի» վերարտադրություն և, որ ամենից ավելի է դարմացնում, ճշգրտության օրգանական

զուգակցում արտահայտութեան լիակատար ազատու-
թյան հետ,— ահա այդ թարգմանությունների հիմ-
նական արժանիքները: Չարենցի շնորհիվ Գորկու
խոսքը հայերեն հնչում է այնքան բնական և ան-
կաշկանդ, որ վերանում է թարգմանական ամեն մի
պայմանականություն և թվում է, թե այդ երկերը
հենց սկզբից էլ հայերեն են եղել և ոչ թե թարգ-
մանվել մի այլ լեզվից Իրոք, այստեղ մենք գործ
ունենք ստեղծագործական տարբեր անհատականու-
թյունների հաղվագյուտ երջանիկ և իմաստալից
հանդիպման հետ: Երիտասարդ Գորկու բանաստեղ-
ծություններն ու լեզենդները իրենց ողմանտիկ հզոր
թափով համընկան Չարենցի բացառիկ հարուստ և
բազմակողմանի ստեղծագործական նկարագրին, որի
մեջ 30-ական թվականներին ևս շատ ուժեղ էր ող-
մանտիկ շերտը, թեև այդ ժամանակ նա արդեն մշա-
կել և կիրառում էր ռեալիստական ոճի ամբողջա-
կան և լիարժեք համակարգ:

Չարենցի թարգմանությունները կարող են դառ-
նալ մի ամբողջ մեծ ուսումնասիրութեան նյութ, կա-
րող են օգնել պատասխանելու թարգմանութեան տե-
սութեանը այսօր էլ հուզող և վեճեր հարուցող շատ
հարցերի: Առաջաբանի սեղմ շրջանակները հնարա-
վորություն չեն տալիս անդրադառնալու Չարենցյան
թարգմանութեան բոլոր կողմերին, ինչպես լեզվի
ազգային երանգների վերարտադրութեան, ճշգրտու-
թեան և թարգմանական ազատութեան, հեղինակի և
թարգմանչի ոճերի փոխհարաբերութեան և այլ խորն
դիրներ: Չարենցի թարգմանական վարպետութեան
բազմազան կողմերից մենք այստեղ կբնենք միայն

մեկը՝ թարգմանությունների տաղաչափական կա-
ռոցվածքի խնդիրը: Այս հարցն առաջին հայացքից
կարող է թվալ նեղ մասնագիտական կամ երկրոր-
դական մի բան, բայց, ինչպես կտեսնենք, այն մեծ
դեր է խաղում շարենցյան թարգմանությունների գե-
ղարվեստական կատարելության մեջ:

Հայերեն և ռուսերեն ոտանավորների իրենց հիմ-
նական բնոյթով պատկանում են տարբեր տաղաչա-
փական համակարգերի: Ռուսական դասական ոտա-
նավորն ունի վանկաշեշտային (սիլաբո-տոնիկական)
բնույթ, այսինքն՝ ութմր նրա մեջ հիմնվում է ոչ
այնքան տողերի վանկային հավասարության, որ-
քան տողերի ներսում բառային շեշտերի որոշակի,
համակարգված դասավորության վրա: Այսպես, յամ-
բական ոտանավորում շեշտերն ընկնում են դույզ
վանկերի, իսկ յորեյի դեպքում՝ կենտ վանկերի վրա
(առանձին ութմական շեշտերի բացթողումով):
Նույնպես ոտքերով գրված ոտանավորներում շեշ-
տերն ընկնում են յուրաքանչյուր երրորդ վանկի վրա
(դալիտիլային բանաստեղծության մեջ տողի 1, 4, 7,
ամֆիբրարուսի դեպքում՝ 2, 5, 8, անապեստի դեպ-
քում՝ 3, 6, 9 վանկերի վրա):

Թեև հայ սյուզիատում ևս այդպիսի առանձին
ոտանավորներ, մանավանդ XX դարում, գրվել են,
ևս կայն, մեր լեզվի շեշտադրության օրենքների
յատճառով, հայկական շափածոն իր հիմնական
զանգվածով ունի վանկային (սիլաբիկ) բնույթ,
և ութմի հիմնական պայմանը հայկական ոտանավո-
րում ոչ թե շեշտերի կանոնավոր դասավորությունն
է, այլ հարևան տողերի և կիսատողերի վանկա-

լին հավասարությունը, Այդ պատճառով էլ ուսե-
րենից կատարված թարգմանությունների մեջ գրեթե
անհնար է ճշգրտորեն պահպանել բնագրի տաղաչա-
վական գծագիրը, սխեման: Անհրաժեշտ է գտնել
աշուպիսի շափ, որը, բխելով հայկական ոտանավո-
րի բնույթից, միաժամանակ առավելագույն շափով
ամառապատասխանի բնագրի ութմական ոգուն և
տրամագրությանը: Գորկու բանաստեղծությունների
թարգմանության մեջ Չարենցը տվել է խնդրի այդ-
պիսի լուծման դասական օրինակներ:

Վերցնենք նախ «Մրրկահավի երգն» ու «Բազեի
երգը»: Բնագրում առաջինը գրված է քորեյական,
իսկ երկրորդը՝ յամբական շափով: Ճիշտ է, իր այդ
գործերը Գորկին տպագրում էր արձակի ձևով,
առանց տեքստը տողերի բաժանելու: Սակայն դա չի
խանգարում, որ դրանք ընկալվեն իբրև բանաստեղ-
ծություն, որովհետև, բացի շեշտերի կանոնավոր դա-
սավորությունից, մշտապես առկա է նաև մի ուրիշ
ութմական գործոն. «Բազեի երգը» սկզբից մինչև
վերջ կայուն հատվածների շնորհիվ բաժանվում է
5 վանկանի մասերի, իսկ «Մրրկահավի երգը»՝ 8-
վանկանի մասերի, որոնք ընթերցելիս որոշակիորեն
առանձնանում են իրարից: Ահա օրինակներ.

«Բազեի երգից».

Пускай ты умер!.. /Но в пёсне смёлых/ и
сильных дѹхом /всегда ты бѹдешь/ жѹвым при
мѹром /призывом гóрдым/ к свобóде, к свѹту!

Безѹмству храбрых /поём мы пѹсню!

«Մրրկահավի երգից».

Над седой равниной моря /вѹтер тучи соби-

рáет / Мéжду тýчами и мóрем /гóрдо рéет Бу-
ревéстник, / чéрной мóлнии подóбный

Չարենցի թարգմանությունների մեջ տեքստը գրա-
ֆիկորեն ևս բաժանված է բանաստեղծական տողե-
րի «Բազևի երգը» սկզբից մինչև վերջ կազմված է,
ինչպես և բնագրում, 5-վանկանի մասերից, բայց
արդեն գրության ձևով առանձնացված ինքնուրույն
տողերի մեջ: Ահա նույն հատվածի շարենցյան թարգ-
մանությունը.

Թեկուզ մեռաւ դու,
Բայց երգերում քաջ
Եվ ոգով արի
Ու խիզախ մարդկանց—
Ընդմիջտ կլինես
Պայծառ օրինակ,
Հպարտ օրինակ...
Խոյ խիզախների
Խենթությանը վեհ
Երգում Լև Բե՛րգ մենք...

Իսկ «Մրրկահավի երգը» թարգմանված է հայկական
ոտանավորի ամենատարածված շափերից մեկով՝ 10-
վանկանի տողերով, որոնք իրենց հերթին ներքուստ
բաժանվում են երկու հավասար՝ 5-վանկանի կիսա-
տողերի: Ահա թարգմանության սկիզբը

Ծովի ալեներ / հարթության վրա
Ամպեր է ահա / կուտակում քամին,
Ահեղ ամպերի / և ծովի միջև
Ճախրում է հպարտ / մրրկահավը՝
Թռչում է՝ մի սև / կայծակի նման:

Տեքստի տողատումը Չարենցի կողմից չի կարելի սոսկ տեխնիկական փոփոխություն համարել: Բանն այն է, որ թարգմանության մեջ, հայկական ոտանավորի վանկալին բնույթի պատճառով, բացակայում է շեշտերի կանոնավոր դասավորության սկզբունքը: Մյուս կողմից, ինչպես այս երկու բանաստեղծությունների ուսերեն բնագիրը, այնպես էլ նրանց հայերեն թարգմանությունը անհանգ (սպիտակ) ոտանավորներ են: Այդ պայմաններում հայերեն թարգմանությունը արձակի ձևով սուպագրելը կապված կլիներ որոշակի վտանգի հետ. դա կարող էր խանգարել ութմական միավորների՝ տողերի հստակ սահմանադամանը, հետևաբար և՛ ոտանավորի բուն ութմի ընկալմանը:

Կանգ շառնելով մյուս շափածո թարգմանությունների վրա, նշենք միայն «Վալախական լեզենդի» տաղաչափական կառուցվածքի օրինակը: Հետաքրքիր է այդ օրինակը մանավանդ այն պատճառով, որ այն կարելի է համեմատել Հ. Թումանյանի կատարած թարգմանության հետ և ակնառու կերպով տեսնել մեկը Չարենցի գեղարվեստական նորարարության այն բազմաթիվ կողմերից, որոնցով նա հարստացրեց հայ պոեզիայի արտահայտչական միջոցների զինանոցը:

Մ. Գորկու «Վալախական լեզենդը» գրված է ամֆիբրաքոսյան (քողաղոտային) տողերով, այսինքն՝ երկրորդ վանկի վրա շեշտ կրող եռավանկ ոտքերով: Դա նշանակում է, որ հիմնական շեշտերն ընկնում են յուրաքանչյուր տողի 2, 5, 8-րդ վանկերի վրա:

А вы на землѣ проживѣте,
Как черви слепые живѣт:
Ни сказок про вас не расскажут,
Ни пѣсен про вас не спѣют!

Հ. Թումանյանն իր Թարգմանությունը կատարել է հայկական վանկային ոտանավորի նույն 10-վանկանի շափով, որի տողերը հատածի շնորհիվ բաժանվում են երկու հավասար կիսատողերի: Ռիթմի հիմնական պայմանը տողերի և կիսատողերի այդ վանկային հավասարությունն է, իսկ շեշտերի որևէ կայուն դասավորություն չկա.

Իսկ դուք ապրում եք աշխարհի վրա
Ինչպես կույր, անսիրտ /, չընչին սողուններ.
Ո՛չ ձեզնից հետո / զրբույց կը մընա.
Եվ ո՛չ ձեր մասին / երգ կասեն անմեռ:

Թումանյանից մոտ երեք տասնամյակ անց նորից Թարգմանելով «Վալախական լեզենդը», Չարենցը բանաստեղծական խոր զգացողությամբ աշխատել է չկրկնել իր մեծ նախորդի Թարգմանության տաղաչափական կառուցվածքը: Ուրիշ ուղիներով նա ձգտել է ավելի մերձենալ բնագրի ռիթմական ընդհանուր նկարագրի և նրբերանգների վերարտադրությանը հայերենի միջոցներով: Այդ նպատակով նա պահպանել է բնագրի հիմնական սկզբունքներից մեկը՝ յուրաքանչյուր տողում երեքական ուժեղ շեշտ ունենալու պահանջը, որն արտասանական առումով ներդաշնակում է բանաստեղծության կրթոտ բովանդակությանը: Սա-

կայն ընդամին նա չի դիմում համանման եռավանկ ոտքերի՝ անապեստի կամ ամֆիբրաքոսի պարբերական կրկնության, որը հայերենում տվյալ դեպքում կարող էր բովանդակությանը շհամապատասխանող սահունություն և միապաղաղություն առաջացնել: Չարենցի թարգմանությունը կատարված է համաշեշտ ոտանավորով, ամենուրեք պահպանելով նրա վճռական յայտմանը՝ տողերի ներսում հիմնական շեշտերի քանակի հավասարությունը: Բոլոր տողերում կա 3-ական շեշտ, որոնք, սակայն, ի տարբերություն բնագրի, մեծ մասամբ կանոնավոր դասավորություն չունեն: Անհավասար է վանկերի թիվը տողերում՝ յոթից մինչև տասը (թարգմանության 32 տողից երեքն ունի 7-ական վանկ, 15-ը՝ 8-ական, 13-ը՝ 9-ական և մեկը՝ 10 վանկ, բնդ որում այդ տողերը հանդես են գալիս խառը կարգով): Ահա թե ինչպես է հնչում բանաստեղծության եզրափակիչ քառյակը Չարենցի թարգմանությամբ (նշում ենք ութմական շեշտերի տեղերը).

Իսկ դո՛ւք աշխարհո՛ւմ կապրե՛ք
 Որդերի՛ նմա՛ն կույր ու սի՛ն,—
 Ձեր մասի՛ն ոչ գրո՛ւյց կասե՛ն,
 Ոչ երգե՛ր կերգե՛ն ձեր մասի՛ն .

Գորկու բանաստեղծությունը թարգմանելիս Չարենցը դիմում էր համաշեշտ (տոնիկական) ոտանավորի օգնությանը, որի սկզբունքները ռուսական պոեզիայում արմատավորել է Մայակովսկին: «Մայակովսկու տաղաչափությամբ» և, անշուշտ, ոչ առանց նրա աղ-

դեցության, Չարենցը շատ գործեր էր գրել դրանից մեկ տասնամյակ առաջ՝ 20-ական թթ. սկզբին: Բավական է ասել, որ մեծ մասամբ այդ սկզբունքով են գրված «Ամենապոեմ», «Չարենց-նամե», «Լենինն ու Ալին», «Կոմունարների պատր Փարիզում» պոեմները և մի շարք բանաստեղծություններ: 20-ական թթ. կեսերին Չարենցը հիմնականում հրատարակեց ոտանավորի այդ տեսակից, զգալով, որ միակողմանի ու սխալ կլինեք հայ պոեզիան զարգացնել միայն համաշեշտ բանաստեղծության հունով: Նա նորից լայնորեն կիրառեց դասական սյուդիայի ձևերը: Սակայն դրանից հետո էլ նա շէր մերժում առանձին դեպքերում համաշեշտ ոտանավորով գրելու կամ թարգմանելու հնարավորությունը, եթե այն օգնում է առավելագույն շափով մերձենալու բնագրի ոգուն և ութմին: Բացի «Վալախական լեզենդից», նա այդպես է վարվել նաև «Բալլադ էլլեն դե Կուրսիի մասին» բանաստեղծությունը թարգմանելիս: Այդ բալլադի բնագիրն ունի հիմնականում քողաղոտային (ամֆիրրաքսյան) կառուցվածք, թեև առանձին տներ և սողեր դարգանում են յամբի կամ բորեյի սկզբունքով: Թարգմանության մեջ Չարենցի կիրառած համաշեշտ ոտանավորի սողերն ունեն 6-ից մինչև 11 վանկ: Իսկ «Աղջիկը և Մահը» պոեմը, որի բնագիրն ամբողջովին գրված է բորեյական շափով, Չարենցը թարգմանել է հայկական վանկային ոտանավորի սկզբունքով (հիմնականում 10, երբեմն նաև 7, 9, 11, 12-վանկանի սողեր):

Այսպես, Գորկու շափածո գործերի թարգմանության մեջ Չարենցն ամեն անգամ նորովի է լուծում

ոռւսական բանաստեղծութիւնը հայ տաղաչափութեան միջոցներով վերարտադրելու խնդիրը: Նա երբեք մեխանիկորեն չի պատճենում բնագրի շափերը, այլ հայկական և ոռւսական տաղաչափական սկզբունքների յուրօրինակ զուգակցումից ստեղծում է ոտանավորի նոր ձևեր: Նա միշտ իրականացնում է ամենակարևոր խնդիրը՝ հարազատորեն վերստեղծելով բնագրի ութմական ոգին:

Ոչ միայն ութմի ու շափի, այլև բոլոր մյուս հարցերում Գորկու բանաստեղծութիւնների շարենցյան թարգմանութիւնը բարձր վարպետութեան մի իսկական դպրոց է՝ խորապես ուսանելի մեր օրերի թարգմանիչների համար:



Մաքսիմ Գորկու «Բանաստեղծութիւններ և լեզենդներ» գրքի հայերեն թարգմանութիւնը լույս տեսավ այն ժամանակի համար շատ մեծ՝ տասը հուզար տպարանակով, իբրև նվեր գրողների համագումարին (գրքի անվանաթերթից առաջ հայերեն և ուսերեն նրշված է՝ «Խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարին: ՀՍԽՀ Պետհրատ»): Ինչպես իր հուշերում պատմում է Վահրամ Ալազանը, Միութիւնների տան սյունադարձ դահլիճի մուտքի մոտ (ուր տեղի էր ունենում համագումարը) գրքի օրինակներն իբրև նվեր հանձնվել են համագումարի պատգամավորներին: Համագումարի բացումից առաջ Վ. Ալազանը գիրքը նվիրել է նաև Մաքսիմ Գորկուն: «... Մեր նվերը շատ ուրախացրեց նրան, — գրում է

Ալազանը «Իմ հանդիպումները Մաքսիմ Գորկու հետ» հուշագրության մեջ:— Նա երեխայի պես հուզվեց և, գրկելով ինձ, սրտանց շնորհակալություն հայտնեց նվերի համար, ապա, ցուցադրելով գիրքը իր մոտ կանգնած Լեոնիդ Լեոնովին և Վսեվոլոդ Իվանովին, ասաց.

— Նայեցե՛ք, ինչպես են հրատարակել իմ գիրքը Հայաստանում»:

Գրքի թողած տպավորությունը Գորկու վրա կապված էր, առաջին հերթին, նրա բացառիկ ճաշակով ու գեղեցիկ ձևավորման, խորիմաստ ու արտահայտիչ նկարապարզումների հետ, սրունք պատկանում են մեծատաղանդ նկարիչ Հակոբ Կոջոյանին: Հայ գրքի պատմության մեջ, դա, իրոք, մի անգնորագանց նմուշ է, գրողի, թարգմանողի և նկարազարդողի մտահղացումների ներդաշնակության, բառային և նկարչական պատկերների միասնության սքանչելի օրինակ: Երիտասարդ Գորկու հոյակապ դիմանկարը, «Մրրկահավի երգի», «Վալախական լեզենդի», «Աղջիկը և Մահր» պոեմի և մյուս երկերի նկարապարզումները զարմանալի վառ և տպավորիչ գծերով ցուցադրում են այդ երկերի հերոսական ոգին և ումանտիկ պաթոսը: Հակոբ Կոջոյանի այդ աշխատանքները պատկանում են Գորկու երկերի դասական նկարչական մեկնաբանումների թվին: Իզուր չէ, որ համագումարի օրերին այցելելով «Սովետական գրականությունը 16 տարում» ցուցահանդեսը, Մաքսիմ Գորկին, ինչպես հաղորդվում է «Պրավդա» թերթի 1934 թ. օգոստոսի 24-ի համարում, առանձնապես «նշեց հայ նկարիչ Կոջո•

յանի աշխատանքների վահանակը՝ «Բանաստեղծու-
թյուններ և լեզենդներ» գրքի նկարազարդումներով:

Համագումարի ժամանակ Եղիշե Չարենցը հնարա-
վորություն ունեցավ մոտիկից շփվելու Գորկու հետ:
Դրանից առաջ նրանք անձամբ հանդիպել էին միայն մեկ
անգամ՝ 1928 թ. հուլիսին, երբ Մ. Գորկին այցելեց
Սովետական Հայաստան: Ինչպես հաղորդում է ժա-
մանակի մամուլը («Խորհրդային Հայաստան», 1928,
№ 174), Երևանում Գորկուն դիմավորողների մեջ եղել
է նաև Եղիշե Չարենցը, որը նրան նվիրել է «Երկիր
Նաիրի» վեպի ուսերեն հրատարակության օրինակը:
Գորկին խոստացել է գրել իր կարծիքը այդ գրքի մա-
սին, որն սկսել է կարդալ դեռ Իտալիայում: Եվ ահա
վեց տարի անց հայ բանաստեղծը նորից էր տեսնում
մեծ գրողին, լսում էր համագումարում նրա զեկու-
ցումն ու ելույթները, որոնք կոչված էին դառնալու
ուղենիշներ ողջ սովետական գրականության հետագա
զարգացման համար:

Այդ օրերին Գորկին իր ամառանոցում հերթով ըն-
դունում և զրուցում էր միութենական հանրապետու-
թյունների գրողների հետ: Օգոստոսի 24-ի զրույցի
ժամանակ հայ գրողներից ներկա են եղել Ա. Շիր-
վանդադեն, Ե Չարենցը, Վ. Ալազանր և Դ Սիմոն-
յանը: Հրաշքով պահպանվել է այդ հանդիպման մի
«խրեղեն ապացույց». դա Մաքսիմ Գորկու ստվարա-
թղթե ծխախոտատուփն է, որն իբրև հիշատակ վերց-
րել է Չարենցը և այժմ գտնվում է նրա Տուն-Քան-
դարանում: Տուփի վրա Չարենցը գրել է. «Մ. Գորկո
ծխախոտի տուփը: Մոսկվա, 1934 24. VIII — «Մո-
րողովների» ամառանոց»:

Վերջին անգամ Չարենցը Գորկուն տեսավ մեկ տարի հետո՝ 1935 թ. հուլիսի 9-ին, երբ Մաքսիմ Գորկին իր ամառանոցում Ռոմեն Ռոլանի ժամանման առթիվ կազմակերպված ընդունելությանը հրավիրում է գրողների և քննադատների մի մեծ խումբ։ Հայ գրողներից այդ հանդիպմանը ներկա են եղել Ե. Չարենցը և Վ. Ալազանը։

Սակայն, դառնալով մի փոքր ետ, պետք է կանգ առնել Գորկու սանդղագործության նկատմամբ Չարենցի բուն հետաքրքրության մի ուրիշ կարևոր փաստի վրա։ Այն վերաբերում է միևնույն 1934 թվականին, որը Չարենցի կյանքի տարեգրության մեջ կարող է կոչվել «Մաքսիմ Գորկու տարի»։ Խոսքը Մ Գորկու «Դոստիգաև և ուրիշները» դրամայի թարգմանության մասին է։ Դա մեծ գրողի վերջին դրամատիկական երկերից մեկն է, որն իր սյուժեով և մի շարք կերպարներով ուղղակի շարունակում է «Եզոր Բուլըշով և ուրիշները» դրաման, պատկերում է 1917 թ. հեղափոխական դեպքերը՝ հուլիսից մինչև հոկտեմբեր։ Գորկու նոր պիեսը տպագրվեց 1933 թ և անմիջապես դրավեց Չարենցի ուշադրությունը, որը թարգմանեց այն Հայաստանի Առաջին պետական թատրոնի համար։ Այդ թատրոնը, որը 1933 թ. մայիսին մեծ հաջողությամբ բեմադրել էր «Եզոր Բուլըշով և ուրիշները» դրաման (Տ. Հախումյանի թարգմանությամբ), շուտով ձեռնամուխ եղավ Գորկու նոր պիեսին, որի թարգմանությունը հանձնարարվեց Ե. Չարենցին։ Թարգմանությունը, ըստ երևույթին, կատարվել է 1934 թ. առաջին ամիսներին, քանի որ այդ թվականի մայիսի 12-ին արդեն տեղի է ունեցել բեմադրու-

թյան պրեմիերան: Բեմադրող ռեժիսորը Վալարշ Վա-
ղարշյանն էր, ներկայացմանը մասնակցում էին հայ
բեմի այնպիսի նշանավոր վարպետներ, ինչպես
Ա. Ավետիսյանը (Դոստիգակի դերում), Ա. Ոսկան-
յանը, Հասմիկը, Օ. Գուլաղյանը, Գր. Ավետիսյանը,
Հր. Ներսիսյանը, Գ. Ջանիբեկյանը, Ռ. Վարդանյա-
նը, Վ. Վարդանյանը, Գ. Գարրիելյանը և ուրիշներ:

«Դոստիգակի» երևանյան բեմադրությունը բարձր
գնահատականի արժանացավ: Ընդամին թատերախո-
սականներում միահամուռ կերպով նշվում էր նաև
Չարենցի թարգմանության բարձր որակը: Իսկ պիե-
սի թարգմանությունը կապված էր մեծ դժվարությու-
ների հետ. պետք էր հայերեն վերստեղծել ոուս հա-
սարակության սարբեր խավերի մարդկանց լեզվի
յուրահատկությունները, որ այնպես կենդանի կերպով
երևան են գալիս Գորկու այս դրամայում: Չարենցը
փայլուն կերպով է իրականացրել այդ դժվարին խրն-
դիրը:

Ինչ ի՞նչ սլատասխանատվությամբ է նա մոտեցել իր
ստանձնած խնդրին, երևում է ոչ միայն պիեսի մե-
րենագիր օրինակի վրա բանաստեղծի ձեռքով կա-
տարված բազմաթիվ ուղղումներից, այլև այն գրու-
թյունից, որ նա հասցեագրել է թատրոնին: Գրության
մեջ, որը կոչվում է «Դիտողություններ», Չարենցը
հատուկ բացատրում է մի քանի ուսերեն բառերի
(архирин, блаженный, юродив, умница) իր
թարգմանության յուրահատկությունը: Հետաքրքիր է
հատկապես թարգմանչի այն միտքը, թե նախադա-
սությունները կազմելիս ինքը հնարավոր չափով աշ-
խատել է «պահել ոուսական խոսակցական ոիթմը,

տեղ-տեղ նաև սինտաքսիսը, բայց ոչ այն աստիճան,
որ վնասվի հայերենը»: Չարենցն իր գրությունը
ավարտում է մի խնդրանք-առաջարկով, որը ցույց է
տալիս, թե ինչքան շահագրգռված էր բանաստեղծը
իր թարգմանության հետագա բարելավման մեջ: «Առ-
հասարակ շատ լավ կլիներ,— գրում է Չարենցը,—
եթե թույլ տրվեր մի երկու անգամ ներկա լինել փոր-
ձերին և, եթե կենդանի խոսակցության ընթացքում
երևան գան թերություններ— խմբագրել տեղնուտեղը:
Սիրով կընդունեմ նաև ռեժիսորի և դերակատարների
դիտողությունները, սակայն կատեգորիկ կերպով
խնդրում եմ առանց իմ դիտության և համաձայնու-
թյան տեքստում լեզվակազմ փոփոխություններ չմտ-
ցընել»: Ահա թե ինչքան բժախնդիր էր Չարենցը
Գորկու պիեսի թարգմանությանը գործում:

Անսովոր ճակատագիր ունեցավ «Դոստոյևսկի» շա-
րենցյան թարգմանությունը: Հաջողությամբ բեմադր-
վելով Սովետական Հայաստանի լավագույն թատրո-
նում, թարգմանությունն այն ժամանակ շուրջադր-
վեց, իսկ հետո մի քանի տասնամյակ անհետացավ
թատրոնի և հրատարակիչների տեսադաշտից: Երկար
ժամանակ տնիսված էինք ցավով մտածել, թե Չա-
րենցի այդ աշխատանքը, երևի, անդառնալիորեն կո-
րել է: Սակայն վերջերս, բարեբախտաբար, գտնվեց
թարգմանության հեղինակային ստուգված և ուղղված
օրինակը: Պարզվեց, որ երկար տարիներ այն խնամ-
քով պահվել է հայ-ռուսական գրական փոխհարաբե-
րությունների, առաջին հերթին՝ Մաքսիմ Գորկու և
հայ մշակույթի կապերի ուսումնասիրության բնագա-
վառում մեծ վաստակ ունեցող գրականագետ, բանա-

սիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Հովհաննի մոտ: 1982 թ. ապրիլին այդ մասին դեկուցելով ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդում, Գ. Հովհաննը պիեսի թարգմանությունը սիրով տրամադրեց բանաստեղծի դստերը՝ Անահիտ Չարենցին, որը տպագրության պատրաստեց այն ներկա ժողովածուի համար: Այսպես, պիեսի գրությունից և հայերեն թարգմանությունից կես դար անց լույս աշխարհ է գալիս Եղիշե Չարենցի գրական ժառանգության այս թանկարժեք մասունքը: Չենք կասկածում, որ այն կգրավի գրական և գիտական շրջանների ուշադրությունը, կդառնա թարգմանության տեսաբանների հատուկ քննության նյութ:



1934 թվականի մարտի 19-ին Չարենցն իր օրագրում մի բավական ընդարձակ գրառում է կատարել, որն ամբողջովին վերաբերում է Մաքսիմ Գորկուն: «Ներկայումս ամբողջ Խորհրդային Սիովյան մեջ միակ գրողը, որը չի կորցրել իր գրական ոճը և գրողական կերպարանքը, և կարող է ամեն ինչի մասին գրել իր սեփական խոսքերով և ոչ թե շաբլոնային, տրաֆարետային «իդեոլոգիական ոճով» — Մաքսիմ Գորկին է»: Այնուհետև Չարենցի գրառման մեջ կարդում ենք. «Նա (Գորկին) կարող է, նրան տրված է վսեմ իրավունք խոսել ստեղծագործության մասին այնպես, ինչպես կարող է խոսել ընդհանրա-

պէս մաքր, դրվատել ստեղծագործութեան հոգևոր հաճույքը, մեծարել բնականը և մարդկայինը, սերը և հումանիտար զգացմունքները գրականութեան մեջ»։ Իբրև այդ բանի ցայտուն օրինակներ Չարենցը հիշատակում է Գորկու առաջաբանները՝ կցված Ստեֆան Յվայզի և Միխայիլ Պրիշվինի գրքերին։ Այդ առաջաբանների մեջ հայ բանաստեղծին հատկապես «վարմացրել և հիացրել» է այն, որ մեծ գրողը այնքան բնական համոզմունքով ու կրքով խոսում է սիրո վսեմացնող և ազնվացնող ուժի մասին, առանց «գաղափարական» մաշված բնութագրումների ու մակդիրների, խոսում է «իր սեփական խոսքերով, իր հոգու խորքից»։ «Եվ սարսափում ես մտածելով,— եզրափակում է Չարենցն իր խոսքը,— որ Գորկու մահից հետո կկտրվի այս միակ ձայնը ևս, այս միակ մաքրկային ձայնը մեր իրականութեան մեջ— և մեր ամբողջ պուրլիցիստիկան կդառնա շարլոն ու տրաֆարետային»։

Չարենցի այս գրառման մեջ միայն Գորկու նկատմամբ ակնածանքի և հիացմունքի զգացմունքը չէ, որ խոսում է։ Այստեղ դժվար չէ նկատել Չարենցի խոր դժգոհությունը գեղարվեստական և հրապարակախոսական գրականութեան մեջ շարլոնի, միապաղաղութեան, անհատական ոճերի և նախասիրությունների համահարթման երևույթներից։ Չարենցը բողոքում է գոհիկ սոցիոլոգիզմի ազդեցութեան տակ մարդկային բնական զգացմունքներն անտեսելու, ամենինչ ուղղագիծ կերպով «իդեոլոգացման» ենթարկելու փաստերի դեմ։ Սակայն ոչ միայն այդ։ Չարենցի խոսքերում, որոնք գրված են այն ժամանակ արդեն

ձևավորվող անհատի պաշտամունքի սկզբնական շրջանում, մենք զգում ենք մեծ բանաստեղծի ներքին տազնապր սովետական գրականության մեջ նման երևույթների հնարավոր բազմացման նկատմամբ: Անշուշտ, Չարենցը շափազանցում էր իրողությունը, երբ Գորկուն համարում էր իր գրական ոճն ու կերպարանքը ունեցող միակ ժամանակակից գրողը: Բայց այդ շափազանցության հագեբանական հիմքերը միանգամայն պարզ են: Բանաստեղծի տազնապն ու դժգոհությունը բխում էին գրականության ստեղծագործական հարստության ու բազմազանության նկատմամբ ազնիվ մտահոգությունից:

1936 թ. հունիսի 18-ին Մաքսիմ Գորկին վախճանվեց: Այդ լուրը խորապես ազդեց Եղիշե Չարենցի վրա, որի արտահայտությունն են մեծ գրողի մահվան առթիվ նրա գրած երկու հոդվածները. «Մեծագույն կորուստ» (ռուս. «Կոմունիստ», 20 հունիսի, 1936 թ., № 140) և «Հանճարների և աստղերի ուղին (Ալեքսեյ Պեշկովի հիշատակին)» («Խորհրդային Հայաստան», 24 հունիսի, 1936 թ., № 144): «Գորկին,— ասված է առաջին հոդվածում,— իր մեջ հավաքում էր խորհրդային մշակույթի ողջ լավագույնը, հանձնում էր այն ողջ աշխարհին: Սրա մեջ էր Գորկու հատուկ նշանակությունը: Կուլտուրական մարդկության լավագույն մասը մեր Միությունից դուրս Գորկու մեջ տեսնում էր նոր աշխարհի կուլտուրայի առաջնորդին, որը աշխատավորների ազնիվ պոտենցիան կոչում էր դեպի կոմունիստական ապագան»:

Երկրորդ հոդվածը՝ «Հանճարների և աստղերի ուղին», արդեն ոչ թե մեծ գրողի մասին ասված ցա-

վակցության և մեծարման խոսք է, այլ բավական
բնդարձակ մի աշխատանք՝ գրված հախուռն թալով,
ջերմությամբ և միաժամանակ գիտական խորու-
թյամբ: Հողվածը ցույց է տալիս, թե Չարենցն ինչ-
քան լավ գիտեր ոչ միայն Գորկու ստեղծագործու-
թյունը, այլև անցյալում նրա գործի և անվան շուրջ
մղված գրական-հասարակական պայքարը: Հողվածը
միայն առաջին մասն է Չարենցի ծրագրած ավելի մեծ
գրականագիտական աշխատանքի: Տպագրված մասն
ունի «Լեզենդը» ենթավերնագիրը և հիմնականում
նվիրված է մեծ գրողի մասին անցյալի նարոզնիկա-
կան և լիբերալ-բուրժուական քննադատության ստեղ-
ծած առասպելների քննությանն ու հերքմանը: Այս
կապակցությամբ հիշատակվում են Միխայլովսկու և
Ռոզանովի, Մերեժկովսկու և Սուվորինի, Այխենվալ-
դի և անցյալի ուրիշ քննադատների ու հրապարակա-
խոսների անուններ, որոնք մասնակցել են այդ լե-
զենդների ստեղծմանը: Երկրորդ մասում, ինչպես
խոստանում է հեղինակը, նա պետք է իր «հարգան-
քի, սիրո և մեծարանքի» խոսքն ասեր «ուս հան-
ճարեղ գրող Մաքսիմ Գոլկու մասին, և նույնրան,
եթե ոչ ավելի ևս հանճարեղ մարդու քաղաքացու՝
Ալեքսեյ Պեշկովի մասին»: Հողվածի այդ մասը ժա-
մանակակիցների վկայությամբ, առհասարակ չի դր-
վել՝ բանաստեղծի հիվանդության սլատճառով:

Դժվար չէ նկատել, որ Չարենցի հողվածը, եթե
այն ամբողջանար իր լրիվ մտահղացման ձևով, կա-
ռուցված էր լինելու անցյալի մարքսիստական գրա-
կանագիտության մեջ մի քանի օգտագործված ստեղ-
ծագործական հնարանքով՝ գրողի մասին հյուսված

լեզենդների հերքումից գնալ դեպի նրա գրական դիմանկարի գծագրում (հիշենք Ֆրանց Մերինգի «լեզենդ Լեսսինգի մասին» գիրքը, Պոլ Լաֆարգի «լեզենդ Վիկտոր Հյուգոյի մասին» պամֆլետը)

Բայց ի՞նչ լեզենդների մասին է խոսքը: Չարենցը հիշեցնում է մեծ գրողի գրական մուտքը, երբ անցյալ դարի վերջին «Մարսիմ Գորկի» անունը «կայծակի արագությամբ սավառնեց ամբողջ աշխարհի վրա, երկրագնդի բոլոր մասերում», նախրյան Կարսից մինչև Սան-Ֆրանցիսկո, երբ Երիտասարդ գրողի կերպարանքը «կայծակի պես փայլատակեց մի օր մարդկային կյանքի մթին երկնքում և ընդմիջտ դրոշմված մնաց միլիոնավոր մարդկանց հիշողության մեջ, իրրև սոցիալական ծովի դարհուրելի խորքից իր հանճարի ուժով մինչև արևի լույսը բարձրացած մի հրաշալի կյանքի խորհրդանիշ »: Այդ ժամանակ էլ բուրժուական քննադատության մեջ հյուսվեց «հանճարեղ բոսյակի», «սոցիալական հատակի վունդերկինդի» մասին մի «սենտիմենտալ լեզենդ»: Ոմանք փորձեցին բթացնել Գորկու սոցիալական ինքնագիտակցությունը, «դնել իրենց կաղապարի մեջ, արդուկել, լիզել, դարձնել սովորական «ինքնուս հանճարի» մի նմուշ», ներշնչել նրան այն միտքը, թե միայն իրենց «խորհուրդներով շարժվելու դեպքում նա կդառնա մե՛ծ . արվեստագետ »: Բայց այդ ճիգերն ասլարդյուն անցան: Ինչպես գրում է Չարենցն իր հոդվածում, «Գորկին իր ֆենոմենալ աշխատասիրությամբ և ոգու հավասարակշռությամբ՝ շատ շուտով ոչ միայն հասկացավ ու մերժեց այդ սենտիմենտալ ամպլուան..., այլև, առասույելյական արագությամբ

աիրապետելով մարդկային մշակույթի բոլոր բնագավառներին, ինքը դարձավ «պետ» և «օրենսդիր» մի նոր գրականության և հոգեբանության...»։ Գորկու այդ հաղթարշավը ոչ միայն նրա «կամքի, սոցիալական ինքնության և ուժի» արդյունքն էր, նշում է Չարենցը, այլև ուղղակի կապված էր «Ռուսաստանի բանվորության հեղափոխական կազմակերպվածության ու կուլտուրական վերելքի» հետ։ Ահա թե ինչու բանվորական շարժումը, բուլշևիկյան մամուլը հանձին Գորկու «ողջունում էր նոր աշխատավոր պրոլետարական մարդկության երգչին և այդ մարդկության գալիք անպարտելի հաղթանակների մարգարեին...»։

Երկրորդ լեզենդը, որին անդրադառնում է Չարենցը, ստեղծվեց արդեն դարասկզբին՝ Մաքսիմ Գորկու քաղաքական և գեղարվեստական վերջնական ինքնորոշումից հետո։ Դա Գորկու «անկման», նրա տաղանդի կործանման» լեզենդն էր, որը տարփողում էին պաշտոնական և լիբերալ մամուլի օրգանները։ Չարենցը նկատի ուներ դարասկզբի հետադեմ քննադատության մեջ շատ որոշակիորեն արտահայտված մի միտում։ Տեսնելով հեղափոխական բանվոր դասակարգի և նրա կուսակցության հետ Մաքսիմ Գորկու գնալով ամրապնդվող կապերը, այդ քննադատությունը տարբեր կերպ կրկնում էր այն միտքը, թե այդ կապի պատճառով նրա գեղարվեստական տաղանդը խորտակվեց։ Այսպես, 1905 թ. «Վեսի» հանդեսը Գորկու մասին գրում էր. «Խավարեց հանդուգն եկվորը, բանդիտը, որն արհամարհում էր կյանքի համաշափությունը», իսկ նրա ստեղծագործության աղբյուրը, որն «սկզբում հորդորում էր թարմ հոսան-

քով, վերածվեց կեղտոտ ջրափոսի»։ Հարձակումներն ավելի ուժեղացան սոցիալիստական ռեալիզմի առաջին դասական ստեղծագործության՝ «Մայրը» վեպի ճրագարակումից հետո։ Անկումային գրական հոսանքի և քաղաքական ռեակցիայի հայտնի ներկայացուցիչ Զինաիդա Գիպիուսը 1907 թ. գրում էր. «Ի՞նչ գրականություն է դա։ Նույնիսկ ո՞ր թե հեղափոխությունը, այլ ուսական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը կլանեց Գորկուն առանց մնացորդի»։ Մի ուրիշ քննադատ (Դ Վ. Ֆիլոսոֆով) իր հոդվածն ուղղակի վերնագրել էր՝ «Գորկու վերջը»։

Պատասխանելով այս և նման ելույթներին, Ա. Վ. Լունաչարսկին 1909 թ. գրում էր. «Միայն քաղքենիական շարակամությունը և ֆիլիստերական բթությունը այդ աճի ճգնաժամի մեջ, ուր անկատարությունների միջով, իսկ երբեմն հենց նրանց շնորհիվ զգացվում էր հսկայի ուժ և յոթմղսնանոց քայլ դեպի առաջ, նոր, բարձրագույն աշխարհազգացողության անցնելու այդ ճգնաժամի մեջ կարող էին տեսնել հիվանդություն, նույնիսկ ծիծաղելի է՝ Գորկու մահը»։

Եվ ահա տասնամյակներ անց և Զարենցը նույնպես հանգամանորեն խոսում է այդ հարցի մասին։ Իր հոդվածում նա ցույց է տալիս, որ թշնամական քննադատության աղդարարած «անկումը», «վերջը» իրականում ծնունդ էր «ուս հանճարեղ գրող և համաշխարհային մեծագույն քաղաքացի Մաքսիմ Գորկու», որը «պիտի անմահանար դարերում», իբրև ուսգասական գրականության վերջին մեծ յղակ և գեղարվեստական նոր դարաշրջանի սկզբնավորող։

Սրանք են «Հանճարների և աստղերի ուղին» հոդ-

վածում արծարծված հիմնական հարցերն ու մտքերը: Չնայած անավարտ լինելուն, այդ հոդվածը պատկանում է այն լավագույնի թվին, ինչ հայ իրականության մեջ երբևէ գրվել է պրոլետարական մեծ գրողի մասին: Ավելին իր անկրկնելի ինքնատիպությամբ, վառ և խոր բնութագրումներով Չարենցի հոդվածն իր արժանի տեղն ունի սոցիալիստական ռևոլյուցիոն հիմնադրի մասին ստեղծված վիթխարի գրականության մեջ:



Մարտիմ Գորկու և Եղիշե Չարենցի ստեղծագործական առնչությունների հարցը բազմազգ սովետական գրականության պատմության թանկարժեք և անմոռանալի էջերից մեկն է, որը երբևէ չի կորցնի իր հետաքրքրությունն ու հմայքը: Եվ իբրև Գորկու գաղափարական-դեղարվեստական սկզբունքների ընկալող ու շարունակող, և՛ որպես նրա Լրկերի թարգմանիչ, և՛ որպես մեծ դրողի անձնավորության ու գրական վաստակի գնահատող Չարենցը թողել է հարցերի ստեղծագործական լուծման փայլուն օրինակներ, որոնք ունեն ոչ միայն գրական-պատմական, այլև կենդանի արդիական նշանակություն:

ԷԴ ԶՐԲԱՇՅԱՆ



ԱՄԲՍԿՆԻՆԻ



ՄԵՐ ԿԱՅԱՎԵՐ




ԵՐԳԸ

Ծովի ալեհեր հարթության վրա
 ամպեր է ահա կուտակում քամին,
 Ահեղ ամպերի և ծովի միջև
 Ճախրում է հպարտ մրրկահավը՝
 Քաշում է՝ մի սև կայծակի նման,
 Մերթ ալիքներին թևով դիպչելով,
 Մերթ նետի նձան ամպերին հասած՝
 Ճշում է նա շոր— և խինդ են լսում
 Ամպերը խիզախ թռչունի ճիշում:
 Հնչում է ճիշում— փոթորկի ծարավ:
 Ե՛վ զայրույթի ուժ, և՛ կրքի հրդեհ,
 Ե՛վ հաղթանակի հավատք են լսում
 Ամպերը նրա այդ ահեղ ճիշում:
 Նվում են ճայերն ամպրոպից առաջ,
 Սուղահավերը նվում են նույնպես,—
 Սուղահավերին անհայտ է հավետ
 Անհուն հրճվանքը կյանքի պայքարի:
 Գոռ որոտներից սարսում են նրանք:
 Հիմար պինգվինը թաքցրնում է խեղճ,
 Գիրուկ մարմինը ժայռերի խորքում ..
 Եվ միայն հպարտ Մրրկահա՛վն է
 Ճախրում համարձակ, խիզախ և ազատ




Ծովի ալետր, ճերմակ փրփուրում:
 Ավելի մռայլ ու ծանր են իջնում
 Ամպերը ծովի հարթության վրա,
 Եվ ալիքներն են երգում ու պարում՝
 Թռչելով դեպի որոտը պայթող:
 Ցասման փրփուրում որոտն է թնդում,
 Ալիքներն են հորդ՝ վիճում քամու հե՛տ,
 Եվ ահա հանկարծ գրկում է քամին
 Ամպերի երամն անդուլ գրկանքով,
 Եվ շարտում է ամենի թափով,
 Վայրի բարկությամբ, ժայռերի վրա,
 Փշրում է, ցրում, դարձրնում փոշի
 Նրանց զմրուխտե կույտերն ահագին:—
 Մրրկահազավը ճախրում է ճիշով,
 Կայծակի նման ամպերը ճեղքում—
 Պոկում է թևով փրփուրը ջրի,
 Ճախրում է ահա, ինչպես հզոր դև,
 Սև, անագորույն ոգի փոթորկի,—
 Եվ ծիծաղում է, և խուլ հեկեկում...
 Որոտի ցասման, վրդովմունքի մեջ
 Նա— զգայուն դև— վաղուց է արդեն
 Հոգնություն տեսնում:— Համոզված է նա,
 Որ շեն պարուրի ամպերն արևին,
 Չե՛ն ծածկի ընդմիշտ, շե՛ն ծածկի, օ, ո՛չ:—
 Ոռնում է քամին... Որոտը թնդում...
 Կապույտ բոցի պես ամպերն են վառվում
 Ծովի ալեկոծ անդունդի վրա—
 Բռնում է ծովը կայծակի նետերն
 Ու իր ահռելի ընդերքում մարում:
 Կրակե կարմիր օձերի նման

Ե՛վ գալարվում եմ, և՛ կորչում ծովում
Այդ կայծակների ցուրերը բոսոր:
— Փոթորիկն հիմա թինդով կըպայթի...
Դա խիզախ, հպարտ մըրբկահավն է
Ճախրում սլացող կայծակների մեջ,
Ահեղ աղմըկող, հորդ ծովի վրա.
Դա— հաղթանակի երգի՛չն է ճշում.
— Թո՛ղ փոթորիկը ուժգնորե՛ն պայթի ..



ԲԱՌԵԻ

ԵՐԳԸ





արձր լեռների
Կատարը սողաց

Եվ պառկեց այնտեղ,
Խոնավ քարափում,
Գալարուն իժը՝
Հայացքը ծովին:

Բա՞րձր արևն էր
Երկընթում շողում
Եվ լեռներն էին
Շոգ շնչում վերև,
Եվ ալիքները
Զարնըվում էին
Վարը՝ քարերին:

Իսկ ձորի միջով
Վարը, խավարում,
Սահանքն էր սահում
Դեպի ծովը լուրթ,
Զարկելով իրար
Քարերն հատակի,—

Փրփուրով պատած,
Հզոր, ալեհեր,
Կտրում էր լեռը
Եվ ծովը թափվում
Դժգոհ ունոցով:

Հանկարծ այն քարափն,
Ուր յիժն էր պառկել,
Վերևից ընկավ
Վիրավոր բազեն՝
Փշրված կրծքով,
Փետուրն արյունոտ:
Մի հատու ճիշով
Ի տ ընկավ գետին—
Եվ զարնըվում էր
Անկոր զայրույթով
Ա՛հ՛բա կուռ քարին...

Ի՛նչ պախեցավ,
Ետ սողաց ճեպով,
Հասկացավ սակայն,
Որ կյանքին նրա
Մնացել է լոկ
Մի քանի վայրկյան ..
Մոտ սողաց իսկույն
Մեռնող թռչունին
Եվ ֆշաց ուղիղ
Աչքերին նրա.
«Ի՞նչ է, մեռնո՞ւմ ես...»
«Այո՛, մեռնում եմ,—


Շշնջաց բազեն,
 Խորը շնչելով.
 — Ես լա՛վ ապրեցի...
 Ես բախտավոր եմ...
 Քաջ կովեցի՛ ես...
 Տեսա երկինքը...
 Դու շե՛ս տեսնի այն
 Երբեք այնքան մոտ...»
 «Է՛հ, խե՛ղճ արարած,
 Ի՛նչ է երկինքը
 Դատարկ տեղ միայն...
 Ո՞նց սողամ այնտեղ...
 Այստեղ ինձ համար
 Ավելի լավ է.
 Խոնավ ու տաք է»
 Այսպես իժն ասաց
 Ազատ թռչունին,
 Ծիծաղեց հոգում
 Նրա անհեթեթ
 Մտքերի վրա,
 Եվ այսպես խորհեց.
 «Թո՛հ՛ր թե սողա—
 Վախճանն հայտնի է...
 Բոլորս էլ վերջը
 Կըպառկենք հոգում,—
 Ամե՛ն ինչ վերջը
 Աճյուն կդառնա»
 Բայց խիզախ բազեն
 Թպրտաց հանկարծ,
 Կանգնեց մի փոքր

Եվ շուրջը նայեց—
Քարափին խոնավ:

Գորշ քարի միջով
Ջուրն էր թորում դուրս,
Եվ հեղձուցիչ էր
Քարածուծ խավար,
Եվ գայիս էր գաղջ,
Մանր լեշի հոտ:
Եվ ճշաց բազեն
Կարոտով, ցավով,
Հավաքած բոլոր
Իրա ուժերը.

— Օ, եթե երկինք
Մեկ է՛լ թռչեի...

Ես կսեղմեի
Քշնամուն կրծքիս
Եվ... թո՛ղ հագենար
Արյունով իմ նա...
Օ՛, երջանկություն
Կովի, պայքարի...
Իսկ իժը խորհեց.
Ձերևի այնտեղ
Ապրելը այդքան
Իրո՛ք որ լավ է,
Եթե նա այդպես
Խոր հառաչում է...
Եվ առաջարկեց
Ազատ թռչունին.—
Ձեռ է՛լ մոտեցիր



Եզրին քարափի
Եվ նետվիր ներքև—
Գուցե թևերըդ
Քեզ բարձրացրնեն,
Եվ կապրես կրկին
Դու մի քիչ և՛ս
Քո վեհ տարերքում»:

Եվ հառնեց բազեն,
Եվ, խենթ ճշալով,
Գնաց եզերքը՝
Ճանկերը խոնավ
Քարին քսելով:
Եվ մոտեցա՛վ նա,
Պարզեց թևերը,
Շնչեց կրծքո՛վ ողջ,
Բոցեց աչքերը—
Եվ գլորվեց վա՛ր:
Եվ, ինչպես օարը,
Սահելով ներքև,
Արագ ընկնում էր,
Կոտրում թևերը,
Եվ կորցընում էր
Իր փետուրները...
Ջրի ալիքը
Գրկեց մարմինը,
Եվ լվանալով
Նրա արյունը,
Փրփուրով պատած

Մղեց դեպ ծովը:
Իսկ ալիքները
Տխուր հառաչով
Չարներվում էին
Չոր քարերին ա՛յն.
Եվ շէր երևում
Նրա մարմինը
Ծովի անսահման
Տարածության մեջ ..
Քարափում պառկած
Խորհում էր երկար
Իժը թռչունի
Վախճանի մասին
Եվ սիրո մասին
Դեպի երկինքը ..
Եվ ահա նայեց
Դեպի հեռո՛ւն նա,
Որ հար շոյում է
Մեր հայացքները
Բախտի երազով:
«Իսկ ի՞նչ էր տեսնում
Մեռնող այն բազեն
Այդ անառյատում
Անտակ ու անեզր .
Ինչո՞ւ են նրանք,
Մեռնելով՝ հավետ
Հուզում հոգին մեր
Իրենց սիրո՛վ այդ՝
Դեպի թռիչքը,
Դեպի երկինքը .

Ի՞նչն է պարզ այնտեղ...
Չէ՞ որ կարող եմ
ես ինքս իմանալ
Այդ ամենը — գեթ
Մի փոքր պահով
Երկինք թռչելով:»
Ասաց — և արավ:
Ուտրված, որպես
Փայլուն մի օղակ՝
Թռավ առա՛ջ նա —
Եվ արևի դեմ
Փայլեց, ինչպես մի
Բարակ ժայպենու
Սողալու համար
Ծնվածը — թռչել
Օ, անկարո՛ղ է ..
Մոռանալով ա՛յս —
Ընկավ քարի՛ն նա,
Բայց շփշրվեց,
Այլ ծիծաղե՛ց լոկ.
«Ահա՛ թե որն է
Երկինք թռչելու
Հիմար հաճույքը...
Ընկնելու մեջ է...
Հիմա՛ր թռչուններ...
Հողին անընտել,
Չանձրացած այնտեղ,
Նրանք ձգտում են
Դեպի երկինքը —
Եվ կյա՛նք են փնտրում

Անապատում տո՛թ:
Այնտեղ — դատարկ է,
Այնտեղ լույս չա՛տ կա,
Բայց շկա այնտեղ
Ուտելիք, շկա
Կենդանի մարմնի
Համար հենարան:
Էլ ինչի՞ է այդ
Հպարտությունը. .
Էլ ինչի՞ է այդ
Հանդիմանանքը ..
Նրա համա՛ր, որ
Ծածկեն նրանով
Իրենց տենչերի
Խելառ ընթացքը,
Որ նրանց ետև
Քողարկեն իրենց
Անպետքությունը
Այս կյանքի համար .
Հիմա՛ր թռչուններ ..
Բայց շե՛ն խաբի ինձ
Այլևս նրանց
Խենթ զրույցները ..
Ես ինքս գիտեմ
Ամե՛ն ինչ հիմա:
Ես ինքս արդեն
Տեսա երկինքը ..
Վե՛ր ճախրեցի ես
Եվ շափեցի՛ այն,
Տեսա անկումը,

Բայց շմեռա՛ ես,
Այլ ավելի՛ եմ
Հավատում ի՛նքս ինձ...
Թող նրանք, ովքեր
Չեն սիրում հողը—
Ապրեն սուտո՛վ լոկ...
Ես գիտեմ հիմա
Ճշմարտությունը—
Եվ նրանց կոչին
Չե՛մ հավատում ես:
Հողի ծնունդ եմ—
Հողո՛վ կապրեմ ես:»
Եվ կծկրվեց նա
Պիրկ՝ քարի վրա՝
Իրենով հպարտ:—
Փայլում էր ծովը
Վառ լույսերի՝ «նջ»,
Եվ ալիքները
Զարնըվում էին
Ափերին՝ ահեղ,
Նրանց որոտում
Թնդում էր երգը
Բազեի մասին:
Եվ դողում էին
Ժայռերը՝ նրանց
Հարվածներից գո՛ռ
Եվ երգից նրանց —
«Խուլ-խիզախների
Խենթությանը վեհ
Երգում ենք փա՛ռք մենք:

Խոլ-խիզախների
Խենթությունը վեհ—
Օ, ա՛յս է ահա
Կյանքի իմաստը .

Օ, քա՛ջ բազե,— դու
Կովում՝ քո դաժան
Ոսոխների՛ դեմ
Եղար արնաքամ
Բայց կգա օրը
Եվ քո արյունի
Վառ կաթիլները՝
Կայծերի նման՝
Կըրոնը կվեն մեր
Կյանքի խավարում
Եվ բազմաթիվ քա՛ջ
Սրտեր կըվառեն
Ծարավով լույսի
Եվ ազատության:
Թեկուղ մեռար դու,
Բայց երգերում քաջ
Եվ ոգով արի
Ու խիզախ մարդկանց—
Ընդմիջտ կլինես
Պայծառ օրինակ,
Հպարտ օրինակ...
Խոլ-խիզախների
Խենթությանը վեհ
Երգում ենք ե՛րգ մենք...»

ՎԱՆԱԽԱՎԱՆ ԼԵԳԵՆԴ



Ա

նտառում ապրում էր փերին,
Գետում լողանում էր անվերջ.

Մի անգամ անզգույշ գտնըվեց—
Եվ ընկավ ձկնորսի թոռի մեջ:
Ձկնորսները խիստ վախեցան,
Բայց այդտե՛ղ էր պատանի Մարկո՛ն.
Նա գրկեց փերուն համարձակ,
Սկսեց համբուրել կրքոտ:
Իսկ փերին, ճկուն ճյուղքի պե՛ս,
Թևերում նրա գալարվում էր,
Նայում էր Մարկոյին անվերջ
Եվ ինչ-որ բանի ծիծաղում էր..
Ամբողջ օրը գուրգուրեց Մարկո՛յին,
Բայց իջավ գիշերը հենց—
Չբացավ ծիծաղկուն փերին,
Մարկոյի հոգին տխրեց ..
Զօր-գիշեր Դանուբի ափերին
Թափառում, կանչում է Մարկոն հե՛ք,
Հառաչում է. «Ո՞ւր է փերին».
Ալիքներն ասում են.— «Չգիտե՛նք»:
Բայց ճշաց նա նրանց. «Խաբո՛ւմ եք,
Ինքնե՛րդ եք նրա հետ պարում...»



Եվ նետեց իրեն հիմարը
Դանուբի՛ մեջ, որ գտնի փերունս:
Լողանում է փերին Դանուբում,
Ինչպես և Մարկոյից առաջ,
Իսկ Մարկո՛ն էլ չկա .. Բայց, տեսե՛՛,
Իր մասին գոնե ե՛րգն այս մնաց. .

.

Իսկ դուք աշխարհում կապրեք
Որդերի նման կույր ու սին,—
Ձեր մասին ո՛չ զրույց կասեն,
Ո՛չ երգեր կերգեն ձեր մասին ..



Արիւն

ՄԱՅԸ





առնում է արքան պատերազմից:
 Գնում է— զայրույթից դողում է:
 Լսում է— թփի ետևից
 Մի աղջիկ ծիծաղում է:
 Ահեղ կիտելով հոնքերը դեղին
 Արքան մտրակեց ձիուն՝ փնշալով,
 Հարձակվեց վրան, ինչպես փոթորիկ,
 Եվ գոռաց՝ զրահը ցնցելով.
 — «Ի՞նչ ես գու— գոռաց նա շար ու կոպիտ,—
 Ի՞նչ ես դու, աղջի՛, ցցել ատամներըդ.
 Կործանեց, հաղթեց ինձ թշնամին,
 Իմ ամբողջ զորքը կոտորվել է.
 Գերի է ընկել շքախումբըս ողջ.
 Գնում եմ ահա, որ նոր զորք բերեմ.
 Ես—արքան եմ քո, սիրալս— վիշտ ու ոխ,—
 Հիմար ծիծաղըդ ես ո՞նց համբերեմ:»

Շապիկը կրծքին շտկելով հազիվ՝
 Աղջիկը ասաց արքային զազիր
 — Ես խոսում եմ, տե՛ս, հետն իմ սիրածի,—
 Տե՛ր-արքա, դու, լավ է— հեռացի՛ր:—
 Արքաների հետ խոսելու համար

Սիրողը ե՞րբ է ժամանակ ճարում.
Երբեմն սերը վառվում է արագ,
Քան մոմն՝ աստժո պայծառ տաճարում:

Մոլեգնեց արքան բարկությունից շար,
Հրաման տվեց իր խմբին խոնարհ.
— «Զնդան նետեցե՛ք այս լիրբ աղջրկան,
Կամ, լավ է, իսկույն խեղդեցեք նրան:»

Ծամածրոելով մոռութեները հեղ՝
Արքայի մարդիկ թափվեցին վրան,
Շրջապատեցին շար դեերի սլես—
Մահին հանձնեցին դժբախտ աղջրկան:

II

Լեցուն է Մահը միշտ շա՛ր հույզերով,
Բայց այդ օրը նա փոխվել էր ասես.
Զէ՞ որ գարնանը սերմերը սիրո
Ուռչում են անգամ այդ պառավի մեջ:
Զանձրալի է հար նեխած մսերում
Ուրնչացնել հիվանդություններ.
Երբեմն ուզում ես ապրել անօգուտ,
Ամեն մի բոպեն մահով շրնդունել:
Բոլորը՝ նրան տեսնելու պահին՝
Զգում են միայն սարսափ անխմաց.
Զանձրացել էր նա մարդկային ահից,
Թաղման ծեսերից, փոսերից այն բաց:
Զբաղված գործով անշնորհակալ՝
Այս կեղտոտ ու մութ աշխարհի վրա—

Իր գործն համարեն կատարում է հար—
 Բայց ավելորդ են համարում նրանու
 Վիրավորիչ է, իհարկե, սա քիչ.
 Բարկանում է մերթ մարդկանցից նա է՛լ,
 Եվ, բարկանալով, տանում է կյանօից
 Ո՛չ նրանց հաճախ, ում պե՛տք է տանել,
 է, սատանայի՞ն սիրի նա գուցե,
 Անհագուրդ շնչի դժոխքի հրով,
 Հեկեկա սիրո ցավից ու խոցից,
 Նրա հետ մեկտեղ արբենա սիրով

III

Աղջիկը՝ կանգնած Մահի առաջին
 Սպասում է հարվածին Մահի:
 Փնշում է Մահը, — խղճում է զոհին —
 — «Ինչքա՞ն էլ ջահե՛լն է, նայի՛ր...
 Ի՞նչ ես արքային ասել կոպտաբար.
 Սպանեմ պիտի քեզ դրա համար .»

— Օ, մի՛ բարկանա, — աղջիկը ասաց.
 Ինչո՞ւ ես իզուր բարկանում վրաս.
 Առաջին անգամ համբուրում էր ինձ
 Սիրածս՝ թիփ կանաչ հովանում,
 Իսկ արքան — վախշում էր սլատերազմից.
 Ի՞նչ արքա, ի՞նչ բան — այդ լույս վայրկյանում...
 Դե, ես էլ ասի արքային, նրան.
 — Հեռացի՛ր, արքա՛, այստեղից: —
 Լա՛վ էի ասում, կարծես թե, սակայն
 Տես՝ ինչքա՞ն եղավ անտեղի...

Եվ Մահից, գիտեմ, ազատում չկա.
Մեռնելո՛ւ եմ, գիտե՛մ, շրսիրած,—
Բայց ամբողջ հոգով խնդրում եմ, ո՛վ Մահ,—
Թույլ տուր, որ մեկ է՛լ համբուրեմ նրան. .

Տարօրինակ էր զրույցն այս Մահին.
Ո՞վ է Մահվանից նման բան ուզում ..
Մտածեց՝ էլ գործ կըմնա՞ իրեն,
Թե չհամբուրվեն մարդիկ աշխարհում .

Եվ, տաքանալով արևի ներքո,
Մահն ասաց՝ մոտիկ կանչելով օձին.
— «Գնա՛, համբուրվի՛ր— և ե՛տ եկ շուտով
Գիշերը՝ քո՛նն է, կըսպասեմ— լուսին:»

Եվ նստեց քարին:— Օձը ժանիքո՛վ իր
Մահվան գերանդին է լիզում:
Աղջիկը բախտից հեկեկում է,
Փնշում է Մահը.— «Դե գնա՛, դե՛, շո՛ւտ:»

IV

Գարնան արևով քնքուշ տաքացած,
Մահը արձակեց տրեխները հին,
Հենվեց շոր քարի— և խորը քնեց:
Եվ վատ մի երազ այցելեց Մահին:

Իբրև Կայենը, ծնողը նրա,
Իր թոռանթոռի՝ շար Հուդայի հետ,
Երկուսն էլ զառամ,— ելնում հն լեռո,
Երկու իժի պես սողում են կամաց:



— «Տե՛ր»,— հառաչում է մռայլ Կայենը,
երկինք նայելով մարած աչքերով.

«Տե՛ր»,— հայցում է շար Իսկարովտացին՝
Սչրիբը հողից շրթարձրացնելով:

Վերը, ամպի մեջ, լույս լերան վրա
Տերն, ընկողմանած, կարդում է մի գիրք
Վառ աստղերով է այդ գիրքը գրված,
Մի էջն է նրա— Ծիր-կաթինն անհուն:

Կանգնած է վերը Հրեշտակապետն՝
Ըսպիտակ ձեռքում— կայծակների խուրձ,
Ուղևորներին ասում է նա խիստ.

— «Հեռացե՛ք, — աստված ձեզ չի՛ ընդունի»

— «Միքայե՛լ» — տխուր հայցում է Կայենն.
Մե՛ծ է հանցանքս աշխարհի հանդեպ՝
Ե՛ս ծնեցի կյանքն ըսպանանողին.
Ե՛ս եմ հայրն ըստոր, անիծյալ Մահի»

— «Միքայե՛լ» — տխուր ասում է Հուդան.
Գիտեմ՝ Կայենից հանցապա՛րտ եմ ես,
Քանզի մատնեցի գարշելի Մահին
Լույսի պես պայծառ սիրտը աստուծո»

Եվ աղերսում են նրանք երկուսով.
— Միքայե՛լ, — տերը մեզ մի խո՛սք միայն,
Թող մի խոսք ասի, թող խղճա լոկ մեզ—
Չէ՞ որ ներումն մենք չենք աղերսում:»

Հրեշտակապետն ասում է կամաց.

— «Երիցս արդեն ասել եմ նրան.

Երկու անգամին նա ոչինչ չասաց.

Երրորդ անգամին նա խիստ բարբառեց.

— Իմացի՛ր՝ քանի դեռ Մահը կյանքում

Կործանում է շունչ ու ծիլ կենդանի—

Զի՛ք ներում նրանց— Կայեն-Հուդային»

Այստեղ Մատնիչն ու Եղբայրասպանը

Տխուր ոռնացին և հեծկտացին,

Եվ, գրկած իրար, գլորվեցին ցած՝

Լերան ներքևի ճահիճը նեխած:

Իսկ մութ ճահիճում հրճվում են, խաղում

Մարդակեր դևեր ու սատանաներ—

Եվ թքում են բութ նրանց երեսին

Ճախճախուտային կապույտ կրակներ:—

V

Մահը արթնացավ կեսօրին մոտիկ:

Նայում է— աղջիկը շի՛ եկել դեռ:

Փնչում է քնկոտ. «Տե՛ս անամոթին,—

Գիշերն, արի տես, խիստ կարճ է եղել»

Քաղեց մի հասած արևածաղիկ,

Հոտոտեց, հրճվեց՝ արևի ներքո

Դիտելով ծաղկած ծառերը դեղին

Տերևներն՝ ասես դարձած ոսկեգույն:

Եվ արեգակին նայելով— հանկարծ
երգեց նողկալի իր ձայնով հանգած.—

— «Մարդիկ՝ ձեռքով շարաղետ՝
Մերձավորին սպանում—
Եվ թաղում են, և երգում.
«Ի վերին Երուսաղեմ:»

Չեմ հասկանում ես ոչինչ.
Բռնակալը իր ձեռքով
Սպանում է մարդկանց միշտ
Եվ միշտ թաղում— նո՛ւյն երգով:

Ազնիվ է, թե ավաղակ—
Հենց որ ուզում են թաղեն,
Նո՛ւյնն են երգում շարունակ,
— «Ի վերին Երուսաղեմ:»

Հիմարի, թե ստորի,
Հենց որ ձեռքով իմ քաղեմ—
Երգում են միշտ բոլորին.
— «Ի վերին Երուսաղեմ:»

VI

Նա երգը երգեց և խլիստ դժգոհեց.
Անցել է արդեն ժամ ու ժամանակ—
Իսկ Աղջիկը դեռ չկա, չի՛ գալիս.
Սա— վատ է, Մահը— չի՛ սիրում հանաք:



Ռառնալով դժնի ու շար առավել—
Հագավ Մահը իր տրեխները հին,
Եվ հազիվ իջավ լուսնկա գիշեր—
Ճանապարհ ընկավ ամպի պես մթին:

Քիչ գնաց— մեկ էլ տեսնում է ահա.
Ցողապատ, դալար թավուտի ներքո
Նստած է, գարնան դիցուհու նման,
Աղջիկը՝ շաղած լուսնյակի ցուլքով:

Վաղ-գարնանային հողի պես տկլոր՝
Բացված է նրա կուրծքը անամոթ,
Եվ թավ, մետաքսյա մաշկի վրա, խոր,
Աստղերն են փայլում համբույրների տոթ:—

Աստղերի նման կուրծքն են զարդարում
Գիրգ ստինքների պտուկները հուր,—
Եվ, աստղերի պես, աչքերն են նայում
Վեր՝ Կաթն-Սիրի ճամփեքին մաքուր:

Կապույտ սովերներ աչքերի տակին,
Շրթերը— կարմիր վերքերի նման,
Գլուխը դրած նրա ծնկներին՝
Հոգնած, հագեցած՝ նիրհել է տղան:

Նայում է Մահը— և բոցը քենի
Մարում է դանդաղ իր դատարկ գանգում:
— «Եվայի նման այդ ի՞նչ ես էլի
Թաքնըվել աստծուց խոտի արանքում:»

Երկընթի նման մարմնով իր լուսեղ
Իր սիրած տղին ծածկելով Մահից—
Պատասխան տվեց Աղջիկը խիզախ.
— Սպասի՛ր մի քիչ, դեռ մի՛ հայհոյի,
Աղմուկ մի՛ հանիր, մի՛ դիպչի սրան,
Մի՛ հնչեցրու գերանդին քո սուր.
Կրգամ, կմըտնեմ իսկույն գերեզման—
Միայն թե սրան— երկար կյա՛նք դու տուր:
Մեղավոր եմ ես, շեկա ժամկետին,
Կարծում էի, որ— դու շա՛տ ես մոտիկ,
Թո՛ւյլ տուր սիրածիս ես գրկեմ էլի—
Կյանքը նրա հետ շա՛տ է ցանկալի...
Նա էլ— լա՛վն է շատ նայի՛ր՝ հուրհուրան
Ինչպիսի՛ շքնաղ, ինչպիսի՛ վսեմ
Հետքեր է թողել նա կրծքիս վրա.
Տես՝ կակաշներ են կրակե ասես »

Մահն, ամաշելով, կամաց ծիծաղեց.
— Արևի հե՛տ է համբուրվել ասես ..
Բայց— մենակ դու շե՛ս իմ հոգսը կյանքում,
Շատերի՛ն սխտի ես մահ տամ ու քուն.
Ես ժամանակին լա՛վ եմ ծառայում,
Գործ շատ կա, իսկ ես— զառամ եմ արդեն
Ամեն մի վայրկյանն ինձ թանկ է կյանքում—
Հավարվի՛ր, աղջի՛, ժամանակն է, դե՛ . »

Պնդում է աղջիկն -

«— Իմ սիրածը ինձ
Երբ գրկում է-- էլ ո՛չ երկինք, ո՛չ հող
Լցվում է հոգիս կարոտով աննինջ,
Վառվում է իմ մեջ երկնային մի շող .

էլ սարսափ շկա գալիքի հանդեպ,
Ո՛չ մարդ է էլ պետք, ոչ երկինք անհուն.
Մանկան պես— խինդը իրենո՛վ է խենթ,
Եվ իրենո՛վ է սերը հիանում ..»

Լսում է մահը, մտածկոտ ու սև,—
է՛հ, ո՞նց կասեցնի այս երգը անվերջ. .
Չի՛ք ասոված կյանքում— արևից վսեմ,
Չի՛ք կրակ— սիրո կրակից անշեջ. .

VII

Լուռ է մահը, իսկ զրույցներն աղջրկա
Հալում են յոր ոսկոռները նրա հին,
Մերթ սառեցնում և մերթ կիզում են նրան,—
Ի՞նչ պիտի տա Մահու սիրտը աշխարհին:


Մահը— մայր շէ. բայց կի՛ն է նա և նրա
Սի՛րտն էլ անշուշտ մտքից ուժեղ է և խիստ.
Իր մութ սրտում կան բողբոջներ հուրհուրան
Կարոտանքի, վրդովմունքի և խղճի:

Նրանց, ում նա սիրում է խոր իր սիրով,
Ում սիրտը որ շար կարոտով է լեցուն—
Գիշերները նա որպիսի՛ կարոտով
Մե՛ծ հանգրստի զրույցներ է շնջում:

— «է՛հ, ի՞նչ,— ասաց Մահը.— «Հրա՛շք թող
լինի,
Թույլ եմ տալիս— ապրի՛ր, ապրի՛ր դու, միայն...»

•

Միայն թե ես ընդմիշտ քեզ մոտ կլինեմ,
Սիրո կողքի՛ն ես կլինեմ հավիտյան...»
Այդ օրվանից Սերն ու Մահը, ինչպես քույրեր,
Միասին են շրջում կյանքում մինչև հիմա,
Սիրո հետքից Մահն է քայլում քայլով երեք,
Սուր գերանդին ուսին, միջնորդ կնոջ նման։—
Քայլում է նա, իր քրոջով հմայված հա՛ր—
Եվ ամենուր, թաղման ծեսին, թե հարսանքին—
Նա անդադրում, անշեղորեն կերտում է վառ
Խինդը սիրո և բերկրությունը կյանքի։



Ս Տ Ա Խ Ո Ս
Ս Ա Ր Յ Ա Կ Ի
Լ

Ի Շ Մ Ա Ր Տ Ո Ի Թ Յ Ա Ն
Ս Ի Ր Ա Յ Ա Ր
Փ Ա Յ Տ Փ Ո Ր Ի Կ Ի
Մ Ա Ս Ի Ն



Սա մի շատ ճշմարիտ պատմություն է, և ես այն կսկսեմ այսպես.

— Հանկարծ այն պուրակում, ուր տեղի ունեցավ այս հետաքրքիր դեպքը, երգող բոլոր թռչուններից ընդհանուր ուշադրություն գրավեց մեկը, որի երգած երգերը համակված էին ո՛չ միայն հույսերով, այլև համոզվածությամբ:

Մինչ այդ, բոլոր թռչունները, վախեցած և [ճընշված] վրա հասած գորշ ու դժնի եղանակից, երգում էին երգեր, որոնք այն պատճառով էին միայն երգ անվանվում, որ երգվում էին. նրանց մեջ տիրապետում էին [ծանր,] մելամաղձոտ և անհույս նոտաներ, և ունկնդիր-թռչուններն սկզբում համարում էին դրանք մահամերձի խոսուց, բայց հետո հետզհետե բնտելացան և նույնիսկ սկսեցին գտնել դրանց մեջ դանազան գեղեցկություններ— մի բան, որ, այնուամենայնիվ, նրանցից մեծ ջանք էր պահանջում:

Պուրակում բոլորին տոն էին տալիս ազոավները, թռչուններ, որ իրենց էությունը հոռետես են և, բացի քիչ թե շատ բարձր կոկոսցից, ոչնչի ընդունակ չեն: Ուրիշ ժամանակ նրանց վրա ուշադրություն էլ չէին դարձնի, բայց այժմ, երբ նրանց ձայները տիրապե-

տում էին, նրանց լսում էին և նույնիսկ համարում
նրանց շատ իմաստուն թռչուններ: Իսկ նրանք, նկա-
տելով այդ, մռայլ երգում էին.

Ղա՛ռռ քախտի դեմ մղած մարտում
Մեզ, խեղճերիս, փրկում չկա ..
Ինչի վրա աչք ես նետում—
Վիշտ է ու ցավ, մոխիր ու մահ .
Ղա՛ռռ .. քախտը գոռ, անողո՛ք է,
Իմաստունը խոնարհվում է .

Ղա՛ռռ Ղա՛ռռ . Չանձրալի երգ, բայց ուժեղ
նա ճնշում էր ամբողջ պուրակը:

Եվ [ահա] հանկարծ հնչեցին ազատ, խիզախ եր-
գեր ..

Ամբողջ պուրակը, որ շատ էր լսել երգեր, թպլըր-
տաց՝ դարձացած և կամացուկ շրշելով ճյուղքերի
եվ նույնիսկ սոխակները, որոնք միշտ էլ վատ շեն
էրգում, որովհետև նրանք մաքուր արվեստի քուրմեր
են, հաճույքով լսում էին և ասում.

— «Արի տե՛ս, որ այս երգիչը կայծ ունի »

Եվ, ասելով այսպես, գաղտնի հպարտանում էին
իրենց անաչառությամբ:

Իսկ երգիչը երգում էր.

Ես լսում եմ ագռավների
Ցուրտ և խավար կոկոոց.
Չե՛մ վախենում ես խավարից՝
Մտքով առույգ և առողջ...
Ո՛վ խիզախնե՛ր, հետևե՛ք ինձ,

Կորչի՛ խավարն ընդհանուր,
Այրենք սրտերն հրով անբիծ—
Նվ լույս կըլնի ամենուր...

— «Ուժեղ է երգում,— ծանոթագրում էին սո-
խակները...— Առույգ է, ինքնավստահ,— երաժշտա-
կան շէ՛, բայց — ուժեղ է...» — և, խորիմաստորեն
մաքրելով քթիկները, լսում էին շարունակութունը.

Ով պայքարում է մեռնում ազնիվ—
Մի՞թե պարտված է նա, ընկած,
Պարտված է նա՛ լուկ, ով պայքարից
Փախչում է՝ կուրծքր ասով պահած...
Ընկերներ՛ր, նա՛ է ընկած, ով վսեմ
Գործից սարսելով, փախչելով— սակայն
Սիրում է դատել պայքարի մասին
Թաղվելով մուժում փիլիսոփայական ..

— «Հը՛մ... նա շատ ինքնուրույն հայացքներ
ունի» — նշեցին սոխակները: — «Կուղեինք իմանալ—
դա ինչ թռչուն է ..» — հետաքրքրվեցին նրանք:

Ընկերներ՛ր, լո՛ւն թող ընկածները.
Կասկածանքներն են կուրացրել նրանց
Պատիվը նրանց կրծքում լո՛ւն է,
Ընկերներ՛ր, եկեք մենք գոռանք նրանց
Հևո՛ւ,— մշուշը ձեր իմաստության
Գարձրրեց գիշերն ավելի՛ խավար,—
Թունավորում է նա օձի նման
Սրտերը ջահել և մտքերը վառ:

Հեռո՛ւ... Պատերազմ է հայտարարված
Աստ՝ առաջնութիւն շահելու համար՝
Աստվածներին հի՛ն...

— «Սա խիզա՛խ է,— ասացին սոխակները — Օ,
այո՛՛... սա շա՛տ է խիզախ...»

Պուրակը լսում էր և զգում ինչ-որ լավ և ուժեղ
բան, այդ զգացմունքը լցնում էր նրան տաքությամբ
ու լույսով, և նույնիսկ ծառերի հին, գորշ մամուռով
ծածկված ճյուղքերը շնչացին անցյալ օրերի մասին։
Այդ հիանալի դարնանային օրեր էին, երբ պուրակում
նոր էին սկսել ծաղկել ծաղիկներն ու հույսերը, երբ
թռչունները երգում էին [ազատ] հնչեղ երգեր արե-
վին, իսկ ամպերից ազատ երկինքը թվում էր ան-
սահման խորը և կարծես կանչում էր թռչուններին
փորձել թևերի ուժը, հասնել նրա խորությանը։ Այն
լա՛վ օրեր էին, երբ հարկ չկար ստիպելու քեզ ապրել,
որովհետև ուզում էիր ապրել,— կար նպատակ և
հույս կար հասնելու նրան։ Եվ այդ օրերը հայտնվե-
ցին պուրակի առջև և, աստղերի նման, փայլեցին
մշուշում, որ պուրակից ծածկում էր երկինքը։

Թռչունները թպրտացին և կենդանացան։ Ո՛ւր է
երգիչը։ Թող նա ընդունի հիացմունքի և շնորհակա-
լության տուրքը։ Դա, երևի, հոյակապ, գեղեցիկ
թռչուն է։

Նրանք հավաքվեցին ամբողջ երամով և նետվե-
ցին այնտեղ, որտեղից նրանց ընդառաջ էին թռչում
աշխույժ և հպարտ հնչյունները։

Բայց երբ նրանք թռան-եկան, տեսան, որ այդ
պարզապես մի սարյակ է— ամենասովորական, գորշ,

մոմե քթիկով մի սարյակ: Նա նստած էր կաղնու ճյուղքին և շփոթված էր իրեն ցույց տված պատվից. փոքրիկ, հուզված և անհանգստացած, նա բոլորի մեջ զարմանք առաջացրեց և ոչ-ոքի դուր չեկավ:

Հեռու... Պատերազմ է հայտարարված
Աստ՝ առաջնություն շահելու համար՝
Աստվածներին հին ..

Երբ այս ճշում է արժիվը, բազեն, վերջապես անգղը, դա և՛ գեղեցիկ է, և՛ հուժկու. բայց սարյակը, սարյակը, որ պատերազմ է հայտարարում աստվածներին... Այստեղ կա որոշ անհամապատասխանություն, ինչ-որ տարօրինակ և ծիծաղելի բան: Ինչո՞ւ անպայման սարյակը, և ո՞չ կարմրակատարը, կամ խածկտիկը...

Ջարմացած և վիրավորված թռչունները նայում էին սարյակին և մտածում. «Ի՞նչ է լինելու հիմա»:

Բայց այստեղ մի հնարամիտ կարմրակատար, [մասնագիտությամբ լրագրող] հարցրեց սարյակին.

— Լսեցե՛ք, այդ դո՞ւք էիք հիմա երգում:

— Ե՛ս... — պատասխանեց սարյակը, — այո՛, այդ ե՛ս էի երգում:

— Հը՛մ... իսկ դուք ինչո՞վ այդ կապացուցեք: — Այսինքն՝ մենք, իհարկե, չենք կասկածում ձեր լնդունակություններին, բայց...

Սարյակը ցնցվեց, նրա փետուրները ցցվեցին և նա երգեց.

Մեր ստեղծած սև գիշերվա մթնում
Անցնում են, թռչում գորշագորշ բուեր...

Եվ նրանց մոայլ աչքերն են փայլում
 Ե՛վ շար, և՛ դաժան, և՛ բիրտ առավել...
 Հնչում են հնչեղ ճիշերը նրանց.
 Քրքջում են նրանք, հեծկլտում, լալիս,—
 Անեծք են կարդում արևոտ օրվան,
 Եվ ծիծաղում են՝ գիշերը գալիս .
 Եվ թե ընկնեին շղթաները հին
 Զահել պուրակի վրայից մի օր—
 Վայրի բուերը կոչնչանային
 Եվ վեհ բազեներ կըթռչեին նոր .
 Բայց բազեները— և՛ թույլ, և՛ ուժատ,—
 Մտել են մթին ձորերը ահով,
 Եվ շարանում են անուժ, հուսահատ՝
 Ուրիշի ուրախ ձայնը լսելով .
 Կախվել են նրանց թևերը անուժ,
 Եվ, ամոթահար, սրտերն են ննջել,—
 Մտքի և պատվի կանչերին անհուն
 Չեն լսում ազատ թռչունները է՛լ. .

Թռչուններից ոմանց այս երգը թվաց անձնական
 վիրավորանք, և նրանք սուլեցին սարյակին, իսկ կար-
 մըրակատարն ասաց —

— Լավ, այսքանը բավական է մեզ: Բայց ա՛յ թե
 ինչ. ասացե՛ք՝ դուք, այսպես ասած, արթնացնում
 եք մեր [հասարակական] գիտակցությունը .. հը՛մ
 Իսկ, էպպես, դուք ի՞նչ իրավունք ունեք այդ անելու:
 Այսինքն, ես ուզում եմ ասել— հանուն ինչի՞ եք դուք
 երգում:

Սարյակը զարմացավ և լուռ նայում էր հասարա-
 կությանը:



— Մենք, հասկանո՞ւմ եք արդյոք, ուզում ենք ապահովել մեզ սխալներից, որպիսիք, դուք գիտեք, մենք բավականին շատ ենք ունեցել, և այս նպատակով մենք կուզենայինք իմանալ ձեր սկզբնական և վերջնական կետերը,— իմանալ, թե ո՞ւր են մեզ կոչում և ինչո՞ւ,— հարցադրեց կարմրակատարը և, ինքնաբավական, շվվացրեց ինչ-որ ուրիշի երգ. կարմրակատարներն, ինչպես հայտնի է, սեփական երգեր չունեն:

Սարյակը թայրտաց.

— Ես ելնում եմ այն անհողդողդ համոզմունքից, որ թռչունների բարձր կոչումը բնության ստեղծագործության ամենաբարդ և ամենախմաստուն ակտն է: Մենք չպետք է հոգնենք, մենք պետք է միշտ պայքարենք և ամեն ինչ հաղթահարենք, որպեսզի արդարացնենք ինքներս մեզ՝ մեր սեփական աչքերում, որպեսզի իրավունք ունենանք ասելու. ամբողջ անցյալը, ներկան և ապագան— այդ մե՛նք ենք, և ոչ թե տարերքի կույր ուժը: Այն ճանապարհը, որով պետք է մենք ընթանանք, ինձ հայտնի չէ, բայց ես համոզված եմ, որ պետք է առաջ գնալ: Այնտե՛ղ է երկիրը, որ արժանի է պարզև լինելու այն վաստակների համար, որոնք մենք կրել ենք ճանապարհին: Այնտեղ հավիտենական, անվերջանալի լույս է, այնտեղ կան մեզ անհայտ հրաշալիքներ, այնտեղ մենք կհրճվենք, [մեծ, ազատ, ամեն ինչ հաղթած թռչուններս,] մեր ուժի հայեցությամբ, և ամբողջ աշխարհը ասպարեզ կդառնա մեր գործերի, որոնց վեհությունը անհնարին է պատկերացնել այժմ. այնտեղ մեր միտքը ամե՛ն ինչ կլուծի, և մեր զգացմունքները, հրաշալիորեն

բարդացած, կբանան մեր առջև շճաշակած հաճույքների մի նոր աշխարհ. այնտեղ է նա — կյանքը, որ արժանի է մեզ... Հարգեցեք և սիրեցեք միմյանց և հպարտ ու խիզախ բանակով ընթանալով դեպի հաղթանակ, շկասկածեք ո՛չ մի բանում, քանզի ինչ կա մեզանից բարձր... Ետ նայեցեք և տեսեք, թե ի՛նչ եք եղել դուք առաջ — այնտեղ, կյանքի արշալույսին: Ձեր այն ժամանակվա ամբողջ հավատը շարժեր այժմյան մի կաթիլ կասկածանքին: Սովորելով այդպես զարհուրելի կասկածել ամեն ինչի, ձեզ համար եկել է ժամանակ հավատալու ինքներիդ ձեզ, քանզի միայն մեծագույն էությունը կարող է հասնել այնպիսի կասկածանքի, որպիսի կասկածանքի հասել եք դուք...

Դեպի այնտե՛ղ — երջանկության երկիրը, [ուր մեզ սպասում է մեծ հաղթանակը, ուր մենք կլինենք աշխարհի օրենսդիրն ու նրա տերը, ուր մենք կլինենք ամեն ինչի տերերը. .] Դեպի այնտեղ — դեպի այդ հրաշալի «առաջ»-ը .

— «Առա՛ջ» — բացականչեցին թռչունները, քանզի նրանց սրտերում բոցավառվեց հույսաբուսությունն իրենցով:

Ոգևորության արցունքները և հավատը լցրին սարյակի աչքերը: Եվ բոլոր թռչունները երգեցին, և այնքան թեթև զգացին իրենց բոլորը, բոլորն զգացին, որ սրտերում ծնվեց կրքոտ տենչանքը կյանքի և երջանկության:

— Սպասեցե՛ք, թո՛ւյլ տվեք Ես ձայն եմ խնդրում... Ձա՛յն տվեք ինձ...

Այդ ճշում էր փայտփորիկը կաղամախի գագաթից,

և երբ նրան լսեցին, ապա իսկույն ձայն տվին նրան, որովհետև նա շատ բարձր էր գոռում:

— Հարգելի պ.պ և տ տ.— խոսեց փայտփորիկը:— Ներկայանում եմ.— ես— փայտփորիկն եմ: Ե՞ս տնվում եմ ճիճուներով և սիրում եմ ճշմարտությունը, որին անշեղ կերպով ծառայում եմ և որը դրդում է ինձ ասել, որ ձեզ անամոթաբար խարում են: Բոլոր այդ երգերը և ֆրագները, որ դուք այստեղ լսեցիք, հարգելի պ.պ., ոչ այլ ինչ են, քան անամոթ սուտ, որը և ես այստեղ պատիվ կունենամ ապացուցելու փաստերով... Այո՛, փաստերով, հարգելի պ.պ.: Իսկ յարցրեք պ. Սարյակին, որտե՞ղ են այն փաստերը, որոնցով նա կարողանար հաստատել այն, ինչ ասաց: Այդպիսիք նա շունի, իսկ հենց դրա՛նք են հարկավոր նրան ավելի, քան ինձ. այդ փաստերն— ամե՛ն ի՛նչ են, հարգելի պ.պ.— և մենք բոլորս ո՛չ այլ ինչ ենք, քան փոքրիկ փաստեր, որոնք հաստատում են բնության իմաստության և զորության վիթխարի փաստը, որին մենք պետք է ենթարկվենք, ինչպես զավակները ենթարկվում են մորը:

— Քննարկենք անաշտ կերպով, ի՞նչ կա այնտեղ,— առջևում, ուր կոչում է մեզ պ. Սարյակը: Դուք բոլորդ էլ թռել եք պուրակի ծայրը և գիտեք, որ նրանից անմիջապես հետո սկսվում է դաշտը,— ամասուր մերկ և արևահար, ձմեռը ծափկված սառը ձյունով. այնտեղ, նրա եզերքին, կանգնած է գյուղը և նրանում ապրում է Գրիշկան, մի մարդ, որ պարապում է թռչնորսությամբ: Ահա առաջին կայարանն «առաջ»-ի ճանապարհին, որի մասին այնքան շատ շաղակրատեց այստեղ պ. Սարյակը:

— Ենթադրելով, որ մենք առաջ ենք ձգտում համաձայն նրա ցանկութեան— որի անշահութեանը ես ինձ թույլ եմ տալիս կասկածել, քանզի գիտեմ, որ սարյակները, ինչպես և մյուս արարածները, շեն խուսափում ժողովրդականութունից, փառքից և այլն,— ենթադրելով, որ մենք բարեհաջող կերպով կխուսափենք Գրիշկայի թակարդից և կթռչենք գյուղի կողքով, մենք կրկին կընկնենք դաշտը, իսկ նրա ծայրին կրկին կհանդիպենք մի գյուղ, իսկ հետո— նորից դաշտ,— գյուղ,— դաշտ... և քանի որ երկիրը կլոր է, ապա մենք հարկադրված կլինենք անխուսափելիորեն վերադառնալ ա՛յն միևնույն պուրակը, որի մեջ, տվյալ վայրկյանիս, ես բարձր պատիվ ունեմ խոսելու ձեզ հետ:— Սա՞ է արդյոք այն երկիրը, ուր, պ. Սարյակի խոսքերով, մենք պիտի պարզ և ստանանք մեր վաստակների համար... Սա՞ է արդյոք այն երկիրը...

— Ես գիտեմ ձեզ, հարգելի պ.պ. և տ.տ., ես գիտեմ, որքան բարձր եք դուք թռչում, բայց.... որքան էլ դառն է ինձ համար ասել ձեզ այդ,— ես գիտեմ և այն, որ ձեզանից ոչ-ոք չի թռել և չի կարող թռչել իրենից բարձր:

— Պարոն Սարյակի փորձը— գրավել ձեր ուշադրությունը՝ փայլուն և բարձր ֆրազների միջոցով ձեզ խաբելով,— պարզ ցույց է տալիս ձեր մասին, իբրև ողջախոհ մարդկանց մասին, նրա ունեցած կարծիքի բարձրությունը... Այդ փորձը պետք է խիստ կերպով պատժվի, հարգելի պ.պ. և տ.տ.....

Եվ իր կատարած հասարակական պարտականության գիտակցությամբ լցված, իմաստուն փայտփո-

րիկը, հաղթանակող հայացք նետելով ունկնդիրների վրա, սկսեց փորել կաղամախի կեղևը, որի ճյուղքերի վրա բաղմել էր նա:

Թռչունները լուռ նայում էին սարյակին և տեսնում էին, թե ինչպես նրա աչքերից մեկը մյուսի ետևից գլորվում էին արցունքները: Ինչո՞ւ համար նա կարող էր արտասվել, եթե ոչ— իր մեղքի համար նրանց առջև: Այդքան շնչին, գորշավուն և ստախոս սարյակ...

Իսկ նա տխուր նայում էր այնտեղ, հեռուն, և նրա աչքերը կարծես թե հրաժեշտ էին տալիս ինչ-որ բանի:

Լուռ էր պուրակը, և թռչուններն անշուկ թռչում էին իրենց տեղերը: Թռավ և փայտփորիկը, ուղեկցված հարգալից խոնարհությամբ նրա իմաստության առջև:

Օրն այնքան թախծալի էր, կարծես ուզում էր լաց լինել ինչ որ բանի համար:

Եվ ահա սարյակը, որը ստում էր, մնաց մենակ: Անշարժ և ճնշված, նա նստած էր կաղնու ճյուղքին, և միայն մի ճայ էր հետաքրքրությամբ նայում նրան կաղնու վարանոտ, դողդոջուն ճյուղքի ետևից: Բայց դա նրան շուտով ձանձրացրեց և, հեգնական սուււււլով նա թռավ— գնաց:

Իսկ սարյակը մնաց, և, նստած կաղնու ճյուղքի վրա, մտածում էր.

— Ես ստեցի, այո՛, ես ստեցի, որովհետև ինձ անհայտ է, թե ի՞նչ կա պուրակից անդին, բայց ախար հավատալը և հուսալն այնքա՛ն լավ է... Ես էլ ախար միայն ուզում էի արթնացնել հավատ և

հույս— ահա՛ թե ինչո՛ւ ես ստեցի... Նա, փայտփորիկը, գուցե և իրավացի է, բայց ինչի՞ է հարկավոր նրա ճշմարտությունը, երբ այն քարի պես նստում է թևերի վրա:—

Եվ, շուրջը նայելով, խեղճ, փոքրիկ սարյակը փետուրները ցցեց և խոժոռվեց:

Ահա՛ և ամբողջ պատմությունը .. Կարդալով այն, դու՛ իհարկե, կտեսնես, որ սարյակը վեհանձն է, բայց հավատ չունի և դրա համար էլ աղքատ է հոգով. փայտփորիկը լրջախոհ է, բայց գռեհիկ, իսկ թռչուն-ունկնդիրները տպավորվող են լոկ այն պատճառով, որ հետաքրքրասեր են, բայց նրանք էապես անզգա են սրտով և մանր են, խայտառակ կերպով մանր... Տեսնելով այս, դու կկարծես, որ ես ճիշտ չպատմեցի այս լալու շափ ծիծաղելի պատմությունը: Մտածի՛ր այդպես, եթե դա քեզ մխիթարում է, մտածի՛ր...

Իսառու և Նրա Որդիք





ար Ղրիմում խան Մոսալայ-
մա էլ-Ասվարը և ուներ նա
մի որդի՝ Տոլայկ Ալհալլա.. »

Մեջքը հենած արբուտուսի վառ-դարչնագույն բնին, կույր մուրացկանը, թաթար, այս խոսքերով սկսեց հիշողություններով հարուստ թերակղզու հին լեգենդներից մեկը, — իսկ պատմողի շուրջը, քարերի վրա, — բեկորներ ժամանակի ավերած խանական պալատի, — նստած էր թաթարների խումբը՝ վառ խալաթներով, ոսկեկար արախչիներով: Երեկո էր, արևը կամացուկ իջնում էր ծովը. նրա կարմիր շողերը ճեղքում էին ավերակների շուրջը բարձրացած կանաչի մութ զանգվածը, վառ ներկերով պառկում էին քարերի վրա, որ ծածկված էին մամուռով և ցանցված բաղեղի կաշուն կանաչով: Քամին աղմկում էր հին շինարների ծառախամբում, նրանց տերևներն այնպես էին շրշում, կարծես օդում թորում էին աչքի համար անտեսանելի ջրի առվակներ:

Մեր մուրացկանի ձայնը թույլ էր և դողում էր, իսկ նրա քարե դեմքն իր կնճիռներում ոչինչ չէր արտացոլում, բացի հանգստից. գոց սերտած խոսքերը թափվում էին մեկը մյուսի ետևից, և ունկնդիրների

առջև կանգնում էր անցյալի՝ զգացմունքի թափով հարուստ՝ օրերի պատկերը:

— Խանը ծեր էր, — ասում էր կույրը, — բայց կանայք շատ կային նրա հարեմում: Եվ նրանք սիրում էին ծերունուն, որովհետև նրա մեջ դեռ բավականին ուժ կար և կրակ, և նրա գուրգուրանքները շոյում էին և այրում, թեկուզև նա այլևհեր էր, թեկուզև նրա դեմքը ծածկված էր կնճիռներով, — ուժի մեջ է գեղեցկությունը, և ոչ թե քնքուշ մաշկի կամ այտերի կարմրության:

Խանին բոլորն էին սիրում, իսկ նա սիրում էր կազակուհու — լեհուհու՝ Դնեսլրի տափաստաններից, և միշտ գուրգուրում էր նրան այլևի սիրով, քան մյուս կիներին հարեմի, ուր կար երեք հարյուր կին զանազան երկրներից, և նրանք բոլորն էլ գեղեցիկ էին, ինչպես գարնանային ծաղիկներ, և նրանք բոլորն էլ լավ էին ապրում: Շատ համեղ և քաղցր ուտելիք էր հրամայում պատրաստել խանը նրանց համար, և միշտ թույլ էր տալիս նրանց, երբ կամենան, պարել, խաղալ...

Իսկ կազակուհուն նա հաճախ կանչում էր իր մոտ՝ աշտարակը, որտեղից երևում էր ծովը. այնտեղ կազակուհու համար ունեւ բան, ինչ որ հարկավոր է կնոջը, որպեսզի նա ուրախ ապրի. քաղցր կեր սուտր և զանազան կտորներ, և ոսկի, և բուրո գոյների քարեր, և երաժշտություն, և հազվագյուտ թրուշուններ հեռու երկրներից, և սիրահարի կրակե գգվանքներ: Այդ աշտարակում նա հրճվում էր նրա հետ ամբողջ օրեր, հանգստանալով իր կյանքի վաստակներից և իմանալով, որ Ալհալա որդին չի ոտնահարի

խանության փառքը՝ գայլի պես թափառելով ոռոսական տափաստաններում և միշտ վերադառնալով այնտեղից հարուստ ավարով, նոր կանանցով, նոր փառքով, թողնելով այնտեղ, իր ետևից, սարսափ ու մոհիր, ոհակներ և արյուն:

Մի անգամ վերադարձավ նա, Ալհալլան, ոռոսների վրա կատարած ասպատակությունից, և շատ տոնական հանդեսներ սարքվեցին նրա պատվին, կղզու բոլոր մուրզաներն հավաքվեցին այդ տոնակատարություններին, եղան խաղեր և խնջույք, աղեղներից կրակում էին գերիների աչքերին, փորձելով ձեռների ուժը, և նորից խմում էին, փառաբանելով Ալհալլայի թշնամիների պատուհասի, խանության հենարանի խիզախությունը: Իսկ ծեր խանն ուրախ էր որդու փառքին: Հաճելի էր խանին իմանալ, որ, երբ նա մեռնի, խանությունը կլինի ամուր ձեռքերում:

Հաճելի էր այս նրան, և ահա նա, ցանկանալով ցույց տալ որդուն իր սիրո ուժը, ասաց նրան բոլոր մուրզաների և բեկերի ներկայութեամբ, — հենց այդտեղ, խնջույքին, թասը ձեռին, ասաց.

— Լավ որդի ես դու, Ալհալլա: — Փա՛ռք ալլահին, և թող փառաբանվի նրա մարգարեի անունը:

Եվ բոլորը փառաբանեցին մարգարեի անունը հզոր ձայների խմբով: Այդ ժամանակ խանն ասաց.

— Մե՛ծ է ալլահը: Դեռ իմ կյանքի օրով նա հարություն տվեց իմ երիտասարդությանն իմ խիզախ որդու մեջ, և ահա տեսնում եմ ես ծեր աչքով, որ, երբ անհետանա նրանցից արևը, և երբ որդերը կրճեն իմ սիրտը — կենդանի կլինեմ ես իմ որդու մեջ: Մեծ է ալլահը և Մոհամմեդը — նրա մարգարեն: Լավ որդի

ես ունեմ, ամուր է նրա ձեռքը և պայծառ է խելքը ..
Ի՞նչ ես կամենում դու առնել քո հոր ձեռքերից, Ալ-
հա՛լլա: Ասա՛, և ես կտամ քեզ ամեն ինչ քո ցան-
կությամբ...

Եվ դեռ շէր լռել ձայնը ծերունի հոր, հրր բարձ-
րացավ Տուայկ Ալհալլան և ասաց, պսսղացնելով աշ-
քերը՝ սև, ինչպես գիշերային ծովը, և վառ, ինչպես
աշքերը լեռնային արծվի

— Տո՛ւր ինձ ուս լեհուհուն, հրամայո՛ղ-հայր:
Լռեց խանր— քիչ լռեց, այնքան ժամանակ, ինչ-
քան հարկավոր էր դողը սրտում ճնշելու համար— և,
լռելով, հաստատուն և բարձր ասաց

— Վերցրո՛ւ: Երբ վերջացնենք խնջույքը դու
կվերցնես նրան:

Բորբոքվեց կտրիճ Ալհալլան, մեծ ուրախությամբ
փայլատակեցին արծվային աշքերը կանգնեց նա
ամբողջ հասակով և ասաց խանին— հորը

— Ես գիտեմ, թե դու ինչ ես նվիրում ինձ, հրա-
մայող-հա՛յր. Գիտե՛մ ես այդ .. Քո ճորտն եմ ես—
քո որդին:— Վերցրո՛ւ իմ արյունը ժամը մի կա-
թիլ— քսան մահով կմեռնեմ ես քեզ համար:

— Հարկավոր չէ՛ ինձ ոչինչ,— ասաց խանը և թեք-
վեց կրծքին նրա ալեհեր գլուխը՝ պսակազարդված եր-
կար տարիների և բազմաթիվ մեծագործությունների
փառքով:

Շուտով նրանք վերջացրին խնջույքը, և հրկուսն
էլ լուռ, կողք-կողքի, պալատից գնացին հարեմը:

Գիշերը մութն էր, ոչ աստղերը, ոչ լուսինը չէին
երևում ամպերի ետևից, որ խիստ գորգով ծածկել
էին երկինքը:

Երկար դնում էին խավարում հայրն ու որդին, և ահա խոսեց խան էլ-Ասվաբը.

— Օրը-օրին մարում է իմ կյանքը— և ավելի ու ավելի թույլ է զարկում իմ սիրտը, ավելի ու ավելի պակասում է և կրծքիս հուրը: Իմ կյանքի լույսն ու տա՛քությունն էին կազակուհու տոթ գգվանքները... Ասա ինձ, Տոլա՛յկ, մի՞թե նա այդքան հարկավոր է քեզ: Վերցրո՛ւ հարյո՛ւրը, վերցրու իմ բոլոր կիներին նրա փոխարեն .

Լռում էր Տոլայի Ալհալլան, հառաչելով:

— Քանի՞ օր է ինձ մնացել: Քիչ օր ունեմ ես աշխարհում... Իմ կյանքի վերջին ուրախությունը— այդ ոռու աղջիկն է, նա գիտե ինձ, նա սիրում է ինձ,— ո՞վ ինձ հիմա, երբ նա շի լինի, կսիրի,— ծերունուս, ո՞վ: Ո՛չ մեկը բոլորից, ո՛չ մեկը, Ալհա՛լլա...

Լռում էր Ալհալլան...

— Ես ինչպե՞ս պիտի ապրեմ, իմանալով, որ դու գրկում ես նրան, որ քեզ համբուրում է նա: Կնոջ առջև— ոչ հայր կա, ոչ որդի, Տոլա՛յկ: Կնոջ առջև— մենք բոլորս տղամարդիկ ենք, որդի իմ... Ցավալի կլինի ինձ համար ապրել վերջին օրերս... Թող բոլոր հին վերքերս բացվեին մարմնիս վրա, Տոլա՛յկ, և հորդեին արյունս, լավ է՝ թող շուսացնեի ես այս գիշերը, որդի՛ իմ...

Լռում էր նրա որդին... Կանգ առան նրանք հարեմի դռան առաջ և, գլուխներն հակած կրծքերին, երկար կանգնեցին նրա առջև: Խավար էր շուրջը, և ամպերը փախչում էին երկնքում, իսկ քամին, ցնցելով ծառերը, կարծես երգում էր, աղմկում ծառերով...

— Վաղո՞ւց է ես սիրում էի նրան, հա՛յր...— կամացուկ ասաց Ալհալլան:

— Գիտեմ... և գիտեմ, որ նա քեզ չի սիրում...— ասաց խանը:

— Պատուվում է իմ սիրտը, երբ ես մտածում եմ նրա մասին:

— Իսկ իմ հին սիրտը ինչո՞վ է լցված հիմա:

Եվ կրկին լռեցին: Հառաչեց Ալհալլան:

— Երևում է՝ ճիշտն ասաց ինձ իմաստուն-մուլան.— Կինը տղամարդուն մի՛շտ վնասակար է. երբ նա լավն է՝ նա ուրիշների մեջ ցանկություն է արթնացնում տիրել նրան, իսկ իր ամուսնուն մատնում է խանդի տանջանքներին երբ նա տգեղ է՝ նրա ամուսինը, նախանձելով ուրիշներին տառապում է նախանձից:— Իսկ երբ նա ոչ լավ է, ոչ վատ— տղամարդը նրան շքնաղ է դարձնում և տեսնելով, որ սխալվել է, կրկին տառապում նրա, այդ կնոջ պատճառով...

— Իմաստությունը— դեղ չէ սիրո ցավի,— ասաց խանը:

— Խղճանք իրար, հա՛յր .

Բարձրացրեց գլուխը հայրը և տխուր նայեց որդուն:

— Սպանե՛նք նրան,— ասաց Տուլայկը:

— Դու քեզ ավելի՛ ես սիրում, քան նրան և ինձ,— մտածելով խուլ ասաց խանը:

— Ախար դու է՛լ:

Եվ կրկին նրսնք լռեցին:

— Այո՞:— Ե ս ևս,— տխուր ասաց խանը: Վշտից նա երեխա դարձավ:

— Ուրեմն ի՞նչ,— սպանե՛նք:



— Ես շե՛մ կարող քեզ տալ նրան, շե՛մ կարող,—
ասաց խանը:

— Ես է՛լ չեմ կարող այլևս սպասել. պոկի՛ր իմ
սիրտը կամ տո՛ւր նրան ինձ:

Խանը լուռ էր:

— Գցենք նրան լեռից ծովը:

— Գցենք նրան լեռից ծովը,— կրկնեց խանը որ-
դու խոսքերը, ինչպես որդու ձայնի արձագանքը:

Եվ այդ ժամանակ մտան նրանք հարեմը, ուր կինն
արդեն քնած էր հատակին, փարթամ գորգի վրա:
Կանգ առան նրանք նրա առջև, նայեցին. երկար նա-
յեցին նրան: Ծեր խանի աչքերից թափվում էին ար-
ցունքներն արծաթյա մորուքին և պսպղում էին այն-
տեղ, ինչպես մարգարիտներ,— իսկ նրա որդին կանգ-
նած էր, փայլատակելով աչքերը և իր ատամների կըր-
ճըտոցով, կլրքը զսպելով, արթնացրեց կազակուհուն:
Արթնացավ նա— և նրա երեսին, քնքուշ ու վարդա-
գույն, ինչպես արշալույսը, ծաղկեցին նրա աչքերը,
ինչպես մանիշակներ: Չնկատեց նա Ալհալլային և ալ
շրթունքները մեկնեց խանին:

— Համբուրի՛ր ինձ, արծի՛վ:

— Հավաքվի՛ր... կգնաս մեզ հետ,— կամացուկ
ասաց խանը:

Այստեղ աղջիկը տեսավ Ալհալլային և արցունք-
ները՝ իր արծվի աչքերում, և— խելոք էր նա— ամեն
ինչ հասկացավ:

— Գալիս եմ,— ասաց նա:— Գալի՛ս եմ:— Ոչ
սրան, ոչ նրան— այդպե՛ս որոշեցիք: Հե՛նց այդպես
էլ պետք է որոշեն սրտով հզորները: Գալի՛ս եմ:

Եվ նրանք լուռ, երեքով, գնացին դեպի ծովը: Նեղ

արահետներով էին գնում, աղմկում էր քամին, թունդ աղմկում...

Քնքուշ էր նա, աղջիկը, շուտով հոգնեց, բայց և հպարտ էր— շէր ուզում նրանց այդ ասել:

Եվ երբ խանի որդին նկատեց, որ նա ետ է մնում իրենցից,— հարցրեց նա նրան.

— Վախենո՞ւմ ես:

Աղջիկը փայլատակեց նրա վրա իր աչքերը և ցույց տվեց արյունոտած ոտքը ..

— Ե՛կ քեզ տանեմ,— ասաց Ալհալլան, ձեռքերը մեկնելով դեպի նա: Բայց աղջիկը գրկեց իր ծեր արծվի պարանոցը: Բարձրացրեց խանը նրան իր ձեռքերի վրա, ինչպես փետուր, և տարավ, իսկ աղջիկը, նստած նրա ձեռքերի վրա, հեռացնում էր ճյուղքերը նրա դեմքից, վախենալով, որ նրանք կմտնեն նրա աչքերը: Երկար նրանք գնացին, և ահա հեռվում լքսվում է ծովի աղմուկը: Այստեղ Տոլայկը,— նա գնում էր նրանց ետևից, արահետով,— ասաց հորը.

— Թո՛ղ ինձ առաջ, եթե ոչ ես ուզում եմ դաշույնով խփել քո պարանոցին:

— Անցի՛ր, ալլահը կհատուցե քո ցանկության համար կամ կներե— նրա կամքն է,— իսկ ես, քո հայրը, ներում եմ քեզ: Ես գիտեմ՝ ի՛նչ է նշանակում սիրել:

Եվ ահա նա, ծովը, նրանց առջև, այնտեղ, ներքևը, խիտ, սև և անափ: Խուլ երգում են նրա ալիքները ժայռի հենց ներքևից, և մութ է այնտեղ ներքևում, և ցուրտ է, և սարսափելի:

— Գնաս բարո՞վ,— ասաց խանը, համբուրելով աղջկան:

— Գնաս բարո՛վ,— ասաց Ալհալլան և խոնարհ-
վեց նրան:

Աղջիկը նայեց այնտեղ, ուր երգում էին ալիքները,
և ետ շրջվեց, սեղմելով ձեռքերը կրծքին:

— Ներեցե՛ք ինձ,— ասաց նա նրանց. .

Պարզեց նրան ձեռքերն Ալհալլան և տնքաց, իսկ
խանը վերցրեց նրան իր ձեռքերի վրա, ամուր սեղ-
մեց կրծքին, համբուրեց, և, բարձրացնելով իր գլխից
բարձր— վա՛ր նետեց ժայռից:

Այնտեղ զարնվում և երգում էին ալիքները և այն-
քան աղմկալի էր, որ նրանք երկուսն էլ շլսեցին՝
հ՛րբ նա հասավ ջրին: Ոչ ճիշ լսեցին, ոչինչ: Խանը
խոնարհվեց քարերի վրա և լուռ սկսեց նայել ներքև,
խավարին ու հեռուն, ուր ծովը խառնվել էր ամպե-
րին, որտեղից աղմկոտ լողում էին ալիքների խուլ
շառաչները, և քամին էր թռչում տատանելով խանի
ալեհեր մորուքը: Տոլայկը կանգնել էր նրա գլխավե-
րևը, դեմքը ձեռքերով ծածկած,— անշարժ և լուռ
քար: Ժամանակն անցնում էր, երկնքով մեկը մյուսի
ետևից լողում էին ամպերը, որոնց քշում էր քամին:
Մուլթ և ծանր էին նրանք, ինչպես մտքերը ծեր խանի,
որ պառկած էր ծովի վերևը, բարձր ժայռի վրա:

— Գնա՛նք, հա՛յր,— ասաց Տոլայկը:

— Սպասի՛ր. . — շնչաց խանը, կարծես լսելով
ինչ-որ բան: Նվ կրկին շատ ժամանակ անցավ, ալիք-
ները շաշում էին ներքևում, իսկ քամին թռչում էր
դեպի ժայռը, աղմկելով ծառերում:

— Գնա՛նք, հա՛յր .

— Սպասի՛ր էլի .

Մի անգամ չէ, որ ասում էր Տոլայկ Ալհալլան

— Գնանք, հա՛յր:

Խանը շարունակում էր մնալ տեղում, ուր կորցրեց իր վերջին օրերի ուրախությունը:

Բայց,— ամեն ի՛նչ վերջ ունի,— կանգնեց նա, հզոր և հպարտ, կանգնեց, կիտեց հոնքերը և խուլ ասաց.

— Գնանք:

Գնացին նրանք, բայց շուտով խանը կանգ առավ:

— Իսկ ինչու ես գնում և ո՞ւր,— հարցրեց նա որդուն:— Ինչո՞ւ համար ես ապրում հիմա, երբ իմ ամբողջ կյանքը նրա մեջ էր: Ծեր եմ ես, ինձ չեն սիրի այլևս, իսկ եթե քեզ ոչ-ոք չի սիրում— անիմաստ է ապրել աշխարհում:

— Փառք և հարստություն ունես դու, խա՛ն:

— Տո՛ւր ինձ նրա մի համբույրը— և քե՛զ վերցրու այդ բոլորը, իբրև պարգև: Այդ բոլորը մեռյալ է, միայն կնոջ սերն է կենդանի: Չկա այդպիսի սերկյանք շունի մարդը, մուրացիկ է նա, և ողորմելի են նրա օրերը: Գնաս բարո՞վ, որդի՛ իմ,— ալլահի օրհնությունը թող լինի քո գլխին՝ քո կյանքի բոլոր օրերին ու գիշերներ, ն:— Եվ շուռ եկավ խանը երեսով դեպի ծովը:

— Հա՛յր,— ասաց Տուլայկը,— հա՛յր ..— Եվ շկարողացավ ասել է՛լ ոչինչ, քանի որ ոչինչ չի կարելի ասել մարդուն, ում ժպտում է մահը, ոչինչ չես ասի նրան այնպիսի, որ վերադարձնի նրա հոգուն սերը դեպի կյանքը:

— Թո՛ղ ինձ...

— Ալլա՛հ...

— Նա գիտե...

Արագ քայլերով մոտեցավ խանը զառիվայրին և նետվեց ցած: Չկանգնեցրեց նրան որդին, շհասավ: Եվ կրկին ոչինչ չէր լսվում — ո՛չ ճիչ, ո՛չ խանի ընկնելու աղմուկը: Միայն ալիքներն էին անվերջ շառաչում այնտեղ, և քամին էր ոռնում վայրի երգեր:

Երկար նայում էր ներքև Տուլայկ Ալհալլան և ապա լարձրածայն ասաց

— Ինձ է՛լ այդպիսի սիրտ տուր ամուր, օ՛, ալլահ:

Եվ ապա նա գնաց դեպի գիշերվա խավարը...

Այսպես մեռավ խան Մոսալայմա էլ-Ասվաբը և եղավ Ղրիմում խան Տուլայկ Ալհալլան .

ԲԱԼԱՆԿՈՍՍՈՒՅԻ
ԷԱԵՆԴԵԿՈՒՐՍԻԻ
ՄԱՍԻՆ



Ի ալտնի՞ է Ձեզ արդյոք, որ ողջ
Բրետանում,—

Ուզում ես՝ հարցրու լույսին,—
Չկա ավելի գեղեցիկ մի կին, քան
Կոմսուհի էլլեն դե Կուրսին:

Այն ամենը, որ լինում է կյանքում—
Մենք պետք է տեսնենք ու լսենք,—
Դրա համա՛ր էլ, աստրժո կամքով,
Աչքեր և ականջներ ունենք:

Դրյակից սահում է կարապի նման
Նվ դեպի կամուրջն է նա գնում
Մի մուրացիկ է հանդիպում նրան,
Իսկ վերից— արևն է նայում:

Բայց երբ պատահում է, որ մեր աչքը
Չափից ավելի է սուր—
Նշանակում է, որ Արարիչը
Ուզում է տանջել մեզ իզուր:

Չբարձրացնելով աչքերը սիրող—
Գնում է նրա ետևից
Ջահել մանկավիհը, ինչպես և սիրուն
Շնիկը շքնաղ մադամի:

Մենք գիտենք— շունը հաճախ
Գառնում է ազնիվ բարեկամ
Հաճելի է սիրել շնիկին.
Չի խանդում ոչ-ոք նրան ..

Ձեզ կասեմ, որ այդ մուրացիկը
Ջահել էր, թիկնեղ, գեղեցիկ,
Եվ կույր էր.— բայց մի՞թե կույրը
Տիկնոջ ուշադրության արժանի չի՞...

Նախանձում է տեսնողին միշտ կույրը
Բայց եթե նա իմանա՞ր,
Թե սրտում մեր ինչքա՞ն մթություն ենք
Մենք պահում— և՛ սև, և՛ խավաղ:

Թպրտաց սիրտը կոմսուհու, սրտո՞ւմ այդ
Սերը բնակվում էր միշտ:—
Կոմսուհին նայեց մուրացկին անթարթ
— «Արժանի է սիրո, օ՛, ճի՛շտ»

Ամե՛ն ոք սրտի խոր խոհեր ունի.
Օձր, առյուծը և դո՞ւք,—
Բայց ո՞վ այդ խոհերը գիտե,
Եվ գիտե՞ս դու քոնն արդյոք...

Կոմսուհին ասում է մուրացկին. «— Լսի՛ր,
Կոմսուհի էլլենն է դիմում քեզ.
Ցավ է պատճառում ինձ քո մութ հոգին.
Ինչպե՞ս ամոքեմ նրա վիշտը ես:»

Երբ զգում ես դու քո սրտում
Մեղրի կամ թույնի կուտակումն առատ—
Տո՛ւր մերձավորիդ ավելցուկն իսկույն
Ինչի՞դ է նրա տենդը հորդառատ:

— «Մաղա՛մ» — ասում է մուրացիկը հեզ,
Իմ թանկագի՛ն մաղամ,—
Իմ ամբողջ կյանքի օրերը սև
Ձեր մի համբույրի՛ն ես կտամ:»

Լույս-ճշմարտության կարոտով վառված՝
Այնքա՛ն ես ազահ այն ուզում,
Որ սիրում ես քո սուտը հնարած,
Ինչպես ճշմարտություն մի սուրբ:

— «Սիրելի՛ս, դու քիչ այն կո՛ղմը նայիր,
Ասաց կոմսուհին ծառային,—
Բարի ասածո փառքի համար ես
Հեզությունս շե՛մ խնայի:»

Կինն էլ աշխարհում — ամեն ինչի պես —
Խաղալիք է ասածո ձեռին.
Լավ է — մտածենք մանկիկների հե՛զ,
Թիթեռնիկների, ծիտերի մասին:

Գրկում է կույրը հպարտ կոմսուհուն,
 Հպում է շրթերը շրթերին,—
 Մշուշվում է կոմսուհու հայացքը,
 Խոնարհվում է իրանը նրբին:

Օ, այրե՛ր,— կեցցե՛ Երջանկությունը
 Թող թեկուզ լոկ մի պահ տեի —
 Երջանկության մեջ իմաստությո՛ւն կա
 Բոլոր գրքերից ավելի՛:

Այստեղ կոմսուհու հպարտությունը
 Հաղթեց կրքերին նրա վես.
 Եվ հրամայեց մանկլավիկին նա՛.
 — էժեն, օ, մանկի՛կըս, շնայես:»

Մեր ոսոխները— պահն ու սատանան,—
 Աշխարհում հաղթում են միշտ մեզ,
 Անպարտելի է ժամր փորձության —
 Ուրեմն դու քեղ շտանջե՛ս:

Հետո, հագեցած ոտքի կանգնելով,
 — Սպանի՛ր,— ասաց ծառային.
 Եվ ուրախությամբ այդ տղան սիրող
 Ոսոխին իր հանձնեց սև մահին:

Ով խմում է սերն ու խանդը կիզող
 Միևնույն այրող բաժակից,—
 Անխուսափելի խմելու է նա
 Վրեժի հեղուկը կարմիր:



201

Խոնավ շրթերը սրբելով նազով,
Կոմսուհին ասաց Հիսուսին.
— Քե՛զ ընծայեցի, դրախտի՛ արքա,
Իմ մաքրությունը լույսի. .»

Թե ո՞ր է փշում, ո՞ր կողմը, քամին—
Մեզ դաշտի ցողունն է ասում—
Բայց աստված ինքն էլ չգիտե երբեք,
Թե կինը ի՛նչ է ուզում:

Եվ մանկյավիկին նա հեղ հարցըրեց.
— Ճ՞իշտ չէ, որ բարի եմ ես յատ. .
էլ ինչո՞ւ ես լալիս, սիրելի՛ս
Գնանք տուն, ժամանակն է արդ .»

Մնվում է սերը, ինչպես բոց, արագ,—
Եվ մենք այրվելով նրանում,
Դառնում ենք ինքնե՛րբս կրակ՝
Գեղեցի՛կ, և վառ, և անհուն:—

Զպատասխանեց ծառան կոմսուհուն,
Արցունքը միայն նա սրբեց,
Բայց հառաչանքը իր անհուն
էտյենը, ավա՛ղ, չըզսպեց:

Բաշխում ենք մենք կյանքը յոայլ.—
Չէ՞ որ ամենքըս կյանքում
Բերում ենք ծիծաղ մի քիչ վառ—
Եվ մի սիրտ լիքը արցունք:

Կոմսուհին իր սև հոնքերը կիտեց
Եվ, ճիշը զսպելով հազիվ—
Իր մանկլավիկին կամուրջից նետեց
Դեպի ջրերը փոսի:

Եթե մենք խստագույնս դատենք
Բոլորին, ով արժանի է դատի—
Երջանիկ շե՛նք լինի մենք,
Բայց աշխարհը դատարկվի պիտի:

Եվ կրկին իր կապույտ աչքերը
Էլլենը դեպ երկինք հառեց.
— «Եղի՞ր դատավո՛ր ինձ, տե՛ր իմ,
Բայց արդար եղի՛ր, ինչպես ես:»

Մենք գիտենք— գեղեցիկ կանանց
Մեղքերը— հանաքներ են քնքուշ
Իսկ— այնքա՛ն բարի՛ է աստված,
Այնքան հե՛ղ է նա և զգույշ .

Գիշերը կոմսուհին, աբբային կանչելով,
Պատմեց իր մեղքերը բոլոր,
Եվ— քավեց իր այդ մեղքերը բոլոր
Լոկ հիսուն լուի հանձնելով:

Ինչ որ պատահում է կյանքում—
Մենք պետք է տեսնենք ու լսենք,—
Դրա համար էլ, աստուծո կամքով,
Աչքեր և ականջներ ունենք:

Այս ամենը— հար գաղտինք կըմնար,
Այս մասին ո՞վ կասեր մեզ,—
Բայց— աջհամբույրի գումարում հանկարծ
Իննը կեղծ դրամ պատահեց...

Բայց երբ պատահում է, որ մեր աչքը
Չափից ավելի՛ է սուր—
Նշանակում է, որ Արարիչը
Մեզ շարշարել է ուզում:

Եվ ահա, բաշխելով այդ կեղծ դրամները
Իր հոտի ծուխերին աղքատ—
Աբբահայրը պատմեց այս քնքուշ բաները
Եվ տվեց մեզ— չքնաղ մի բայլադ:

Տանջալից են սրտի ցավերը
Եվ հաճախ— չի՞ք բուժում նրանց,—
Այնժամ զվարթուն հանաքո՞վ ենք
Մենք բուժում ցավերն այդ անանց:



ԻՄ ՌԱՆԿԱԳԻՆ
ԲԱՐԵԿԱՍ


Զ ԼՈՒՐԻՔԻ
ՅԱՊԵԼԼԻՆ






նշպես կայծերը ամպի սև ծխում—
Միայնակ ենք մենք օվկիանում կյանքի,
Բայց մենք— գալիքի հունտերն ենք կյանքում,
Մենք— կրակն ենք լնք պայծառ գալիքի։—

Կապրի 24 IV. 1911



ԴՈՍՏԻԳԱԼ Ե ՈՒՐԻՆՆԵՐԸ



ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Վանառականական ակումբ Սոլիդ կահավորված հյուրասենյակ Դիտոզի գիմացը՝ Ալեքսանդր Յ-րդի նկարը, ամբողջ հասակով և գլխարկով, հաստիկ, սև ֆիգուրա կապտավուն ֆոնի վրա, նրա ետևը՝ ինչոր սյուներ, որոնք հիշեցնում են Լենինգրադի բիրժան Բեմի խորհում՝ լայն դռներ, որոնք տանում են կրկնակի լույսով լուռավորված դահլիճը, Երևում է էստրադան, նրա ետևը՝ սեղան, ծածկված կարմիր մահուդով, պատի վրա՝ ոսկյա շրջանակ, Նիկոլայ 2-րդի նկարը հանված է շրջանակից, շրջանակի միջից ցցված են երկու կարմիր դրոշակ Նիստի ընդմիջում, դահլիճում մնացել են և գրուցում են մի ֆանի փոփրիկ խմբեր, նրանք հետզհետե հալչում են, դուրս գալով հյուրասենյակ, իսկ այնտեղից դեպի ձախ դուռ, բուֆետը՝ Աջ կողմը՝ դուռ դեպի թղթախաղի սենյակը Անկյունում, այդ դռան մոտ, փափկաթոռի ծայրին նստած, մախուրկա փաթաթելով, սպասում է ծերուկ Լոսիֆը, տերտեր՝ մուժիկի սապոզներով, գույնը գցած փարաջայով, սուր ֆթով, մի ֆիչ նաղատ, ակնոցով Դահլիճից դուրս են գալիս՝ Պավլին, Պարֆիրի Պետրովիչ Նեստրաշնի՝ նախկին ֆաղաֆագլուփա և Միֆայել Հրեշտակապետի տեղական միության նախագահ, նա ձեռնափայտով է, կաղում է մի փոփր: Կուզմա կիսագոնով՝ գործարանատեր:

ԼԻՍՈՑՈՆՈՎ Դու, հա՛յր Պավլին, պատմելդ թո՛ղ, ես գնամ թե՛յ պատվիրեմ: (Կանգնեց, նայեց թագավորի նկարին, հառաչեց) Ի՞նչ է, Ձերդ մեծութ՜յո՛ւն, զավակիդ գործից հանեցին էխե՛-խե՛ ..

ՆԵՍՏՐԱՇՆԻ (նստելով սեղանի մատ, մռայլ) Ես ենթադրութ՜յուն ունեմ, որ Լենինով և բոլշևիկներով կաղետները վախեցնում են մեզ: Նրանց հաշիվն է այդպես՝ վախեցնե՛լ .

ՊԱՎԼԻՆ Վախենում եմ, որ սույն դեպքում սխալվում եք դուք: Լենինը նյութապաշտութ՜յան մարմնացումն է, շար ոգու, երկրային, կոպտագույն, սատանայական իմաստութ՜յան .

ՆԵՍՏՐԱՇՆԻ Իսկ դու, Լրբ Երկրորդ Դումայում էսէռ էիր, երկնային իմաստութ՜յո՛ւնն էիր մարմնացնում

ՊԱՎԼԻՆ Ձեր հեգնանքը հազիվ թե տեղին է: Երկրորդ Դումայում, եթե հիշում եք, հոգևորականութ՜յունը ներկայացված էր շափաղանց առատ, և սրանում արտահայտվեց ժողովրդի կամքը ..

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ը՛... Այո՛ Տերտերներն էլ մարդամեջ մտան՝...

ՊԱՎԼԻՆ Իսկ խորը նայելով, մենք կտեսնենք, որ էսէռութ՜յունը, հրաժարվելով տեռորից, միանգամայն ընդունակ է ձուլվելու կաղետիզմին, իսկ սույն վերջինս փոքրագույն շարիքն է, և ինչպես տեսնում ենք՝ իր մեջ ամփոփում է առաջիկա ձգտումը դեպի աջ:

¹ Կարելի է փոխարինել՝ «Տերտերներն էլ պարբունեցին...» (Մ. Ք.):

Մոտենում և նստում են սեղանի մոտ՝ Յելովաներ, ֆաղաֆային սպանդանոցների տերը և Տրոյերուկովը՝ ջրաղացատերը, 50-ի մոտ մի այր, շատ նման Ալեքսանդր Յ-րդին: Որ ինքը նման է Ալեքսանդր Յ-ին, Տրոյերուկովը գիտե: Դահլիճի դռների մեջ Դոստիգակը զրուցում է Մոկրոուսովի հետ Մոկրոուսովը ֆաղաֆացիական զգեստով է. նա ակումբի տնտեսական մասի վարիչն է Դոստիգակի նման նա ևս ամբողջ գործողության ընթացքում, մերթընդմերթ երթևեկում է բեմի վրա Դոստիգակը ակումբի ավագն է ձեռքերը գրպաններում, ականջ է դնում բոլոր խոսակցություններին, խառնվում է բոլոր զրույցներին մնալով մենակ, մտախոհ շվացնում է

Յելովանե՛վ Ինչի՞ մասին է զրույցը:

ՊԱՎԼԻՆ Ա՛յ, Պարֆիրի Պետրովիչն ասում է, որ կադետները դիտմամբ են վախեցնում մեզ կենինով և ընկերներով. վախեցնում են, ինչպես ես եմ հասկանում, որպեսզի առևտրական դասը թեքվի դեպի ձախ, դեպի իրենց կողմը, դեպի կադետները, ընկնի իրանց իշխանության տակ

Յելովանե՛վ Իսկ դու, հայր Պավլին, մի՞թե կադետ չես:

ՊԱՎԼԻՆ Ո՛չ մի դեպքում և երբեք չեմ հակվի: Եվ ընդհանրապես...

ԴՈՍՏԻԳԱԵՎ (մոտեցավ) Իսկ ընդհանրապես այդ ինչպե՞ս:

ՊԱՎԼԻՆ Թ՛վում է, եթե թագավորող անձն անհամապատասխան է ճանաչված իր կոչումին և գոր-

ծին, ընտրեցեք ուրիշ անձնավորություն: Մեզանում
դեռ պահպանվել են և ծաղկում ու փթթում են Ռյուրի-
կի ժառանգները, նախարարական իշխանների զա-
վակները ..

Լիսոգոնովը վերադարձավ սպասավորը բերում
է մի բաժակ թեյ և թեյամանով՝ կոնյակ

ԴՈՍՏԻԳԱԵՎ ժառանգները, դատարկ-մատարկ-
ները .

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Երազում ենք ապրում

ԼԻՍՈԳՈՆՈՎ Բուֆետում հայհոյում են Զվան-
ցովին, քե՛ֆդ գա:

ՅԵԼՈՎԱՆԵՎ Այո՛ - ո՛ . Ժամանակավոր կա-
ռավարության կոմիսարը ոնց որ նահանգապետ լի-
նի մեղ համար

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ (ծույլ) Իսկ վաղո՞ւց է, որ նա
նստում էր իմ գրասենյակում, սպասում խոնարհ՝
հ՞րբ նրան կկանչեմ

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ի՛նչ կասես, Դոստիգա՛ն .

ԴՈՍՏԻԳԱԵՎ Լսում եմ:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Այո՛, խորամանկություն ես
անում:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Սովորում եմ:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Անհնարին է հասկանալ՝ ո՞ւր եւ
նշան բռնում:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Իսկ դո՞ւ, Պարֆիրի Պետրովի՛չ,
ո՞ւր:

Նեստրաշնին լուռ է Բոլորը նայում են նրան,
սպասում են Բան շասաց՝

ՊԱՎԼԻՆ Ի միջի այլոց, քաղաքացի Զվանցովն իր ճառում շոշափեց, և շափազանց վիրավորական ձևով, եկեղեցու խնդիրը: Ի թիվս բազում սովորական և թեթևամիտ հերյուրանքների, որոնցով պարոնայք ինտելիգենտները սովորել են ծանրաբեռնել հոգևորականությանը, նա մատնանշեց և այն, որ իբր, ժամասացությունից պետք է վտարել հին սլավոնական լեզուն, որպեսզի աստժո ձայնը ավելի հասկանալի դառնա հավատացյալների հոգուն, մեր ժողովրդի նայիվ հոգուն:

ՆԵՍՏՐԱՇՆԻ (մուսյլ) Նայիվ... Համա՛ թե ասավ: Հապա մի մատդ դիր նրա, նայիվի բերանը... շո՛ւն-շան որդու...

ՑԵԼՈՎԱՆԵՎ Իսկ պատերազմից փախչո՛ւմ են, հա փախչում...

ԼԻՍՈԳՈՆՈՎ Ամբողջ Ռուսաստանը դեզերտի-րություն է անում...

ՊԱՎԼԻՆ (բորբոքվելով) Որի պատճառով շարաբաստիկ քարոզն է մտքի ազատության, ժողովրդի կամքի և նման բաների մասին...

ՆԵՍՏՐԱՇՆԻ Իսկ Երկրորդ Դումայի ժամանակ դու, այնուամենայնիվ, էսէռներին էիր քսվում և ի՛նքդ էիր քարոզում այդ ամենը:

ՊԱՎԼԻՆ Անհի՛մն պիգում: Դառնալով պարոն կոմիսար Զվանցովի ճառին, պետք է ասեմ.— լեզվի մասին ունեցած նրա կարծիքը հերքվում է այն իմաստով, որ կաթոլիկական եկեղեցին աստժո արարողության ժամանակ օգտվում է լատինական լեզվից... (Տեր Իոսիֆը, մախուրկա փաթաթելով, ծխեց) Սակայն հոռմեական եկեղեցու ուժն ու կորո՛վը սրանից

չեն տուժում և անգամ հերետիկոսների հարվածները,
ինչպես Լութերի...

ՆԵՍՏՐԱՇՆԻ ԲՈ՛ղ, հա՛յր Պավլին, ճառերով
կուշտ ենք մենք բավականին, նույնիսկ սիրտ խառ-
նելու աստիճան...

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Սպասեցե՛ք, թողե՛ք լսենք:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ինչքան ուզում ես օդ կուլ տուր,
չես կշտանա...

ՊԱՎԼԻՆ (հարկացած) Դո՛ւք, հարգոյապա-
պատիվ Պարֆիրի Պետրովի՛չ, ինչպես և ձեր ամբողջ
դասը, ահեղ ճակատագրի կամքով, մտնում եք քա-
ղաքականության ասպարեզը, որ ամենավտանգավորն
է անփորձների համար: Այս իսկ պատճառով Ձեզ ան-
հրաժեշտ է գիտենալ, որ բոլոր հասկանալի բաները
հանդես են գալիս իբրև մարդկային համար շափա-
զանց վնասակար հիմարություն: Իսկ իսկական և սրբ-
բազան իմաստությունը թաքնված է բանականության
անհասկանալի և անքննելի խորամանկությանց մեջ

ԼԻՍՈԳՈՆՈՎ Ճի՛շտ է, ա՛խ, ճի՛շտ է .

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Ոնց որ երազո՞ւմ ենք ապ-
րում .. Սատանան գիտե, թե ի՛նչ է

ՊԱՎԼԻՆ (ուժգնորեն) Կրոնը գենք է ընդդեմ
սատանայի փոյձությանց և ճարտարությանց:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ես կրոնի դեմ չեմ վիճում:

ՊԱՎԼԻՆ Եվ, ինչպես պաշտպանության յու-
րաբանչյուր զինք, կրոնը ենթակա է զարգացման և
կատարելագործման: Այս պատճառով, եթե մենք
զրկվեցինք աշխարհիկ ղեկավարից, պետք է այն փո-
խարինենք հոգևորով: Մոսկվայում հարց է հարուց-
ված պատրիարքի ընտրության...

ՆԵՍՏՐԱՇՆԻ Դու ասա՛ մե՛նք ի՞նչ ունենք,
մե՛նք:

ԼԻՍՈՒՆՈՎ Մեդ, թանկագին բարեկամս,
ուզում ես սատանա տուր, միայն թե կարգ լինի,
ա՛յ թե ոնց է գործը հիմա:

ՏՐՈՆԵՐՈՒԿՈՎ (տխուր) Կարծես թե, բարե-
կամենե՛րս, մենք ինչ-որ այն շենք անում: Բոլորս
[զրույց ենք] անում: Իսկ, ա՛յ, կնանի՛ք ... Հեղափո-
խությունը նրանց չի խանգարում, նրանք իրենց գոր-
ծը շեն լքում... Վարունգը աղել են, քալամբը
թթու դրել, սունկը...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Գո՛ւրինն է գալիս...

ՊԱՎԼԻՆ Այդ շարագործի հետ հանդիպելը . .
ցանկալի չէ: (Արագ գնում է աջ, դեպի դուռ: Նկա-
տեց Իոսիֆին) Ախ, հա՛յր Իոսիֆ, այդ դուք մախոր-
կա՞ եք քաշում: Այդ ոնց դուք այստեղ՝ մախոր-
կա, ա՞:

ԻՈՍԻՖ Բա՛ն չկա քաշելու, բա՛ն չկա:

ՊԱՎԼԻՆ Զսպեցե՛ք ձեզ: Այստեղ տրակտիր
չէ՛:

ՆԵՍՏՐԱՇՆԻ (հրելով նրան դեպի դուռ) Գնա՛,
թե չէ սկանդալ կլինի ..

Պավլինը, Նեստրաշնին գնացին, նրանց ետևից
կսոգոնովը, ոչ ընդհուպ փակելով դուռը, նա-
յում է հյուրասենյակ. Գուրինը գալիս է դան-
լինից: Ծանր, հաստ մարդ՝ յուզոտ երեսով և
լպիրշ աչքերով նրան ուղեկցում է Ալեքսեյ
Դոստիգաևը:

ԳՈՒԲԻՆ Նենց ա՞յդ է նա, որ կա՞:

ԱԼԵՔՍԵՅ Այո՞:

ԳՈՒԲԻՆ Շիկահեր, փսլնքոտ գուլնի շորով:

ԱԼԵՔՍԵՅ Այո՞, այո՞... Ժաննա Գուստավով-
նա:

ԳՈՒԲԻՆ Ոչի՛նչ, նկատելի՛ սատկածն է: Ա՛յ,
այդպիսի կանայք վնասակար տարիքի...

ԱԼԵՔՍԵՅ Դուք ուզում էիք ասել՝ միջի՞ն տա-
րիքի:

ԳՈՒԲԻՆ Ես խոսում եմ, ինչպես ուզում եմ:
Վնասակար տարիքի նշանակում է երեսունից մին-
չև քառասունը: Ամենահետաքրքիր տարիքը: Հաս-
կացա՞ր:

ԱԼԵՔՍԵՅ Ո՛չ ամբողջովին:

ԳՈՒԲԻՆ Հայրդ քեզանից խելացի է, թեևնա՛
էլ Բիսմարկ չէ: Դե, հա՛յդե, շամպայն լակենք, կնա-
սե՛ր:

ԻՈՍԻՖ Ամենահարգելի Ալեքսեյ Մատվեևիչ...

ԳՈՒԲԻՆ Ի՞նչ կա:

ԻՈՍԻՖ Աստուծո՛վ եմ խնդրում,— վճարեցե՛ք
Ձեր կրակած սագերի գինը...

ԳՈՒԲԻՆ Ըհը՛: Այդ դո՞ւ ես: Դե ես քեղ ասա-
ցի՛ դիմի՛ր դատարան:

ԻՈՍԻՖ Չկա՛ ձեր վրա դատարան, աստվածից
բացի..

ԳՈՒԲԻՆ Ստո՛ւմ ես, կա՛: Գնա կորի՛: Եվ
դիմի՛ր դատարան: Չես դիմի՛ մյուս անգամ կգամ,
էլի մեկնումեկին կկրակեմ... Հասկացա՞ր:

ԻՈՍԻՖ Ես, Ալեքսեյ Մատվեևիչ, թերթում
կգանգատվեմ ձեր վրա:

ԳՈՒԲԻՆ Արա՛, Թերթո՛ւմ: [Հայր սրբազանին: Արա...] (Գնաց բուֆետ)

Իոսիֆը հանեց ծխախոտի փսեճ, գլանակ փաթաթեց, հիշեց, որ այստեղ չի կարելի մախուրկա ծխել, և, փսեճ պահելով, վշտացած թափահարեց ձեռքը, նորից նստեց անկյունում:

ՅՅԼՈՎԱՆԵՎ Իսկ Պավլինը վախենո՛ւմ է, հա, Գուբինից:

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Ո՞վ նրանից, սատանայից, չի վախենում:

Նեստրաշնին դուրս գնաց.

ԼԻՍՈԳՈՆՈՎ Նրա գործին քացի տվին, հե՛նց տերտերները:

ՅՅԼՈՎԱՆԵՎ Ասենք, այդ, ա՛յ, Պարֆիրի Պետրովիչի ծանր թաթն էր, որ դուրս շարտեց նրան քաղաքագլխի պաշտոնից...

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ի՞նչ գործ ունեմ ես այստեղ: [Այդ հայր սրբազանն արեց]: Այն դեպքից հետո, երբ Գուբինը պատարագի ժամանակ սարկավազի մագերը քաշքշեց. .

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Նրան խելագարատո՛ւն պետք է տանել...

ՆԵՍՏՐԱՇՆԻ Հիմա խելագարների համար հարկավոր է քաղաքներ կառուցել:

ԼԻՍՈԳՈՆՈՎ Զո՛ւ, աղմկում են բուֆետում: Գնամ, նայեմ:

Բոլորը գնացին:

Մնաց Տրոյերուկովը, հպարտանալով, մտուփը
շոյելով նայում է ցարի պատկերին և հայելու
մեջ՝ իրեն. Լցրեց կոնյակ, կանգնեց, խմեց,
բղկացրեց:

ԻՈՍԻՑ Առողջությո՛ւն:

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ (մտածելով) Բայց ախր ես
չփռշտացի:

ԻՈՍԻՑ Այդ դեպքում, ներեցե՛ք, սխալ լսեցի:
ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Դու որտեղի՞ց ես:

ԻՈՍԻՑ Ավանից, Կոմարովոյից:

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Ըհը... Իսկ .. Ի՞նչ ես սպա-
սում այստեղ:

ԻՈՍԻՑ Մայրապետին, մայր Մելանիային եմ
սպասում, նրա հրամանով: Խոստացավ գալ այստեղ:

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Նա այստե՛ղ է: Կոնյակ խմո՞ւմ
ես:

ԻՈՍԻՑ Մեր ինչ գործն է: Այ սամոզոն լինեք,
է՛ն էլ շեռ ճարի: Օ՛խ, քանդվում է Ռուսաստանը:

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Հապա՛, խմի՛ր:

ԻՈՍԻՑ Քրիստո՛սը ձեզ փրկի: Ո՛ղջ լինեք:
Ուխ՛խ... Ի՛նչչ... անսսլասելի հեղուկ է...

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ (գոճ) Դաղվեցի՛ր: Այդպե՛ս է,
է՛: Ա՛ռ, էլի՛...

Բուֆետից դուրս են գալիս Բետլինգը, նրա
ետեից՝ Դոստիգաևը և Մոկրոուսովը, նրա առ-
ջևը, թռչկոտելով մերթ աջից, մերթ ձախից՝
լիսոզոնովը:

ԲԵՏԼԻՆԳ (արհամարհական և փնթփնթալով)
[Դուք՝ մի՛ք] Թռչկոտի: Դուք՝ հանգիստ...

ԼԻՍՈՓՈՆՈՎ Հուզված եմ ձերդ գերազանցու-
թյան հետ զրուցելու պատվով

ԲԵՏԼԻՆԳ Թույլ տվեք, ես կնստեմ: Դուք էլ
նստեցե՛ք: Նո՛ւ, ի՞նչ եք ուզում ինձանից:

ԼԻՍՈՓՈՆՈՎ Իմաստուն խորհուրդ, ձերդ .

ԲԵՏԼԻՆԳ Դուք կարճ, առանց տխուղոսի .

ԼԻՍՈՓՈՆՈՎ Ասում են, որ այդ բոլշևիկը,
լենինը, հնարված է մեզ սարսափեցնելու համար...

ԲԵՏԼԻՆԳ Այդ ինչպե՞ս թե— հնարված է ..

ՄՈԿՐՈՈՒՍՈՎ Թույլ տվեք հաղորդեմ լենին-
նր իր ավաղակախմբի ձերբակալությունից հետո,
փախավ Շվեցիա: Նա իրական դեմք է:

Ռուֆետից, դահլիճից դուրս ևն գալիս մարդիկ,
շրջապատում են Բետլինգին, նայում ևն նրան
Ամբոխի մեջ, պատի մոտ՝ Տյատինը Դուրս
եկավ Մելանիան, նստեց բազկաթոռում նրան
մոտենում է տերտեր Իոսիֆը, բուզք է տա-
լիս, զրուցում է Մելանիան տանում է նրան
դահլիճ Մի ֆիշ հետո տերտերը արագ անց-
նում է բուֆետը

ԲԵՏԼԻՆԳ Նու, այո՛: Եվ, իհարկե, Շվեցիան
կհանձնի նրան մեզ: Այ դո՛ւք, քաղաքային ուղար-
վայի անդամ, տարվում եք քաղաքականությամբ, իսկ
քաղաքում, փողոցներում անհնարին է շրջել ավտո-
մոբիլով: Տեսնո՞ւմ եք: Հիշեցնում եմ ձեզ, որ քա-
ղաքականության համար մենք ունենք ժամանակավոր
կառավարություն...

ԼԻՍՈՓՈՆՈՎ Ներեցե՛ք, մենք իհարկե, վայ-

րենիներ ենք, և ո՞ւմ է հարկավոր հավատալ՝ շգիտենք:

ԲԵՏԼԻՆԳ Ա՛յ, դուք կրկին վեր թռաք և...
ոստոստում եք, թռչկոտում ..

ԼԻՍՈՓԴՆՈՎ Պնդում են, որ բոլշևիկներ են
լույս քնկել, նույնիսկ մեր ջաղաքում:

ԲԵՏԼԻՆԳ Չի կարելի կարևորություն տալ
ինչ-որ բազարի կանանց զրույցներին:

ԼԻՍՈՓՈՆՈՎ Այդ կոմիսար Չվանցովի կինն է
ասում:

ԲԵՏԼԻՆԳ Ի՞նչ, Չե՛մ հավատում: Ես գիտեմ,
որ նա բարեխոհ կին է:

ՄՈԿՐՈՈՒՍՈՎ Համարձակվում եմ զեկուցել՝
քաղաքում բոլշևիկներ կա՛ն:

ԲԵՏԼԻՆԳ Կա՞ն:

ՄՈԿՐՈՈՒՍՈՎ Ճիշտ այդպես է:

ԲԵՏԼԻՆԳ Հըմ... Եվ ի՞նչ են նրանք անում:

ՄՈԿՐՈՈՒՍՈՎ Քարոզում են սոցիալիզմ, ինչ-
պես և սոցիալիստ-հեղափոխականները:

ԲԵՏԼԻՆԳ Ն-նո՛ւ, սիրելի՛ս, մեղանում մի՛շտ էլ
որեւէ բան քարոզում են... Բոլշևիկներ... Պետեր-
բուրգում նրանց ձերբակալեցին, իսկ ի՞նչ է մեզ մոտ:
Հարկավոր է ձերբակալել:

ՄՈԿՐՈՈՒՍՈՎ Թաքնվել են, ձե՛րդ գերազան-
ցություն:

ԴՈՍՏԻԳՍԵՎ Մեզանից ոմանք, կո՛մս, կաս-
կսիծում են ժամանակավոր կառավարության ուժին:

ԲԵՏԼԻՆԳ Ինչո՞ւ: Չէ որ, ահա, նա ձերբակա-
լում է, բռնում: Կարգ է հաստատում:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Հարց է՝ ո՞վ է բռնում և ինչո՞ւ:

Բռնում են իրավաբանները, պրոֆեսորները, ինտելիգենտները և ընդհանրապես, ամեն տեսակի տկլոր անձինք:

ԲԵՏԼԻՆԳ (հոգնել է) Բայց ինչո՞ւ այդքան խիստ այնտեղ կան հարգելի մարդիկ, օրինակ՝ Իշխան Լվովը և այդ .. Ինչպե՞ս են կոչում .

ԴՈՍՏԻԳԱԵՎ Իշխանը, ճիշտ է, անունով առյուծ է, բայց նրա առյուծները, կարծես թե էշեր են:

ԲԵՏԼԻՆԳ (զոռով ժպտալով) Դա սրամիտ է Բայց ինչո՞ւ այդպես: Մենք պետք է վստահենք ժամանակավոր կառավարությանու:

ԴՊՍՏԻԳԱԵՎ Ոմանք անվանում են նրան պատճառավոր, իբր թե սոցիալիստներն են նրան բռնարարել:

ԲԵՏԼԻՆԳ (անօգնական) Ես այդպես չեմ մտածում:

ՑԵԼՈՎԱՆԵՎ (Նեստրաշնուն) Ա՛յ թե լա՛վ կտրեց Դոստիգաևը կոմսին .

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ը-այո՞ո՞ո... Հմուտ է ձեռքով էլ, [լեղվով էլ]:

ՑԵԼՈՎԱՆԵՎ Ա՛յ-ա՛յ-ա՛յ, լա՛վ կտրեց:

ԲԵՏԼԻՆԳ (Դոստիգաևին) Իսկ ինչպե՞ս է ձեր կոմսյանինին՝ Բուլըշովի, առողջությունու:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Նա մեռավ մոտ մի ամիս առաջ:

ԲԵՏԼԻՆԳ Ա՛խ, այո՛, ես մոռացա: Ցավում եմ: Արժեքավոր մարդ էր, ինքնատիպ:

ԼԻՍՈԳՈՆՈՎ Ո՛չ այնքան խելացի, որքան հանդուդն:

ՑԵԼՈՎԱՆԵՎ Մեր, տոհմական վաճառակա նության շարքը նա թռավ— գործակատարությունի՛ց:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Հիմար կնոջ հետ ամուսնացավ,
իսկ նա՝ փող ուներ: Թուով մեր շրջանը, գոռոզացավ
բախտով, սկսեց ցույց տալ իր հատկությունները և
դուրս եկավ քալլապոզ, ինչպես Ալեքսեյ Գուբինը:

ԲԵՏԼԻՆԳ Ախ, ա՛յ թե ի՛նչ:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Երևակայեց, որ իրենից լավ
մարդիկ չկան և ամբողջ աշխարհը իրա շուրջն է դառ-
նում. .

ԲԵՏԼԻՆԳ (տխուր) Իսկ ինչո՞ւ չեն սկսում
նիստը:

Նրանից հետզհետե հեռանում են, հյուրասեն-
յակը դատարկվում է նստած է, նայելով ցա-
րի պատկերին, բերանը սրբելով թաշկինակով
նայելով մարդկանց կողմը, մոտենում է Տրոյե-
րուկովը, ասում է կիսաձայն

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Թույլ տվեք իմանալ, ձե՛րդ գե-
րազանցություն, ճի՞շտ է, որ պատկերը ինձ է նման:
ԲԵՏԼԻՆԳ Այո՛, կա որոշ. .

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Չերդ գերազանցություն, դուք
մեր պատվավոր ավագն եք, խնդրում եմ ձեզ՝ պաշտ-
պանեցե՛ք իմ դիմումը ..

ԲԵՏԼԻՆԳ Բայց, թույլ տվեք, ես ի՞նչ կարող
եմ անել:

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Դուք կարող եք: Չնչին բան
է, ձե՛րդ գերազանցություն: Դուք, իբրև հայրենասեր,
ակնարկեցեք, որ եթե որդուն քշեցին, ուրեմն հորն էլ
անհարմար է այստեղ կախված մնալ: Իսկ ես կտա-
նեի այն տուն, կվերանորոգեի հագուստը քաղաքա-
ցիականի, վաճառականականի. . .

ԲԵՏԼԻՆԳ (զայրացած է) Ներեցե՛ք, բայց դուք... դուք... Խելագարվե՛լ եք: Դուք ցնորող եք:

Կանգնեց, գնում է դեպի բուֆետի դուռ: Տրոյեռուկովը վախեցած մտնում է աջ կողմի սենյակը. բուֆետից ընդառաջ են գալիս Բետլինգին՝ Ժաննան, Ելիզավետան, Դոստիգաևան, Զիրինը:

ԺԱՆՆԱ (խոսում է ակցենտով) Պետք է գնել ավտոմոբիլներ: Ախ, դու այստե՞ղ ես: Ես քեզ փրճատում էի:

ԲԵՏԼԻՆԳ Լսի՛ր...

ԺԱՆՆԱ Մի փոքր լռիր: Ես ասում եմ՝ պետք է շիք անել, դա զարմացնում է հասարակ մարդիկ: Հարստությունը զարմացնում է, ճիշտ չէ՞:

ԶԻՐԻՆ Եվ բանվոր ժողովուրդը ապրում է հանգիստ, բավականանալով զարգացմամբ:

ԺԱՆՆԱ Դուք միշտ իրոնիա եք անում, այդ վատ գործ է: Դու ամբողջ ժամանակ նստած ես այստեղ, ինչպես այն...

ԶԻՐԻՆ Արծիվը ժայռի վրա:

ԺԱՆՆԱ Ոչ՝ հավը: Նա շափազանց շատ է նստում:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Եվ ի՞նչ— տաքացնո՞ւմ է:

ԺԱՆՆԱ (սաստում է նրան մատով) Ն-ո՛ւ...

ԲԵՏԼԻՆԳ (զայրացած) Դու խոստացար գալ երկու բոպեից: Իսկ ինձ այստեղ գերի վերցրին այդ... կոմերսանտները, մեկը հարբած, մյուսը՝ խելքը թռոցրած, մնացածները՝ կոպիտներ:

ԺԱՆՆԱ Ա՛յ, նա կրկին նստած է: Լիզա՛, ի՞նչ
եք ծիծաղում:

ԲԵՏԼԻՆԳ Պոլի՛տիկա, պոլի՛տիկա: Բոլորն
ասես թունավորվել են սունկով: Ի՞նչ կարող են նրանք
հասկանալ պոլիտիկայից, այդ հրեշները: Ես հոգնե-
ցի:

ԶԻՔԻՆ Այժմ նույնիսկ բանվորները, գինվոր-
ները — երևակայում են...

ԲԵՏԼԻՆԳ Ա՛խ, վե՛րջ տվեք, բարեկա՛մս:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Նիստից հետո պարելո՞ւ են:

ՄԵԼԱՆԻԱ (Դուրս եկավ, նստում է դահլի-
նի մուտքի մոտ դրված բազկաթոռի վրա) Պարի
ժամանա՞կ գտար, խելոքուհի՛:

ԵԼԻԶԱՎԵՏԱ (ուրախ) Ինչո՞ւ չէ: Ծերերը
կխոսեն-կցրվեն, իսկ մենք...

ՎԱՐՎԱՌԱ (բուֆետից) Լի՛զա, շե՞ս տեսել,
ո՞ւր է Անդրեյը:

ՄՈԿՐՈՈՒՍՈՎ Փոքր հյուրասենյակում:

ԺԱՆՆԱ Դու հուզված ես, Բարբի՛շ:

ՎԱՐՎԱՌԱ Ե՞ս, ամենևի՛ն:

ԶԻՔԻՆ Վարվառա Եզո՛րովնա, բարի երեկո՛:
Ի՞նչ է, դուք արդեն որոշել եք գլուխս կտրել:

ՎԱՐՎԱՌԱ Ե՞ս, ո՛չ: Այդ նեստրաշնին և նրա
սև հարչուրակն է որոշում:

ԺԱՆՆԱ Ես չեմ ուզում պոլիտիկա: Ես չեմ
ուզում, որ դու, Վարյա՛, կտրես գլուխը մոսյո Զիբի-
նի: Ինչո՞ւ համար: Նա ուրախ գլուխ է... Դու՛ խե-
լոք գլուխ, իսկ ոուս ժողովուրդը բարի է: Նա չի
ուզում կտրել գլուխը իր ազնվականների:

Դահլիճում գանգ:

ԲԵՏԼԻՆԳ Վերջապես գնանք, ժաննա՛:

ԺԱՆՆԱ Ես միշտ մտածում եմ, երբ ասում եմ— ազնվականներ: Ես երկար ժամանակ ասում էի՝ ազնվականի կնիկ, ազնվականի կնիկ— փոքրիկ շնիկ: Շա՛տ ծիծաղելի է:

Գնում են դահլիճ Անցնելով Մելանիայի մոտով, Ելիզավետան շքարեկեց նրան

ՄԵԼԱՆԻԱ Բա՛րե, կիզավետա՛:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Ախ, ներեցե՛ք: (Սահեց դահլիճ):

ՄԵԼԱՆԻԱ Վարվառա՛, սպասի՛ր:

ՎԱՐՎԱՌԱ Ես ձեզ հարկավո՞ր եմ, մորաքո՛ւյր:

ՄԵԼԱՆԻԱ Կանչում եմ՝ նշանակում է պետք ես: Այդ ինչ էր ամուսնիկդ բրդում եկեղեցու մասին, հիմա՛րր: Դու ինչո՞ւ չես ուսուցանում նրան: Ուսանեցիր, ուսանեցիր, իսկ ուսուցանել չես իմանում: Պոլիտիկոսանե՛ր առանց եկեղեցու հո բոլորիդ գլուխը կթոցնեն:

ՎԱՐՎԱՌԱ Դուք շհասկացա՛ք: Անդրեյը խոսում էր եկեղեցին ժողովրդին մոտեցնելու մասին, այն մասին, որ ժամասացությունը պետք է դարձնել ավելի հասարակ, բայց էֆեկտավոր .

ՄԵԼԱՆԻԱ (զավազանը խփելով) Ավելի սարսափելի՛ է հարկավոր, սարսափելի՛, ավելի՛ ահավոր: Ձեր էֆեկտները թողե՛՛ թատրոններին:

ՎԱՐՎԱՌԱ Ներեցե՛ք, մորաքո՛ւյր ինձ հարկավոր է ամուսինս:

ՄԵԼԱՆԻԱ Գնա՛, գնա՛: Այլ ամուսին ճարեիր,

ավելի՛ խելացի: Վա՛ղ տուր: Վաղ կտա՛ք, խառնակիչ-
նե՛ր: (Կանգնեց, ուզում է գնալ դահլիճ):

Նեստրաշնին և Մոկրոուսովը Լյնում են բու-
ֆետից

ՄՈԿՐՈՈՒՍՈՎ Հարմար մարդ չկարողացա
գտնել, Պարֆիրի Պետրովիչ:

Մելանիան կանգ առավ, լսում է

ՆԵՍՏՐԱՇՆԻ Երբ ինձ մոտ էիր, Միքայել
Հրեշտակապետի միության մեջ, ամեն տեղ հասնում
էիր, իսկ հիմա— չես հասնում: Տարօրինա՛կ է, եղ-
բա՛յր:

ՄՈԿՐՈՈՒՍՈՎ Ժողովուրդը վստահելի չէ շա-
փազանց:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Իսկ դու ինքդ վստահելի՞ ես:

ՄՈԿՐՈՈՒՍՈՎ Վիրավորում եք, Պարֆիրի Պետ
րովիչ: Նա զգույշ մարդ է, թաքնվում է...

ՄԵԼԱՆԻԱ Այդ ո՞նց է, որտե՞ղ է նա թաքնը-
վում, երբ միտինգներում ամեն օր գոռգոռում է:

ՄՈԿՐՈՈՒՍՈՎ Ես նկատի ունեմ— գիշերները:
Եվ մենակ երբեք չի շրջում:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Նու, լավ: Դու, այնուամենայ-
նիվ. . . Դու հայրենասեր ես, շնորհակալ:

ՄԵԼԱՆԻԱ (Նեստրաշնուն) Հապա՛ մի նստիր,
մի բռնակոտ:

Նստեցին սեղանի մոտ, դռնից աջ, փափսում են:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Հարկավոր է: Միայն թե մար-
դուկներն ինձ մոտ, միության մեջ, ցրիվ են եկել:
Հիմա այնպիսի՛ ժամանակ է. ամեն ոք իր համար:

ՄԵԼԱՆԻԱ նու, շահ տ բան է արդյոք հարկա-
վոր:

Զվանցովը նայեց դռնից և արագ անհետացավ:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Այո, իհարկե, կանենք: նու,
կարծես սկսվում է խոսատունը: Գալի՞ս ես:

Գնացին: Դահլիճի դռներից՝ Տյատինը Մելա-
նիան և Նեստրաշնին նայում են նրա ետևից:
Նա նստեց սեղանի մոտ, հանեց բլոկնոտը,
գրում է. Վեր բռավ: Զվանցովը, սրբելով դեմքը
թաշկինակով, ետ-ետ գնաց

ՏՅԱՏԻՆ (կանգնեց) Սիրելի եղբայրի կս ..

ԶՎԱՆՑՈՎ Ժամանակ չունեմ:

ՏՅԱՏԻՆ Ոչինչ, ժամանակ կունենաս կատարե-
լու մտքի և պատվի մեծագործություններ:

ԶՎԱՆՑՈՎ Այդ ի՞նչ տոն է:

ՏՅԱՏԻՆ Դու լուր ես տարածել, իբր թե ես
սովորեցրել եմ Շուրային թոցնել հորից ինչ-որ փող և
այդ փողը ե՛ս եմ պահել:

ԶՎԱՆՑՈՎ Զհամարձակվե՛ս . դիպչել ինձ ..
ցնցել .. Սկանդա՞լ ես ուղում սարքել:

ՏՅԱՏԻՆ Ճիշտն ասած— վատ չէր լինի: Դե,
ևս քեզ հենց կխայտառակեմ է՛լ .

ԶՎԱՆՑՈՎ Զե՛ն տպի: Դուրս կանեն թերթից:

ՏՅԱՏԻՆ (հրելով նրան) Ա՛յ թե անպետքն
ևս

ԶՎԱՆՑՈՎ Ես չպիտեմ, ո՛վ է հնարել այդ
րամբասանքը, բայց ես այն չեմ կրկնել: Փո՛ղ: Ինչ ար-
ժի հիմա փողը: Ես չեմ թաքցնի . քո դիրքն ինձ

համար անսպասելի է: Դու այնքան հմուտ էիր թաքցը-
նում քո համոզմունքները:

ՏՅԱՏԻՆ Դա գործին չի վերաբերում:

ԶՎԱՆՑՈՎ Եվ հանկարծ... Տարօրինակ է:
Դու ինտելիգենտ ես... Մենք ինտելիգենտներ...

ՏՅԱՏԻՆ (ծիծաղելով) Նրանք՝ ինտելիգենտ-
ներ:

ԶՎԱՆՑՈՎ Մենք հանդիսանում ենք այդ եզ-
ների իշխանության օրինավոր հաջորդները ..

ՏՅԱՏԻՆ Ազիտացիա՞ ես մղում:

ԶՎԱՆՑՈՎ Մենք՝ մարդիկս, որոնց համար
իդիոտների ինքնակալությունն այնքան տանջալից էր...

ՏՅԱՏԻՆ Թո՛ղ: Ես հիմարի դեր չեմ խաղում:
Եվ թո՛ղ Շուրային հանգիստ: Դուք այնտեղ հալա-
ծում եք նրան: Տե՛ս, ես խաղաղ մարդ եմ, բայց
մինչև որոշ սահման: (Գնում է բուֆետ)

ԶՎԱՆՑՈՎ (սրբելով դեմքը քաշկիճակով) Ան-
պիտան:

Վարվառան և Դոստիգանը շատ արագ դուրս
են գալիս դահլիճից:

ՎԱՐՎԱՌԱ Իսկ Մելանիա մորաքույրը ո՞նց:
ԴՈՍՏԻԳԱՆՎ Մտածի՛ր, ինքդ գլխի կրնկնես,
խելոքուհի՛:

(Արագ անցավ բուֆետը)

ԶՎԱՆՑՈՎ Ինչի՞ մասին է նա:

ՎԱՐՎԱՌԱ Այդ քեզ չի վերաբերում: Ինչո՞ւ ինձ
չկանչեցիր խորհրդակցության՝ սլարենավորման մա-
սին:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Սիրելի նահանգապետներ: Դուք
ամեն ինչ կարող եք: Եկե՛ք սարքենք...

ԶՎԱՆՑՈՎ (բարկացած) Սա անտանելի՛ է:
(Ազատվեց, գնաց):

ԵԼԻԶԱՎԵՏԱ Դուրս պրծավ նո՛ւ, սարքենք
մի փոքր պար ժաննայի մոտ: Վա՛րյա, հրավիրում
եմ: Աստված իմ, ի՛նչ դեմք է: Այդ ի՞նչ է, սիրելի՛ս,
քեզ ի՞նչ է պատահել..

ՎԱՐՎԱՌԱ Հեռացի՛ր, Ելիզավետա՛:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Զուր տա՛մ:

ՎԱՐՎԱՌԱ Հեռացի՛-ի՛ր ..

Ելիզավետան վազում է բուֆետ, վարվառան
մի ֆանի վայրկյան կանգնած է փակ աչքե-
րով: Մելանիան և Պալլինը՝ դահլիճից՝ վար-
վառան մտնում է ձախ կողմի սենյակը

ՄԵԼԱՆԻԱ Շոգ է: Սիրտ է խառնում: Զանձ-
րացրել է ամեն ինչ, զզվեցրել: Ուժեղ ձեռք է պետք մեզ
բոլորիս վրա:

ՊԱՎԼԻՆ (հառաչելով) «Векую шаташася
ЯЗЫЦЫ»

ՄԵԼԱՆԻԱ Խոսեցի՞ր Պրոկոպիի հետ:

ՊԱՎԼԻՆ Զրուցեցի: Տիպար առավելագույնս
սանձարձակ և շափաղանց մոլի հարբեցողության:

ՄԵԼԱՆԻԱ (անհամբեր) Գործի համար հո
պետք կգա՞:

ՊԱՎԼԻՆ Ոչի՛նչ, պետք չէ արհամարհել հա-
նուն մոլորյալները լուսավորության, բայց...

ՄԵԼԱՆԻԱ Դու պարզ ասա. ոտանավորները
հարմա՞ր են:

ՊԱՎԼԻՆ Ոտանավորները միանգամայն պետ-
քական են, բայց կույրերի համար, իսկ նա... [տե-
սողութուն ունի]:

ՄԵԼԱՆԻԱ Գու, հա՛յր Պավլին, մի կանչեի՛ր
մոտդ ծերուկին՝ Իոսիֆին, մի կարդայիր նրա ոտա-
նավորները և ապա տրամադրեիր, ուսուցանեիր՝ որպես
և ավելի լավ, ավելի խելացի: Հոգևոր տիղմը հո-
ներքևից է բարձրանում, այնտեղ էլ պետք է հան-
գրստացնել այն, իսկ այդ դատարկաբանությամբ այս-
տեղ ինչի՞ կհասնենք: Ինքդ տեսնում ես՝ վաճառա-
կանության մեջ համաձայնություն չկա: Ա՛յ, ո՛նց են
աղմկում բուֆետում, մի տե՛ս...

ՊԱՎԼԻՆ (ականջ դնելով) Գուբինն է աղմը-
կում, կարծեմ: Ներեցեք, հեռանում եմ:

(Բացեց դուռը դեպի դահլիճ, այնտեղից դուրս
է թռչում պաթետիկ նիշ). «Ժողովրդի հուժկու հո-
գին...»:

(Բուֆետի դռներից զլորվելով դուրս են գա-
լիս Գուբինը, Տրոյերուկովը, Լիսոգոնովը. բոլորը
հարբած են, բայց ոչ շատ: Մոկրոուսովը, նրա
ետևից ծերունի սպասավորը, ափսեճ ձեռին,
ափսեի վրա բաժակներ, վագեր, թխվածք):

ԳՈՒԲԻՆ Զո՛ւ, գոռում են՝ հոգի՛, հոգի՛...
Խեղդում են իրար ճառերով: Եվ բոլորը փչում են:
Ա՛ղբ: Իսկ տերտերը դառնացավ կոնյակից մինչև
յաց լինելը: Լալիս է, ծեր սատանա: Ես նրա մոտ
սագեր եմ կրակել:

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ նստենք այստեղ, պատկերի ներքև ..

ԳՈՒԲԻՆ Չեմ ուզում: Այստեղ ամեն տեսակի սրիկաներ են շրջում:

ԼԻՍՈԳՈՆՈՎ Ասացե՛ք, Ալեքսեյ Մատվեևիչ...

ԳՈՒԲԻՆ Չե՛մ ասի: Շատ ես հետաքրքրասեր, արի տես, որ դեռ կանանց ես ճակթում, ա՛:

Տրոյերուկովը ֆրֆշում է: Մոկրոուսովը բաց արեց աչ կողմի դուռը, սպասավորը մտավ այնտեղ:

ԼԻՍՈԳՈՆՈՎ Լեքսեյ Մատվեևի՛չ, մի հարց. կհաշտվե՞նք գերմանացիների հետ, թե՞ դեռ պատերազմենք պիտի:

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ (տխուր) Թագավորը — չկա: Ո՞նց պատերազմել:

ԳՈՒԲԻՆ Ինչո՞վ պատերազմել: Սապոգ չկա: Վասկա Դոստիգաևը Պարֆիչկա Նեստրաշնիի հետ զինվորների համար սապոգներ են մատակարարել կեղև պաղոշներով:

Գնացին դեպի աչ, հյուրասենյակը. Մելանիան խաչակնքում է, նայելով առաստաղին: Դանլինից դուրս են գալիս Նեստրաշնին, Ցելովաներ, հետո՝ Դոստիգաևը:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ավելի քան լսեցի: Բավական է ինձ: Մա՛յր Մելանիա, դու է՛լ շհամբերեցիր:

ՄԵԼԱՆԻԱ Ես այստեղից եմ ճառերը լսում, այնտեղ տոթ է: Ի՞նչ է կատարվում, Պարֆիրի Պետրովիչ, ա՛:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Այստեղ չէ այդ մասին խոսելու
տեղը: Դու մի անցնեիր ինձ մոտ: Վաղը:

ՄԵԼԱՆԻԱ Կարելի է: Ուղարկել է աստված մեր
գլխին այս մորեխը ..

ՆԵՍՏՐԱՇՆԻ Հարկավոր է շուտով Սահմանա-
դիրն հավաքել:

ՄԵԼԱՆԻԱ Ինչիդ է այն պետք:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Մուծիկը կգա: Նա առանց տի-
րոջ ապրել չի կարող:

ՄԵԼԱՆԻԱ Մուծիկը: Մուծիկն էլ է բունտ
անել սովորել: Նա էլ է գողգողում, քո մուծիկը:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Իսկ մենք նրա կոկորդը հողով
կլցնենք: Մի քիչ հող տալ նրան, նա էլ...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ենթադրենք, Պարֆիշա, որ կո-
կորդները մենք խցկեցինք, մուծիկի փորը պինդ լըց-
րինք, իսկ ի՞նչ անել նրանց հետ, ում ուղեղն է ցընց-
ված: Ահա հարցը:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Այդ դու, գործարանատե՛ր, էլի
բանվորների մասի՞ն ես երգում:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ա՛յ հենց այդ: Ես գործարանա-
տեր եմ, դու՝ նավատեր, որոշ գործերում մենք կոմ-
պանիոններ ենք, բայց երևում է, այնուամենայնիվ,
որ արջը արջին հարևան չի:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Թո՛ղ: Բոլորը գիտեն, որ դու
սրախոսություններով հարուստ ես:

ՄԵԼԱՆԻԱ Վեց-յոթը թվականներին ձեզ ցույց
է տված, թե բանվորների հետ ո՞նց է հարկավոր...
Մոռացե՛լ եք:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Դոստիգաևը, բացի իրենից, ոչինչ
չի հիշում...

ԴՈՍՏԻԳԱԵՎ (հեզնանֆով) Դա միանգամայն
անհնարին է՝ իր մասին մոռանալ: Նույնիսկ սրբերը
չեն մոռանում: Մեկ էլ տեսար աստծուն հիշեցրին, որ
իրենց տեղը դրախտում է:

ՄԵԼԱՆԻԱ Դատարկաբանե՛ց, քշե՛ց: Սրբա-
պղծությունը սովորել ես Եգոր Բուլըշովից, հերետի-
կոսի՛ց...

ԴՈՍՏԻԳԱԵՎ (հեռանալով) Նո՛ւ, գնամ, լռեմ,
լեզուս սրեմ:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ճիզվի՛տ: Շրջում է, հոտոտում,
հաշիվ է անում՝ որին ո՛ւմ շահավետ է ծախել: Է՛խ,
շատ կան այդպիսի... սրիկաներ մեր շրջանում:

ՄԵԼԱՆԻԱ Ուժե՛ղ ձեռք է պետք, Պարֆիրի,
երկաթե՛ ձեռք: Իսկ նրանք— ա՛յ թե ինչպես...

Դուրս է գալիս Գուրիներ, նրա ետևից՝ Տրոյե-
րուկովը, Կսոզոնովը:

ՏՐՈՅԵՐՈՒԿՈՎ Չգնա՛ս:

ԳՈՒՐԻՆ Գնա՛նք, ես ուզում եմ ճառ ասել: Ես
նրանց կասեմ, հիմարներին...

Տեսավ Նեստրաշնուն, նայում է նրան լուռ նա
կանգնած է, ձեռնափայտը ետևը պահած, մեջ-
ֆով հենված պատին: Մի ֆանի բոպե բոլորը
լուում են, և լսելի է խուլ ձայն դահլիճում.
«Հուժկու, անկեղծ, արմատական ուժեր, դասեր,
որոնք...»:

ԳՈՒՐԻՆ (կարծես զգաստանալով) Ա՛-ա՛-ա՛...
Պարֆիրի՛: Վաղուց շենք հանդիպել: Ո՞նց է, եղբա՛յր,

քշեցիր ինձ քաղաքագլխությունից, իսկ հիմա քեզ էլ քշեցին: Էն էլ ով քշեց՝ ա՞:

ՄԵԼԱՆԻԱ Լեքսեյ Մատվեևիչ, ժամանա՞կն է արդյոք հին վիրավորանքները վերհիշելու:

ԳՈՒԲԻՆ Լոիր, մորաքո՛ւյր: Ի՞նչ ես, շո՛ւն, ինձ նայում: Վախենո՞ւմ ես:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ես հիմարներից շեմ վախենում, իսկ ավազակների հանդեպ ուժ կճարվի...

ԳՈՒԲԻՆ Չե՞ս վախենում: Ստո՛ւմ ես... Հիշո՞ւմ ես ոնց Եզոր Բուլըշովը ռեխիդ տվեց...

ՆԵՍՏՐԱՇՆԻ Կորի՛, հարբեցո՞ղ... (Ձեռնափայտը ֆաշեց)

ՄԵԼԱՆԻԱ Ուշքի եկեք...

ԳՈՒԲԻՆ (գոռում է) Նո՛ւ, լա՛վ: Ե՛կ հաշտվենք, Պարֆիշկա: Շան որդի... նո՛ւ, մի բան է: Տո՛ւր ձեռքդ: (Խլեց ձեռնապայտը Նեստրաշնուց):

Դուրս թռավ Մոկրոուսովը Բուֆետի դռնից դուրս եկավ ինչ-որ մարդ և խիստ. «Պարոնայք, կամաց»: Տրոյերովովը սեղանի մոտ նստած, ինֆնամոռացության մեջ ընկած, հիանում է դիմանկարով Նեստրաշնին ուզում էր գնալ դահլիճ. Գուբինը բռնեց նրա օձիֆից:

ԳՈՒԲԻՆ Չե՞ս ուզում հաշտվել: Ինչո՞ւ, ա՞: Ի՞նչ է, ես քեզանից վատ եմ: Ես՝ Լիքսեյ Գուբինս, մտով ու արյունով ամենամաքուր մուժիկս, իսկական Ռուսաստան...

ՆԵՍՏՐԱՇՆԻ Թո՛ղ, շո՛ւն...

ԳՈՒԲԻՆ Ես քո գլուխը կքորեմ:

ՄՈԿՐՈՈՒՄՈՎ (բռնելով *Գուրիների ձեռք*) *Թույլ*
սովեք Այս ի՞նչ եք դուք անում:

ՄԵԼԱՆԻԱ (բուֆետի դռան մոտ կանգնած
մարդկանց) *Բաժանեցե՛ք դրանց, չե՛ք տեսնում,*
ի՛նչ է:

ԳՈՒԲԻՆ (հրելով Մոկրուսովին) *Ո՞ւր ես*
բշում: Ո՞ւմ վրա ես ձեռք բարձրացնում ա՞:

Նեստրաշնին մտածում է դուրս պրծնել *Գուրի-*
ների ձեռներից՝ անհաջող Ադամովի վրա դահլի-
նից, բուֆետից դուրս են գալիս մարդիկ, նրանց
բվում Դոստիգաևը՝ ինչ-որ թղթեր ձեռքին.
Դահլիներից հապշտապ անցնում է Բետյինգը՝
ժաննայի հետ թևանցուկ, նա վախեցած է

ԵԼԻՉԱՎԵՏԱ (ինչպես միշտ, ուրախ, մոտ վա-
զից ամուսնուն, հարցնում է) *Մի՞թե կովում են:*

Ամուսինը, թղթերը ձեռին, բափահարում է:
Մոկրուսովը կաստետով խփեց *Գուրիներն՝* ար-
մունկից ներքև:

ԳՈՒԲԻՆ (հառաչելով, թողևց *Նեստրաշնուն,*
զոռում է) Այդ ո՞վ ինձ: Ո՞վ է, սատանանե՛ր: Գու-
րիներին: Խփե՛լ: (Բռնում են նրա ձեռները, շրջապա-
տում են, տանում են բուֆետ. նա մոնչում է) Կվա-
ռե՛մ... Կյանքի՛ց կղրկե՛մ...

Դահլիներից, ամբոխի միջով, հայտնվում է Օլգա
Չուգունովան, գառամյալ պառավ, մութ ակնո-
ցով, նրան, թևանցուկ տանում են նրա որդի
Սոֆրոնը, 50-ից անց, և մյուսը՝ Կոնստանտին-
ը, մոտ նույն տարիքի: Երկուսն էլ երկար,

ծնկներից վար, սյուրտուկներով, երկարանիտ կոշիկներով: Այդ մուսյլ կերպարանքները հասարակության վրա թողնում են ննչող տպավորություն.

ՄԵԼԱՆԻԱ Բա՛րե, Օլգա Նիկոլաևնա:

ՉՈՒԳՈՒՆՈՎԱ Իսկ ո՞վ է սա: Կարծես Մելանիա՞ն է: Կացեք, երեխեք: Ո՞ւր գնաց Սոֆրոնը:

ՍՈՖՐՈՆ Ձեզ բազկաթոռ, մայրի՛կ:

ՉՈՒԳՈՒՆՈՎԱ Կոնստանտինը կտա, ես քեզ չեմ հրամայել: Ի՞նչ կա, մա՛յր Մելանիա ա՞: Ինչ-որ բան է կատարվում: Հապա մի նայի՛ր: Նոտարները և իրավաբանները խոնարհ ծառայում էին վաճառականությանը, իսկ հիմա նույնիսկ հավասարվել շեն ուզում, այլ հրամայել են ուզում մեր դասին, ա՞: Զորապետներ էն իրենց հայտարարում .. Ի՞նչ ես լռում... Դու մեզանում ժիր էիր, խելացի, տնտեսվար .. Մեզ օտար չես, մեր ոսկորից, մսից ..

ՄԵԼԱՆԻԱ (խուպոտ) Ի՞նչ ասեմ:

ԵԼԻԶԱՎԵՏԱ (ամուսնուն) Ի՞նչ զզվելի պառաավ է...

ՄԵԼԱՆԻԱ (շատ բարձր) Ասում էի ես, ասում եմ...

ԴՈՍՏՈՒԳԱԵՎ Նրանից, այդ պառավից, ամբողջ քաղաքն է վախենում:

ՉՈՒԳՈՒՆՈՎԱ Գոռա՛, գոռալով գո՛ռա: Զանգերը խփել է հարկավոր: Քաղաքի շուրջը զանգերով շրջե՛լ է հարկավոր...

ԵԼԻԶԱՎԵՏԱ Հիմարություններ, գնա՛նք:

ԳՈՍՏԻԳԱԵՎ (թևանցուկ անելով) Գնացինք...
Օ՛խ, լիզուկ: Հայացքներ չկան, հայացքներ:
ԶՈՒԳՈՒՆՈՎԱ Բոլորդ գոռացեք... Արար աշ-
խարհո՛վ հարկավոր է գոռալ:
ՄԵԼԱՆԻԱ Իսկ ո՞ւր է նա — աշխարհը: Չկա —
աշխարհը...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Բույրչովի տանը: Ուշ երեկո՝ ճաշասենյակ: Սե-
ղանի վրա՝ ինճաեռ: Գլաֆիրան շապիկ է
կարում: Տախյան թերթում է «Նիվայի» կազմը-
ված կոմպլեկտը:

ՏԱԻՍՅԱ Այդ իսկապե՞ս այդպիսի քաղաք կա՝
Ալեքսանդրիա, թե՞ միայն պատկերք է հնարած:

ԳԼԱՑԻՐԱ Քաղաք կա:

ՏԱԻՍՅԱ Մայրաքաղա՞ք:

ԳԼԱՑԻՐԱ Չգիտե՛մ:

ՏԱԻՍՅԱ Իսկ մենք հո երկու մայրաքաղաք
" նենք:

ԳԼԱՑԻՐԱ Երկու:

ՏԱԻՍՅԱ Հարո՞ւստ ենք մենք (հառաչելով):
Ա՛հ ի՛նչ սրիկաներ են:

ԳԼԱՑԻՐԱ (ծիծաղելով) Բարկացկո՞տ օրիորդ
ես դու...

ՏԱԻՍՅԱ Ե՞ս: Ես— այդպես եմ... Ո՛ւխ: Ես բոլո՛ր մարդկանց կխառնեի, կխճճեի բամբասանքներով ու հնարքներով այնպե՛ս, որ նրանք բոլորը կրժոտեին, հոշոտեին իրար:

ԳԼԱՖԻՐԱ Էդ ինչի՞ է հարկավոր:

ՏԱԻՍՅԱ Հենց այնպե՛ս .. Հարկավոր է: Նկարներ, հո ա՛յ լավ են հնարում, իսկ ապրում են, ինչպես կեղտոտ շներ:

ԳԼԱՖԻՐԱ Բոլոր մարդիկ մի տեսակ չեն, ոչ էլ բոլորն են քո մայրապետին նման:

ՏԱԻՍՅԱ Ինձ համար— մի տեսակ են:

ԳԼԱՖԻՐԱ Քեզ, Տաի՛սյա, սովորել է հարկավոր, հարկավոր է գրքեր կարդալ:

ՏԱԻՍՅԱ Չեմ սիրում ես կարդալ:

ԳԼԱՖԻՐԱ Կան շատ լավ գրքեր՝ տերերի, բանվորների մասին:

ՏԱԻՍՅԱ Ես բանվոր չեմ, դե տիրուհի էլ չեմ դառնա, ո՞վ ինձ կնուխջան կառնի: Իսկ օրիորդը՝ տանտիկնուխջունն չի անում: Ինձ կարդալ ծեծով էլ են սովորեցրել: Ճիպոտով էլ են ձաղկել, երեսիս են տվել, մազերիցս են քաշքշել— սովորեցրի՛ն: Սաղմոս, ժամագիրք, վարք սրբոց: Ավետարանը հետաքրքիր է, միայն թե ես հրաշքների չեմ հավատում: Քրիստոսն էլ դուր չի գալիս, սրբեր շատ եմ տեսել, զահլես տարել են: (Պաուզա) Դու ի՞նչ ես ինձ հետ ժլատ խոսում: Վախենում ես, որ ես քո ճառերը մայրապետի՞ն կհայտնեմ:

ԳԼԱՖԻՐԱ Ես վախկոտ չեմ: Ես քիչ բան գիտեմ, դրա համար էլ լռում եմ: Դժու, ա՛յ Դոնատի հեղ խոսեիր:

ՏԱԻՍՅԱ Ի՞նչ հետաքրքրություն, ծերունու հետ...

ԴՈՆԱՏ (Կացիներ ձեռին, մի արկղ հյուանի գործիքներ կոնատակին) Նու, նորոգեցի: Իսկ կտուրում ի՞նչ կա:

ԳԼԱՅԻՐԱ Դուռը ճոռում է: Զվանցովներին խանգարում է քնել:

ԴՈՆԱՏ Լապտերը տո՛ւր: Պրոպոտեյն էլ տնկվել է խոհանոցում, նա ի՞նչ է ուզում:

ԳԼԱՅԻՐԱ Մայրապետին է սպասում:

ԴՈՆԱՏ Դու նրան թեյ հյուրասիրեիր: Ուտելիք տայիր, արի տես, որ քաղցած է...

ԳԼԱՅԻՐԱ Տեսնել շեմ կարող նրա վայրենի մոտիթը...

ԴՈՆԱՏ Դու էլ մոտիթին մի նայիր, բայց ուտելիք տուր: Դու ինձ լսիր, զուր տեղը շեմ խընդրում: Լավ, կկանչեմ նրան:

ԳԼԱՅԻՐԱ Քո գործն է:

Դոնատը գնաց

ՏԱԻՍՅԱ Ա՛յ, ասում ես Դոնատը լավն է, իսկ նա խաբեբայի հետ է ընկնում, ժուլիկի:

ԳԼԱՅԻՐԱ (հաց է կտրում) Դրանից Դոնատին վատ բան չի պատահի:

ՏՅԱՏԻՆ (հագնված է, ինչպես զինվոր. գլուխը մախուր խուզած, ուսերին հին շիներ) Շուրան տա՞նն է:

ԳԼԱՅԻՐԱ Իր սենյակում է: Կալմիկովան է այնտեղ...

ՏՅԱՏԻՆ (վերցնում է մի կտոր հաց) Նկարներ ես նայում, Տայա՛:

ՏԱԻՍՅԱ (ամաշկոտ ծպտում է, բայց խոսում է կոսլիտ) Ինչ ասես չկա այս գրքում, բայց արի տես, որ բոլորն էլ հնարած է զվարճության համար:

ՏՅԱՏԻՆ Իսկ, ա՛յ, Ալպյան լեռները քո կարծիքով, նո՛ւյնպես հնարած են:

ՏԱԻՍՅԱ Նու, լեռներն հենց միանգամից երեվում է որ հնարած են: Ա՛յ, նրանց վրա ձյուն է ցույց տված. նշանակում է՝ ձմեռ է, իսկ ներքևում ծառերը ծաղկում են և մարդիկ էլ ամառային զգեստով են: Սա հիմարի շինած է:

ՏՅԱՏԻՆ Այդ հիմարին բնություն են անվանում, իսկ դուք՝ եկեղեցականներդ, նրան անուն եք տվել՝ աստված: (Գլաֆիրային) Յակովը որ գա, դու նրան, Գլաշա մորաքույր, ուղարկիր ինձ մոտ, կտուրը:

ՏԱԻՍՅԱ (նայելով նրա ետևից, հառաչելով) Տեսքից — խաղաղ է, սուսիկ-փուսիկ, իսկ խոսքերով՝ անզգամն է: Աստծուն հիմար անվանեց, նույնիսկ սարսափելի է լսել:

ԳԼԱՖԻՐԱ Նա քեզ դուր է գալիս:

ՏԱԻՍՅԱ Ոչինչ, լավն է: Մաղերով ավելի գեղեցիկ էր: Լավն է և առանց մաղերի: Եվ ամեն ինչի մասին խոսում է շատ հասկանալի: (Հառաչելով) Միայն բոլորը այնպես չի ասում:

ԳԼԱՖԻՐԱ Նրա հետ հաճախ խոսեիր, նա քեզ լավի կսովորեցնի:

ՏԱԻՍՅԱ Նու, ես հիմար չեմ, գիտեմ ինչ են սովորեցնում տղաներն աղջիկներին: Մեզանում անցյալ տարի երկու կույսեր սովորեցին — հղիացան:

ԳԼԱՅԻՐԱ Դու էլ, աղջիկս, էդ բանից չես
խուսափի: Սերը մարդկանց արմատից է տրված:

ՏԱԻՍՅԱ Աիրո մասին տե՛ս երգերում ո՛նց
են դարձր լալիս: Փայփայեց, փայփայեց ու փախավ.
սա սեր չէ, այլ շան զվարճալիք:

ԳԼԱՅԻՐԱ Դու բնավորություն ունես, խեղճ էր
պետք մի փոքր:

ՏԱԻՍՅԱ Խեղճ ես բավականին ունեմ:

Դո՞նաւր և Պրոպոտեյր՝ գյուղական զգեստով,
տրեխներով, շի տարբերվում հասարակ մուծի-
կից, խոժոռ շուրջն է նայում:

ԴՈՆԱՏ Նստի՛ր

ՏԱԻՍՅԱ Ոնց է կերպարանափոխվել: Ֆոկուս-
նիկ:

ՊՐՈՊՈՏԵՅ Էս աղջկա մոտ ես չեմ խոսի, նա
մայրապետի լրտեսն է:

ՏԱԻՍՅԱ (զայրացավ) Ես փողոցային աղջիկ
չեմ, ժո՛ւլիկ: Եվ չե՛մ գնա: Կլսեմ բոլորը և կասեմ:
Նա քեզ ցույց կտա...

ԴՈՆԱՏ Դու, աղջի, խելոք եղիր, գնա, դո՛ւ էլ,
Գլա՛խա...

ԳԼԱՅԻՐԱ (խիստ) Գնանք- Տաի՛սյա:

ՏԱԻՍՅԱ Իսկ ես չեմ ուզում: Ինձ հրամայված
է ձեզ հետևել: Ամեն ինչ լսել: Կվոնդեք, ես նրան
կասեմ՝ վոնդեցին, նշանակում է քո դեմ գաղտնիք-
ներ են եղել:

ԴՈՆԱՏ (բնօր) Սիրելի՛ս, փոշտա՛մ մայրա-
պետիդ վրա: Դու— հասկացի՛ր. մարդիկ թագավորին

քշեցին, շվախեցան, իսկ դու նրանց մայրապետո՞վ
ես վախեցնում, հիմարո՞ւմ: Հապա գնա...

ԳԼԱՖԻՐԱ Մի՛ հիմարանա: Դու, ինչ է, մայ-
րապետի համա՞ր ես ապրում:

ՏԱԻՍՅԱ Իսկ ո՞ւմ համար: Նու, ասա: Այ,
դու ինքդ էլ շգիտես:

Լապտեր դռներում.

ՊՐՈՊՈՏԵՅ Փոքրիկ է օձը, բայց թունավոր է:
ԴՈՆԱՏ Ահա՛ և Յաշան: Նու, ճի՛շտ ըոպեին
եկար: Այ, էս մարդը...

ԼԱՊՏԵՎ Կարծես թե ես նրան գիտեմ...

ՊՐՈՊՈՏԵՅ Ինձ ճանաչելը զարմանք բան
չէ: Ես, անտուն շան պես, տասնյոթ տարի է մարդ-
կանց ոտների տակ եմ ֆոռում...

ԴՈՆԱՏ Սա Պրոպոտեյն է ..

ԼԱՊՏԵՎ Սուրբ երանելի՞ն . Այսպե՛ս . Լավ
ես, քեռի՛, դատարկ բաներ հնարում ..

ՊՐՈՊՈՏԵՅ Այդ ես չեմ: Դա մի տերտեր էր
ծայրամասից, հարբեցող: Իոսիպ էր անունը: Հայտ-
նի սագ պահող էր...

ԼԱՊՏԵՎ Նու, երևի ինքդ էլ ես հնարո՞ւմ...

ՊՐՈՊՈՏԵՅ Սկզբում ինքս, միայն թե այնքան
էլ գրագետ չեմ ես: Բերանացի եմ սովորել... Ոտա-
նավորներ, այսինքն: Գիշերային տներում, վանքերում...

ԴՈՆԱՏ Իսկ ինչո՞վ էիր զբաղվում առաջ,
մինչև երանելի դառնալդ:

ԼԱՊՏԵՎ Մինչև հիմարությունը:

ՊՐՈՊՈՏԵՅ Ձիու հեքիմ էի: Իմ հայրն էլ ձիու
հեքիմ էր: Նրան երկու թվին խարկովի նահանգա-

պետը ծեծեց... հրամայեց ծեծել, հինգերորդ օրը դրանից հետո, հորս աղիքներումը ջիղը ճաքեց, արնահոս եղավ: Իսկ ես դեռ առաջ, երեք տարի կլինեի, սուրբ էի դառել .. Ա՛յ ինչ... չգիտեմ, ձեզ ո՛նց կոչեմ ..

ԴՈՆԱՏ Մարդիկ:

ԼԱՊՏԵՎ Քաղաքացիներ:

ՊՐՈՊՈՏԵՅ Դուք գլխիս փորձանք չե՞ք բերի:

ԴՈՆԱՏ Դու մի՛ կասկածի, պատմի՛:

ՊՐՈՊՈՏԵՅ Ինձ մի թափառական, կարգալուծ սարկավազ խորհուրդ տվեց. մարդիկ, ասում է, հիմար են, նրանց պիտի աստծու վրա հեծած մոտենաս, միայն թե անհասկանալի լինի, սարսափելի, նրանք այդ բանի համար հեշտությամբ կուտացնեն, կխմացնեն: Նու... Դուրս եկավ ճիշտ է. հիմա՛ր են մարդիկ, էն էլ էնպե՛ս, որ շատ անգամ ի՛նքդ ես նրանց տեղ ամաչում: Մեկ-մեկ էլ խղճում ես: Ապրում ես կուշտ, հարբած, քիթդ ծխախոտում, փողը գրպանումդ, իսկ շուրջդ՝ թշվառություն: Երբ որ փորդ լիքն է՝ մնացածը ամեն բան հե՛չ: (Խոսում է ավելի խիստ ու խոժոռ): Համա թե, էլի խիղճդ տխուր է: Ես ամբողջ Ռուսաստանը վերից վար ման եմ եկել և ամեն տեղ թշվառություն է, ո՛ւխ, ինչպիսի: Թափվում է թշվառության մուրը, ինչպես Վոլգայի ջուրը, հաղարավոր վերստեր ամբողջ երկրի վրա: Մարդկային կերպարանքն է սրբում մարդկանց վրայից: Իսկ ես, ուրեմն, երանելիություն եմ անում, սարսափեցնում եմ: Երբ դեմ ես առնում որեէ խելացի մարդու, ասում ես՝ ի՛նչ ես դու, քո մերը... ներեցե՛ք:

ԼԱՊՏԵՎ Ոչի՛նչ: Փչի՛, ծանոթ խոսքեր են:

ՊՐՈՊՈՏԵՅ Ընտելացել եմ մուծիկներին: Ասում էի հաճախ. երկա՞ր պիտի համբերեք: Վառի, ճնշի ամեն բան շորս կողմդ: Հիմա, այո՛, ինչ որ սկսվում է: Եվ զզվել, ձանձրացել եմ երանելի լինելուց:

ԼԱՊՏԵՎ էդպե՛ս:

ԴՈՆԱՏ Սարսափեցրիր, սարսափեցրիր մարդկանց, վերջը՝ ինքդ էլ վախեցար:

ՊՐՈՊՈՏԵՅ էդպես մի բան: Թեկուզ ինձ համար, կարծես թե վախենալու բան չկա, ես խփած թուլթ եմ, ինձանով էլ խաղ չես խաղա: Իսկ նրանք ուզում են խաղան: Այ ես քեզ մոտ . ձեզ մոտ եմ եկել . (Դոնատին) Դուք ինձ հիմա շատ եք գրավում ձեր վստահությամբ դեպի մարդիկ: Ես աղյուսի գործարանում երկու անգամ ձեր զրույցը լսել եմ: Ձեզ էլ, ընկե՛ր, լսել եմ Տրոյերուկովի ջրաղացում, Դոստիգաևի մահուդի գործարանում, քաղաքային այգում: Հիանալի, հասկանալի եք խոսում ժողովրդի հետ: Նու, տերերին էլ եմ լսել .

ԼԱՊՏԵՎ Իսկ նրանք ոնց, դուր գալի՞ս են:

ՊՐՈՊՈՏԵՅ Ի՛նչ ասես, իհարկե, կարող է տերերն էլ ամոթահար են: Համա թե նրանք իրենց սպողոզները իմ տրեխների հետ չեն փոխի:

ԼԱՊՏԵՎ էդ դժվար թե: Նու, իսկ ի՞նչ գործունես մեզ հետ:

ԴՈՆԱՏ Նա գործ ունի: Հապա մի կարդա՛...

ՊՐՈՊՈՏԵՅ (կանգնեց, կուացավ փաթաթանների տակից հանեց մի թուղթ, բացեց, կարդում է երգելով և նայելով թղթին) —

Մարդիկ, որ խոռոված եք,
Սատանայից գերված եք,

Անվերջ տանջանքների մատնված եք:
Հսեցե՛ք այս խոսքը
Մաքուր սրտից ելած,
Աստժո բանականությունից ձեզ առաքած...

Սա, այսպես ասած, կրկներգը կլինի իսկ հետո ուրիշ
Էղանակ: (Հազաց, իջեցրեց ձայնը):

Երեք քաղաքի վրա աստված բարկացել է,
Նա Սողոմն ու Գոմորը հրով այրեց,
Իսկ Պիտեր քաղաքի վրա օձ ուղարկեց,
Իսկ այդ հրեշ-օձը ահավոր է,
Նա խորամանկ է, արյունարբու է,
Անունը հեղափոխություն է,
Նա սատանայի հարազատ դուստրն է,
Եվ խժռում է նա — օրը հարյուր գլուխ,
Օ՛խ, հարյուր գլուխ, մարդկային գլուխ,
Արդար ժողովուրդ ուս և ուղղափառ...
ՀԱՊՏԵՎ նու, բավական է:

ՊՐՈՊՈՏԵՅ էստեղ դեռ շատ կա:

ՀԱՊՏԵՎ էդ երգիդ համար բանվորները գլուխդ
կթռցնեն:

ՊՐՈՊՈՏԵՅ էդ պատճառով էլ անհանգստա-
նում եմ... Իսկ դո՞ւք ովքեր եք: Ձեր կողմից ի՞նչ
սպասեմ:

ՀԱՊՏԵՎ Տեսնե՛նք: էդ կախված է քեզանից:

ՊՐՈՊՈՏԵՅ Ախր, ե՞ս ինչ անեմ:

ՀԱՊՏԵՎ Հապա մի թուղթը տո՛ւր: (Վերցրեց

Դոնատին) Տյատինը եղե՛լ է

ԴՈՆԱՏ Նա էստեղ է:

ՔՍԵՆԻԱ (զայիս է) Տե՛ր իմ... Այս ո՞վ է,

օ՛յ, Պրոպոտեյ: Այդ... Դու այդ ո՞նց համարձակվե-

ցիր... Յակով, աստծուց վախեցիր: Դոնատ, ի՞նչ բան է սա...

ԼԱՊՏԵՎ Միք գոռա, մամաշա, ի՞նչ կա:

ՔՍԵՆԻԱ Դե ի՞նչ եք դուք տուն բերում դանազան... էդպիսի... Ամեն օր մեկը տնկվում է: Եվ հայտնի չէ, ո՞վ է, և անհայտ է՝ ինչո՞ւ Ոնց որ տրակտիր են գալիս: Ախր, նա, Պրոպոտեյը, նա քո կնքահորն սպանեց... Մոռացե՞լ ես դու:

ՊՐՈՊՈՏԵՅ (փնթփնթում է) Սպանե՛ց .. Ես շատ վաճառականների եմ վախեցրել, սարսափեցրել՝ չեն մեռել:

ՔՍԵՆԻԱ Եվ մի՛ փնթփնթա, շհամարձակվե՛ս: Փշո՞ւմ ես հենց, խարեբա՛, փշո՞ւմ ես: (Սաստում է մատով):

ՊՐՈՊՈՏԵՅ Իսկ ո՞վ է սովորեցրել փշել: Քո քո՛ւյրն է սովորեցրել:

ԴՈՆԱՏ Ի՞նչ անենք, Յակով:

ԼԱՊՏԵՎ Գնա՛ խոհանոց . Ո՛չ, լավ է՝ Գլաֆիրայի մոտ: Ես իսկույն կգամ Տյատինի հետ:

Դոնատը և Պրոպոտեյը գնացին

ՔՍԵՆԻԱ Տերտերը ժամասացությունը վազելով էր կատարում, երևում է թուղթ խաղալու էր վոագում: Տուն եկա՝ տանը երգեր են մոնչում: Օխ, Յակով, աստված քեզ խի՛ստ կդատի...

ԼԱՊՏԵՎ Ա՛յ ինչ, մամա՛շա...

ՔՍԵՆԻԱ Չե՛մ էլ ուզում քեզ լսել: Եվ ես քեզ մամաշա էլ չեմ: Ալեքսանդրային դու և Տյատինը բոլորովին ավազակ դարձրիք:

ԼԱՊՏԵՎ Տյատինը՝ նա կարող է ավազակներ
պատրաստել: Դա նրա սիրած գործն է:

ՔՍԵՆԻԱ Հենց այդ է, է՛:

ԼԱՊՏԵՎ Թեև Շուրան մինչև Տյատինն էլ ան-
ղգամ աղջիկ էր: Այ ինչ, դուք— հոգով բարի՛ եք...

ՔՍԵՆԻԱ Հիմար եմ, այդ պատճառով էլ բա-
րի եմ: Իսկ խելոքները՝ այ ինչպես են նրանք,
Զվանցովները հենց ..

ԼԱՊՏԵՎ Խոստացաք ինձ տալ հայրիկի հրա-
ցանը և նրա շորումորը...

ՔՍԵՆԻԱ Հա, վերցրո՛ւ: Վերցրու, քանի դեռ
Վարվառան չի ծախել: Նա ամեն ինչ ծախում է,
ամե՛ն ինչ...

ԼԱՊՏԵՎ Դուք այդ ամենը Գլաֆիրային տվեք,
լա՞վ: Զվանցովները որտե՞ղ են:

ՔՍԵՆԻԱ Բետլինգների մոտ: Իսկ Վարվառան
մտածում է Մոսկվայում ապրել: Բետլինգը սիրուհու
հետ այնտեղ է գնում, նու նա էլ...

ԼԱՊՏԵՎ Այդ-պե՛հ՛ս: Նո՛ւ ես գնացի...

ՔՍԵՆԻԱ Սպասի՛ր, նստիր ինձ հետ: Իսկ քույ-
րիկս, լսել ես, կովել է արքեպիսկոպոսի հետ: Ասում
են՝ վռնդել է նա նրան, դոփել է ոտքերով...

ԼԱՊՏԵՎ Դոփե՛լ է: Ոտքերո՞վ: Ա՛յ-յա՛յ-ա՛յ...
Իսկ ինչի՞ համար այդ:

ՔՍԵՆԻԱ Է՛լ շփտեմ:

ԼԱՊՏԵՎ Զարհուրելի բաներ: Ցըտեսությո՛ւն...

ՔՍԵՆԻԱ Դե սպասի՛ր: Փախա՛վ... (Նայում է
շուրջը) Մարդ՝ շատ, իսկ ես՝ մեն-մենակ, կարծես
թե կատու եմ, ոչ թե մարդ:

Գլաֆիրան մտավ, բարկացած վերցրեց ինֆնա-
նոր:

ՔՍԵՆԻԱ Ա՛յ դու ոնց... Ամեն բան աղմու-
կով, որոտով: Մի՛ տաքացրու, թեյ չեմ ուզում: Կուտեի
որևէ բան... անսովոր: Սպասի՛ր ո՞ւր ես վազում: Մի
աղցան լինեի փորոտիքով, աղի վարունգով... Բայց
փորոտիք չկա .. Եվ ոչինչ չկա. փող շատ կա, իսկ
ամբողջ ուտելիքը զինվորներին տվին: (Գլաֆիրան
բաժակներն է լվանում) Ո՞նց պիտի ապրենք: Մեռ-
նեի, եթե, իսկ մեռնել չեմ ուզում: Դու ի՞նչ ես լռել:

ԳԼԱՖԻՐԱ Ես ի՞նչ ասեմ: Քիչ եմ ես հաս-
կանում՝ բարձր խոսելու համար:

ՔՍԵՆԻԱ Ես էլ ոչինչ չեմ կարողանում հաս-
կանալ: Ես էլ ոչնչի մասին չգիտեմ մտածել, բացի
տնային բաներից: Իսկ դու ստում ես, որ չես հասկա-
նում: Դու խելոք ես, դրա համար էլ քեզ սիրում էր
հանգուցյալ Եգորը:

ԳԼԱՖԻՐԱ Էլի՛ դու էդ մասին ..

ՔՍԵՆԻԱ (մտածկոտ) Այո՞-ո՞ո՞... Այդ մա-
սին: Իմ ամուսնու սիրուհին էիր, իսկ իմ սիրտը քո
դեմ լարված չէ:

ԳԼԱՖԻՐԱ (կրֆոտ) Ջարդել, փշրել է հարկա-
վոր ամեն բան, ինչ որ կա, որ հառաչեին, ոռնային
բոլորը, ով կյանքը չի իմանում, և բոլո՛ր ժուլիկնե-
րը, շարշարողները, անխիղճ սրիկաները... աշխարհի
զզվանքը...

ՔՍԵՆԻԱ (վախեցած) Օ՛յ, ի՞նչ ես դու... Ի՞նչ
ես դազանացել... Խո՞սք ասել քեզ չի կարելի...

ԳԼԱՖԻՐԱ Ձեր վրա չեմ շարացել, ո՛չ ձեր
վրա... Դուք — ի՞նչ: Դուք անշառ եք: Ձեր հոգին է՛լ
են հանել: Միթե դուք մարդավարի ապրե՞լ եք:

ՔՍԵՆԻԱ Նու, էդ մեկը ների՛ր: Ապրել եմ,
ինչպես բոլոր մարդիկ ..

ԳԼԱՅԻՐԱ էդ մասին շեմ ասում... Ա՛յ Տախ-
յան . Ինչքա՛ն են գազանացրել աղջկան: Հաշման-
դամ են դարձրել... Մինչև կյանքի վերջը...

ՔՍԵՆԻԱ Այդ ո՞վ է մարդավարի ապրում:
Զվանցովներն ի՞նչ է: Նրանք լոկ մի բանի մասին են
մտածում, թե ոնց քեզ տնից քշեն և մեկ էլ ոնց Շու-
րային վնասեն և իսկական աղաներին կպշեն...

ԳԼԱՅԻՐԱ էխ, էդ բոլորը է՛ն շի, է՛ն մասին
շի .. (Խլելով ինֆնաեռը, գնաց):

ՔՍԵՆԻԱ (շուրջը նայելով) Ո՛նց շարացավ:
Ո՛չ մի բան իր տեղը չի: Ինչպես տոնից առաջ տուն
են հավաքում: (Կանգնեց, գնում է իր սենյակը):
Կամ ուրիշ բնակարան են ուզում փոխադրվեն:

Դոճատ և Ռյաբինին՝ 40-ից անց մի մարդ,
մի փոքր ճաղատ, եղել է գանգրահեր: Խոսում
է շտապելով, հումորով: Միշտ կամ ծխում է,
կամ մախորկա փաթաթում, կամ պահում է ձեռ-
ֆին որևէ իր, խաղալով նրա հետ:

ՔՍԵՆԻԱ Տե՛ր իմ, էլի՛, Դոճա՛տ, ինչ-որ մարդ
ևս բերել:

ՌՅԱԲԻՆԻՆ Բարև ձեզ, տիրուհի՛: Ես ջրմու-
ղագործ եմ:

ՔՍԵՆԻԱ Ցերեկը գայիր...

ԴՈՆԱՏ Ժամանակ շուներ ցերեկը նա...

ՌՅԱԲԻՆԻՆ Ես միայն տեսնեմ ինչ կա, իսկ
աշխատանքը վաղն եմ անելու:

ՔՍԵՆԻԱ (գնալով) Կիրակի օրով: Անհավատ-
նե՛ր: Անաստվածնե՛ր:

ՌՅԱԲԻՆԻՆ Բարկացկո՛տն է: Ուրեմն որոշե-
ցինք. առավոտ ժամը վեցին ուղարկիր մեր զինվոր-
ներին, նրանք կվերցնեն ալյուրը և կտանեն՝ կեսն
իրենց, կեսը՝ գործարան ուղի՛ղ զորանոց: Կնանիք
իսկույն կտեսնեն, որ բուշեիկները ոչ միայն խոստա-
նում են, այլև տալիս են: Պա՞րզ է, անտառի՛ սա-
տանա:

ԴՈՆԱՏ Հասկացա: Քեզ, ասում են, վոնդել
են էսօր միտինգիցը:

ՌՅԱԲԻՆԻՆ Եղել է էդպիսի դեպք: Ուժեղ է
էսէոը մեր քաղաքում:

ԴՈՆԱՏ Կծեծեն քեզ մի անգամ:

ՌՅԱԲԻՆԻՆ Անհնարին չէ:

ԴՈՆԱՏ Բարիշել նրանց հետ չի՞ կարելի:

ՌՅԱԲԻՆԻՆ Ո՛չ մի կերպ: Այ, կբշենք սա-
վեաից— նու, էն ժամանակ, կարող է պատահի,
հենց իրե՛նք կուզենան բարիշել:

ԴՈՆԱՏ Դժվար է ինձ համար հասկանալ ձեր
գործերը:

ՌՅԱԲԻՆԻՆ Տեսնում եմ: Քեզ, մանկի՛կս հար-
կավոր էր էսէո լինել, սխալմամբ ես դու մեզ հետ:

ԴՈՆԱՏ (բարկացած) Իմ սխալը՝ քո գոր-
ծը չի՛:

ՌՅԱԲԻՆԻՆ Իմ գործը չի՞... Բ՛մմ .. նու, լավ:
Ի՞նչ է՛ թեյ-մեյ:

ԴՈՆԱՏ Իսկո՛ւյն:

ՌՅԱԲԻՆԻՆ Ուտելու է՛լ: Ախորժակս շատ լավ
է, իսկ ուտելու բան՝ չկա՛:

Դոճատը դռան միջում հանդիպեց Շուրային, նա կանգ առավ, ժպտալով նայում է Ռյաբինին:

ԴՈՆԱՏ Սա ընկեր Պյոտրն է...

ՇՈՒՐԱ Ես գիտեմ: Բարև՝ ձեզ:

ՌՅԱԲԻՆԻՆ Իսկ ես լսել եմ ձեր մասին: Այ

դուր ինչպիսի՞ն էք...

ՇՈՒՐԱ Շիկահե՞ր...

Կալմիկովան՝ համեստ հազնված, 30—35 տարեկան:

ՌՅԱԲԻՆԻՆ (շուտ եկավ Շուրայից) Ես քեզ,

դուր յոշկա, ամբողջ օրը փնտրում եմ:

ԿԱԼՄԻԿՈՎԱ Լսի՛ր մի, Պյո՛տր...

(Տանում է նրան մի կողմ, փսփսում են):

ԼԱՊՏԵՎ (մտնում է Դոճատի մոտ) Նո՛ւ,

Լրանելի՛ր հետ ես վերջացրի: Տյատինը հողված կզրի նրա մասին:

ԴՈՆԱՏ Դու պատմի՛ր մի Պյոտրին նրա մա-

սի՛ն:

ԼԱՊՏԵՎ Այնուամենայնիվ, նա ժուլիկ է, այդ

Լրանելի՛ն:

ԴՈՆԱՏ Սովորությո՛ւնն է:

ԼԱՊՏԵՎ Եվ, անշուշտ, լրտես:

Գլաֆիրան բերում է ինֆնատը:

ՇՈՒՐԱ (կապտեին) Յակով, լսի՛ր:

ԼԱՊՏԵՎ Սպասի՛ր... (Մտնում է Ռյաբինինին ի կալմիկովային):

Շուրան խոժոռվեց, կծեց շրթունքը:

ԳԼԱՑԻՐԱ Մայրապետը կգա գիշերելու:

ՇՈՒՐԱ Այո՛: Դա... անհարմար է: Ո՞վ
ասաց:

ԳԼԱՑԻՐԱ Տախսյան: Դու մի խոսեի՛ր նրա
հետ, փայփայեի՛ր:

ՇՈՒՐԱ Ես փայփայող չեմ:

ԳԼԱՑԻՐԱ Նա շար է, կարող է վնասել:

ՇՈՒՐԱ Ո՞ւմ:

ԳԼԱՑԻՐԱ Բռլորին:

ԿԱԼՄԻԿՈՎԱ Նու, ցտեսութ՛յո՛ւն, Շուրո՛կ, գնա-
ցի ..

ՇՈՒՐԱ (կիսաձայն) Ինչի մասին էիք փսփր-
սում:

ԿԱԼՄԻԿՈՎԱ էդպիսի գործեր են, գաղտնի:

ՇՈՒՐԱ (շլացած) Դուք մի՞շտ պիտի ինձանից
գաղտնիքներ ունենար...

ԿԱԼՄԻԿՈՎԱ (խիստ) դու նորի՞ց այդ մասին:

ՇՈՒՐԱ Ես հարցնում եմ՝ մի՞շտ:

ՌՅԱԲԻՆԻՆ (բարձր՝ Լապտևին) Այդ դուք՝
երկուսդ էլ ցնդաբանել եք ..

ԿԱԼՄԻԿՈՎԱ Իսկ ես հարցնում եմ՝ դու ըն-
դունա՞կ ես լուրջ վերաբերվել դեպի այն մեծ և
վտանգավոր գործը այն մեծ մտքերը, դեպի այն
ամենը, որ քո առջև բացվում է... Սա հարկավոր է
քեզ վճռել միանգա՞ և ընդմիշտ: Գալիս են վըճ-
ռական օրեր: Մտածի՛ր: Ընդունակ չես՝ մի կողմ
քաշվիր:

ՇՈՒՐԱ Ինձ համար վիրավորական է, Գա՛

լինա:

Ռյարիները ականջ է դնում:

ԿԱԼՄԻԿՈՎԱ Ի՞նչն է վիրավորական:

ՇՈՒՐԱ Զգալ ինձ օտար...

ԿԱԼՄԻԿՈՎԱ Կոտրի՛ր քո մանկական ինքնասիրությունը, ժամանակն է:

ՇՈՒՐԱ Ես ուզում եմ շուտով հասկանալ ամբողջը և աշխատել, ինչպես դու:

ԿԱԼՄԻԿՈՎԱ Այն, ինչ ես հասկանում եմ, հասկանում էի համարյա քսան տարի: Եվ չեմ ասի, որ ամեն ինչ հասկացել եմ: Ես նախազգուշացնում լի՛ք քեզ համար դժվար կլինի: Դու քիչ ես կարդում, լինդհանրապես... Վա՛տ ես սովորում: Իմ մեջ ստեղծվում է այնպիսի տպավորություն՝ դու ուզում ես ընթանալ ո՛չ թե պրոլետարիատի հետ, այլ նրա առջևից:

ՇՈՒՐԱ Ճիշտ չէ:

ԿԱԼՄԻԿՈՎԱ Վախենում եմ, որ ճիշտ է: Պրոլետարիատի առջևում լենինի դիրքն է և նրա նմանների: Նմաններ քիչ կան, միավորներ, և նրանցից յուրաքանչյուրը անցել է բազմամյա դպրոց բանտերի, աքսորի, լարված ուսմունքի:

ՇՈՒՐԱ Մի՛ բարկանա: Ինձ թվում է, որ դու և Յաշկան նայում եք ինձ վրա որպես ժամանակավոր օգտակարության:

ԿԱԼՄԻԿՈՎԱ Նո՛ւ, ամեն ինչ ժամանակավոր է: Մնաս բարով, ես շտապում եմ: Մտածիր քո մասին: Են՛չրկա, դու լավ, կամքի տեր մարդ ես, դու կարող ես լինել շատ օգտակար, բայց հարկավոր է խելքի բերել կամքդ: Գնացի:

ԳԼԱՅԻՐԱ Քեյ խմեցեք...

ԿԱԼՄԻԿՈՎԱ Շնորհակալ եմ, Գլա՛շա, ժամանակ չկա: Այ, բուլկի կվեցնեմ: Եվ շաքար:

ՇՈՒՐԱ Վերցրո՛ւ բոլորը:

ԿԱԼՄԻԿՈՎԱ (ծիծաղելով) Մեծահոգություն մի՛ անի: (Գնաց):

ՌՅԱԲԻՆԻՆ Ուրեմն, այսպես. ոտանավորները շան-սատանային: Ի՛նքդ հասկացիր ինչո՞ւ տպել վնասակար անպետքություն, երբ կարելի է շտպել: Եվ ոչ մի հողված այդ երանելի հիմարի մասին հարկավոր չէ: Այդպես էլ ասա Տյատինին: Վազ տո՛ւր: Նու, հիմա թեյ խմենք: (Շուրային) Հյուրասիրեցեք:

ԳԼԱՅԻՐԱ Ա՛յ, նախ՝ կերեք: Օղի կխմե՞ք:

ՇՈՒՐԱ Խնդրե՛մ...

ՌՅԱԲԻՆԻՆ Սիրով կխմեմ: Հազվադեպ հեղուկ է: Եվ նույնիսկ ապուխտ: Եվ մանանե՛խ: Միանգամայն արքայական խնջույք:

Շուրան հուզված ման է գալիս. Ռյարինինը, նայելով նրան, աչքով է անում Գլաֆիբային, վերջինս ակամա ծիծաղում է:

ԳԼԱՅԻՐԱ Կերե՛ք: (Գնաց օղի բերելու):

ՌՅԱԲԻՆԻՆ Պատրաստվում եմ: Այ, ծխեմ վերջացնեմ և կսկսեմ: (Շուրային) Լավ ծերուկ է Գոնատը: Թափանցի՛կ ծերուկ է: Խորհել է, անց է կացրել իր միջով ամեն տեսակի վնասակար անհեթեթություն և հսուսել է իսկական ճշմարտության: Հավատացել է Քրիստոսին, տերերին, ցարերին, և Տոլստոյին: «Աստծու համար էի ապրում՝ բան դուրս չեկավ», — ասում է, — հիմա կփորձեմ խեղճ մարդկանց համար

տայրի»։ Հասարակ որսկան է, ճաշակել է կալվածա-
տիրոջ իշխանությունը։ Չգտում է եղել նրա մեջ դե-
պի ճշմարտությունը և սանձել է նա այդ ձգտումն
՝ իանալի՜... (Շուրան մոտեցավ սեղանին, նստեց։
Վլաֆիրան բերեց օղի) Լավ է նա երիտասարդների
՝ հոտ խոսում, բանվորների հետ։ Ամենադժվար մտքերը
նրանից հեշտությամբ են մտնում մարդկանց մեջ։
(Մատով ցույց տալով Գլաֆիրային, Շուրային և
Իււն) Դու աշխատեցիր, շինեցիր, ես — գնեցի, նրան
ծախեցի, ո՞վ շահեց։ Ե՛ս շահեցի։ Հմո՞ւտ է։

ՇՈՒՐԱ Այդ բանը ուսուցանում է Մարքսը։
ՌՅԱԲԻՆԻՆ Ո՛չ միայն այդ, և ոչ բոլորովին
ադպես, բայց հենց այդ պիտի հասկանալ ամենից
տուաջ։

ԳԼԱՅԻՐԱ (կիսաձայն) Տախսյան է գալիս։

ՇՈՒՐԱ Ա՛խ... Սատանա...

ԳԼԱՅԻՐԱ Դուք նրա մոտ քիչ զգո՞ւյ՞լ։

ՌՅԱԲԻՆԻՆ Գլխի եմ ընկնում։

ՏԱԻՍՅԱ Ի՞նչ մութ է։

ՌՅԱԲԻՆԻՆ Մենք լուսավորվում ենք մտքերով,
դրուցում ենք։

ՏԱԻՍՅԱ Իսկ դուք ո՞վ եք։

ՌՅԱԲԻՆԻՆ Ջրմուղագործ։ Չահել տանտիրու-
յն ինձ հրավիրեց թեյ խմել։

ՏԱԻՍՅԱ Ալեքսանդրա Եգորովնան տանտի-
րուհի չէ, տանտիրուհին — վարվառան է՝ նրա ավագ
լուսրբ։

ՇՈՒՐԱ Ներքևի հարկը ի՛մն է և իմ մորը։

ՌՅԱԲԻՆԻՆ Այսպե՛ս։ Նշանակում է սխալվե-

ցի, ա՞: նու, ի՞նչ: Հիմա նկատելի է՝ երիտասարդությունը պատրաստվում է ամեն տեղ տեր դառնալ. դե ես էլ սխալվեցի:

ՏԱԻՍՅԱ Դա, ի՞նչ է, այն երիտասարդությունն է, որը ոչ աստված ունի, ոչ թագավոր:

ՌՅԱԲԻՆԻՆ Ա՛յ թե ինչ... Իսկ դուք, նշանակում է, հավատո՞ւմ եք աստծուն:

ՏԱԻՍՅԱ Իհարկե: Իսկ դու շե՞ս հավատում, ի՞նչ է:

ՌՅԱԲԻՆԻՆ Ես էնպես... Անհարմար է կարծես հավատալ, մեր աստվածը... կասկածելի է: Ապօրինի ծնունդ է կարծես...

Շուրան ծիծաղում է:

ՏԱԻՍՅԱ նու, այդ ի՞նչ ես դու ասում:

ՌՅԱԲԻՆԻՆ (խորհում է) Աղջկան մարդու տվին ծերունի Հովսեփին, իսկ նա ծնվեց, կարծես թե, Գաբրիել Հրեշտակապետից ..

ՏԱԻՍՅԱ Հայր աստծուց, ի՞նչ ես ասում...

ՌՅԱԲԻՆԻՆ Ահիր նա անմարմին է՝ հայր աստվածը .. Մենք Քրիստոսի մասին էինք խոսում, որն ուտում էր, խմում, երկրի վրա շրջում: Մեր կողմերում, ուր ես եմ ծնվել, ապօրինի ծնվածների վրա լավ շեն նայում: Իսկ ձեզ մոտ ո՞նց է:

Շուրան փրփշում է, Գլաֆիրան կարում է գլուխը կախ:

ՏԱԻՍՅԱ (շշմել է, անցնում է «դուր»-ի) Ճաղատ եք դուք իսկը... Ի՞նչ հերետիկոսական բաներ եք խոսում:

ՌՅԱԲԻՆԻՆ Նու, ի՛նչ առանձնակի բան ես
ասի: Մտածում ես, մտածո մ. . Բոլորը պնդում են՝
ասաված, ասաված, բայց իրար վրա են հեծնում:

ՏԱԻՍՅԱ Աստված... ապօրինի ծնունդ է:
Սարսափելի է լսել: Այսպիսի դաժան ժամանակ ..

ՌՅԱԲԻՆԻՆ Իմ կարծիքով այսպիսի ժամանակ
հարկավոր է անվախ լինել:

ՏԱԻՍՅԱ Սարսափելի եք դուք բոլորդ: Նույ-
նիսկ ծերերը: Կարծես թե ուսաներ շեք: Ռո սները խո-
նարհ են:

ԳԼԱՑԻՐԱ Այդ խոնարհները տակնուվրա
արին ձեր վանքը:

ՏԱԻՍՅԱ Այնտեղ զինվորներ՞ը են եղել, նրանք—
քաղցից:

ՌՅԱԲԻՆԻՆ Իսկ եթե քաղցած բանվորներ՞ը լի-
նեին:

ՏԱԻՍՅԱ Բանվորները հրացաններ չունեն:

ՌՅԱԲԻՆԻՆ Նշանակում է՝ գործը մնացել է
չնչին բանի՝ հրացանների: Այնպես, որ եթե քաղցած
ժողովուրդը հրացաններ գտնի և անհանգստացնի
կուշտերին, հարուստներին...

ՏԱԻՍՅԱ Ի՛նչ ինչ: Ես ոչինչ չունեմ: Եվ չեմ
ունենա:

ՏՅԱՏԻՆ (մտնում է) Մայրապետը եկավ:

ՇՈՒՐԱ Իսկ դուք ի՞նչ եք վախեցել:

ՏՅԱՏԻՆ Ես հաղորդում եմ անհաճո նորու-
թյուն:

Տախյան արագ գնում է:

ՌՅԱԲԻՆԻՆ Դա հոշակավոր Մելանիա՞ն է:

ԳԼԱՑԻՐԱ Այո՛:

ՌՅԱԲԻՆԻՆ Գուցե ես գնամ, ա՞:

ՇՈՒՐԱ (տաֆ) Ինչո՞ւ:

ԳԼԱՑԻՐԱ Տախսյան կասի մայրապետին...

ՇՈՒՐԱ Նու, և ի՞նչ:

ՌՅԱԲԻՆԻՆ Ի՞նչ կասի. ես ջրմուղագործ եմ:

ՏՅԱՏԻՆ Դա երեխաների համար է: Նա երևի
ձեզ տեսել է որևէ տեղ:

ՌՅԱԲԻՆԻՆ Նշանակում է հարկավոր է կոր-
չել: Ախ, սատանա.. Իսկ Գոնատն ասաց, որ կարելի
է գիշերել ձեզ մոտ...

ՇՈՒՐԱ Կարելի՛ է, կարելի՛ է: Գլա՛շա, վե-
րևում, ա՞:

ԳԼԱՑԻՐԱ Այնտեղ լավ է, միայն թե վառած
չէ:

ՌՅԱԲԻՆԻՆ (Շուրային) Նու, որոշեցեք գնա՞լ,
թե մնալ:

ՇՈՒՐԱ Մնա՛լ: Լսեք, դուք հիանալի եք: Ես
չէի կարծում, որ դուք այդքան խորամանկ եք,
ուրախ . այդքան հասարակ... ինչպես գունդ: Ես...

ՌՅԱԲԻՆԻՆ (Տյատինին) Գովեց, ինչպես հան-
գուցյալի...

ՇՈՒՐԱ Սարսափելի ուրախ եմ, որ դուք այդ-
պես եք...

ՌՅԱԲԻՆԻՆ Ես էլ եմ ուրախ, որ ավելի վատ
չեմ:

ԳԼԱՑԻՐԱ Գնանք, ես ձեզ ուտելիք այնտեղ
կբերեմ:

ՌՅԱԲԻՆԻՆ Մի վայրկյան: Ընկեր Տյատին,

դուր թոուցիկը գրել եք շատ մեղմ և շատ վերամ-
յարձ: Ախր դա ուսանողների համար է: Հարկավոր է
յրլւ այնպես, որպեսզի կիսագրագետը հասկանա և
կտրողանա ամբողջը ճիշտ պատմել անգրագետներին:
Եվ— այ թե ինչ: Այդ ձեր— կյուբիմով է, ինչ է,
գիրի՛ւ է: Նա ո՞վ է: Ուսանո՞ղ:

ՏՅԱՏԻՆ Առևտրական դպրոցն է վերջացրել:

ՌՅԱՔԻՆԻՆ Ձիբի՛ւ է: Սղոցարանում ինչ-որ
տերտեր ելույթ ունեցավ, շատ շարն էր, իսկ ձեր բա-
րեկամը...

ՏՅԱՏԻՆ Նա իմ բարեկամը չէ:

ՌՅԱՔԻՆԻՆ Նո՛ւ, միկնո՛ւյնն է: Նա ինձ առա-
ջարկեց սպանել տերտերին: Հարցնում եմ. ինչո՞ւ:
Խիղախություն հարուցելու համար, ասում է: Ա՛յ խոզ:
Խիղախություն հարուցելու համա՛ր, իդիո՞տ: Գուք
նրան խուզե՛ք, մեզ այդպիսիքը պետք չե՛ն: Անպայ-
ման— տվեք սատանային, էսէոններին... Նու, ես
պատրաստ եմ, վերև... գնալու... (գնում է Գլաֆիրա-
յի հետ)

ՇՈՒՐԱ Ինչ... լավն է: Ա՛յ, իսկական:

ՏՅԱՏԻՆ Պատրաստ է:

ՇՈՒՐԱ Ի՞նչ, ինչն է պատրաստ:

ՏՅԱՏԻՆ Արբեցում հիացմունքով:

ՇՈՒՐԱ Այդ ի՞նչ է նշանակում:

ՏՅԱՏԻՆ Այդ նշանակում է, որ ձեր հայրը
խելացնոր է եղել:

ՇՈՒՐԱ Չհամարձակվե՛ք հորս մասին:

ՏՅԱՏԻՆ Եվ ձեր հոր խելացնորությունը ան-
յել է ձեզ:

ՇՈՒՐԱ Հետո ի՞նչ:

ՏՅԱՏԻՆ Դուք երես առած, կապրիզոտ աղ-
ջիկ եք:

ՇՈՒՐԱ Վաճառականի աղջիկ, նո՞ւ...

ՏՅԱՏԻՆ Դուք շեք ուզում լուրջ ուսանել...

ՇՈՒՐԱ Այդ ինձ արդեն այսօր ասել են: Էլի
ինչ:

ՏՅԱՏԻՆ (ձեռքը քափահարելով) Անօգուտ է
խոսել: Ցտեսություն:

ՇՈՒՐԱ Տյատին, ծունկ շոքե՛ք:

ՏՅԱՏԻՆ Ինչո՞ւ: Այդ ի՞նչ բան է:

ՇՈՒՐԱ Չոքե՛ք: Արա՛գ: Եթե ոչ՝ կսկսեմ ամի-
սեները կոտրատել, կգոռամ տնով մեկ և ընդհանրա-
պես... սարսափելի բաներ կանեմ:

ՏՅԱՏԻՆ Իհարկե, դուք կարող եք սկանդալ
անել...

ՇՈՒՐԱ Ծունկ շոքի՛ր, Ստեպան Տյատին:
(Հրում է նրան):

ՏՅԱՏԻՆ (չոփելով) Իզուր եք ինձ խեղկատակ
դարձնում...

ՇՈՒՐԱ Կրկնեցեք իմ կտևից. Շո՛ւրա, ես քեզ
սիրում եմ...

ՏՅԱՏԻՆ (խոժոռ) Դադարեցե՛ք հիմարություն-
ներ անել: Կգնամ ես այս անիծյալ քաղաքից:

ՇՈՒՐԱ Կրկնեցե՛ք. ես սիրում եմ քեզ, Շո՛ւ-
րա, վաճառականի դեֆեկտիվ աղջիկ, ցնորված
օրիորդ...

ՏՅԱՏԻՆ (ուզում է բարձրանալ) Վե՛րջ տվեք...
դե՛... Դուք խելագարվել եք...

ՇՈՒՐԱ (կատաղուրջամբ) Սիրում եմ, բայց
ժուլիկաբար վախենում եմ ասել այդ քեզ: (Հրում է

նա ուսերին) Չհամարձակվե՛ք բարձրանալ: Կրկնի՛ր.
«Ես շնորհակալ եմ քեզանից, որ դու ինձ հարկադրե-
ցիր »:

ՏՅԱՏԻՆ Գնացե՛ք սատանայի գիրկը:

ՇՈՒՐԱ Հիմա կսկսեմ կոտրատել ափսեները:
Հաշվում եմ մինչև երեքը՝ Մե՛կ...

Աղմուկ նախասենյակում:

ՇՈՒՐԱ (գնալով սաստում է բռուցֆով) Սա
լի վերջացել: Սա կկրկնվի:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (դուռն մեջ) Այդ ի՞նչ ես դու,
Ստեպաշա, սողում:

ՏՅԱՏԻՆ Կորցրի...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ի՞նչ կորցրիր:

ՏՅԱՏԻՆ Չգիտե՛մ: Հանեցի թաշկինակս, ըն-
կավ: Ընդհանրապես, հեշ...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Նման է: Այո՛, այո՛, երբ գլր-
պանդ լիքն է՝ չգիտես ինչ ես կորցնում: Ինչպե՞ս ես:
Տաքությո՞ւն ունես, ջերմությո՞ւն ..

ՏՅԱՏԻՆ Գլուխս... Մի քիչ... Ընդհանրապես—
ոչինչ .

ԴՈՍՏԻԳԱԵՎ Մի քիչ գլուխդ: Նու, այդ—
կանցնի: Առաջ դու արդարությամբ ու պատվով էիր
խոսում, իսկ հիմա շարունակ խոսում ես ընդհանրա-
պես: Նոր բառ հս ձեռք գցել: Իսկ ինչպես, ընդհան-
րապես: Մենք բոլորս, կարծես, ապրում ենք ընդհան-
րապես:

ՏՅԱՏԻՆ (խոժոռ) Թե՛յ ուզո՞ւմ եք

ԴՈՍՏԻԳԱԵՎ Շնորհակալ եմ: Ինքնաեռը հո

պաղ է: Պավլինը պատմում է, որ Պետրոզրադում
խառն է, դու ոչինչ չես լսել:

ՏՅԱՏԻՆ Ո՛չ:

ԳՈՍՏԻԳԱԵՎ Երևի լսել ես, բայց ասել չես
ուզում: Մելանիան եկե՞լ է: (Տյատինը զլխով է
անում) Ցանկություն ունեմ Մելանիային տեսնելու:
Իսկ դու, Ստեպան՝ շա, բոլշևիկներին ես հարմարվել,
պրոլետարներին: Նու, ո՞նց է: Հարմա՞ր է նրանց հետ:

ՏՅԱՏԻՆ Գնացե՛ք սատանայի գիրկը:

ԳՈՍՏԻԳԱԵՎ Ինչո՞ւ ես բարկանում, հոգ-
յա՛կս: Ինքդ— պրոլետարիատի մոտ, իսկ ինձ— սա-
տանայի: (Գնում է) Ձուկ կա— խոր տեղ է փրկու-
րում, ձուկ կա՝ պղտոր:

ՏՅԱՏԻՆ (Կանգնել է ֆարացած: Փնթփնթում
է) Հիմար ես դու, Ստեպան՛ն... Արտասվելու շափ հի-
մար ..

(Նստեց սեղանի մոտ, բեյ լցրեց բաժակը, փա-
կեց «Նիվան»):

ՏԱԻՍՅԱ (գալիս է անվճռական, անաղմուկ,
մոտեցավ): Կարելի՞ է ձեզ հարցնել...

ՏՅԱՏԻՆ (ցնցվելով) Հարցրե՛ք:

ՏԱԻՍՅԱ Այդ ճաղատը— ո՞վ է:

ՏՅԱՏԻՆ Մարդ:

ՏԱԻՍՅԱ Ես գիտե՛մ: Հիմա, ասում են, շա-
տերն են զգեստափոխվում, ապրում են ո՛չ իրենց
տեսքով...

ՏՅԱՏԻՆ (բարկացած) Այդ ո՞ւմ է հետաքրր-
քիր՝ մայրապետի՞ն, թե ձե՛զ:

ՏԱԻՍՅԱ Ի՛նձ: Ես նրա մասին մայրապետին
և՛մ ասել:

ՏՅԱՏԻՆ Իսկ իմանալով ով է նա, կասե՞ք:
Գուք, Տախյա, լավ կանեիք թողնեիք լրտեսելը: Այդ
զործը գովելի չէ: Եվ ձեր որ սատանային է պետք
այդ գայլը՝ մայրապետը: Նա ձեր երեսին շպպացնում
|, իսկ դուք ծառայում եք նրան, ինչպես շնիկ...
Ետևի թաթերի վրա: Նա վաճառականուհի է, զեղծա-
բարուհի, վաշխառուհի... ընդհանրապես զզվելի: Միթե
դուք չե՞ք տեսնում, չե՞ք զգում, ինչպես են ծաղ-
րում... ձեզ: Հեռացե՛ք մայրապետից... ուղարկեցե՛ք
նրան սատանայի գիրկը:

ՏԱԻՍՅԱ Իսկ ես ո՞ւր խցկվեմ:

ՏՅԱՏԻՆ Տե՛ղ գտեք, աշխատանք:

ՏԱԻՍՅԱ Իսկ ի՞նչ անեմ:

ՏՅԱՏԻՆ Գործ շատ կա: Ձեղ ուսանել է հար-
կավոր: Ա՛յ, Գլաֆիրան, համարյա երկու անգամ ձե-
ղանից մեծ է, բայց — կարդում է, սովորում:

ՏԱԻՍՅԱ Սովորում է, իսկ ինքն ասում է՝
ոչինչ չգիտեմ:

ՏՅԱՏԻՆ Միանգամից չեն իմանում: Ի՞նչ եք
դուք ինձ վրա նայում... այդպես:

ՏԱԻՍՅԱ Ձեր աչքերը շատ տխուր են:

ՏՅԱՏԻՆ Նու, այդ... Գլուխս ցավում է:

ԳԼԱՖԻՐԱ (ներս վազեց, տազնապով) Ստեպան
Նիկոլաևիչ, Պյոտրը երևի արտաքնոցն էր փնտրում և
ընկավ ուղիղ մայրապետի ընդունարանը, իսկ էն-
տեղ — Գոստիգաևն է: Լսո՞ւմ եք, ոնց են գոռում...

ՏՅԱՏԻՆ Ննու... Ի՞նչ անենք:

ՏԱԻՍՅԱ Օ՛յ, ցո՛ւյց կտա նա ինձ...

ԳԼԱՅԻՐԱ Լռի՛ր դո՛ւ... Այստե՛ղ են գալիս:
ՏԱԻՍՅԱ Թաքնվե՛մ... (Վազեց) .

Ռյաբինին, նրա ետեից՝ Մելանիան, Դոստի-
գանը:

ՌՅԱԲԻՆԻՆ (հանգիստ) Ձեզ, մորաքույր ..

ՄԵԼԱՆԻԱ (զայրացած, շնչահեղձ) Ես քեզ
մորաքույր չեմ:

ՌՅԱԲԻՆԻՆ Ձեզ հրամայված է պաշտպանել
չարշիներին, վաշխառուներին իշխանությունը և հենց
դուք էլ այդ ավազակախմբից եք...

ՄԵԼԱՆԻԱ Ես հրեշտակի աստիճան ունեմ, հի-
մա՛ր: Ավազակախո՛ւմբ: Լսեցի՛ր Վասիլի՛, ա՛:

ՌՅԱԲԻՆԻՆ Իսկ մենք, ա՛յ, պետք է ոչնչաց-
նենք հակամարդկային իշխանությունը:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այդ բանը ձեզ ո՞վ է հրամայել:

ՄԵԼԱՆԻԱ Ով է հրամայե՞լ: Խեղազա՛ր է, ով
քեզ հրամայել է, ո՞վ:

ՌՅԱԲԻՆԻՆ Պատմությունը Բանվորների դա-
սակարգային, հեղափոխական գիտակցությունը

ՄԵԼԱՆԻԱ Լենինն է հրամայել, սատանայի
ծառան:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Սատանային կարելի է մի կողմ
թողնել, իսկ, ա՛յ, գերմանացիները ոնց .

ՌՅԱԲԻՆԻՆ (Տյատիևիև) Մոլորվել եմ: Ո՞նց
դուքս գամ այստեղից, ո՞ր կողմով:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Թո՛ւյլ տվեք. . մի բոպե: Խոսք
եմ խնդրում: Եկեք հանգիստ դրույց անենք: Հան-
գի՛ստ, մա՛յր Մելանիա, հանգի՛ստ: Հայհոյելը հա-

սարակ բան է, հայհոյելը հեշտ է, հայհոյելու համար միշտ ժամանակ կունենանք...

ՄԵԼԱՆԻԱ Ոչ թե հայհոյել է պետք, այլ ..

ՌԱԲԻՆԻՆ Կռվե՛լ: Ճիշտ է, մամա՛շա: Պատը՝ պատին. հը՛:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ես ձեզ, ընկեր Ռյաբինին, լսել եմ միտինգներում և — հարգում եմ:

ՌՅԱԲԻՆԻՆ (Տյատինին) Կարծեմ, ա՛յ, այսպիսի դեպքերում են ասում՝ շնորհակալ եմ, չէի սպասում .

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ո՛չ, եկե՛ք լուրջ: Բանվորների գիտակցությո՞ւնը: Ենթադրե՛նք: Նու, իսկ մուծի՞կը: Ո՞նց է մուծիկը՝ գիտակցության կողմից... Ահա՛ հարցը:

ՌՅԱԲԻՆԻՆ Հետաքրքրագո՞ւյն հարց: Եվ դուք ի՞նչ կպատասխանեք:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Իսկ դո՞ւք: Հարցը ձե՛ղ է տրվում: Այ, տեսնո՞ւմ եք, էսէռական «Գորշ շինել» թերթիկը — գիտե՞ք: Այնտեղ ծաղրանկար կա Լենինի վրա, կարմիր գվարդիայի: Գերմանական փողերի մասին էլ է գրվում...

ՌՅԱԲԻՆԻՆ Հիմարությունն ու ստորությունը դեռ սպանված չեն, ապրում են: Ստորությունը հիմարությունից է բուսնում:

ՄԵԼԱՆԻԱ Նու, այդ ի՞նչ ես դրա հետ խոսում: Նա ի՞նչ կարող է հասկանալ, ավազա՛կը: Ներս պրծավ իմ սենյակը... Եթե դու, Վասի՛լի, շինեիր...

ՌՅԱԲԻՆԻՆ (Տյատինին) Ա՛յ թե նա ո՞ւր է լիւրում ..

ՏՅԱՏԻՆ Գնա՛նք:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Կամա՛ց, Ստեպա՛շա, կամա՛ց:
Թո՛ղնենք հարցը, ընկեր Ռյաբինին, թող նա մնա:
Իսկ այ, պատասխա՞նը որն է: Ինչի՞ հիման վրա
կարող է մուժիկը բարիշել կալվածատիրոջ հետ: Հո-
ղի՞: Դժվա՛ր է: Ինչպես եք դուք կարծում:

ՌՅԱԲԻՆԻՆ Մի փոքր դժվար է:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Իսկ— բանվո՞րը գործարանատիրոջ
հե՛տ: Այստեղ, կարծես թե, այլ բան է, ա՛: Կարծես
թե, ա՛:

ՌՅԱԲԻՆԻՆ Այդպե՛ս, այդպե՛ս, այդպե՛ս: Հե-
տաքրքի՛ր է մտածված:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ես, իհարկե, հանաք եմ անում:

ՌՅԱԲԻՆԻՆ Հասկանում եմ: Հետաքրքի՛ր եք
հանաք անում:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ես ուրախ մարդ եմ, յուր գնա-
ցող: Իսկ դուք ինձ ուզում եք անդարձ կերպով ոչըն-
չացնել:

ՌՅԱԲԻՆԻՆ Ճի՛շտ այդպես: Ձեզ ու բոլորին,
ովքեր ձեզ հետ են:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Նու, իսկ մենք— ո՞ւր:

ՌՅԱԲԻՆԻՆ Ձե՛ր գործն է: Գնա՞նք:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Մի՛ րոպե: Այնուամենայնիվ,
հարկավոր է մեզ ևս մի տեղ նշանակել: Պետու-
թյուններն անպետք մարդկանց համար պահում են...

ՄԵԼԱՆԻԱ Բանտեր, կալանավորական վաշ-
տեր...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Հիվանդանոցներ, խելագարատ-
ներ...

ՌՅԱԲԻՆԻՆ Հավանական է, որ նա՝ մայրա-
պետը և շատերը ձեզանից, ինչպես նեստրաշնին, հար-
կադրված կլինեք բանտ նստել:

ԳՈՍՏԻԳԱԵՎ Չափազանց հրապուրիչ ապագա
հնք ունեցել, մա՛յր Մելանիա:

ՄԵԼԱՆԻԱ Ա՛խ, գազա՛ն, ա՛խ, դու դժոխքի
գազա՛ն...

ԳՈՍՏԻԳԱԵՎ Ձեզ համար դժվար կլինի, ընկեր
Ռյաբինին, տնտեսություն կառավարել առանց փորձ-
ված մարդկանց:

ՌՅԱԲԻՆԻՆ Կգտնվե՛ն: Հենց ձերոնք, ովքեր
խելացի են, կսկսեն ազնվորեն աշխատել մեզ հետ:
Նո՛ւ, բավական է: Զրուցեցինք:

ԳԼԱՅԻՐԱ Ետևի մուտքից գնացեք, գլխավոր
մուտքը տախտակած է:

Ռյաբինինը, Տյատինը գնացին Գլաֆիրայի հետ
Տախյան նայեց դռնից, անհետացավ.

ՄԵԼԱՆԻԱ Ի՛նչ օրի հասանք: Ձերբակալել
լ՛լ չի կարելի:

ԳՈՍՏԻԳԱԵՎ Այ-յո՛ւ: Չի՛ կարելի:

ՄԵԼԱՆԻԱ Օ՛, տե՛ր իմ, ինչի՞ համար:

ԳՈՍՏԻԳԱԵՎ (կշռադատում է) Ովքեր խելացի
ես՝ կփրկվեն, ուրեմն Սա, այնուամենայնիվ, մխի-
թարություն է .. հիմարների համար:

ՄԵԼԱՆԻԱ Շրջում է ավաղակր բոլորի աչքի
տուաջ, իսկ բռնել— արգելված է: Սա ի՞նչ է:

ԳՈՍՏԻԳԱԵՎ Բռնել— չի՛ կարելի: Ազատու-
թյուն է:

ՄԵԼԱՆԻԱ Անիծված լինի այն, այժմ և հա-
վիտյան:

ԳՈՍՏԻԳԱԵՎ (շրջում է, ձեռները գրպաննե-
լում) Այո՛-ո՛-ո՛ . Բռնել— արգելված է: Եվ— ան-

ծգուտ է: Հուլիսին բռնում էին, իսկ նրանք նորից դուրս ընկան... Եվ նույնիսկ, կարծես, ավելի խիտ: Եթե էդպիսի ույաբինիններ գտնվեն հինգ-տասը հազար... Բայց կարող են և շատ լինել... Ըն-այո՞՞... Չե՛ս բռնի: Իսկ, ա՛յ, եթե ոտք դեմ անես դրանց զառիվայր ճամփին... անհայտ ճանապարհին ..

ՄԵԼԱՆԻԱ Ա՛խ, վասի՛լի . Դուք այն շեք անում...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ավելի՛ վատթար: Մենք ոչի՛նչ շեք անում:

ՄԵԼԱՆԻԱ Պետք է ղինվորներին բարձրացնել:
ԴՈՍՏԻԳԱԵՎ Մեր ուժերից վե՛ր է ծանրությունը ..

ՄԵԼԱՆԻԱ Թագավորի ուժը պատո՞ւմ էր, թեկուզև անուժ էր. .

ԴՈՍՏԻԳԱԵՎ Սատանա՛ն նրան, հիմարի՛ն, քշեց այս պատերազմի մեջ: Գերմանացիների հետ մեզ հարկավոր է խաղաղությա՛մբ ապրել, սովորել նրանցից... Խե՛ղբ շուներ թագավորը, իսկ հաց՝ ունե՛ր: Իսկ մենք— ո՛չ հաց ունենք, ո՛չ խելք: Խըժոնց պատերազմը հացը: Ի՛-դիո՛տ-նե՛ր: Հաշտությո՛ւն է հարկավոր կնքել գերմանացիների հետ, իսկ այդ կոտածը, ատվակատ Կերենսկին, կատաղում է .

ՄԵԼԱՆԻԱ Դու խելագարվե՛լ ես: Այդ ինչպե՞ս թե— հաշտություն... Գերմանացիների հե՞տ. .

ԴՈՍՏԻԳԱԵՎ Սկզբում— հաշտություն, իսկ հետո .. Ըհը՛, տանտիրուհին եկավ:

ՄԵԼԱՆԻԱ Այս ի՞նչ է քեզ մոտ, վարվա՛ռա, քո տանը: Ավազականոց է կարծես: Բոլշևիկնե՛ր են շրջում...

ՎԱՐՎԱՌԱ Ի՞նչ բան է .

ԴՈՍՏԻԳԱԵՎ Իսկ ո՞ւր է մարդդ, Վա՛րյա:

ՎԱՐՎԱՌԱ Բակում, Ալյոշայի հետ. այնտեղ
ինչ-որ օտար մարդ է .

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ռյաբինինն է ման գալիս ..

ՎԱՐՎԱՌԱ Չէ՞: Նո՛ւ, այդ, Իհարկե, Շուրայի
և Տյատինի բաներն են: Իհարկե, Տյատինի ներկա-
յությունը տան մեջ երաշխիք է զանազան անակրն-
կալների նրա ընկերների կողմից, բայց . Ընդհան-
րապես տանը սատանան գիտե, թե ինչ է կատար-
վում . Ալեքսանդրան սարսափելի վարկաբեկում է
ինձ ու Անդրեյին . Ես չգիտեմ, ի՞նչ անեմ նրա հետ...
(Խուլ հնչում է կրակոց, մեկ, երկու) Աստվա՛ծ իմ,
Անդրե՛յ . (Վազում է)

ՄԵԼԱՆԻԱ (խաչակնեկով) Ո՞ւմ են ալդ:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (բռնում է աթոռից) Նո՛ւ, էլի՛,
ինչպես փետրվարին . շխշխկացրին

Վարվառան և Ալեքսեյ Դուտիգաեր բերում են
Ձվանցովին, նա ուժասպառ է, շնչահեղձ է լի-
նում Ալեքսեյի ձևափն՝ ատրճանակ

ԶՎԱՆՅՈՎ Ես հարկադրված էի . Ինձ վրա
հարձակվեցին

ՎԱՐՎԱՌԱ Վիրավորվա՞ծ ես:

ԶՎԱՆՅՈՎ Ո՛չ.. Ես — կրակեցի Ինքնա-
պաշտպանության դրություն հասկանո՞ւմ եք:

ՎԱՐՎԱՌԱ Իսկ ո՞ւմ վրա էիր կրակում:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (ուղուհ) Դու ատրճանակդ ջո՛ւրը
դիր:

ԶՎԱՆՅՈՎ Ես հարկադրված էի... Սա բնական է...

ՎԱՐՎԱՌԱ Զո՛ւր տվեք:

ՄԵԼԱՆԻԱ Բայց— ո՞վ հարձակվեց քեզ վրա:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (որդուն) Ես քեզ ասում եմ՝ դի՛ր թափանչեղ: Ա՛յ, բաժակ լվանալու ամսեի մեջ դիր:

ԶՎԱՆՅՈՎ Թո՛ղ ինձ, Վա՛րյա... Սպասի՛ր:

ՄԵԼԱՆԻԱ Ոչինչ չեմ հասկանում

ՎԱՐՎԱՌԱ Դա— Ոյաբինի՞նն էր, այո՞:

ԶՎԱՆՅՈՎ Ա՛խ, ես ոչի՛նչ չգիտեմ... Մու՛թն է:

Ոյաբինինը բերում է Տյատինին, նրանց ետեվից Տախսյան՝ գլուխը ձեռների մեջ առած Գլաֆիրան ջուր է բերում.

ՌՅԱԲԻՆԻՆ Դուք, քաղաքացի Զվանցով, այս ի՞նչ եք անում:

ԶՎԱՆՅՈՎ (Վեր թռավ, ձեռին ջրով լիք բաժակ) Ես ունեի իրավունք . հարկադրված էի: Դուք ինքներդ նրան բռնեցիք, երբ նա հարձակվեց ինձ վրա:

ՏՅԱՏԻՆ Դատարկ բան է, Անդրե՛յ...

ՌՅԱԲԻՆԻՆ Ստո՛ւմ եք դուք: Ո՛չ ոք ձեզ վրա չի հարձակվել: Առջևից գնում էի ես, իսկ Տյատինը՝ ետևից, կողքից: Ատրճանակից դուք փստացրիք ի՛նձ վրա...

ԱԼԵՔՍԵՅ Այդ— ճի՛շտ է, դուք շտապեցիք:

Դոռտիգանը փաշում է որդու թևը:

ՏՅԱՏԻՆ Գլա՛շա, մի բան տվեք թեև կասլեմ:

Գլաֆիրան նդում է շապիկը, որը կարում էր:
Ռյարինինը հանում է նրա վրայից պիջակը:
Դոստիգաևը բարկացած շնչում է որդուն, Մե-
լանիան՝ վարվառային

ՌՅԱԲԻՆԻՆ Լ՛իս, դո՛ւք . նշան բռնո՞ղ:

ԱԼԵՔՍԵՅ Այդ կարելի է հասկանալ՝ մթու-
թյո՞ւն, անսպասելիությո՞ւն...

ՌՅԱԲԻՆԻՆ Վախկոտությունն և՛ս .

ՇՈՒՐԱ (վերաբերելով) Ի՞նչ է պատահել:
Տյատի՛ն, այդ ի՞նչ է:

ՎԱՐՎԱՌԱ Ո՛չ մի վնասակար բան:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Դատա՛րկ բան, Շուրո՛կ: Տես-
նում ես, նա ոտքի վրա է:

ՌՅԱԲԻՆԻՆ Իսկ ձեզ համար, երևի, ավելի զվար-
ճալի կլինեք, եթե նա ոտքերը մեկնեք, ա՞:

ՏՅԱՏԻՆ Ընդհանրապես— դատարկ բան է:
Նույնիսկ չի ցավում:

ԳԼԱՅԻՐԱ Գնանք այստեղից: Ինձ մոտ գնանք:
Բժի՛շկ է պետք: Տաի՛սյա, վազ տուր դիմացը, տուն
19, բժիշկ Ագապով:

■ Տաիսյան բացասական գլխով է անում:

ՎԱՐՎԱՌԱ (Գլաֆիրային) Խնդրեմ... չկարգա-
դրե՛լ: Ինչպե՞ս եք համարձակվում:

ԳԼԱՅԻՐԱ Նո՛ւ-նո՛ւ-նո՛ւ... Մի՛ գոռա... տի-
րուհի՛:

ՇՈՒՐԱ Սա ի՛մ տունն է: Դո՛ւրս կորեք այս-
տեղից:

ՏՅԱՏԻՆ (ուսի վրայով) Հարկավոր չէ՛ հուզ-
վել...

ՌՅԱԲԻՆԻՆ (գնալով) Ամեն ինչ ներե՞լ է
պետք... է՛խ, Տյատի՛ն-մամի՛ն... կիսե՛լ..

Գլաֆիրան տարավ Տյատինին, Շուրան վազում
է բժշկի ետևից, Վարվառան նրա ետևից գնում
է նախասենյակ՝

ՎԱՐՎԱՌԱ Սպասի՛ր: Հարկավոր է պայմանա-
վորվել: Դու ի՞նչ կասես բժշկին:

ՇՈՒՐԱ Գնա, կորի՛:

ՌՅԱԲԻՆԻՆ (վերադարձավ, մոտեցավ սեղա-
նին, առավ ատրճառակը) Այս բանը ես ինձ կվերց-
նեմ. ձեզ, քաղաքացիներ, այն պետք չէ, չեք իմանում
վարվել նրա հետ: (Գնում է)

ԴՈՍՏԻԳԱԵՎ (որդուն, կիսաձայն) Խլի՛ր, մի՛
տուր... հիմա՛ր:

Ալեքսեյը գնում է Ռյաբինինի ետևից, անվրա-
տան՝

ՄԵԼԱՆԻԱ (Զվանցովին) Նո՛ւ, ի՞նչ ես ..
թթվել: Ամաշեի՛ր: Զսպանեցիր ախր: Իսկ եթե սպա-
նեիր էլ— աստված կներե՛ր: Զէ՛, Շուրկան մի տես
ո՞նց է, փուշ, ա՛: Ա՛յ վռնդում է: Ո՞ւմ՝ հարազատ
մորաքրոջը, ա՛:

ՏԱԻՍՅԱ (հանկարծ մոտ քուշելով նրան)
Դո՛ւ... դո՛ւ... գարշելի՛-ի՛ի՛, դու— լե՛շ...

ՄԵԼԱՆԻԱ Տաի՛սյա... Այդ ի՞նչ ես դու...

ՏԱԻՍՅԱ Լե՛շ, նո՛ւ, խփի՛ր: Զե՛մ վախենում:
Խփի՛ր:

Նախասենյակից՝ նիշ լսելով, հավաքվում են սեղանատուն՝ վարվառան, Ալեքսեյը, բոլորի էտևից՝ Ռյաբինինը

ՎԱՐՎԱՌԱ (զարմացել է) Ա՛խ, դու, փո՛ւշ:
ՄԵԼԱՆԻԱ (գոռում է ստեր դոփելով) Դե՛...

Ցի՛ց Ե՛ս քեզ...

ԶՎԱՆՑՈՎ Այլո՜շա, դե վոնդիր աղջկան...

ՏԱԻՍՅԱ Զառա՛մ շո՛ւն: Գայլամայր: (Գտավ բավարար խոսքը) Գայլամայր...

ՄԵԼԱՆԻԱ (կիսաշունչ) Կնզովե՛մ.

ՌՅԱԲԻՆԻՆ Բրա՛վո, աղջի՛կս: Այդպե՛ս նրան...

Բրա՛վո, խելո՛ք:

ՏԱԻՍՅԱ Գայլամա՛ա՛յր .

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

Գոստիգակի մոտ Երեկո: Մեծ, անհրապույր սենյակ տան էտևի մասում, պատուհանները նայում են բակը կամ այգին. Բուխարիկ, նրա վրա վառվում է լամպ, լուսավորելով Բյոկլինի նկարի մոայլ արտատպությունը՝ ծովի հաստավոր բնակիչները բռնում են ծովային աղջիկներ: Բուխարիկի առաջ՝ թղթախաղի սեղան: Ալեքսեյը, շվացնելով, պասյանս է բաց անում, Բուխարիկի երկու կողմերը դռներ՝ դրապիրով-

կաներով: Ձախ դռան ետևի սենյակը լուսավոր-
ված է թույլ, աջ կողմից— բոլորովին չի լու-
սավորված: Հնամյա փափուկ կահ-կարասի,
հատակին՝ գորգ, մի անկյունում՝ դաշնամուր,
մյուսում՝ կիսակյուր դիվան, նրա ետևը— ֆի-
կուս, առջևը— կյուր սեղան՝ վրան շվառած
լամպ Դիվանի կողքին փոփոխի դուռ, փակցը-
րած է պաստառով, ինչպես և պատը սյդ
դուռը համարյա չի նկատվում Այդ դռնից
դուրս է գալիս Անտոնինան՝ գիրքը ձեռքին

ԱՆՏՈՆԻՆԱ Ի՞նչ ահռելի ցուրտ է .. Ի՞նչքան
ամեն ինչ անտաղանդ է: Հեղափոխությունը սկսեցին
փետրվարին և դեռևս չեն կարողանում վերջացնել: Իսկ
արդեն գալիս է նոյեմբերը Ի՞նչ:

ԱԼԵՔՍԵՅ Ես ոչինչ չասացի:

ԱՆՏՈՆԻՆԱ Քաղաքացիական ղգեստով դու
ողորմելի ես: Նման ևս ոստիկանական ծառայողի,
որին դուրս են արել կաշառքների և քեֆերի համար .
(Վառում է լամպը) Դու չե՞ս հիշում՝ ինչքա՞ն տևեց
Ֆրանսիական հեղափոխությունը:

ԱԼԵՔՍԵՅ Չեմ հիշում:

ԱՆՏՈՆԻՆԱ Ամեն բան հարկավոր է անել արագ
և գեղեցիկ, կամ ոչինչ չպետք է անել: (Խառնեց խա-
ղաթղթերը)

ԱԼԵՔՍԵՅ (չբարկանալով) Խո՞ղ:

ԱՆՏՈՆԻՆԱ Գիտե՞ս, ես, կարծեմ, ինձ կխփեմ:

ԱԼԵՔՍԵՅ Այդ դո՞ւ ես վերցրել իմ ատրճա-
նակը:

ԱՆՏՈՆԻՆԱ Ինչքա՞ն գզվելի հարբած եկար դու
գիշերը... Ֆ-Ֆա՞:

ԱԼԵՔՍԵՅ Այ-յո՞՞... Խմեցի՛նք: Սպայությունը
աճուկի խմում է: Գիտես ինչո՞ւ դուրս չի գալիս թեր-
թը: Նեստրաշնին թոցրել է մի վագոն թուղթ և ինչ-որ
տեղ թաքցրել: Ասում են՝ հենց որ բացվի Սահմանա-
դիր ժողովը— նա շարդ կսարքի բոլշևիկներին, բան-
վորների խորհրդին: Նա, իբրև թե, մարդիկ ունի և
այդ նրանք են սպանել երանելի Պրոպոտեին:

ԱՆՏՈՆԻՆԱ (պապիրոս ծխելով) Այդ ամենը
հետաքրքիր է— Շուրային:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (ձախ կողմի սենյակից) Իսկ ուր
է Լիզավետան:

ԱԼԵՔՍԵՅ Վիկտորի հետ վերև գնաց, նայելու
հրդեհին...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Գնա՛, հարցրու նրան... Կանչի՛ր:
Մեկ էլ հետդ կաբինետս բեր բառարան «Դ» տառի:
(Նայում է շուրջը) Ո՞ր շան համար է դաշնամուրը,
երբ ոչ ոք չի նվագում: Այստեղ բիլիարդ պիտի լի-
նի, ամենացուրտ սենյակն է: Զուր տեղը լսեցի Լի-
զավետային, գնեցի այս հիմար աղայական տունը...

ԱՆՏՈՆԻՆԱ Դու, հայրի՛կ, իզուր ես նեղաց-
նում Լիզային...

ԴՈՍՏԻԳԱԵՎ (հավաքելով խաղաթղթերը) Խա-
ղո՞ւմ էիք:

ԱՆՏՈՆԻՆԱ Այդ, Ալեքսեյն էր, պասյանս... Լի-
զան Վիկտորին հետաքրքիր չի՛, Վիկտորը կուշտ է
կանանցով:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Զարմանալի է, ո՞ւմ ես դու քա-
շել այդքա՛ն անամոթ:

ԱՆՏՈՆԻՆԱ Լիզան հասկանում է, որ Վիկտորը
ընկել է իմ օժիտի ետևից և շարացնում է նրան, իսկ

նա վախենում է, որ չիզան կվարկաբեկի նրան իմ և
քո աչքում...

ԴՈՍՏԻԳԱԵՎ (խառնելով խաղաթղթերը) Չէ՛,
աստված վկա, հիանալի է: Հայացքներ դու բոլորո-
վին շունես, բայց մարդկանց տեսնում ես պարզ ու
որոշ. .

ԱՆՏՈՆԻՆԱ Ես, հայրի՛կ, ունեմ հայացք.

Մարդը մրսում է, մրսում,
Ուրիշի կյանքն է մարսում,
Իսկ ինչո՞ւ է մրսում — դե,
Այդ նա ի՛նքն էլ չգիտե

ԴՈՍՏԻԳԱԵՎ Միշտ ոտանավորիկներ, հանւ ք-
ներ, օպերետոշկաներ . Իսկ հայրդ, սլարտավոր է,
հասկանում ես, սլա՛ր-տա՛ւ-վո՛ր է համադրել, կշոս-
դատել, հարմարեցնել, այո՛ւ: Եվ, ահա, շրջում ես դու
հորդ առաջ պապիրոսը բերանիդ և .. ոչի՛նչ աղջկա-
յին շկա քո մեջ: Ոչի՛նչ շկա: Ապշեցուցիչ բան: Նույ-
նը և Սաշկա Բուլըշովան: Այսօր չի՞ գիշերել:

ԱՆՏՈՆԻՆԱ Չի՛ գիշերել:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ափսո՛ս, մեռավ Եգորը, կխոցեր
աղջիկը նրա լյարդը մի քիչ... Թեև . սատանան ինքը
գիտե, թե նա ո՛նց կնայեր այդ ֆոկոսին. Ա՛յ, դուրս
եկավ, որ ոչ թե նրա լյարդն էր հիվանդ այլ .. ինչ
որ այլ բան Ը՛ն-այո՛ո՛, Շուրոշկա... Բո շե՛կ կնե՛ո՛ի՛ն
է հարմարվել: Քույրը վռնդել է տնից: Նու, լավ, դու
ժամանակավորապես հյուրընկալել ես նրան, իսկ հետո
ի՛նչ: Ո՞ւր կգնա:

ԱՆՏՈՆԻՆԱ Հավանական է, բոլշևիկների հետ...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Մինչև բա՛հտ, աքսո՞ր: Ի դեպ,

չգիտե՞ս ինչու են նրա ընկերները կարծես սսկվել, ա՛,
ԱՆՏՈՆԻՆԱ Չեմ հետաքրքրվել:
ԴՈՍՏԻԳԱԵՎ Հետաքրքրվի՛ր, հարցրո՛ւ նրա-
նից, իմացի՛ր:

ԵԼԻՋԱՎԵՏԱ (ձախ դռնից) Օ՛յ, ի՛նչ գորշ
ձանձրույթ եք սփռել. .

ՎԻԿՏՈՐ ՆԵՍՏՐԱՇՆԻ (ամբողջովին նոր սմո-
կինգով, խոսում է առաերկուրյուն շվերցնող տոնով)
Թույլ տվեք վերջացնեմ ..

ԴՈՍՏԻԳԱԵՎ Թույլատրում եմ, ասա՛:

ՎԻԿՏՈՐ Ես զարգացնում եմ հասարակ մի
միտք՝ ոչ մի տեղ աշխարհում այնքան շատ չեն կար-
դում, որքան մեզանում, կարելի է ասել, որ գիրքը
և օղին— երկրի գլխավոր սնունդն են...

ԴՈՍՏԻԳԱԵՎ (պասյանս բանալով) Հը՛մ... Թե-
կուզե փշում ես— բայց շարունակի՛ր:

ՎԻԿՏՈՐ Մենք գրքի հսկայական շուկա
ունենք, բայց չկա հրատարակչություն, որը լայնորեն
հասկանա գրքի սոցիալական-կրթիչ դերը...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Սոցիալական՞: Որտեղի՛ց սկսեց:

ՎԻԿՏՈՐ Որը գլխի ընկներ մենաշնորհ դարձնել
հրատարակչական գործը և իր վրա վերցնեք, իհարկե,
կառավարության ֆինանսական օգնությամբ և ցուցում-
ներով պարտավորություն՝ պայքարելու սոցիալիստա-
կան, ընդհանրապես, հակապետական գրականության
դեմ, բոլոր այդ մարքսերի և այլն: Շատ տարօրինակ
է, որ պատերազմից առաջ, երբ մեր արդյունաբե-
րությունը կենդանացավ...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այդպե՛ս, այդպե՛ս, այդպե՛ս...

ՎԻԿՏՈՐ Դուք— հեզնո՞ւմ եք:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ե՛ս: Վալետն իր տեղը շղրի և
այդ պատճառով էլ պատժվեցի: (Խառնում է խաղա-
թղթերը):

Ալեքսեյը վերադարձել է, շնչում է խորթ մոր
հետ, վերջինս բացասաբար գլխով է անում:

ՎԻԿՏՈՐ (մի փոքր նեղացած է) Ես միանգա-
մայն համոզված եմ, որ երկրի իդեոլոգիական սնուն-
դի իրավունքը պետք է պատկանի հասարակության
ա՛յն խավին, որի ձեռքին կենտրոնացված է արդյու-
նաբերությունը և առևտուրը:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Նշանակում է՝ դիետայի ենթար-
կել— իրավո՞ւնքը: Օրինակ՝ կե՛ր միայն հորթի մի՞ս:
Կարդա՛ միայն վարք սրբո՞ց: Ա՛խ, Վիկտո՛ր, Վիկտո՛ր,
քո բերանով մարդ բորդո խմի, տաքուկ, սանտ-էս-
տեպ, այնպիսի փայփայիչ գինի:

ԵԼԻՉԱՎԵՏԱ Բերե՛մ:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Վիկտոր— նշանակում է՝ հաղթա-
նակո՞ղ: Ամեն ինչ հասարակ է քեզ մոտ, պարզ և—
ճիշտ. մենաշնորհն օգտակար է, սոցիալիզմը՝ վնա-
սակար, շոր խոտը՝ հա՛րդ է: Սակայն անհրաժեշտ է
խորհել ոչ միայն որակի, այլև քանակի մասին... Ա՛յ,
կան այդպիսի բժիշկներ— թույներով են բուժում
բժշկում,— հասկանո՞ւմ ես,— թույներո՞վ: Վերցնում
եմ մի կաթիլ ամենուժեղ թույն, բաց են անում այն մի
տակառի ամենամաքուր ջրի մեջ և տալիս են հիվանդ-
ներին այդ ջրից մի կաթիլ օրական...

ՎԻԿՏՈՐ (դժկամությամբ) Այդ դուք... շատ
սրամիտ...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Նո՛ւ, ենթադրենք, ո՛չ շատ: Եվ

այդ ո՛չ թե ես, այլ բժիշկները: Իսկ դու դատում ես
առանց հաշվի առնելու բուժնեխններին...

ՎԻԿՏՈՐ Սահմանադիր ժողովը նրանց կճգմի...
ԳՈՍՏԻԳԱԵՎ Արդյո՞ք:

ՎԻԿՏՈՐ Անխուսափելիորեն կոշնչացնի:
ԳՈՍՏԻԳԱԵՎ Այդպե՛ս: Բայց — եթե ոշնչաց-
նենք բոլոր ճանճերին, ինչի՞ց պիտի փղեր շինենք...

ԵԼԻՉԱՎԵՏԱ Ա՛խ, Վա՛սյա, շեմ սիրում, երբ
դու խոսում ես, ինչպես խելառ: Գինին — այստե՞ղ,
թե՞ սեղանատանը:

ԳՈՍՏԻԳԱԵՎ Սեղանատա՛նը: (Նայում է Վիկ-
տորին, Ալեքսեյին, աղջկան) Նո՛ւ, դուք այստեղ իդեո-
լոգիապես որևէ բան ծամեք, իսկ սեղանատանը կխը-
մենք... Լիզավետա, մի սպասի՛ր... (Գնաց կնոջ ետե-
վից):

ՎԻԿՏՈՐ Ինչքա՛ն... կենդանի մարդ է Վասիլի
Եֆիմովիչը:

ԱԼԵՔՍԵՅ (խոժոռ) Ապրի՛ր նրա հետ — կի-
մանաս՝ ինչքա՛ն...

ՎԻԿՏՈՐ Ձեզ դուր գալի՞ս է իմ գաղափարը:
ԱՆՏՈՆԻՆԱ Գաղափա՞ր: Ի՞նչ գաղափար:

ՎԻԿՏՈՐ Մենաշնորհ հրատարակչության:

ԱՆՏՈՆԻՆԱ Մի՞թե դա գաղափար է: Դա —
առևտուր է: Դուք պատրաստվում եք գիրք վաճառել,
գրքեր վաճառում են ճի՛շտ այնպես, ինչպես կոշիկներ,
արթուկներ...

ՎԻԿՏՈՐ Իսկ դուք հա երազում եք բարձր
նպատակների մասին: Ես ընդունում եմ, որ ինչ-որ
բարձր տեսակետից, գրքի առևտուրը վուլգար գործ է:
Բայց բարձր տեսակետը միմիայն նրա համար է օգ-

տակաք, որ նրա կատարից ընկնելով Երազողները մահացու կերպով շախջախվում են:

ԱՆՏՈՆԻՆԱ Այդ սենտենցն ինձ ծանոթ է: Չեմ հիշում՝ ո՞ւմ մոտ եմ կարդացել:

ԱԼԵՔՍԵՅ Մի՛ շարանա, Անտո՛շկա:

ԱՆՏՈՆԻՆԱ Ես շեմ շարանում: Մրսում եմ: (Գնաց փոփրիկ դռնով):

ՎԻԿՏՈՐ Ահռելի երես տված են վաճառականների աղջիկները:

ԱԼԵՔՍԵՅ Ո՛չ բոլորը:

ՎԻԿՏՈՐ Ամենահետաքրքիրները:

ԱԼԵՔՍԵՅ Այսինքն՝ հարուստները:

ՎԻԿՏՈՐ Դու երեկ — տարվեցի՞ր:

ԱԼԵՔՍԵՅ Այո... Սատանա՛... Եվ վճարել — ցարական դրամով: Իսկ ես որտե՞ղ գտնեմ ցարական: Խորթ մայրս շի տալիս:

ՎԻԿՏՈՐ (ծխելով) Սպաները թուղթ են խազում կասկածելի հաջողակ:

ԱԼԵՔՍԵՅ Ես — հարբեցի... Ինչ-որ մեկը հանել է ժամացույցս՝ հորս նվերը: Ատրճանակս էլ է կորել...

ՎԻԿՏՈՐ Ի՞նչ ես կարծում՝ Անտոնինան ինձ կառնի՞:

ԱԼԵՔՍԵՅ Իհարկե՛: Նա էլ ո՞ւր ունի զնալու:

ՎԻԿՏՈՐ Քեզ չի՞ թվում, որ Ալեքսանդրա Բուլըշովան վատ է ազդում նրա վրա:

ԱԼԵՔՍԵՅ Հազի՛վ թե... Անտոշկան ինչ-որ ա՛յլ կողմ է քաշում:

ԳԼԱՑԻՐԱ Խնդրում եմ սեղանատուն:

ՎԻԿՏՈՐ (զարմացել է) Իսկ սա ինչո՞ւ է ձեզ

մատ:

ԱԼԵՔՍԵՅ Նրան էլ Չվանցովն է դուրս արել,
իսկ մեր ծառայողները ավելորդ բաներ էին խոսել:
Խորթ մայրս Գլաֆիրային գրավեց անմիջապես Բու-
լըշովի մահից հետո: Ի՞նչ է, քո նոր մադամը քեզ
թա՞նկ է նստում:

ՎԻԿՏՈՐ Ո՛չ, էժան: Բայց— լա՞վն է, ճիշտ
չէ՞:

ԱԼԵՔՍԵՅ Այո՛: Գնա՞նք:

ՎԻԿՏՈՐ Չափազանց հմուտ սիրուհի է:

ԱԼԵՔՍԵՅ Լսի՛ր, ինչո՞ւ է քո հայրը թերթի թուղ-
թը թաքցրել:

ՎԻԿՏՈՐ Դու գիտես որ իմ ծնողի գործերը ինձ
չեն հետաքրքրում: Իսկ ա՛յ, քո էպիկուրյան հայրիկը
հանաքներ է անում հնադավան և հոգնեցուցիչ ձևով:
Եվ նրա այդ եղանակը՝ թաքնվել դատարկ խոսքերի
մեջ— բուլորին հայտնի է, ո՛չ ոքի չի խաբի...

Գնացին: Միաժամանակ՝ աջ դռնից՝ Գլաֆիրան,
ձախից՝ Ելիզավետան, ձեռքին մի վազա խըն-
ձոր:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Դուք ի՞նչ եք ուզում, Գլա՛շա:
ԳԼԱՖԻՐԱ Գուցե հավաքել է պետք, բան-
ման:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Ամեն ինչ կարգին է: Ա՛յ, տա-
րե՛ք սեղանատուն, ես հիմա կգամ: (Գնում է դեպի
Անտոնինայի սենյակի դուռը, դուռը փակ է, բախում է):

ԱՆՏՈՆԻՆԱ Այդ դո՞ւ ես: Ի՞նչ կա:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Վիկտորի՞ց ես փախչում: Ա՛յ
թե հիմարն է, ա՞: Հավատացած է, որ ես պատրաստ
եմ գիրկս բաց անել նրան, սպիտակ սա՛գ: Դու ի՞նչ

ես հա թաքնվում, Անտո՛շկա: Բեռնավորվել եք Շու-
րայի հետ գրքերով և ապրում եք... անուրախ, ինչ-
պես մկները: Ինձնի՛ց օրինակ վերցնեիք. հիմար եմ,
բայց ապրում եմ թեթև, և ամեն բան ներվում է
ինձ. .

ԱՆՏՈՆԻՆԱ Երևի ո՛չ ամեն բան, ա՛յ, առա-
վոտը, ո՛նց էր հայրիկը գոռում և ոտքերով դոփում
քեզ վրա:

ԵԼԻՉԱՎԵՏԱ Բայց չէ՞ որ ներեց: (Բռնելով
խորթ աղջկա ուսերից, ցնցում է նրան) Օ՛, Անտո՛-
շա, եթե դու տեսնեիր այդ գնդապետ Երմակովին:
Ա՛յ տղամարդ: Նա քաղաքացիական զգեստով էլ
ուզմիկ է: Ահագի՛ն աչքեր: Չեռե՛ր: Գիտե՞ս .. էն-
պիսի. . իսկական գազանային ոռմանի համար: Սպա-
նե՛լ կարող է: Երբ ես նրան տեսնում եմ՝ ոտքերս դո-
ղում են... Չէ՛, դու— շլատ ես, պաղ, դու շես կարող
հասկանալ... Վասիլի Եֆիմովիչն, իհարկե, պիտի
խանդի, նա ամուսին է: Պիտի՛:

ԱՆՏՈՆԻՆԱ Պիտի՛: Այդ բառի մեջ ինչ-որ
ընդհանուր բան կա «սուտ» բառի հետ: Պիտի-ստի...

ԵԼԻՉԱՎԵՏԱ Նո՛ւ, ա՛յ, սկսվեց փիլիսոփայու-
թյունը: Այդ դու հորիցդ ես սովորել բառերի հետ խա-
ղալ: Բայց, ախր, նա խաղում է նրա համար... որ-
պեսզի բուրրին տանի: Իսկ քեզ, Անտոնի՛նա, հարկա-
վոր է սատանային նետել բուրր բառերը և ապրել
հասարակ, առանց հնարքների: Ա՛խ, Տոնկա՛, ո՞ւմ եմ
ես նախանձում՝ ա՛յդ— Եկատերինա Երկրորդին, թա-
գուհուն, ա՛յ, իմանում էր նա տանը հարմար շուն
գտնել... (ականջ դրեց) Իսկ հայրիկը... դու նրան
չես հասկանում...

Դոստիգանք պորտյեի ետևն է, մուք սեճյակում.

ԵԼԻՉԱՎԵՏԱ (կամացուկ, բայց տախաղած) Նա լա՛վն է, նրա հետ հե՛շտ է: Առաջին խելոքն է քաղաքում, այո՛... Նա .. ո՞նց են ասում: Երի-փոկեակա՞ն է, ի՞նչ է...

ԴՈՍՏԻԳԱԵՎ էպի-կու-րեակա՞ն Ա՛խ, դո՛ւ, տգիտությա՛ն ճիվաղ... Դուք ի՞նչ եք այստեղ անում:

ԵԼԻՉԱՎԵՏԱ Քեզ ենք գովում:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այդ դուք իմ ներկայությամբ էլ կարող եք, ես ամաչկոտ շեմ: Դու, աղվե՛ս, գնա սեղանատուն, այնտեղ սատանան տերտեր է բերել, անհայտ է, թե ինչո՞ւ: Տերտերն ասում է, որ բանվորների սավետում ինչ-որ կարևոր տեղեկություններ կան Պետրոգրադից... Իբրև թե ինչ-որ արտակարգ բան է պատահել: Քեզ, Անտո՛շկա, Բուլըշովան շի՞ ասել, թե ինչ են ձեռնարկում բուլշևիկները:

ԱՆՏՈՆԻՆԱ Երկրորդ անգամ եք հարցնում ինձ այդ մասին:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Երրորդ անգամ է՛լ կհարցնեմ: Քրքրվում ես միշտ, նեղանում, իսկ ո՞ւմ վրա: Մարդու գնայիր Վիկտորին .. Հաղթանակողի՞ն... Տղան ուղածիդ շափ հիմար է և պի՛նդ հարուստ: Էլ ի՞նչ է պետք: Կֆոռացների նրան, ինչպես Վայրկա Բուլըշովան — Անդրյուշային: Վայրկան հո աչք է տնկել այն Գրանսուհուն .. ո՞նց է անունը .. Կարդացի երեկ բարտանում .. մոռացա: Գլո՛ւխը նրա կտրել են: Նո՞ւ,

ԱՆՏՈՆԻՆԱ Մաղամ Ռոլան:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Նու, հա՛: Ուսանում եք, իսկ ոչինչ չգիտեք: Մեկ էլ եղել է... Ռեկամյե, կուշետկայի վրա

պառկած: Ժամանակը պահանջում է, որ նրան— հարմարվեն: Նու... լավ: Հրդեհը սպիրտի գործարանից անցել է փայտի պահեստին, շողքը հսկայական է: Փողոց նայող փեղկերը մեզ մոտ ծածկված են, իսկ այնուհանդերձ, դահլիճում, հատակին, կարմիր շերտեր են ընկած... անհաճո՛ է: Սեղանատանն էլ դուրալի չէ: Գնա՛ մի, Անտո՛շկա, կարգադրի՛ր, որպեսզի բոլորն ալստեղ գան... Հեռո՛ւ փողոցից: (Անտոնինան զնաց) Նո՛ւ, ի՞նչ կա, աղվե՛ս:

ԵԼԻԶԱՎԵՏԱ (անկեղծ) Ես քեզ համար աղվես չեմ, ես քեզ հետ՝ ազնիվ եմ:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (ափերով շպալացնելով նրա այտերին) Հի՛-մաար: Երբեմն և ազնիվ են լինում, սակայն անտեղի:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Ես քեզ, վա՛սյա, առաջին անգամը չէ՛, որ ասում եմ. քեզ բավական է, իսկ ինձ համար— քիչ է:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (նորից) Նո՛ւ. . . Ի՛նչ աստիճանի դու, ստո՛ր, անամոթ ես:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Ո՛չ ստոր եմ, ո՛չ էլ անամոթ: Ես ճիշտն եմ ասում, դու խելոք ես, դու գիտես— ճի՛շտը:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այո՛... Սատանա՛ն քեզ տանի այդ ճիշտի հետ միասին . Հիմա՛ր ես դու... սրբության աստիճան, բնության հրե՛շ: Դու— ստի՛ր, միայն թե հաճելի լինի: Վիրավորական է ինձ համար, թե ոչ, որ ես քեզ համար Տեր եմ: Կսո՞ւմ ես քեզ հետ ոնց եմ խոսում: Տեսնո՞ւմ ես, նո՛ւ:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Տեսնում եմ: Ամե՛ն ինչ տեսնում եմ: Եվ— հասկանում եմ: Իսկ քեզ— չե՛մ ստի: Ստեմ— դու կհասկանաս, և կբանդվի մեր բարեկա-

մությունը, իսկ քո բարեկամութիւնն ինձ համար թանկ է, քան քո սերը...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Է՛խ, Լի՛զկա...

ԵԼԻԶԱՎԵՏԱ Ես քեզանից ոչ մի տեղ չեմ հեռանա , և ոչ ոք էլ ինձ չի գրավի, ո՛չ ոք: Ես գիտեմ— ուրիշ այնպիսին, ինչպես դու ես, չկա՛:

Գլաֆիրան՝ ասեսով, որի վրա երկու շիշ, բիսկվիտներ վազով, խնձոր:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Նո՛ւ, լա՛վ, լո՛ի՛ր: Եվ— ա՛յ ինչ. Պավլինին մի՛ շարացրու, թո՛ղ այդ հիմար սովորութիւնդ: Ընդհանրապես՝ ոչ ոքի շարացնել պետք չէ, այդպիսի օրեր չեն: Ավելորդ բաներ դուրս մի՛ տա: Եվ ժամանակն է, որ դու հայացքներ ունենաս: Ժամանակը վտանգավոր է...

ԵԼԻԶԱՎԵՏԱ Ես սովորել չեմ կարողանում, Վա՛սյա: Դե ես առանց գիտության էլ չեմ վախենում, ինչպես այն աղջիկը, որ երգում է.

Երեք անգամ ամուսնացա

Զվախեցա մի բանից,

Զորրորդ անգամ կամուսնանամ—

Զե՛մ վախենա նրանից...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Դու հանաք մի՛ արա, հանաքի ժամանակ չէ: Վերցնեիր բառարանը, կարդայիր: Ա՛յ, օրինակ, Դարվինը՝ անգլիացին, նա այսպիսի մի հայացք է անցկացնում— հարկավոր է հարմարվել: Ամեն ինչ ապրում է, որովհետև հարմարվել է և ոչ թե պարզապես՝ ծնվել, մեծացել և ապրում է... Անօգնական հիմարի նման:

Անտոնինան՝ արհեստերով:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Քեզ՝ Անտոնկայի հետ միասին,
հարկավոր է կապել իդեոլոգիական սնունդի... դիե-
տայի: Ինչո՞ւ չեն դալիս այստեղ:

ԱՆՏՈՆԻՆԱ Այնտեղ վեճ է Պավլինի հետ:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Է՛, դդումնե՛ր... (Գնում է: Ելի-
զավետան՝ նրա հետ թևանցուկ):

ԳԼԱՅԻՐԱ (մուր սենյակից) Շուրան ուղարկել
է մի ընկերոջ ասելու, որ նա այսօր էլ այստեղ չի գի-
շերելու, շանհանգստանանք: Իսկ եթե ուզում եք տես-
նել նրան, ընկերը կտանի: Նա սավետում է: Շատ
է ուզում ձեզ տեսնել:

ԱՆՏՈՆԻՆԱ Ո՛չ, չե՛մ գնա: Այնպիսի ցեխ է,
կգա՞ հո Շուրան վաղը... մյուս օրը: Նո՛ւ, երբեկցե՛:
(Գլաֆիրան լուռ է) Ինչ-որ լուրջ բա՞ն է սկսվում,
Գլա՛շա:

ԳԼԱՅԻՐԱ Ինձ հայտնի չէ:

ԱՆՏՈՆԻՆԱ Դուք էլ կգնաք նրանց մոտ, հա՞:
Իսկ ես, այ, տեղ շունեմ գնալու: Ո՛չ ձեզ հետ, ո՛չ ձեր
դեմ... ընդունակ չեմ:

ԳԼԱՅԻՐԱ (կոպիտ) Գուցե սխալվում եք դուք:
Նայեցեք մի մարդկանց մոտիկից, որոնք հավատում
են և վճռում...

ԱՆՏՈՆԻՆԱ Ես հավատալու բան չունեմ: Ես
չունեմ այն, ինչով հավատում են: Ես ասում եմ,
իհարկե, ո՛չ նրա համար, որ դուք ինձ խղճաք:

ԳԼԱՅԻՐԱ Ես հասկանում եմ, որ իմ խղճահա-
րությունը դուք իբրև վիրավորանք կընդունեիք ձեզ
համար: Ո՛չ, ես չեմ խղճում: Բայց դժվար է ինձ հա-

վատալ, ինչպե՞ս է էդ, ինչո՞ւ Ապրում էր մարդը
ազատ, կարգում էր գրքեր, որն ուզեր...

ԱՆՏՈՆԻՆԱ Եվ ոչ մի բանի ընդունակ դուրս
չեկավ, հա՞:

ԳԼԱՅԻՐԱ Գուր մենակ շեք, էդպիսիները
շատ են ..

ԱՆՏՈՆԻՆԱ Այդ դուր— մխիթաո՞ւմ եք:

ԳԼԱՅԻՐԱ Չէ՛ ինչո՞ւ համար:

ԱՆՏՈՆԻՆԱ Իսկ ո՞ւր է այն ծիծաղելի միանձ-
նուհին:

ԳԼԱՅԻՐԱ Նա իր տեղը կգտնի .

ԱՆՏՈՆԻՆԱ Նու, գնաք բարով, Գլա՛շա:

ԳԼԱՅԻՐԱ (զարմացել է) Ես, ախր, այսօր չեմ
հեռանում...

ԱՆՏՈՆԻՆԱ Ասացեք Շուրային . Չէ, լավ է
ես կգրեմ նրան..

ԳԼԱՅԻՐԱ Հիմա՞:

ԱՆՏՈՆԻՆԱ Հետո՞: (Գնաց իր սենյակը):

Գլաֆիրա՝ խոժոռված նայում է նրա ետևից,
շարժում է անում դեպի դուռ, բայց թափ
տվեց ձեռքը և գնաց դեպի ձախ կողմի սեն-
յակը, նանապարհ է տալիս Պավլինին, Ալեք-
սեին, Վիկտորին:

ՊԱՎԼԻՆ (զայրացած է) Ցավալի՛, շափա-
ղա՛նց ցավալի է, երիտասարդնե՛ր, որ դուք այդքան
թեթևամտորեն, մակերեսորեն եք վերաբերում այդ-
քան ահավոր լուրերին .

ՎԻԿՏՈՐ Բայց— բացատրեցե՛ք. իսկ ո՞ւր են
կերենսկին, զորքերը ..

ԱԼԵՔՍԵՅ Մինիստրնե՞րը՝

ՊԱՎԼԻՆ Ես ոչինչ բացատրել չեմ կարող: Բայց հավատում եմ ամենաանհնարինին .

ՎԻԿՏՈՐ Նո՛ւ, այո՛, այդ հավատքը— ձեր փեշակն է:

ՊԱՎԼԻՆ Օ՛, աստվա՛ծ իմ, աստվա՛ծ իմ... Ինչե՛ր ենք հարկադրված լսել: Կրկնում եմ ձեզ, որպեսզի խորհեք: Օժտված ենք բանականությամբ մենք աստվածանից, ո՛չ թե անպտուղ մեծամտության մեջ վարժվելու համար, թեև վայել է մեզ իմանալ նաև աղանդները, որպեսզի հմտագույնս ներկայանանք աղանդավորների դեմ...

ԴՈՍՏԻԳՒԵՎ (մտնում է՝ շիշը ձեռին) Ուրեմն՝ Պետրոգրադում կազմվել է նոր կառավարությո՞ւն, բանվորակա՞ն: Նու, և ի՞նչ: Մեր պապերն ու նախահայրերը բանվորներ են եղել, հայրերը՝ բանվորների հե՛տ են ապրել, աշխատել, իսկ ինչո՞ւ մենք շպետք է կարողանանք:

ՊԱՎԼԻՆ Օ՛խ, Վասիլի Եֆի՛մովիչ, ի՞նչ անհաճո եք դուք հանաք անում:

ԴՈՍՏԻԳՒԵՎ Բա՛ց արա, ա՛յ, այս շիշը, Ալյո՛շա, միայն շցնցես, քնքուշ գինի է: (Գրկում է Պավլինի մեջքը, շրջում է նրա հետ) Դու ի՞նչ ես վախենում, հովի՛վդ մեր հոգիների:

ՊԱՎԼԻՆ Ներեցե՛ք, այդ ի՞նչ հարց է: Ռուսաստանի իշխանությունը խլել են անհայտ մարդիկ, որոնցից շատերը այլացեղ են, այլակրոն, իսկ դուք...

ԴՈՍՏԻԳՒԵՎ Իսկ ես չե՛մ հավատում դրան և ոչնչի՛ց չեմ վախենում:

ՊԱՎԼԻՆ Չի՛ կարող լինել, որ շվախենաք, անբնական է դա...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Սպասի՛ր, ինչո՞ւմն է բանը: Ապ-
րում էինք մենք հանաք անելով, հիմարների հաշվին,
նու, ահա՛ կոտորեցին հիմարներին պատերազմում,
իսկ ովքեր մնացին— խելքի են եկել և ուզում են
մեզ հետ մաս ունենալ, կոմպանիոն լինել. .

ՊԱՎԼԻՆ Չարացնում եք դուք ինձ, վասիլի
Եֆիմովիչ:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Չէ՛, դու— կշռադատի՛ր. օրինակ՝
գերմանացիք: Ինչո՞վ է գերմանացին ուժեղ: Նրանով,
որ ըստ Դարվինի է ապրում:

ՊԱՎԼԻՆ Օ՛խ, բավական է: Վաղո՞ւց անտի
հերքված է այդ Դարվինը:

ՎԻԿՏՈՐ Միանգամա՛յն ճիշտ է:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Հերքված է: Այդ մասին շեմ
լսել: Նո՛ւ, թող հերքված լինի, բայց սովորու-
թյունը դեպի նա, այնուամենայնիվ, մնացել է և գեր-
մանացիք հիանալի. . հարմարվում են: Գերմանացին
սոցիալիստից շի վախենում, նա սոցիալիստին էլ է
թույլ տալիս ուտել: Եվ— ի՞նչ ենք մենք տեսնում:
Մեղանում, վեց թվին, կադետները սովորեցնում էին
ժողովրդին՝ հարկ շտա՛ս թագավորին, զինվոր շտա՛ս:
Ժողովուրդը ականջ էլ չդրեց. . այո՛: Իսկ, ա՛յ, գեր-
մանացի բանվորները, սոցիալիստները, 14 թվին,
առանց աչք թարթելու, փող տվին պատերազմի հա-
մար:

ՊԱՎԼԻՆ Թո՛ւյլ տվեք. . անհասկանալի է այդ:

ՎԻԿՏՈՐ Ես էլ շեմ հասկանում՝ ի՞նչ ընդհա-
նուր բան եք տեսնում դուք. .

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ըհը՛. ա՛յ տեսնո՞ւմ եք: Ընդ-
հանուր բան չկա՛:

ՎԻԿՏՈՐ Բայց ո՞րն է ձեր օրինակի իմաստը:
ՊԱՎԼԻՆ Սպասեցե՛ք .. Ի՞նչ բան է:

Աղմուկ, իրարանցում տան ինչ-որ մասում:

ԱԼԵՔՍԵՅ Դա խոհանոցում է. Ինչ-որ մեկը
եկել է:

ՊԱՎԼԻՆ (անհանգստացել է) Այ, տեսնո՞ւմ
եք— ներս են թափվում:

Վիկտորը հանգիստ է

ԴՈՍՏԻԳԱԵՎ (որդուն) Գնա տես՝ ո՞վ է այն-
տեղ:

ՊԱՎԼԻՆ Ես ասում եմ— ամեն ինչ կարելի է
սպասել:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Հյուրերի համար ուշ չէ՛:

ՊԱՎԼԻՆ Ո՞վ է հիմա հյուր գնում: Օ՛, աստ-
վա՛ծ իմ: Իզո՞ւր թողեցիր դու մեզ...

ԵԼԻՉԱՎԵՏԱ (ներս է վազում. կիսաձայն,
տազնապոտ) Վա՛սյա, երևակայի՛ր, Պարֆիրի Պետ-
րովիչը և— Գո՛ւբինը:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (զարմացած) Գուբինը:

ԵԼԻՉԱՎԵՏԱ Այո՛, այո՛:

ՊԱՎԼԻՆ Թույլ տվեք հեռանալ, քանզի խե-
լահեղութուն եմ համարում հանդիպման ռիսկը .

ԴՈՍՏԻԳԱԵՎ Սպասի՛ր, թույլ տուր կշռադա-
տել ..

ԵԼԻՉԱՎԵՏԱ Ներս ընկավ փղի նման:

ՊԱՎԼԻՆ Եվ, իհարկե, հարբած: Ո՛չ, ես,
լավ է...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Դո՛ւ, Պավլին Սավելև, նստի՛ր,
չի խժո՛ի նա քե՛զ: Չէ՛, դու մնա. .

ԵԼԻԶԱՎԵՏԱ (թևանցուկ անելով տերտերին) Ես
ձեզ կպաշտպանեմ...

Մտնում եմ՝ Գուրիեր, Նեստրաշնին, Ալեքսեյը

ԳՈՒՐԻԵՐ Ա՛-ա՛, Պավլի՛ն... Նո՛ւ, լավ, մի՛
վախենա... քո վախտը չի: Բարե՛, Վասի՛լի:

ԳՈՍՏԻԳԱԵՎ Ա՛յ շէի սպասում: Ուրա՛խ եմ...
շա՛տ ուրախ...

ԳՈՒՐԻԵՐ Նու, որտեղի՞ց ուրախ: Ինչի՞ն ես
ուրախ:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ուրախության համար, Վասիլի
Եֆիմովիչ, ուշ է: Բարե՛, հալա:

ԳՈՒՐԻԵՐ Դո՛ւ, Պերֆիրի, միանգամից սկսիր:

ԳՈՍՏԻԳԱԵՎ Ի՞նչ բան է, ա՛: Ի՞նչ է, դուք...
չխնայելով ձեզ, այսպես ասած...

ՆԵՍՏՐԱՇՆԻ Խոսիր դու, Ալեքսեյ Մատվեևիչ,
ես իսկո՛ւյն: (Տանում է որդուն մի կողմ):

ԳՈՍՏԻԳԱԵՎ Գիշերը անհանգստացել եք, ա՛...

ԳՈՒՐԻԵՐ Եկել ենք... խոնարհվելու քո խորա-
մանկությունը... խորամանկամտությունը...

ՆԵՍՏՐԱՇՆԻ (որդուն) Ձին դարպասի մոտ է:
Գնա, ասա՛, որպեսզի մի վազոն թուղթը քշեն իս-
կույն, գիտես ո՞ւր: Վավերաթղթերով— վազոնում
սո՛ղա է: Գլաշարները պատրաստ են: Գործի՛ր:
Ես քեզ կսպասեմ այստեղ: Քաղաքում մենակ չըրջես,
մեկնումեկին վերցրու: Գնա՛: Ձգո՛ւյշ:

ԳՈՒՐԻԵՐ (ծանր, խոժոռ) Լուրերը ճիշտ դուրս
եկան: Եվ որքան վատ է լուրը, այնքան մեջը շատ
ճշմարտություն կա... միշտ այդպես է եղել . Միշտ էլ
վատ օրի համար ենք ապրում:

ՊԱՎԼԻՆ Խորապես ճիշտ է:

ԳՈՒՐԻՆ Դու, այնուամենայնիվ, լռի՛ր, Պավ-
լի՛ն:

ՆՍՏՐԱՇՆԻ (հնչեղ) նո՛ւ, լսեցի՞ր: Կառավա-
րությունը ձերբակալված է, զինվորները բանվորների
հետ թալանել և այրել են Չմեռային սլալատը, Կե-
րենսկին փախել է

ԳՈՒՐԻՆ Ի՞նչ անենք:

ԴՈՍՏԻԳԱՅՎ Ա՛յ-յա՛յ-ա՛յ: Այս ի՛նչ է կա-
տարվում, քաղաքացիներ, ա՞: Հայր Պավլին— ո՞նց
է: Եվ և բոլո՛րը փախչում են: Սերթ մեկը, մերթ՝
մյուսը: Չարություն կանի և կփախչի .. Իսկ Չվան-
ցովը՝ մեր նահանգապետը, Մոսկվա է փախել...

ԳՈՒՐԻՆ Դու պտույտ մի՛ դա, մի՛ ֆոռա..

ՆՍՏՐԱՇՆԻ Մենք եկել ենք խորհրդակցենք
Դու մեզանում խիզախների մեծն ևս համարվում: Քո
խոսքերին մարդիկ ուշադիր են:

ՊԱՎԼԻՆ Միանում եմ սույն գնահատականին:
Ձեզ, Վասիլի Եֆիմովիչ, կլսեն, ձեր ետևից կգնան .

ԳՈՒՐԻՆ Դու, սերտե՛ր, լռի՛ր:

Նյիզավետան փորձում է բաց անել Անտոնինայի
սենյակի դուռը Մատով կանչում է Ալեքսեյին
Վերջինս շուղեց, շմոտեցավ.

ԴՈՍՏԻԳԱՅՎ Ես, իհարկե շատ շնորհակալ
եմ վստահության համար Իսկ ինչ եք առաջարկում
դուք սկսել: Դու, Պարֆիրի Պետրով, հին զորավար
ես— քանի տարի է հրամանատար ևս Միքայել Հրեշ-
տակապետի միության:

ՆՍՏՐԱՇՆԻ Ժամանա՞կն է արդյոք, հին տա-

րիններն ու երախտիքներն հաշվելու: Մենք քեզ հարցնում ենք՝ այդ ի՞նչ ապահովության կոմիտե են կազմակերպել Մոսկվայում: Եվ ո՞վ է այստեղ, մեզանում, այդ կոմիտեն ներկայացնում: Դո՞ւ արդյոք .

ԳՈՒԲԻՆ Եվ ինչպիսի ապահովության մասին է խոսքը:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Մե՞ղ հետ ես դու, թե՞ կաղետների:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ինչքա՞ն, ինչքա՞ն հարցեր, հա՛յր Պավլի՛ն:

Ելիզավետան արագ գնաց, իր հետ տանելով Ալեֆսեյին:

ԳՈՒԲԻՆ Հոգուց մի՛ քաշի, Վասի՛լի:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այնպես եմ համարում, որ հիմնական հարցն է՝ ո՞ւմ հետ եմ ես: Պատասխանը պարզ է. ոչ ոքի հետ, ինձ հետ, ինքս ինձ հետ միայն:

ԳՈՒԲԻՆ Ստո՞ւմ ես:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ես իմ ապահովության մասին ինքս եմ հոգում, հույս չդնելով կոմիտեների վրա. ես— ի՛նքս եմ ինձ համար կոմիտե: Ես— Վարվառա Զվանցովա չե՛մ, կուսակցություն չեմ ներկայացնում...

ՊԱՎԼԻՆ Բայց, ներեցե՛ք հարցը, որքան ես եմ կարողանում հասկանալ, վերաբերում է ընդհանրապես . ձեր հավատալիքների՞ն .

ԴՈՍՏԻԳԱԵՎ (չառացավ) Հավատում եմ աստծուն, բայց— գերադասում եմ կոնյակը,— ասել է մի գնդապետ, շա՛տ լավ է ասել: Եվ ի՞նչ է նշանակում— ընդհանրապես: Սարա՞յ է արդյոք, ուր ամեն տեսակի զիբիլ են հավաքում անպետքության

պատճառով: Ընդհանրապե՛ս .. Ո՞ւմ հետ— ընդհան-
րապես: Ինչո՞ւ համար— ընդհանրապես: Դուք ինձա-
նից խորհուրդ եք հարցնում: Ի՞նչ գործով: Դուք ի՞նչ
եք մտադիր անել:

ԳՈՒԲԻՆ Առժամանակ նստել: Պաշտպանվել:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Մարդ ունե՞ք դրա համար:

ԳՈՒԲԻՆ Ա՛յ— Պորֆի՛րը: Խոսիր դո՞ւ Պերֆի՛լ:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Սպաներ— կան. մարդիկ կճար-
վեն:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ի՞նչ քանակութ՛յամբ: Եվ— բա-
ցի քանակութ՛յունից— որա՛կը պիտի իմանալ:

ԳՈՒԲԻՆ Նա— հարցուփորձ է անում, իսկ ին-
քը ոչինչ չի ասում:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Նկատել է, որ ձեր կողքին Մոկ-
րոուսովն է պինդ քսկռտվում, իսկ բոլորին հայտնի է,
որ նա ժուլիկ է:

ԳՈՒԲԻՆ Ազնիվին էժան շես ճարի:

ՆԵՍՏՐԱՇՆԻ (վնոական) Նո՛ւ, ա՛յ թե ինչ,
Վասիլի Եֆիմովիչ, բավական է պոչ շարժել...

ԵԼԻՉԱՎԵՏԱ (ներս է վազում, կանգ է առնում
և լուռ նայում բոլորին, որոշում է՝ ինչպե՛ս,
ի՞նչ տոնով ասի այն, ինչ ինքը գիտե: Նա
ենշված է, բայց շատ էլ դառնացած չէ և ո՛չ էլ
վախեցած: Ասում է ո՛չ բարձր, ոնց որ դժվա-
րությամբ) Վա՛սյա, Վասիլի Եֆիմովիչ... Ոչ, դա ան-
հնարին է...

ԴՈՍՏԻԳԱԵՎ (բարկացած) Ի՞նչ: Նո՛ւ, ի՞նչ
կա:

ԳՈՒԲԻՆ (Նեստրաշնուն՝ փնթփնթում է) Սար-
քած բան է... Ֆոկուսս է ինչ-որ... Ես քեզ ասում էի...

ԵԼԻԶԱՎԵՏԱ Տոնյան մեռնում է...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Դու, ի՞նչ է, զառանցո՞ւմ ես:

ՊԱՎԼԻՆ Բայց— թո՛ւյլ սովեք: Ո՞նց թե այդ:
Կես ժամ առաջ... նա...

ԳՈՒԲԻՆ Տեսա՞ր: Նույնիսկ Պավլինը չի հա-
վատում...

ԵԼԻԶԱՎԵՏԱ Իրե՛ն խփեց:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Անտոնինա՞ն: Չի... կարող պա-
տահել:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Դեռ շնչում է... Ալեքսե՛յ... բժշկի
ետեի՛ց...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Որտե՞ղ է: (Վազում է մուր սեն-
յակը):

ԵԼԻԶԱՎԵՏԱ Անկյունի սենյակում: (Գնում է
Դոստիգաևի ետևից, հետ նայելով բոլորին) .

ՆԵՍՏՐԱՇՆԻ (Ելիզավետային) Իսկ ի՞նչ պատ-
ճառով: Պետք է պատճա՛ռը բացատրել:

ԳՈՒԲԻՆ Չէ— ո՞նց է: Ես քեզ, Պերֆի՛լ, նա-
խազգուշացնում էի՝ բա՛ն դուրս չի գա:

ՊԱՎԼԻՆ Չեմ կարող շասել՝ շափազանց... ան-
սովոր դեպք: Միանգամայն առողջ օրիորդը...

ՆԵՍՏՐԱՇՆԻ Նո՛ւ, ասենք, նա երես տված էր,
կապրիզոտ...

ԳՈՒԲԻՆ Ախ, վա՛սկա... Ա՛յ թե ոնց, Պավ-
լի՛ն, ա՞: Ամեն ինչ, ախպերս... տրաքվում է...

ՊԱՎԼԻՆ Մեծամտություն, աթեիստական ցնո-
րայնություն— ահա՛ այդպիսի և նման փաստերի
պատճառը:

ԳՈՒԲԻՆ Նու, ի՞նչ ենք անելու այստեղ, Պեր-
ֆի՛լ:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Սպասենք: Պետք է նայել:
ԳՈՒԲԻՆ Աղջկա՞ն, (Գիւնի լցրեց, խմեց) Ես
չեմ գնա, չեմ ուզում: Տան մեջ հանգուցյալներ չեմ
սիրում ես:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ո՞վ է նրանց սիրում .

ԳՈՒԲԻՆ Հարկավոր է այսպես՝ մեռավ— և
իսկույն եկեղեցի, թող այնտեղ մնա: Ճի՞շտ է, Պավ-
լի՞ն:

ՊԱՎԼԻՆ Ենթադրե՛նք:

ԳՈՒԲԻՆ (հառաչելով) Կեղծ մարդ ես դու, այ-
նուամենայնիվ: Դուք բոլորդ, տերտերներդ, շարախոս-
ներ եք աստծո առջև— մեղ, հանցավորներիս համար:

ՆԵՍՏՐԱՇՆԻ (մտածում է բարձր) Իսկ ո՞նց
այս պատահեց: Ապրում էինք, ապրում, շինում էինք
տներ, քաղաքներ, գործարաններ, եկեղեցիներ. . . Եվ
դուրս եկանք բոլորի՞ն օտար: Եվ նույնիսկ իրար:

ԳՈՒԲԻՆ Հենց ա՛յդ է, է՛: Անկուշտ էիր դու
դեպի իշխանությունը, փառքը. .

ՆԵՍՏՐԱՇՆԻ (սրամտելով) Ուտացնում-խմաց-
նում էինք բանակը, դինվորիկներին, դատավորներին,
նահանգապետներին .. Ինչքա՞ն ոստիկանություն

ԳՈՒԲԻՆ Իսկ տերտերնե՞րը: Տերտերներ բաղ-
մացրինք, ինչպես մկներ: Մենք, հնադավաններս,
անտերտեր ենք: Սակայն .. լա՛վ: Չնեղանաս, Պավ-
լին, արի՛ խմենք:

Պավլինը լուռ խոնարհվում է, շրխկացրին,
խմում են:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Իսկ հիշո՞ւմ ես, Լեքսեյ Մատվեև
ո՞նց մենք վեց թվին գործադուլավորներին տրորեցինք:

Ո՞նց սթափվեց ժողովուրդը: Ինձ ինքը նահանգապետն էր լսում: Ես այստեղ բոլոր իշխանություններին սանձեցի .

ԳՈՒԲԻՆ Այո՛-ո՛... Մեծ թափ ցույց տվիր .. Մե՛ծ կատաղություն հայտնաբերեցիր ..

ՆԵՍՏՐԱՇՆԻ Հիմա՞ հասկացար: Իսկ այն ժամանակ գոռո՛ւմ էիր ինձ վրա քաղաքային դումայում, մարդասպա՛ն էիր անվանում:

ԳՈՒԲԻՆ Նու... լա՛վ: Կար, անցավ, բայց— էլի եկավ: Իսկ կատորգից հո բոլորին վերադարձրել են:

ՊԱՎԼԻՆ Դաժանության արդարացի լինելը ասկացուցվում է աստվածաշնչով .. Գալի՛ս են...

ԴՈՍՏԻԳԱԵՎ (մի ձեռքին թաշկինակ, մյուսում՝ ծրար) Հարկավոր է միլիցիա գնալ, կի՛զա. . Վավերացնել է պետք:

ԵԼԻՋԱՎԵՏԱ Գլաշան վազ տվեց:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Մահացավ իմ դուստրը .. Պարֆիրի Պետրովիչ. . Այո՛: Ազատեցե՛ք ինձ: Ուժ չունեմ խոսելու կողմնակի գործերի մասին...

ՆԵՍՏՐԱՇՆԻ Կողմնակի՞... այդ-պե՛ս .

ԳՈՒԲԻՆ Տեսա՞ր, Պերֆիլ: Վասյան հանգուցյալով ե՛լք է խաղում .. Գնա՛նք, եղբա՛յր:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ի՞նչ ես դուրս տալիս, Գո՛ւբին, վայրենի հրե՛շ: Ինչ է նշանակում խաղում է: Դիրքեզ, Պարֆիրի Պետրովիչ, իմ տեղը, մտածիր, որ քո վիկտորը մեռել է:

ԳՈՒԲԻՆ Նո՛ւ, ի՛նչ է էլ: Գնա՛նք:

ԵԼԻՋԱՎԵՏԱ (ներս է վազում) Զինվորնե՛ր:

ՆԵՍՏՐԱՇՆԻ (խոժոռ) Այդ— մերոնք են: Այդ վիկտորն է իմ ետեից ուղարկել:

Ելիզավետան ինչ-որ բանի մասին փսփսում է
ամուսնուն՝

ԴՈՍՏԻԳԱԵՎ (բարձր) Սակայն թո՛ւյլ տուր։
Ո՞նց թե այդ։ Ո՞նց ես դու, Պարֆիրի Պետրովիչ, զին-
վորների կանչում օտար տուն՝ իմ տունը, ի՞նչ իրա-
վունք դու ունես։

ՆԵՍՏՐԱՇՆԻ Այժմ իրավունք չեն հարցնում։

Պավլինը կորչում է մութ սենյակում

ԴՈՍՏԻԳԱԵՎ (բարձրացնելով ձայնը) Այդ ի՞նչ
է նշանակում՝ ձեր զինվորները։ Ո՞ւմ — ձեր։ Ինչի՞
համար։

ԳՈՒԲԻՆ Վախենո՞ւմ ես, վա՛սկա։ Խո՞-խո՞...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Դուք եկաք ինձ մոտ զանազան
ցնդաբանություններով, որոնք ես հրաժարվեցի անգամ
լսել, որի համար վկա է հայր Պավլինը...

Նեստրաշին, ձեռնափայտը հատակին խփելով,
դանդաղ ոտքի է կանգնում, ուղղվում, զարմա-
ցած է իսկ Գուբինն ուզեց բարձրանալ՝ փրո-
վեց, թաղվեց բազկաթոռում, հերթով նայելով
բոլորին շհասկացող, չոված աչքերով։ Այդ դիր-
քով նա մնաց, մինչև որ նրան տարան, լոկ
մեկ-մեկ բարձր խոպալով, կարծես ուզենալով
ասել ինչ-որ բան և ուժ չգտնելով։ Յակով կապ-
տեր կանգնած է աջ դռան մեջ, ատրճառակը
ձեռքին։ Նրա կողքին մորուփավոր զինվոր, 40
տարեկան, հրացանով, երկու նոնակ գոտուն,
տրեխավոր։ Յակովի առջևից մի երիտասարդ
բանվոր, վագոններ յուղող, թուխ, նավթոտած,

յուզոտած, նույնպէս հրացանով Մի քանի վայրկյան լռություն: Դոստիգան՝ թաշկինակը դեմքին սեղմելով, ուտով հենվել է Ելիզավետային.

ՆԵՍՏՐԱՇՆԻ (սկզբում փնթփնթում է, հետո՝ նղնղում) Վկա՞: Ը-հը-ը՛ .. Նշանակում է— թակա՞րդ: Դու ինձ թակա՞րդ սարքեցիր, վա՛սկա, Հուդա, շան որդի: Ճար-պիկ...

ԴՈՍՏԻԳԱՆՎ (նույնպէս նղնղում է) Ես քեզ կանչեցի՞: Կանչեցի՞ ես քեզ: Դու ի՛նքդ եկար: Պավլինը գիտե: Ո՞ւր է նա: Լի՛զա:

Լապտեր ինչ-որ բան է ասում Մորուֆավորին, նա երջանիկ ուրախանում է, գլխով է անում

ՆԵՍՏՐԱՇՆԻ Դո՛ւբին: Դու ճիշտ ասացիր՝ այստեղ ինչ-որ բան սարքված է. . նույնիսկ շես հասկանա՞նա՝ ո՞նց ..

ԼԱՊՏԵՎ Դո՛ւք, Պարֆիրի Պետրով նեստրաշնի, ձերբակալված էք:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Ի՞նչ: Այդ ո՞ւմ կողմից: Դու ո՞վ ես: Ի՛նչ իշխանություն:

ԼԱՊՏԵՎ Այդ դուք կիմանաք այնտեղ, ուր ձեզ կտանեն:

ԵԼԻԶԱՎԵՏԱ (արագ) Յակով Եգորովիչ, մտածեցեք, ինչ դժբախտություն մեզ մոտ՝ Անտոնինան իրեն խփեց:

ՆԵՍՏՐԱՇՆԻ (ծիծաղելով՝ Գուբինին) Կսո՞ւմ ես Իշխանությունը հո Դոստիգանին ծանոթ է ..

ԼԱՊՏԵՎ (գարմացած, շհավառալով) Այդ ո՞նց:
Պատահամ՞աք:

ԵԼԻՋԱՎԵՏԱ Դիտմամբ, նամակ կա Շուրա
Բուլըշովայի համար, շգիտե՞ք, ո՞ւր է նա:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Բոլորը— յուրայիններ են...

ԼԱՊՏԵՎ (Ելիզավետային) Թո՛ւյլ տվեք ..
Այդ— հետո: Գուբին Ալեքսեյ Մատվեն՝ նո՛ւյնպես
ենթակա է ձերբակալության ..

ՆԵՍՏՐԱՇՆԻ Իսկ Դոստիգա՞նը: Նա և՛ս վա-
ճառական է, գործատեր ..

ԼԱՊՏԵՎ Ընկե՛ր Կուզմին, պահակ կանչեցեք—
երկու հոգի:

ՆԵՍՏՐԱՇՆԻ Այնուամենայնիվ, դու ո՞վ ես: Ո՞ւմ
կողմից ես հրամանատար դրված:

ԼԱՊՏԵՎ Նո՛ւ, դուք մի՛ք ձևանա, դուք գիտեք՝
ո՞վ եմ ես: Այն մարդկանց ցուցակում, ում դուք որո-
շել եք վաղը ոնչացնել, ես— վեցերորդ տեղումն եմ:
Ձեր որդին և Մոկրոուսովը ձերբակալված են, մեզ
ամեն բան հայտնի է: Խոսակցություններն այստեղ
ավելորդ են, վաղը կխոսենք:

ՆԵՍՏՐԱՇՆԻ (ծանր նստեց) Այսպե՛ս վա՞-
ղը: Լա՛վ: (Գոռում է) Նո՛ւ, ձերբակալեցի՛ր, նո՛ւ:
Իսկ... Իսկ .. էլի՞ ինչ: Ի՞նչ դատարանով պիտի դա-
տես:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Դու մի՛ գոռա: Մենք քեզ վրա
չենք գոռում: Մեր դատը ճի՛շտ կլինի, մի՛ անհանգրս-
տանա: Դու, արի տես, որ ինձ շե՛ս հիշում: Իսկ ես
քեզ յոթը թվից հիշում եմ...

ՆԵՍՏՐԱՇՆԻ Չիապան . Մոո՛ւթ .

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Ա՛յ քեզ և մոռոթ և— ձիա-
պան

ՆԵՍՏՐԱՇՆԻ Այնուհանդերձ .. Լապտե՛... Ես
ձեզ գիտեմ Բուլըշովի սանիկ: Այնուհանդերձ՝ ինչո՞ւ
համար:

Մտնում եմ Կուզմիներ և երեք զինվոր

ԼԱՊՏԵՎ (ուսերը ցնցելով) Բավական է հի-
մարություն աներ: Դուք նախապատրաստել եք զինված
հարձակում բանվորական, գյուղացիական և զինվո-
րական խորհրդի վրա... Նո՛ւ, այժմ բավարարված եք:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Նա, տեսնո՞ւմ ես, այդ շգի-
տե՛ր: Անելը— անում էր, բայց շգիտեր, երեխա՛ն:
Նա, ինչպես երեխան, խաղ է անում, իսկ ինչի՞ հետ:
էդ շի՛ հասկանում:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Ուրեմն, ա՛յ թե ինչ գործով ես
եկել դու ինձ մոտ, Պարֆիրի Պետրո՛վ: Այ թե ժո-
ղովրդի դեմ ինչ հանցագործություն էիր ուզում ինձ
սաշել:

ԳՈՒԲԻՆ (կանգնեց, փնթփնթում է) Նո՛ւ, ա՛յ,
Պերֆի՛լ, հասար քո սզածին Կործանեցիր ինձ...
վերջնականապես:

ԿՈՒԶՍԻՆ Հապա, քեռիք, գնա՛նք: Ո՞ւր է ձեր
հագուստը: Ժի՛ր քայլեք, շա՛ն դավակներ .

ՆԵՍՏՐԱՇՆԻ (հրելով Գուբինին) Հիմա՛ր: Դու
հարբած ես: Մեզ ոչինչ չեն անի: Չե՛ն համարձակվի:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Սիրում է գոռալ... Ե՛-խե՛-
խե՛...

ԼԱՊՏԵՎ Ո՞ւր է Անտոնինայի նամակը:

Դոստիգաւը տվեց նամակը, ծածկեց աշխարհը
թաշկիւնակով

ԼԱՊՏԵՎ (ծուռ նայելով նրա վրա, կարդում է)
«Մնաս բարով, Շուրա: Ոչ մի բանի չեմ ավստսում:
Միմիայն քեզ հետ երբեմն, ինձ համար լավ էր, ջեր-
մություն էի զգում և գուրգուրանք»: (Լռեց) Շուրկա-
յին այս նամակի մասին խնդրում եմ շատել: Ես
կհանձնեմ այն Շուրային, երբ հարմար կգտնեմ: Գլա-
ֆիրան ձեզ մոտ է:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Երբ նկատաւորին եկավ, ես նրան
ուղարկեցի խորհուրդը, Տյատինի մոտ, ձեզ իմաց
տալու, նա դեռ չի վերադարձել:

Դոստիգաւը զարմացած թարթում է, նայելով
կնոջը

ԼԱՊՏԵՎ Իսկ ո՞ր է Անտոնինան:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Գնա՛նք...

Գնացին Դոստիգաւը կանգնած է սեղանի մոտ,
շփելով նակատը, այտերը, կարծես ուզում է
սրբել ժպիտը դեմքից: Մտնուխալուր զինվորը
շոշափում է դրապիրովկան:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Հիանալի՜ ամբուստյան կտոր է:
Ա՛յ էսպիսի կտորից զինվորներին շինել շեն շինում:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այ՛՛մ կսկսեն կարել սրանից էլ
լավ կտորից:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Շինել շեն կարի, մենք կովել
չենք ուզում:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Պետք է՛լ չի:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Մենք որոշել ենք համոզել բո-
լոր ժողովուրդներին՝ կորչի՛ կռիվը, եղբայրներ, ըն-
կերներ:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այ, էդ ճի՛շտ է:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Նու, էդ է՛, է՛: Ա՛յ, նույնիսկ
դուք հասկանում եք, որ ճիշտ է: Մենք կապիտալիստ-
ներին կխեղդենք և կսկսենք բոլորս խաղաղ, եղբայ-
րական կյանք, ինչպես սովորեցնում է մեզ Լենինը՝
իմաստուն մարդը: Իսկ նեստրաշնիներին— վե՛րջ:
Գա— արյունարբու մարդ է: Նա յոթը թվին էնպես
էր գազանություն անում... Համա թե, ինքներդ որ
էստեղացի եք, ուրեմն գիտեք, թե նա ի՛նչ գարշե-
լին է...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այո՛..

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Իսկ, ա՛յ, ձեր անունի մասին
էն ժամանակ սկանդալ բան չէր լսվում: Թեկուզ
էնպես էլ է պատահում, որ ապրում է մարդ սուսու-
փուս, բայց նրա վնասը ավելի շատ է լինում, քանց
ավազակինը...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Մի բաժակ գինի շե՞ս խմի:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Չէ՛-է՛, չի՛ կարելի՝ ես ոնց որ
սլ սհակ եմ ձեզ մոտ կանգնած:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (տազնապուլ) Մի՞թե ես ձերբա-
կալված եմ:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ էդ ինձ հայտնի չի՛: Նո՛ւ, հա-
մա թե— ես հին զինվոր եմ և իմ գործը գիտեմ: Էն
իրան խփողը— նա ձեր ի՞նչն է:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (ոչ անմիջապես) Նա՞... Աղ-
ջի՛կս...

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Աղ-ջի՞կը:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այո՛. . Այ թե ոնց .. Զահել-
ները...

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Զահելները . վճռական են: Ախ-
մախի պես շեն ուզում ապրեն: Այսինքն՝ հերերս ու
պապերս ապրել են ախմախավարի, իսկ մենք եկեք
ուրիշ տեսակ փորձենք...

Լապտեր լուռ տարավ զինվորին սենյակից:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Գնաց: Նույնիսկ գլուխը շարժեց:
ԵԼԻԶԱՎԵՏԱ Քեզ շա՛տ հարկավոր է նրա
բարևը: Ի-ի՛նչ: Վախեցա՞ր:

ԴՈՍՏԻԳԱԵՎ (լիբկական) Ա՛խ, Լիզո՛կ...
Դու իմ խելոքս, ո՛նց դու այս ամենը... Հիանալի՛:
Ի՛նչ ժամանակին... Եվ Անտոնինայի մասին, և...

ՊԱՎԼԻՆ (դուրս է գալիս մութ սենյակից)
Այո՛, Ելիզավետա Միխայլովնա, ես էլ լցված եմ
հիացմունքով՝ ձեր խելքի առջև:

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այդ ո՛նց դու: Դու որտե՞ղ էիր:
ՊԱՎԼԻՆ Իսկ ես— հեռացա: Ասված է. «Հե-
ռացիր շարից և բարի արարես»: Ես շէի թաքնվում,
բայց աստիճանս— հարկադրում է. Եթե մեկը նա-
յեր պորտյեի ետևը, կտեսներ, որ ես այստեղ եմ:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Դուք, հա՛յր Պավլին, գիշերեցեք
մեզ մոտ:

ՊԱՎԼԻՆ Շնորհակալ եմ: Ուզում էի խնդրել
ձեզ՝ գիշերել: Էլի կրկնում եմ. դուք հիանալի ասացիք
հանգուցյալի մասին...

ԵԼԻԶԱՎԵՏԱ Զխոսե՛նք նրա մասին...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Այո՛: Ի՛նչ կասես: Անընդունակ

էր (բաժակը գինի է լցնում) Նու, ի՞նչ. նշանակում է բանվորների իշխանութիւն, ա՞:

ՊԱՎԼԻՆ Օ՛, տե՛ր իմ: Ե՛վ դառն է, և՛ ծիծաղելի ..

ԵԼԻԶԱՎԵՏԱ Դու, Վա՛սյա, մի՛ անհանգստանա: ԴՈՍՏԻԳԱԵՎ (կշռադատում է) Տյատին, Հապտե, Շո՛ւրկա...

ԵԼԻԶԱՎԵՏԱ Եվ— ինձ մի՛ խանգարի...

ՊԱՎԼԻՆ Բոլորը— երիտասարդութիւն...

ԴՈՍՏԻԳԱԵՎ (կշռադատելով) Ռյաբինին .. Ա՛յ, այդ Ռյաբինինը .. Ի՞նչ քանակութեամբ:

ԵԼԻԶԱՎԵՏԱ Ամեն ինչ լավ կգնա: Ախր ամեն ինչ շատ հասարակ է: Շատ հասարակ է, Վա՛սյա...

ԴՈՍՏԻԳԱԵՎ Խելո՛քիկս: Քո՛ կենացը:

ՊԱՎԼԻՆ Երկա՛ր կյանք:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ (գալիս է) Խմո՛ւմ եք:

ԵԼԻԶԱՎԵՏԱ (զարմացել է) Դուք ի՞նչ եք ուզում, ընկե՛ր: Ինչո՞ւ:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Իսկ մենք, մի քանիսըս, կմնանք էստեղ, դեպքի համար, թե մարդ-մուրդ հյուր կգա ձեզ մոտ.. Նու, ինքներդ էլ, հա՛, ո՛չ դես, ո՛չ դեն: Ա՛յ, ձեզ մոտ տերտեր լույս ընկավ... Հարկավոր է տեսնել, կարող է էլի՛ մեկնումեկը կա...

ԵԼԻԶԱՎԵՏԱ (զայրացած) Ո՛չ ոք մեզ մոտ չկա:

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ Հանկարծ, որ երևա՞ց... Ախր, ա՛յ, տերտե՛րը, նա ոնց որ չկար, իսկ ինքը— ա՛յ... Ոնց որ երկնքից թռավ: Էնպես որ, մենք էստեղ ման կգանք, մտիկ կանենք... Կարող է՛ էլի ուրիշ տեսակի հրաշքներ պատահի:

Պավլինը դանդաղ, մեֆեճայաբար դիմում է
մութ սենյակը

ՄՈՐՈՒՔԱՎՈՐ (ուրախ) Ո՞ւր, ո՞ւր, ո՞ւր, ձերդ
սրբությո՛ւն: Չէ՛, չէ՛ դուք, լավ է, բոլորդ էլ նստեք
էստեղ, իսկ ես ձեզ դարաուլ կքաշեմ:

ԵԼԻՉԱՎԵՏԱ Չհամարձակվե՛ք ծաղրել:

ՄՈՐՈՒՐԱՎՈՐ Ո՞նց թե: Դե ես էդ շե՛մ էլ
իմանում, այսինքն ծաղրել, շե՛մ էլ սիրում: էդ ես հա-
նաք եմ անում, շունքի որ շատ ուրախ... Դուք էն
բանը. Մի՛ք սրտնեղվի, դի՛նջ նստեք: Այ, գինի
անուշ արեք.. Հե՛շտ գործ է, ձեզ ծանոթ. .

Սկսվում է խուզարկո թյունը:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՄԱՍԻՆ

(ԼՁ՝ ՕՐԱԳՐԻՑ)

Ներկայումս ամբողջ Խորհրդային Միության մեջ միակ գրողը, որ չի կորցրել իր գրական ոճը և գրողական կերպարանքը և կարող է ամեն ինչի մասին գրել իր սեփական խոսքերով և ոչ թե շաբլոնային, տրաֆարետային «իդեոլոգիական ոճով» — Մաքսիմ Գորկին է։ Նա, օրինակ, կարող է առաջաբան գրել որևէ հեղինակի մասին — և ոչ մի խոսք չասել այդ գրողի դասակարգային էության վերաբերյալ։ Բացի այս — նա կարող է, նրան արված է վսեմ իրավունք, խոսել ստեղծագործության մասին այնպես, ինչպես կարող է խոսել ընդհանրապես մարդը, դրվատել ստեղծագործության հոգևոր հաճույքը, մեծարել բնականը և մարդկայինը, սերը և հումանիտար զգացմունքները գրականության մեջ։ Այս տեսակետից զարմանալի ունիկումներ են ամբողջ Խորհրդային պուբլիցիստիկայի մեջ Գորկու առաջաբանները Ստեֆան Ցվայգի և Միխայիլ Պրիշվինի մասին։ Կարդում ես այդ առաջաբանները և... դարմանում ու հիանում։ Երևակայելն անզամ դժվար է, որ այսօր մի գրող կարող է իր սեփական խոսքերով, իր հոգու խորքից գովել գրականության մեջ ընդհանրապես «սերը» և հայտնել սիրո մասին այն կարծիքը, որ այդ զգացմունքը վսեմացնում է մարդուն, ազնվացնում ու բարձրացնում...

որ ներկայումս, երբ այնքա՛ն կոպտացել են բարբ-
րը, առանձնապես մեծ նշանակութիւնն է ստանում այն
գրականութիւնը, որը պատկերացնում է սիրո մաք-
րող, վսեմացնող և ազնվացնող դերը . Հալատալ ան-
գամ դժվարանում ես, որ այս ինքնին ոչ մի առանձ-
նակի նորութիւն չներկայացնող խոսքերը ներկայումս
մեզանում կարող է գրել մի գրող .. Բայց, դժբախտա-
բար,— միայն մի գրող:— Այսօր միայն նա, Գորկին,
իրավունք ունի այսպես գրելու,— և ուրիշ ոչ ոք ամ-
բողջ Միութեան մեջ .. Եվ սարսափում ես մտածելով,
որ Գորկու մահից հետո կկտրվի այս միակ ձայնը ևս
այս միակ մաքղկային ձայնը մեր իրականութեան
մեջ— և մեր ամբողջ պուբլիցիստիկան կդառնա շաբ-
լոն ու տրաֆարետային...

23 III. 1934

ՄԵԾԱԳՈՒՅՆ ԿՈՐՈՒՍ

Գորկու մահը մեծագույն կորուստ է ոչ միայն
խորհրդային ողջ կուլտուրայի և գրականութեան՝ աշ-
խարհում ամենագաղափարական գրականութեան հա-
մար, այլև ապագայի մարդու հումանիստական կուլ-
տուրայի համար, այն մարդու, որը իր հորհրդային
Միութեան մեջ այսօր կառուցում է այդ կուլտուրայի
հիմքը: Գորկին իր մեջ հավաքում էր իր հորհրդային
մշակույթի ողջ լավագույնը, հանձնում էր այն ողջ աշ-
խարհին: Սրա մեջ էր Գորկու հատուկ նշանակութիւ-
նը: Կուլտուրական մարդկութեան լավագույն մասը մեք

Միութիւնից դուրս Գորկու մեջ տեսնում էր նոր աշխարհի կուլտուրայի առաջնորդին, որը աշխատավորների ազնիվ պոտենցիան կոչում էր դեպի կոմունիստական ապագան:

Ես համոզված եմ, որ խորհրդային գրական հասարակայնութիւնը և այսօր մեզ հետ քայլող և մեզ հետ սգացող համաշխարհային հասարակայնութիւնը, անպայման կիրականացնեն այն մեծ գործը, որը... հանձին Գորկու գտնում էր իր լավագույն ներկայացուցչին, երգչին, դեկավարին:

Հայ բանաստեղծ Եղիշե Չարեհց

1934

ՀԱՆՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՍՏՂԵՐԻ ՈՒՂԻՆ

(Ալեքսեյ Պեշկովի հիշատակին)

«Լեզենդը»

Մեռավ Ալեքսեյ Պեշկովը, լեզենդական համբավունեցող այն մարդը, որ հայտնի էր ամբողջ աշխարհին Մաքսիմ Գորկի անունով, որպես ոուս հանճարեղ գրող:

«Մաքսիմ Գորկի»

Այս անունն անցյալ դարի վերջին տասնամյակում կայծակի արագութեամբ սավառնեց ամբողջ աշխարհի վրա, երկրագնդի բոլոր մասերում, իբրև ցա-

րական Ռուսաստանի սոցիալական ամենի օվկիանի հատակից ելած մի հրաշալի մարդու անուն, մի տարօրինակ դեմքով մարդու, որի հոշակավոր լուսանկարը տպվում էր աշխարհում գոյություն ունեցող բոլոր թերթերում ու ժուռնալներում, և ամենուր՝ նախյան Կարսում թե Սան Ֆրանցիսկոյում՝ այդ լուսանկարից նայում էր ռուսական լյումպենի կոպիտ դեմքով, բայց զարմանալի խոր, հմայիչ, խոհուն աչքերով բարձրահասակ մի մարդ՝ հազին ռուսական շապիկ, երկայնավիզ կոշիկներ և գլխին գավառական դերասանի լայնեզր գլխարկ՝ .. Համաշխարհային լեզինդ գարձած «հանճարեղ բոսյակի» ռոմանտիկ կերպարանք էր դա, երիտասարդ Գորկու արտաֆին կերպարանքը, որ կայծակի պես փայլասուակեց մի օր մարդկային կյանքի մթին երկնքում և ընդմիշտ դրոշմված մնաց միլիոնավոր մարդկանց հիշողության մեջ, իբրև սոցիալական ծովի զարհուրելի խորֆից իր հանճարի ուժով մինչև արևի լույսը բարձրացած մի հրաշալի կյանքի խորհրդանիշ, մի հմայիչ հույս՝ բոլոր «խորֆերի բնակիչների» համար և ասեղ ազդանշան՝ մակերեսի» կուշտ ու ինքնագոհ «տերերին»՝ սոցիալական օվկիանի անհուն խորքերում եռացող ուժի վիթխարի թափի մասին...

Բուրժուական «լուսավոր» ինտելիգենցիան ուժ չէր խնայում պատկերելու համար երիտասարդ Գորկուն, իբրև սոցիալական «հրաշխ», իբրև սոցիալական ընդհատակից ելած մի աներևակայելի «վունդերկինդ»՝

Երևակայում եք՝ «հանճարեղ... բոսյակ...»:

Մյուս կողմից՝ այդ, իբրև, հանճարեղ մարդու անծայրածիր հայրենիքում, որ այն ժամանակ մի լայ-

նածավալ թիարան էր՝ մտարածված Սառուցյալից մինչև արևադարձային Իրանի սահմանները, ժողովուրդների այդ անծայրածիր բանտում, հումարյա ամենուր, անխտիր աչգությունից ու լեզվից, բոլոր քաղցածները և հալածվածները, զործագուրկներն ու թափառաշրջիկները այդ մարդու անունով էին կոչում երկաթուղային շորրորդ կարգի գնացրներն ու վագոնները, որ նույնպիսի երկաթուղային «լյումպեններ» էին, ինչպես դրանցով ճանապարհորդները .. «Մաքսիմկան» այն ժամանակ միակ դրոշմն էր, որ մեխվել էր սոցիալական Ներքնախավի գիտակցության մեջ, իբրև նույն այդ խավից ելած մի հերթաթային, բացառիկ համաշխարհահռչակ եղբայրակցի հեռավոր համբավի հեռավոր ցուր... Սակայն այդ հեռավոր ցուրն անգամ վկայում էր այն անսահման ժողովրդականության մասին, որ ուներ Գորկին դեռ դարի առաջին տարիներում: Դա միևնույն ժամանակ ժողովրդի մտքում դրոշմված յուրատեսակ արտաշուլումն էր Գորկու գոյության այն վաղ շրջանի, երբ նրա պատկերը սավառնում էր աշխարհում իբրև սոցիալական հատակից ելած հանճարեղ մարդու մասին բուրժուական մամուլում ստեղծված մի սենտիմենտալ լեզենդ...

*

* *

Գորկու գոյության այսպես ասած մանկական շրջանում ստեղծված և կայծակի արագությամբ ամբողջ աշխարհում տարածված այդ «լեզենդը», «հանճարեղ բոսյակի» շուրջը հյուսված այդ սենտիմենտալ հե-

քիաթը, շատ էին սիրում տարածել և անգամ ընդ-
միշտ հավերժացնել թե՛ ուս, թե՛ համաշխարհային
բուրժուական լիբերալ պրոֆեսորներն ու գրական քըն-
նադատները: Նրանք ջանք չէին խնայում մեխել մարդ-
կության գիտակցության մեջ այդ «սոցիալական վուն-
դերկինդի» պատկերը: Եթե դուք այսօր կարդաք այն
օրերի թեկուզ միայն ուսական գրական քննադատու-
թյունը՝ որքա՛ն ձեզ զարմանալի պիտի թվա այն,
որ Գորկու վրա նայել են միմիայն «հովանավորողի»
աչքերով: Սոցիալական հռչակավոր երկերեսանուց՝
Միխայիլովսկուց սկսած մինչև տխրահռչակ գրական
ցինիկ, միստիկ Ռոզանովը կամ Մերեժկովսկին, ջանք
չեն խնայել համոզելու թե՛ Գորկուն, թե՛ աշխարհին,
որ Գորկին արժեքավոր է միմիայն իբրև «հանճարեղ
բոսյակ» կամ «սոցիալական հատակի վունդերկինդ» և
միմիայն այդ դեպքում, միմիայն իբրև մանեկեն,
նրանց խորհուրդներով շարժվելու դեպքում, նա կդառ-
նա մե՛ծ... արվեստագե՛տ... Որքա՛ն ջանք են թա-
փել նրանք՝ Գորկուն — երևակայո՞ւմ եք Գորկուն —
դարձնելու իրենց հասարակական սիմպատիաներն ար-
տահայտող գրող .. Եվ... իհարկե, անհաջող: «Գոր-
կին», որի անունը ժողովուրդը հպարտությամբ տվել
էր երկաթուղային երթևեկության իր միակ միջոցին՝
«Ց ձի և քառասուն մարդ» տանող վագոններից կազմը-
ված գնացքին, կարո՞ղ էր արդյոք այդ Գորկին դառ-
նալ... սոցիալական ներքնախավի վիթխարի զանգված-
ների ճնշող, հալածող, ճորտացնող տերերի՝ արտոն-
յալների այդ հլու իդեոլոգների համար հարազատ եր-
գասան:

Աճճճարին էր այդ Գորկու համար: Սակայն սո-

ցիալական հատակից դեռ նոր վեր բարձրանալու ճի-
գեր անող մի երիտասարդի, կիսաքաղց թափառա-
շրջիկի մեջ,— որ դեռ նոր պետք է դառնար դրող,
կամ սուզվեր ընդմիջտ քաղցի և անհայտության դար-
հուրելի անդունդը,— ուրիշն կամք, սոցիալական ինք-
նուրյուն և ուժ պետք է լիներ այդ մարդու մեջ,
որպեսզի նա կարողանար դիմադրել իր ժամանակի
գրական հրապարակի ամենագոր «պետերին», դի-
մադրել գրական ասպարեզի տեր ու տնօրեն հանդի-
սացող այդ հղորագույն «սինկլիտին», որին ենթարկ-
վելն ամենահեշտ ճանապարհն էր հռչակվելու համար:

Որպիսի՜ հեզնանք է թվում այժմ Գորկու՝ հազիվ
գրիչ վերցրած այդ երիտասարդի, ալ՛, բոսյակի
հանդեպ ուսական բուրժուական գրականության այն
ժամանակվա «հսկաների» և «առաջնորդների» թափած
ճիգը՝ Գորկուն «հանճարեղ բոսյակի» դիրքում զմուսելու
համար .. Եվ գուցե ուս ժողովրդի ամենախոր «հատա-
կից» բարձրացած այդ ներկարարի աշակերտի, խոհա-
րարի «լակոտի», ծխախոտի ավելցուկ հավաքողի և
ապա հանճարեղ գրող դարձած Ալեքսեյ Պեշկովի կեն-
սագրության մեջ ամենազարմանալին հենց այդ է, այդ
գրանիտյա խլարթյունը, այդ հետո միայն գիտակցված
գրանիտյա անհողողողությունը իրեն «սոցիալական
վունդերկինդի» սրբապատկեր դարձնելու բոլոր գրա-
վիչ և շոյող փորձերի հանդեպ կարծում էին, թե
Գորկին, թեև հանճարեղ, սակայն, ըստ էության՝ մի
սովորական «հրաշք» է, սոցիալական կյանքի մի սո-
վորական քմայք, և նրան նույնքան հեշտ կլինի դնել
իրենց կաղապարի մեջ, արդուկել, լիզել, դարձնել սո-
վորական «ինքնուս հանճարի» մի նմուշ, ինչպես այդ

հեշտությամբ արել է բուրժուական հասարակությունը բոլոր նման դեպքերում. եվ երբ Գորկին, զարմանալի արագությամբ, հանճարեղ մարդու ներքին մշտամով և սոցիալական ինքնագիտակցությամբ, շատ շուտով սկսեց ամեն ճիգ գործ դնել ազատագրվելու համար «հանճարեղ լյումպենի» ռոմանտիկ ամպլուաչից,— և ահա, դեռ այն օրերին, երբ ըստ հին տրադիցիայի, բուրժուական մամուլը շարունակում էր ներկայացնել նրան իբրև «հանճարեղ ինֆնուաի»— այդ, իրոք, որ հանճարեղ ինֆնուար (առանց չակերտների) հանկարծ ցույց տվեց մի այնպիսի դեմք, որ այն ժամանակվա ռուս գրականության «լուսավորյալ» կաճառը, բոլոր գրական-քննադատական «մեծերը» զարմանքից, ավելի շուտ՝ անհանգստությունից կատաղեցին: Իր երիտասարդական օրերի ռոմանտիկաչից զարմանալի կամքով ազատագրվելով մի ֆանի տարում, Գորկին իր ֆենոմենալ աշխատասիրությամբ և ոգու հավասարակըշնությամբ՝ շատ շուտով ոչ միայն հասկացավ ու մերժեց այդ սենտիմենտալ ամպլուան, որով ընդմիշտ սահմանափակել էին ուզում նրան ժամանակակից բուրժուական գրականության «պետերն ու օրենսդիրները», այլև, առասպելական արագությամբ տիրապետելով մարդկային մշակույթի բոլոր բնագավառներին, ինքը դարձավ «պետ» և «օրենսդիր» մի նոր գրականության ու հոգեբանության, որը բացարձակ բացասումն էր իրեն իբրև «լեզենդական լյումպենի» թմբկահարող և մեճարող «լուսալորյալ» կաճառի պետերի— Պլեխանովից մինչև Ռոզանով և Մերեժկովսկի— խորհուրդներին...

«Լուսավորյալ» ուսուցիչներն զւ հեղինակավոր

առաջնորդներն այն ժամանակվա ռուս գրականության
և հասարակական կյանքի,— այսինքն՝ նրանք, որ
հավիտենական կատեգորիա համարելով աիբող սո-
ցիալական-կուլտուրական ռեժիմը՝ ձգտում էին մի
նույնպիսի հավիտենական կատեգորիա դարձնել Գոր-
կու մասին ստեղծած իրենց լիրերալ լեզենդը՝ թե նա
մի «սոցիալական հրաշք» է— այսինքն՝ մի աներե-
վակայելի բազառություն, գարմանալի ֆենոմեն, որը —
երևակայում եք՝ իր օրինակով կենդանի հերքումն է
այն,— Օ՛, իհարկե,— կարծիրի, թե «ժողովրդի»
ստորին խավերի ծոցից շեն կարող ելնել հոգևոր աշ-
խատանքի ընդունակ «տիպեր» ո՞վ է ասում,— ապա
այս «հանճարեղ» լյո՛ւմպենը Բայց որքա՛ն մեծ
եղավ այդ «ժողովրդասեր», պարզապես տիրող դա-
սակարգի կուշտ և արատնյալ մտավորականության
գայրույթը, երբ,— Օ՛, մարդկային անշնորհակալու-
թյուն,— այդ «լյումպենը», որին իրենք նույնիսկ...
ողջունել ու մեծարել էին իբրև ժողովրդի ծոցից ելած
հանճարի— հանկարծ .

Այո՛: Այն տարիներին ռուսական հասարակական
մակերեսի վրա «փայլող» գրական-կուլտուրական ուժե-
րի մեծ մասի համար ոչ միայն անսպասելի, այլև
միանգամայն անսիրելի, տազնապային հանգամանք
Լր Գորկու ինքնաճանաչումն ու ինքնորոշումը՝ տիրա-
պետու գրական-կուլտուրական հրապարակում: Մինչ
այդ ժողովրդի «ցածր խավից» ելած «վունդերկինդ-
ներին» իրենց մտքերի և ճաշակի հլու մանեկեններ
դարձնելու տրադիցիային բնութագրած (Կուլցովից մինչև
Կլուև ..), նրանք— երևակայում եք— հանկարծ դեմ
հն առնում մի «բոսյակի», որը ոչ միայն չի ուզում

կրել «ինֆնուս բոսյակի» «ոմանտիկ» դիմակը, այլև ինֆն է դառնում հոգևոր ինֆնուրույն պետ և ուսուցիչ, զգվանֆով հետ է հրում իրեն կայցրած «վունդերկին-դային» համբավը, — և ահա ուսական հասարակական կյանքում, իբրև մի նոր, անհայտ լեռ, իբրև մի նոր հոգևոր կենտրոն, հառնում է այդ զարմանալի «բոսյակի» նոր կերպարանֆը . Որքան «ոմանտիկ» էր Գորկի-«լյումպենի» կերպարանքը, այնքան խստաբարո և անավոր էր բուրժուական ինքնագոհ, «ժողովրդասեր» ինտելիգենտի համար այս նոր, ինֆնաբավ, սեփական սոցիալական նշմարտության պատվիրաններ կրող Մաֆսիմ Գուկու՝ արդեն ոչ միայն գրող, այլև հասարակական գործիչ և առաջնորդ դարձած Գուկու ֆաղաֆական դեմֆր Որպիսի՛ ոռնոց էր, որ բարձրացավ ժամանակակից «լուսավորյալ» մամուլում և գրականության մեջ այդ նոր Գուկու շուրջը ..

«Գուկին վերջացա՛վ», «Գուկու տաղանդի անհո՛ւյս անկում», — այս էր լեյտամտիվը բուրժուական ողջ մամուլի — Սուվորովին — Ռոզանով — Մերեժկովսկուց — մինչև «լիբերալ» միլյուկովյան ճակատի քննադատներ Այխենվալդ և Իզմայիլով.. Վերջացավ Գորկին՝ «լյումպենի» սենտիմենտալ լեզենդը, — իսկ թե ի՞նչ էր կուտակել իր մեջ, ի՞նչ նշմարտության համառ և անհաշտ մարգարե դարձել այդ նախկին «հրաշալի լյումպենը» — այդ մասին ո՛չ մի բառ չէր գրում բուրժուական մամուլը իսկ այն մամուլը, որը ոչ միայն գրում էր նոր Գուկու մասին, այլև հանձին այդ իսկական Գուկու ողջունում էր նոր աշխատավոր պրոլետարական մարդկության երգչին և այդ մարդկության գա իֆ անպարտելի հաղթանակների մարգարեին,

այդ՝ այսինքն՝ հեղափոխական, սոցիալիստական—
և այն էլ՝ ձախագույն, բոլշևիկյան— մամուլն այն
ժամանակ դեռ ընդհատակյա էր և անմատչելի լայն
խավերին: Սակայն շնայած դրան, Ռուսաստանի բան-
վորության հեղափոխական կազմակերպվածությանն ու
կուլտուրական վերելքին առընթեր արդեն անտեսա-
նելի ճառագայթների նման տարածվում էր և՛ Ռու-
սաստանում, և՛ ողջ աշխարհում,— նոր ուս հանճա-
րեղ գրող, համաշխարհային մեծագույն քաղաքացի
Մաքսիմ Գորկու համբավն ու վարկը,— և արդեն
վաղ մանկության լեզենդ էր դառնում «Գորկի» անվան
հետ կապված հանճարեղ «լյումպենի» ոտմանտիկ մի-
ֆը,— և աշխարհի բոլոր կողմերում լույս տեսնող մա-
մուլի էջերում տպված լուսանկարներից արդեն նա-
յում էր մարդկության նոր նշմարտության ուղիներով
ընթացող ինտելեկտուալ մեծագործության՝ մարգա-
րեի հայացքով նայող՝ մի իմաստուն դեմք— խոհուն
ճակատով և կարճ խուզած մազերով,— առանց նախ-
կին լայնեզր գլխարկի, իսկ ինչ վերաբերում է հա-
գուստին՝ առանց «ռուսական» մելանխոլիկ շապկի և
երկայնավիզ կոշիկների...

Դա արդեն իսկական Գորկին էր, իսկական Ալեքսեյ
Պեշկովը, որ պիտի անմահանար դարերում ո՛չ թե
իրբև սոցիալական օվկիանոսի հատակից ելած մի
ֆենոմեն, այլ իրբև ուս հանճարեղ ժողովրդի ծո-
ցից ծնած մի հանճարեղ գրող ու հանճարեղ ֆաղաֆա-
ցի՝ իր գրական հանճարով սերած Պուշկինի և Տոլս-
տոյի վսեմագույն զարմից՝ վերջին օրգանական օղակը
ռուսական գրականության դասական շղթայի, և իբրև
ֆաղաֆացի՝ պիտի դառնար գալիք աշխատավոր մարդ-

կուրքյան համար մարտնչող մեծագույն ղեկավարների
մեծագույն բարեկամն ու գաղափարակիցը...

Այս Գորկու մասին է ահա, որ *ևս ուղում եմ ասել
իմ հարգանքի, սիրո և մեծարանքի խոսքը*— ոռա
հաննարեղ գրող Մաքսիմ Գորկու մասին, և նույնֆան,
Եթե ոչ ավելի ևս հաննարեղ մարդու, ֆաղափացու՝
Ալեքսեյ Պեշկովի մասին

(Շարունակելի)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շատ լայն ևն եղիշե Չարենցի ստեղծագործական կապերը տարբեր ժամանակների և տարբեր ժողովուրդների մշակույթի ավանդների հետ։ Համաշխարհային մտքի և արվեստի տիտանների հետ նրա հոգեկան առնչակցության սահմանները գնալով ավելի էին ընդարձակվում՝ ուսական պոեզիայից հասնելով մինչև նապոևական բանկաները, արևելքի բանաստեղծներից՝ մինչև շինական ու հնդկական իմաստությունները, մինչև բուդդայական կրոնի ու յոզիզմի խորհուրդները կենելով խորասլես ծանոթ համաշխարհային գրականության անցյալին ու ներկային, ունենալով նաև ուստ գրական կուլտուրա և քափանցող միտք, Չարենցը բազաաիկ խորությամբ է գիտակցել նաև քարզմանական գործի կարևորությունը «Որքան էլ փոքր լինի ժողովուրդը և նրա գրականությունը,— ասում Լե Չարենցը,— վերջինս չի կարող չունենալ իր ինֆուստիսլ, եզակի և անկրկնելի նրբերանգները, որպիսին հատուկ է միայն տվյալ գրականությանը և նրա լավագույն ներկայացուցիչներին։ Թարգմանական գրականությունը կռչված է այդ եզակին փոխ անցելու յուս ազգերի գրականության մեջ, որով և նա նպաստում է տվյալ ազգային գրականության ավանդների զարգացմանը»:

Դեռևս 20-ական րվականներից ոռա իրականության մեջ սկսեցին քարգմանել, նանաշել ու գնահատել Չարենցին Նրա առաջին քարգմանիչներն յէին Բրյուսովը, Ախմատովան, Գատովը Չարենցը շատ լավ էր գիտակցում, թե որքան կարևոր է հարազատորեն ու նիշտ քարգմանվելը վաճի ազգի գրողի համար և ամենայն բծախնդրությամբ էր վերաբերում իր ստեղծագործությունների ոռաերեն քարգմանություններին Թարգմանական գրականության գեղագիտական սկզբունքների շարենցյան ըմբռնման իմաստով, ոռանելի են հատկապես նրա դիտողությունները ոռա գրող և քարգմանիչ Ալ Գատովին՝ իր ստեղծագործություններից կատարած քարգմանությունների առիթով. «Պոեզիան, ախր, խարդախ բան է, եթե նա մի լեզվով հնչում է խոր ու ինքնատիպ, դա դեռ Լեաշխիք չէ, որ մի այլ, ալելի կուլտուրական լեզվով քարգմանված էլ կարող է տպավորություն գործել ես շատ եմ վախենում դրանից, գուցե պետք չէ իմ բանաստեղծությունները ցույց տալ այնպիսի նրբանաշակ ընթերցողների, որոնց համար Պուշկինը, Մայակովսկին, Պաստեռնակը իրենց հայրենական բանաստեղծներն են»

Այսօր Չարենցի երկերը քարգմանված են աշխարհի բազմաթիվ լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, լեներեն, չեխերեն, իտալերեն, ինչպես նաև սովետական ժողովուրդների տարբեր լեզուներով:

Նդիշե Չարենցն ինքն էլ ամբողջ կյանքի ընթացքում, քարգմանական արվեստի իր առաջադրած և մշակած սկզբունքներով ու ամենաբարձր պահանջներով

թարգմանություններ է կատարել ոուս և համաշխարհային գրականության լավագույն ներկայացուցիչների ստեղծագործություններից՝ Նա ժամանակ առ ժամանակ անդրադարձել է իր մտերին ու զգացմունքներին հոգեհարազատ գործերին և դրանք թարգմանել սիրով ու շեմությամբ, արյան ու ոգու թելադրանքով, ինչպես գում էր իր սեփական երկերը Հայ թարգմանական գրականության ամենափայլուն էջերից են Մայակովսկուց, Գորկուց, Վերհառնից, Պուշկինից, Չարենցի կատարած թարգմանությունները: Նրա թարգմանությամբ հայերեն հնչել են նաև Լերմոնտով, Մարշակ, Ն Ասև, Դ. Բեդնի, Թոմաս Հուդ, Իոհանես Բեխեր, Եսենին, Նեկրասով, Հայնե, Վ. Հյուգո, Ուլր Ուիթմեն Առաջին անգամ Չարենցն է հայերեն թարգմանել էժեն Պոտիյեի «Ինտերնացիոնալը»

Բանաստեղծի թղթերում մնացած բազմաթիվ սեփագրերն ու պատասիկները ցույց են տալիս, թե նա ինչպիսի խնամքով, պատասխանատվությամբ ու սրբությամբ է մոտեցել իր թարգմանած գործի յուրաքանչյուր բառին Հանգի ու շափի սիրույն կատարված ոչ մի ավելորդաբանություն չի աղարտում բնագրի ոգին, տողերն ու տները հնչում են պարզ ու հայեցի, ինչպես բանաստեղծի սեփական գործերում Կյանքի վերջին ամիսներին նա թարգմանել է կամ փորձել է թարգմանել մի շարք գործեր, որոնցից շատերը մնացել են անավարտ՝ Պուշկինի «Անխոնջ սերմանող ազատության», «Բաճառակալը», «Մարգարե», Բլոկի «Մի ձայն Երգչախմբից», Բունինի «Հրթիռը», Բայլմոնտի «Սև ծովի եզերքին» Գյոթեի «Ֆաուստի» առաջին մասը և «Գրետիսենի Երգը», Կուլմիենի «Ալեքսանդրյան

երգերից» և այլն Այս թարգմանությունների ոգին համահնչուն է բանաստեղծի այդ օրերի ապրումների և պարզում է նրա տրամադրությունների ելեէջները:

Խորհրդային բազմազգ գրականության արդեն ձեվավորված ուղիների վրա, իբրև «հաննարի մեծագործության» օրինակ և դարի ֆլեումեն, իբրև «վերջին օղակը ռուս դասական գրականության ոսկե շղթայի», Չարենցի հասար առանձնանում է Մախիմ Գորկին Ողջ կյանքում Չարենցը պահեց խորին սեր ու հարգանք հաննարեղ գրողի ու ֆաղափացու հանդեպ

Չարենցը զբաղվել է Գորկու ստեղծագործությունների թարգմանությամբ 1934թ. ընթացքում նրա բանաստեղծությունների ու լեգենդների շարենցյան թարգմանությունները թարգմանական արվեստի կատարյալ նմուշներ են Պատահական չէր, որ Չարենցը ընտրեց հենց այս գործերը «Ամբոխները խելագարված»-ի հեղինակին գրավում էր Գորկու հերոսների հուժկու, ռոմանտիկ, հերոսական ոգին.

Սիրով, թարգմանական արվեստի իրեն հատուկ բարձր սկզբունքներով ու բժախնդրությամբ է թարգմանել Չարենցը նաև Գորկու «Դոստիգուև և ուրիշները» պիեսը, որ տպագրվում է առաջին անգամ

Մախիմ Գորկու բանաստեղծություններն ու լեգենդները Չարենցի թարգմանությամբ առաջին անգամ տպագրվել է առանձին գրքով «Մախիմ Գորկի. Բանաստեղծություններ և լեգենդներ թարգմ. Ե. Չարենցի Հայպետհրատ, Երևան, նկարիչ՝ Հակոբ Կոչոյան»:

Գրքի առաջին էջին հայերեն և ռուսերեն լեզուներով

գրված է՝ «Խորհրդային Գրողների Համամիութենական Սուաչին Համագումարին ՀՍԽՀ Պետհրատ»։ Գրքի առաջաբանի տողաասկում Չարենցը տվել է նաև Տյուտչևի բանաստեղծության մի փաստողի թարգմանությունը, այս առթիվ գրելով. «Տյուտչևի հոշակավոր բանաստեղծության սկիզբն է Տալիս Լեմ արձակ թարգմանությունը. «Նրջանիկ է նա, ով այցելել է աշխարհը նրա նակատագրական բոպեներին. նրան աստվածները կոչել են խնջույքի, իբրև սեղանակցի Մ. Թ.»

Նրկոռդ անգամ «Բանաստեղծություններն ու լեզենդները» Հ Կոչոյանի նույն ձևավորումներով, տպագրվել է 1963 թ. (Հայպետհրատ, Երևան), էդ Ջրբաշյանի առաջաբանով

Մ. Գորկու բանաստեղծությունների և լեզենդների Չարենցի թարգմանության ձևագրերը կամ որևէ պատասիկ ինֆնագրերից, շեն պահպանվել, ուստի մենք տպագրում ենք հեղինակի՝ 1934 թ. հրատարակածի հիման վրա

Թարգմանություններն անթվակիր են պետք է թարգմանած լինի 1934-ի առաջին ամիսներին.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼԵԳԵՆԴՆԵՐ

Մ ր ր կ ա հ ա վ ի Լ ր գ ր

Գրված է 1901 թ մարտին, Նիժնի Նովգորոդում նախապես «Մրրկահավի Երգը» մտնում էր «Գարնանային մեղեդիներ» այլաբանական պատմվածքի կազմի մեջ, իբրև նրա Եզրավակիչ մասը. Սակայն ցարա

կան գրաֆենուրյունը արգելեց «Գարնանային մեղե-
դիների» լրիվ հրատարակությունը, բողոքելով միայն
«Մրրկահավի երգը», որը առաջին անգամ լույս տե-
սավ «Ժիզն» ամսագրի 1901 թ. ապրիլյան համարում
(այդ համարի հրատարակությունից հետո ամսագիրը,
կտավարության որոշմամբ, փակվեց):

«Մրրկահավի երգը» բազմաթիվ հայերեն բարգ-
մանություններ է ունեցել Առաջինը բարգմանել է
Ավ. Իսահակյանը 1901 թ արտասահմանում. բարգմա-
նությունը տպագրվեց արտասահմանյան հայկական
թերթերում

Բանաստեղծության բնագիրը սովորաբար տպա-
գրվում է առանց տողերի հատման և առանձնացման,
արձակի ձևով Չարենցը տեխտը հատել է 10-վան-
կանի տողերի

Բ ա գ է ի ե ռ գ ը

Առաջին անգամ տպագրվել է 1895 թ մարտին,
«Սամարսկայա գազետա» թերթում: Բանաստեղծու-
թյունը մտնում է նույնանուն արձակ պատմվածքի
կազմի մեջ, իբրև ծեր դրիմցի հովիվ Ռահիմի պատ-
մածր «Բագեի երգը» գաղափարական ու ռեական
զգալի մշակման ենթարկվեց 1899 թ.:

«Բագեի երգը» նույնպես ունեցել է բազմաթիվ հա-
յերեն բարգմանություններ, սկսած 1899 թ. «Մուրն»
ամսագրում տպագրված բարգմանությունից

Չարենցը այս դեպքում ևս տեխտը հատել է հա-
վասար (5-վանկանի) տողերի. այդպես է նաև բնա-

գրում, թե՛ տաղերն այնտեղ շեն առանձնացվում, և տեխսոք տպագրվում է արձակի ձևով:

Վ ա լ ա խ ա կ ա ն լ ե գ ե ն դ

Լեգենդի առաջին տարբերակը մտել է «Փոքրիկ փերին և ջահել չոբանի մասին Վալախական հեֆիաթ» ստեղծագործության մեջ, որը գրվել է 1895 թ («Սամարսկայա գազետա»-ում): 1902 թ. Գորկին հիմնովին վերամշակում է բանաստեղծությունը՝ կոմսյոզիտոր Ա. Սպենդիարյանի խնդրանքով, որը հատուկ երգ էր գրում նրա տեխսով («Զկնորսը և փերին», բալլադ, 1903):

«Վալախական լեգենդի» («Լեգենդ Մարկոյի մասին») առաջին հայերեն թարգմանությունը կատարել է Հովհ Թումանյանը 1906թ

Ա դ ջ ի կ ը և մ ա հ ը

Այս չափածո հեֆիաթը գրված է 1892 թ Թիֆլիսում, բայց այն ժամանակ չի տպագրվել գրաֆենական պայմանների պատճառով Հեֆիաթն առաջին անգամ տպագրվել է նրա ստեղծումից ֆսանհինգ տարի անց, 1917 թ. «Նովայա ժիզն» թերթում. Առաջին հայերեն թարգմանությունը կատարել է Ե. Չարենցը:

Ս տ ա խ ո ս ս ա ռ յ ա կ ի և ճ մ ա ռ տ ո յ ա ն
ս ի ռ ա հ ա ռ փ ա յ տ փ ո ռ ի կ ի մ ա ս ի ն

Առաջին անգամ տպագրվել է 1893 թ. («Վոլժսկի վեստնիկ» թերթում), գրաֆենական որոշ կրճատում-

ներով: Այդ կրճատումները առաջին անգամ վերականգնելու համար Մ. Գորկու երկերի ժողովածուի (30 հատորով) առաջին հատորում (Գոսլիտիզդատ, 1949, Մոսկվա), հեղինակի մահից հետո հայտնաբերված օրինակի հիման վրա՝ Ներկա հրատարակչության մեջ ևս վերականգնում ենք այդ առանձին բառերն ու արտահայտությունները, որոնք, բնականաբար, տեղ չեն գտել և Չարենցի թարգմանության մեջ, առնելով դրանք ուղղանկյուն փակագծերում:

Խ ա ն ը և ն ր ա ո Ր Պ Ի Ն

Պատմվածքը գրված է 1895 թ. և առաջին անգամ տպագրվել է 1896 թ. «Նիժնեգորոդսկոյ լիստոկ» թերթում Սկսած 1902 թ. պատմվածքը մի քանի անգամ թարգմանվել է հայերեն:

Բ ա յ լ ա դ Կ ո մ ս ու ի ի է լ լ ե ն դ ե Կ ու Ր ս ի ի մ ա ս ի ն

Ներթադրվում է, որ գրված է 1806 թ., բայց այն ժամանակ չի տպագրվել: Շատ տարիներ անց Գորկին վերամշակում է բալլադը և տպագրում 1917 թ. «Լետոպիս» ամսագրում Ստեղծագործության լրիվ վերնագիրն է՝ «Բալլադ Կոմսուիի էլլեն դե Կուրսիի մասին, զարդարված զանազան խրատներով, որոնց մեջ կան շատ գվարնալիֆներ»: Բալլադի առաջին և միակ թարգմանությունը պատկանում է Չարենցին:

Ի մ թ ա ն կ ա գ ի ն ք ա ռ ե կ ա մ
Լ ու ի ջ ի Ց ա պ ե լ լ ի ի ն

Քառյակն առաջին անգամ գրվել և լույս է տեսել 1905 թ. «Արևի զավակները» պիեսի մեջ: Այդ պիեսում տվյալ ֆառատողը սկիզբն է այն քանաստեղծության, որ գործող անձերից մեկը՝ Վազինը, արտասանում է իբրև պատասխան մի ուրիշ պերսոնաժի՝ Լիգայի, անկումային տրամադրություններով հագեցած քանաստեղծության: Հետագայում, 1911 թ. Գորկին այդ ֆառյակն առանձնացրել է և նամակով նվիրել է իտալացի բանվոր-սոցիալիստ Լուիջի Ցապելլիին:

Դ ո ս տ ի գ ա լ և ու ռ ի շ ն ե ռ ը՛

Մաքսիմ Գորկու «Դոստիգալ և ուրիշները» պիեսը Եղիշե Զարենցը թարգմանել է 1934 թվականին:

Տպագրվում է առաջին անգամ

Մ. Գորկու պիեսը ամբողջությամբ առաջին անգամ տպագրվել է «Год семнадцатый. Альманах третий», Москва, 1933:

30-ական թվականների սկզբներին Գորկին մտածում էր գրել դրամատիկական ցիկլ, որ պետք է պատկերեր մի խոշոր պատմական ժամանակաշրջան՝ Հոկտեմբերյան հեղափոխության նախօրեից մինչև իր օրերի իրադարձությունները: Այդ ցիկլի սկիզբը «Եգոր Բուլրչև և ուրիշները» պիեսն էր (որ առանձին գրքով լույս տեսավ 1932 թ.), շարունակությունն էր՝ «Դոս-

¹ Պիեսի նկարչական ձևավորումը՝ Վ. Հարությունյանի:

տիգակ և ուրիշները», որ ընդգրկում է 1917 թ. հուլիսյան դեպքերից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն ընկած ժամանակահատվածը:

1932 թ. Մ. Գորկու պիեսի ավարտուն տեխստը, բեմադրության համար, հանձնվում է Մոսկվայի Եվգենի Վախրանգովի անվան թատրոնին և Լենինգրադի դրամատիկական Մեծ թատրոնին: Նախապես տպագրվում է միայն երրորդ գործողության վերջին մասը («Рабочий и театр» ամսագիր, 1933): Գորկու կենդանության օրոք այս գործը երկրորդ տպագրություն չի ունեցել և չի մտել նրա երկերի ժողովածուների մեջ: Հետագայում «Год семнадцатый» ամսանախում հրատարակված տեխստի և հեղինակի արխիվում պահպանված ձեռագրի հիման վրա պատրաստված պիեսի բնագիրը գետեղվել է նրա երկերի գիտական հրատարակության մեջ (Մոսկվա, 1952, հատ. 18):

«Դոստիգակ և ուրիշները» պիեսը առաջին անգամ բեմադրվել է 1933 թ. նոյ. 6-ին Լենինգրադի պետական դրամատիկական Մեծ թատրոնում: 1933 թ. նոյ. 25-ին այն բեմադրվել է Մոսկվայի Եվգ. Վախրանգովի անվան թատրոնում, ռեժիսոր՝ Բ. Ն. Զախավա:

Գորկու «Դոստիգակ և ուրիշները» պիեսի Ն. Զարենցի թարգմանությունը միակ հայերեն թարգմանությունն է:

Պիեսը, Զարենցի թարգմանությամբ, առաջին անգամ բեմադրվել է Երևանի պետական դրամատիկական թատրոնում 1934 թ. մայիսի 12-ին. ռեժիսոր՝ Վ. Վարդյան, նկարիչ՝ Մ. Արուտչյան: Դերերը կատարել են՝ Դոստիգակ՝ Ավետ Ավետիսյան, Պավլին՝ Վ. Վարդանյան, Մելանիա՝ Հասմիկ, Քսենիա՝ Օ. Գու-

լագյան, Բետլինգ՝ Ս. Աբեղյան, Ելիզավետա՝
Ա. Մկրտումյան, Ժաննա՝ Արուս Ոսկանյան, Զյոբին՝
Գ. Հարությունյան, Շուրա՝ Ռ. Վարդանյան և ուրիշ-
ներ

Ինչպես վկայում է ժամանակի մամուլը, բեմադրու-
թյունը մեծ հաջողություն է ունեցել: Բեմադրության
մասին դրվատական հոդվածներ են տպագրել համարյա
բոլոր թերթերն ու ամսագրերը: Ամենուրեք այն բնու-
թագրվել է իբրև երևույթ հայ թատերական կյանքում,
իբրև երևանի Պետական թատրոնի նոր նվաճումը,
«թատերական արվեստի բնագավառում ձեռք բերած
հաղթանակներից մեկը»: Դոստիգաևի վառ և գունեղ
կերպարը իր նշմարիտ վերարտադրությունն էր գտել
Ավետ Ավետիսյանի մարմնավորման մեջ, որ ժամա-
նակակիցները որակում են իբրև «փայլուն ղերակա-
տարում»

«Պետրատրոնի վաստակավոր դերասան և ռեժի-
սոր Վ. Վաղարշյանը հասկացել է Գորկու «Դոստիգաև
և ուրիշները» պիեսը և իր աշխատանքը կենտրոնաց-
րել է այդ երկի բնագրի առավել դրսևորման վրա: Նա
իր ամբողջ աշխատանքն ուղղել է «Դոստիգաև և
ուրիշները» պիեսի գեղարվեստական ամբողջականու-
թյան և արժեքի նիշտ վերհանման կողմը: Արդյունք-
ներն առկա են: Վաղարշյանի բեմադրությունն արտա-
հայտել է պիեսի գրեթե բոլոր երանգները: Պիեսի
ներքին իմաստի նիշտ դրսևորումը միայն կարող է
ռեժիսորին տալ դրամատիկական երկի բեմական
մարմնավորման նիշտ բանալին: Այդ ուղղությամբ
կատարված աշխատանքը ռեժիսորին և դեսարաններին
ննարավորություն տվեց ստեղծելու գեղարվեստորեն

արտահայտիչ և տպավորիչ բեմական պատկերներ»:
(Գ. Չախիրյան. «Գորկին Առաջին պետական կարմրա-
դրոշ թատրոնում» «Խորհրդ. արվեստ», հունիս, 20—21,
1934) .

«... Ընդհանուր առմամբ «Դոստիգաև և ուրիշները»
պիեսի բեմադրությունը նոր նվաճում է մեր պետա-
կան թատրոնի ողջ կոլեկտիվի համար. Դրանում իրենց
կարևոր բաժինն ունեն նկարիչ՝ Մ. Արուստյանը և
Ն. Չարենցը, որը վարպետորեն թարգմանել է Գորկու
տեքստը, կուլտուրական և խնամֆով կատարված
թարգմանության օրինակ տալով գեղարվեստական
գրականության մեր թարգմանիչներին ..» (Ռ. Աթա-
յան, Հր. Միրզոյան, Աշ. Ղազարյան. «Դոստիգաև և
ուրիշները» մեր թատրոնում» («Խորհ. Հայաստան»,
5 հունիսի, 1934 թ.) .

«... Պիեսը հարուստ է աֆորիզմներով, լեզուն հյու-
թեղ է, գեղեցիկ (թարգմանությամբ Ն. Չարենցի)...»
(Արամյան, «Դոստիգաև և ուրիշները», «Կուլտուրա-
կան ֆրոնտ», 20 հունիսի, 1934 թ.) :

Հայտնի է, որ, նակատագրի բերումով, Չարենցի
ձեռագրերը ցրվեցին, և մենք հաճախ չգիտենք, թե
դրանք որտեղ են գտնվում: 1954 թ. սկսած մեծ գործ
է կատարվել Չարենցի ամենուր ցրված ձեռագրերը
հավաքելու, ի մի բերելու, ֆայֆայված ինֆնագրերը
վերականգնելու և հրատարակելու ուղղությամբ: Չա-
րենցյան ինֆնագրերի որոնումների և ուսումնասիրու-
թյան նախապարհին ինձ միշտ հուսադրել է այն զգա-
ցումը, թե անհնար է, որ որևէ անտիպ սանդժագոր-
ծության ձեռագիր կորչի անհիշատակ, և նրանից գո-

նե մի ակնարկություն, մի հիշատակություն կամ ուրիշ թերթերի արանում որևէ պատահիկ շպահպանվի:

Նման նակատագիր ունեցավ նաև Չարենցի այս անտիպ թարգմանության՝ «Դաստիգան և ուրիշները» պիեսի ձեռագիրը Մեզ հայտնի էր, որ Չարենցը թարգմանել է Գորկու պիեսը, Չարենցի թղթերի մեջ կան ակնարկներ այդ մասին, բայց պիեսի ինֆնագիրը կամ որևէ պատահիկ նրա ձեռագրերից մեզ չէր հանդիպել երկար տարիների մեր որոնումների ընթացքում:

Միայն վերջերս դոկտոր-պրոֆեսոր Գուրգեն Հովհանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի գիտական խորհրդում հաղորդում արեց թարգմանության ձեռագրի մասին և ինֆնագիրը հանձնեց մեզ: Օգտվելով առիթից, հայտնում ենք նրան մեր խորին շնորհակալությունը:

Ինչպես երևում է ինֆնագրի վրա եղած նշումներից, սա այն վերջնական, լրիվ ավարտված օրինակն է. որ հանձնվել է ռեժիսորին՝ բեմադրության համար: Այն մեֆենագիր է՝ առաջին էջից մինչև վերջին էջը Չարենցի մանրակրկիտ ձեռագիր ուղղումներով և նշումներով

Առաջին էջին, որ ծառայում է իբրև անվանաթերթ, գրված է՝

Մաքսիմ Գորկի

Դաստիգան և ուրիշները

պիես երեք գործողությամբ

Թարգմանեց Եղիշե Չարենց

1934

էջի անկյունում կարմիր թանաֆով, ուրիշի ձեռքով գրված է՝ «Օրինակ № 1», ապա մատիտով, խոշոր տառերով մեկ ուրիշը (երևի ռեժիսորը) գրել է՝ «Հուշարար»: Բազմաթիվ էջերի վրա սև մատիտով արված են ռեժիսորական գրառումներ՝ բեմադրության համար Ինֆնագրի վրա կա և մի երբորդ մարդու ձեռագիրը (կապույտ թանաֆով), որն, ինչպես երևում է, նպատակ է ունեցել «սրբագրել» Չարենցի տեքստը

Այս բոլորի մեջ, հստակորեն առանձնանում է Չարենցի ձեռագիրը՝ մանիշակագույն թանաֆով, հստակ, խոշոր, հատ-հատ տառերով, որ երևում է հենց անվանաթերթի վրա՝ գրված այնպես, ինչպես ընդհանրապես սովորություն ունի ձևավորել իր նոր ավարտած ստեղծագործությունը: Անվանաթերթի վրա Չարենցը նշտել է վերնագիրը՝ «Դաստիգակ և ուրիշները»:

Պիեսը հրատարակության պատրաստելիս, մենք աշխատել ենք ճշգրտորեն վերականգնել Չարենցի բնագիրը, որ անաղարտ մնա հեղինակային տեքստը Մենք ոկգբուհի ենք ունեցել փոխել միայն հին ուղղագրությունը հիմնականում պահպանելով հեղինակի գրության ձևերը: Վերնագիրը, այն օրերի մամուլում, գրում են՝ «Դաստիգակը և ուրիշները», «Դաստիգակ և ուրիշները» և այլն: Չարենցը հատուկ իմաստ է դրել «Դաստիգակ և ուրիշները» ձևի մեջ, և մենք պահպանել ենք նրա գրության ձևը: Փոխել և ժամանակակից ուղղագրությամբ ենք դարձրել հետևյալ ձևերը՝ բայլշևիկ-բուլշևիկ, Դաստիգակ-Դաստիգակ, Կսենիա-Քսենիա և այլն:

Ինֆնագրում՝ առաջին տողից մինչև վերջին տողը, Չարենցը ամենայն մանրամասնությամբ ուղղել է կե-

տադրութիւնը Մենք որոշեցինք այս հարցում ևս լուրջ միջամտութիւններ չանել և անգամ թողեցինք գծիկները (—), որ այսօրվա կետադրութեան մեջ այդ իմաստով արդէն կիրառելի չեն, իսկ հեղինակի տեքստում դրանք ստանում են որոշակի իմաստ:

Չարենցի բնագիրը շատ տեղերում աղնատել է հատկապէս կապույտ թանափով «սրբագրողը», որ կամայականորեն ջնջել է բազմաթիվ բառեր և փոխաբերութիւններ է իր ցանկացած բառը: Հասկանալի է, որ մենք ամեն կերպ աշխատել ենք վերականգնել Չարենցի գրածը. Բայց բազմաթիվ տեղերում, բնագրի հատկապէս առաջին էջերի վրա, այնպէս անխնա են ջրնջված հեղինակի բառերը, որ հնարավոր չէ այն վերականգնել: Նման դեպքերում մենք ստիպված ենք թողնել «սրբագրողի» գրածը, այն առնելով ուղղանկյուն փակագծերի մեջ []: Օրինակ՝

Павлин—(сердито) Вы почтеннейший Перфидий Петрович.

Պավլին— (բարկացած): Դուք, [հարգոյապատիվ] Պարֆիրի Պետրովիչ. Այստեղ Չարենցի գրած բառի հետքն անգամ չի երևում, իսկ եթէ գտնեմի տառ մնացել է, այդ տառը ռուսերեն բնագրի օգնութեամբ, մեզ հուշում է գտնել ջնջված բառը: «Սրբագրողի» ջնջած բառերը վերականգնելու գործում հանախ էլ մեզ օգնում է ռեժիսորը: Օրինակ՝

Павлин—Боюсь что в этом случае— ошибаетесь вы.

Պավլին— [Երկյուղ եմ կրում], որ սույն դեպքում սխալվում եմ դուք: Ինչպէս տեսնում ենք, հեղինակի բառը փոխաբերվել է մի արտահայտութեամբ, որ բա-

ցարձակապես անհարիւր է ուսերեն բնագրի ոգուն, իսկ Չարենցի բառը ջնջված է այնպես, որ անհնար կլինէր այն վերականգնել՝ Քայց, բարեբախտաբար, ռեժիսորը նկատելով «որբագրողի» այս կոպիտ միջամտութիւնը, ջնջել է նրա գրածը և վերականգնել Չարենցին՝ «Վախենում եմ», որ և մենք ներկայացրել ենք տեքստով:

Ահա և մի ուրիշ օրինակ՝

Губин— Валяй! В газету! Архиеерею! Валяй .

Գուբին— Արա՛: Թերթում. [Հայր սրբազանին արա...]... Ինչ պետք է գրած լինէր Չարենցը փակագծերում առնված արտահայտության փոխարեն, ինչ համարժեք էր գտել նա Архиерей բառի:

Չարենցի թղթերի մեջ պահպանվել է մի գրութիւն, որն ուղղված է «Դոստիգաև և ուրիշները» պիեսի ռեժիսորին. Ահա այդ թերթիկն՝ ամբողջութեամբ.

«Դիտողութիւններ»

Խնդրում եմ նկատի ունենալ՝

- 1) Архиерей-ը եւ թարգմանել եմ «եպիսկոպոս» — ուրիշ ձև չկա, կարելի է թողնել «արխիերէյ».
- 2) Блаженный (юродив) — թարգմանել եմ «երանելի» — կարելի է գործածել նաև «Աստծո հիմար» ոճը, եթէ միայն հասկացվի:
- 3) Ածականներն հայերենում շունեն իգական ձև, թեև կարելի է հարմարեցնել: — Որոշ տեղեր «умница»-ն թարգմանել եմ «խելութունի» — կարելի է թողնել պարզապես «խելոք».
- 4) Նախադասութիւնները կազմելիս հնարավոր չափով աշխատել եմ պահել ուսական խոսակցա-

կան ուրիշներ, տեղ-տեղ — նաև սինտաֆսիսը, բայց ոչ այն աստիճան, որ վնասովի հայերենը:

Առհասարակ շատ լավ կլինեք, եթե թույլ տրվեք մի-երկու անգամ ներկա լինել փորձերին և, եթե կենդանի խոսակցության ընթացքում երևան գան թերություններ — խմբագրել տեղնուտեղը: Սիրով կընդունեմ նաև ռեժիսորի և դերակատարների դիտողությունները, սակայն կատեգորիկ կերպով խնդրում եմ առանց իմ գիտության և համաձայնության տեխնոլոգիական փոփոխություններ չմտցնել:

Ե. Չարենց»

(Տե՛ս նաև Ե. Չարենցի երկերի ժողովածուի 6-րդ հատ., էջ 659):

Պիեսի տեխնիկա պատրաստելիս մենք հաշվի ենք առել թարգմանության առթիվ Չարենցի արած այս դիտողությունները ևս և դրանց օգնությամբ նշտել բնագիրը:

Այսպես՝ պատասխանատվության մեծ զգացումով մտտենալով շարենցյան յուրաքանչյուր բառին, մենք տառ առ տառ վերականգնել ենք հեղինակի բնագիրը, որ չաղարտվի ոչ մի տառ, ոչ մի բառ գեղարվեստական խոսքի մաքրության նկատմամբ այնքան խստապահանջ ու անաշտ բանաստեղծի առանց այն էլ խաթարված ձեռագրերի մեջ:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՄԱՍԻՆ

է ջ օ Ր ա գ Ր ի ց

Մ. Գորկու մասին այս գրառումը վերցված է Չարենցի օրագրից, որ պահպանվում է Հայաստանի Ե.

Չարենցի անվան գրականության և արվեստի քանդա-
րանի Չարենցի ֆոնդում: Օրագիրը լրիվ չէ. միջից և
վերջից պակաս է են թերթեր: Ներկա գրառումը կատար-
ված է 1934 թ. մարտի 19-ին: (ՏԼ՛ս Ե. Չարենց. Եր-
կերի ժողովածու, հ. 6, էջ 482):

Մ Ե Ծ ա գ ու յ ն կ ո Ր ո Ւ ս ա

Տպագրվել է 1936 թ. հունիսի 20-ին «КОММУНИСТ»
թերթում՝ Մ. Գորկու մահվան առթիվ. նույն էջում
տպագրված է Հայաստանի գրողների խումբը. «ПАМЯТИ
ВЕЛИКОГО МАСТЕРА ЛИТЕРАТУРЫ», որ ստորագրել է
նաև Չարենցը:

Գրված է ռուսերեն լեզվով, տպագրում ենք մեր
թարգմանությունը:

Հ ա ն ն ա Ր Ն Ե Ր Ի և ա ս ո Ղ Ե Ր Ի ո Ւ Ղ Ի Ն

(Ալեքսեյ Պեշկովի հիշատակին)

Տպագրվել է 1936 թ. հունիսի 24-ին «Խորհրդային
Հայաստան» թերթում, Մ. Գորկու մահվան առթիվ:

Հոդվածն անավստո է, այն միայն առաջին մասն
է Չարենցի ծրագրած բնդարձակ գործի և կրում է
«Լեգենդը» ենթավերնագիրը:

Չարենցի թղթերում չի պահպանվել հոդվածի ձե-
ռագիրը կամ էլ որևէ պատասիկ նրա ինքնագրերից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաքսիմ Գորկին և Եղիշե Չարենցը— էդ. Ջորջ- բաշյան	5
ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼԵԳԵՆԴՆԵՐ	
Մրրկահավի երգը	43
Բազեի երգը	51
Վալախական լեզենդ	65
Աղջիկը և մահը	73
Ստախոս սարյակի և ճշմարտության սիրահար փայտփորիկի մասին	89
Խանը և նրա որդին	105
Բալլադ կոմսուհի էլլեն դե Կուրսիի մասին . . .	121
Իմ թանկագին բարեկամ Լուիջի Ցապելլին . . .	133
ԴՈՍՏԻԳԱԵՎ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԸ	137
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՄԱՍԻՆ . . .	237
Մանոթագրություններ	249

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

Փանաստեղծություններ և լեգենդներ

Դոստիգաև և ուրիշները

Պիեսս

Եղիշե Զարենցի թարգմանությամբ

МАКСИМ ГОРЬКИЙ

Стихотворения и легенды

Достигаев и другие

Пьеса

В переводах Егише Чаренца

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1984

Փամբագիր՝ է. Բ Թոռունյան, գեղ. խմբագիր՝ Վ. Ա.
Հարությունյան, տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան,
վերստուգող սրբագրիչ՝ Զ Ս Կարապետյան

ИБ 4811

Հանձնված է շարվածքի 25.10.83 թ.: Ստորագրված է տպագրության 16.04.84: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրությունը՝ բարձր: Թուղթ՝ լիտոգրաֆ. 7,79 պայմ. տպ. մամ., 11,72 պայմ. ներկ թերթ: Պատվեր՝ 110: Ֆորմատ՝ 60×84¹/₃₂: Տպաքանակ 10 000 7,4 հրատ. մամ.: Գինը՝ 1 ու.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91: Издательство «Советакан грох», Ереван-9, ул Теряна, 91. ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան: Երևան, Թումանյան փող. № 23/1: Типография № 6 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР Ереван ул Туманяна, 23/1.

14.